


922-152



ՍՈՒՐԵ ՇԱՀԱՄԱՆ

Ո ՏԵՇՊ Ա Խ Ե Ա Բ

ԵՒ Գ Ա Ր Ճ Ա Բ





ՅԵՐԱՅԻ ՀՈԴԻՈՑ

ԲԱՐԵՎԱԾՏ

ՈՒՐԹՈՒՆ ՏԿԿՈՉ

ՅԵՐԱՅԻ ՀՈԴԻՈՑ

— 0303 —

ՊԵՏՈՒԿԱՆ

ԴԱՏԵԱՄԱՐԴԻ

30542

ԵՐԵՎԱՆԻ Բ

ՀՈՅԵՆԻ ԱՀԵ ԻՇԽԱՆԱԳՈՒՆ ՔԱՀԱՆԱՑԻՆ

ԵՐԵՄԱՆ ՎԵՐԱԿՐՈՒ ԵՎՐՈՒՇ

ՀՈԴԵԸՆՔ ԽՐԱՏՆԵՐԸ



Հ. ՄԿՐՏԻՉ ԱԹՈՒՆԿԱ, 4:



ԱՐԵՎԻՏԻԿԱ

ԱՌԵՐԵ ԴԱՅԱՐՈՒ ՎԱՆՔԻ

1858

ԽԱՆՈՒՑՈՒՄՆ ԹԱՐԴՄԱՆՉԻՆ

ԱԵՆԴԱՆԻ ՀԵՂԲՆԱԿԸ անուանի է
իր սրբութեան նշաններով, անչափ
որ իրեն ազօթքյանձնելով շատ մարդ
շատ հրաշքներ տեսան . իսկ ինքը ա-
մենայն խոնարհութեամբ՝ եղած բա-
նելը իրմէն չխեղեր, այլ ուրիշնե-
րան բարի հաւատքէն, և որչափ կըր-
նայ նէ՝ կըմիախցի իր սլատիւէն: Ինչ-
պէս սրբակրօն անձ ըլլալը տռելի յայտ-
նի կերպնայ առ սլատիկ գլուէն ալ, ո-

բուն մէջը իր հոդին կըցըցնէ՝ թէ ինչ
հոդեոր և հոդեսէր է։ Ըստ գեղե-
ցիկ ո՞չ մը բռներ է, որ ամմէն մար-
դուն դիւրին ճամբայ կըցըցնէ սուրբ
ըլլալու . և ինչպէս որ ինքը իր յառա-
ջաբանութեան մէջ երկան կըծանու-
ցանէ, ջանացեր է որ ամմէն մարդ-
ինչ աղէկ խրատ լսեր է քարոզներէն
ու սիրով շարժեր էնէ, իրենց սիրով
միշտ նոյնալես տաք պահեն, ու դործ-
քով կատարեն՝ ինչ որ բարի կըծանչ-
նան նէ : Կմանապէս ինքն ալ որչափ
քարոզներ տուեր է, կամ խրատ խօ-
սէր է ամմէն մարդու յարմար, նոյն
բաները համառօտ և զօրաւոր կերպով
կամփոփիէ աս դրբիս մէջ։ Աղէկ ուշ
դիր սիրելի ընթերցող՝ առաջ պատ-
ճառներուն, որ միտքդ կըխոթեն ամ-
մէն հարկաւոյ բանը . ետքը դործքե-

922-44

2004

~~3249~~ 3230

բուն, որ դիւրաւ կիմանասս ընելիքդ .
և այնպէս կերենայ քու ճշմարիտ
քրիստոնէ ըլլալդ, և արքայութեան
ալ արժանի ըլլալու Աստուծով հաս-
տատ յոյս կունենաս : Գրքին անու-
նը ասանկ ալ կըկոչուի, “Մտածու-
թիւնք և կրթութիւնք ’ի պէտս հա-
ւատացելոց , : Մենք դրբին առջի
խօսքերը նայելով անունը դիմինք,
“Սուրբ ըլլալու մտածմունք և գործք,,:
Երանի անոր որ սիրով մտիկ կընէ , ու
կըկատարէ գրած բաները , որ ոմանք
թովմա գեմբացիէն էտե այս գիրքը
դրին . ոմանք Փուատրուբանիին նը-
մանցուցին : Եւրոպայու մէջ անհա-
մար թուով տարածուեցաւ աս գործ-
քիս տիպը . միայն Ֆրանսային մէջ ե-
րեսունըհինգ հազարէն աւելի տղան
եցաւ ու քիչ ատենէն հատակունդ, բա-

գիրը՝ նէմցէերէն է, անկէց թարդ-
մանեւած է ֆրանսըզէրէն, ու թա-
լիաներէն. մենք ալ ուզեցինք որ մեր
ազգն ալ իր լեզուով կարդայ, ու մի-
ջի բարիքը վայլէ Աստուծով:

ՍՈՒՐԲ ԸՆԴԱԿԱՆ

Պ Ե Տ Գ Ա Դ Ա Ճ

ՄՏԱԾՄՈՒՆՔ ՈՒ ԳՈՐԾՔ

ԳԼՈՒԽ Ա

ՍՈՎոՐԱԿԱՆ ՊԱՐՏԳԵՐՆԻՍ
ԸՆՆԿՈՒ ՀԱՄԱՐ

ԽՍԿԱՊ ԵՍ ՍՈՎՐԲ ԸՆԴԱՎԾԸ՝ արտաքոյ
կարգի բան ընել է, հապա մեր ամ-
մէն օրւան գործքը աղէկ ընելն է՝ բո-
լոր կենաց մէջ. անանկոր պէտք եղա-
ծին պէս կատարենք մեր սովորական
պարտքը, ու մեր աստիճանին ընկա-
ծը։ Աս ալ ինչո՞վ կըլլայ՝ ըսես նէ,
Աստուծոյ շնորհին մէջ ըլլալէն էտե՛
իրեք բան կուզէ։ Մէյ մը՝ մեր ըրածը
ըրածը՝ Աստուծոյ կամքին ու օրէն-

քին դէմ պիտոր չըլլայ : Մէյմալ որ՝
գերբնական պատճառի համար ըլլայ ,
այսինքն ուղելով զԱստուած պա-
տուել , Աստուծոյ հաճոյ ըլլալ , և
Աստուծոյ հնազանդիլ : Եւ մէյմընալ
որընելիքին ատենը նայիլ , կար է կա-
նոնը պահել տաք սրտով , հաւատար-
մութեամբ ու շարունակութեամբ :

Խ Բ Ա Տ Ս Ա Ռ Ա Ջ Ի Ւ

Քնէն արթնեալս վրայ :

“Օրդ սկսէ Աստուծով , :

Պ Ա Տ Շ Ա Ռ Ը

ա “ Աստ ինքեան իրաւունք է՝ որ
Աստուծով սկսի մեր օրը „ Գիտե՞ս ,
որչափ մարդիք աս գիշերս հիւլնդ-
ցան , պառկած մնացին . որչափն ալ
մեռան . դէշը ան է թէ որ մեռնող
ները ծանտը մեզքովդացին , ու դժոխ-
քը ընկան : Հապա քեզ ով ողջ պա-
հեց , քեզ ով լիսալըսցուց ասանկ փոր-
ձանքներէն . Աստուծոյ անհուն ողոր-
մութիւնը չէ մի : Հիմա , դուն ըսէ :

Բնչպէս կըրնաս աս օրս սկսիլ առանց
միտքդ բերելու՝ ամմէն բանէն առաջ՝
քու պահպանօղդ, քու փրկիչդ:

Ե. "Պատշաճն ալ ատ է,, : Ծա-
ռան՝ օրը լուսցած ըրլուսցած՝ պէտք
է որ ելլայ իր տիրոջը խզմէթին, բան-
որն ալ նոյն ատեն իր բանին գործ-
քին երթայ : Հիմա դուն կըրնաս մի
տարակուսիլ թէ դուն ալ պէտք է որ
առառուն կանուխկեկ ծառայութիւն
մը ընես Աստուծոյ՝ աղօթքդ ու միտքդ
քու տիրոջդ ու ստեղծողիդ տանե-
լով : Արժան չէ մի, որ օրւանքսանը-
չորս ժամէն՝ որ քեզի տրուած է քու
բաներուդ համար քու քէֆովդ ու
հանգստովդ, մէկ քառորդ մը՝ մէկ
քանի ըոսպէ մը Աստուծոյ նուիրես,
ու իրեն երկրպագութիւն ընես :

Դ. " Շահաւորն ալ ատ է,, :
Քու բախտ Աստուծոյ օրհնութե-
նէն կախուած է . չէ նէ՝ քու բոլոր
ջանքդ փուշը կերթայ : Արդ Բնչ-
պէս կարենաս յուսալ Աստուծմէ աս
օրւան օրհնութիւնը, թէ որ սրտանց
չխնդրես իրմէն ջերմեւանդ աղօթ-

Քովմը: Աստուած՝ իրաւ որ իր անբաւ մարդասիրութեամբ թող կուտայ որ չար մարդիկ ալ իրենց բանին յաջողութիւն ունենան. բայց աս ալ ստոյդ է, որ անոնք միայն հաստատուն յոյս կունենան մասնաւոր օրհնութիւն գտնալ Աստուծմէ՝ որոնք որ սրտանց կաղացեն զինքը :

ԳՈՐԾՎԵԼ

ա. “Որոշ ատեն մը հաստատե՞ք քեզի քնէն ելլալու” : Երբոր ատ դրած ատենը կը համնինէ, արթընցիր ելլիր, միտքդ Աստուծոյ տար, Երեսդ խաչ հանէ, ու ըսէ . “Յանուն հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Տէր Աստուած իմ, քու շնորհքովդ կառաջադրեմ քեզ ծառայել այս օրս ’ի բուն’ սրտանց, ու պատրաստ եմ մեռնիլքան թէ մեղքովմը քու խաթերըդ դպչել”:

բ. “Շուտով ցաթկէ ելլիր աւեօշէկէդ” : Աս պզտիկ աշխատանիքդ ըլլոյ քու առջի զոհդ Աստուծոյ առջեւ:

Շատ հարկաւոր է աս բանս. չէ՞նէ՞
ծանար վտանգ կայ անոր՝ որ արթըն-
նալէն էտև կը տնտընայ տէօչէկին մէ-
ջը. անանի որ անշնորհք բաներու
հետ կըլլայ զգայութիւնն ալ միտքն
ալ, և դիւրաւ մեղք կըձգեն զմարդ՝
թէ որ արթուն չի կենայ նէ:

Պ. "Պարկեշտութենով հագուե-
քու խցիդ մէջ", : Մարդու չերևնաս
վրադ գլուխդ չիշտկած, կամ կէս
հագուած: Պարկեշտ եղիր քու եղ-
բարներուդ՝ քուրերուդ՝ ընտանեաց
առջեւ, և ամմէն մարդու: Թէ որ
առջի առտուն կերպով մը անպար-
կեշտ գրառուիս նէ՝ գայթակղութիւն-
տալով տեմնողներուն, ինչ աղէկու-
թեան յոյս կըլլայ քու վրադ բոլոր
օրը :

Պ. "Հագուելուդ ատենը՝ բերանդ
աղօթք մը ըլլայ, կամ մտքիդ մէջ
սուրբ մտածմունք մը", : Օրինակի հտ-
մար, սրբոյն Պօղոսի խօսքովը միտքըդ
բեր, թէ զՔրիստոս հագնիմ պիտոր.
այսինքն՝ իմ բոլոր խելքս միտքս
Քրիստոս ոլիտոր ըլլայ, ու անոր ոլիտի

ընծայեմաս օրս ալ։ Կամաս բաներս
ըսէ . “Զգեցո՛ ինձ հանդերձ արդա-
րութեան . անդեա զերիկամունս իմ
սուրբ գոտւով ամօթխածութեան , :

Ե . “Հեմէն արտորնօք ուտելիսմել
բան մը մուզեր , : Ատիկակ անասնոյ
բան է , որ քնէն արթնցածին պէս
ուտելու էտևէ կիցնայ : Դուն բանա-
կան ու քրիստոնէ մարդ ես . ուստի
առջի հոգդ պիտոր ըլլայ պիտուական
մասինոդ հոգիիդ վրայ . ատոր բանը
սլիտի մասմտաս՝ ուրիշ բանի դործքի
էտևէ ըլլալէն առաջ :

Ե. “Ճերմեռանդութեամբը ըսէ կամ
կարդա առաւոտեան աղօթքդ , : Ճա-
նա որ սերտ ընես ատ աղօթքդ , որ
կարենաս ընելուր որ ըլլայ նէ . միտքդ
ալ սիրտդ ալ բանեցնելով խօսքերուն
հետ միատեղ : Բնաւ զանց չառնես
ատ աղօթքդ՝ հիշ օր մալ հիշ մէկ
պատճառովմը . և աս պարտքին տակը
դիր քեզ ալ քու ճեռքիդ տակը ե-
ղածներնալ : Օրհնած ջուր առ , երե-
սդդ խաչ հանէ , ետքը գնաա քու բա-
նիդ դործքիդ :

Բանի գուծելի համար :

"Աշխատէ Աստուծոյ սիրուն,, :

Պ Ա Տ Ճ Ս Ռ Ո Ւ Յ

ա . "Ատիկակ է բուն հարկաւոր
բանը „ : Աստուծոյ ծառայելու հա-
մար ստեղծած չե՞ս մի : Բայց ի՞նչպէս
կրնաս ծառայել, թէ որ աշխատելու
ատենըդ երբեմն երբեմն միտքդ իրեն
չիվերցընես նէ : Գեղի կըսեմ . թէ որ
աշխատելուդ վախճանը սոսկ ան ըլ-
լայ՝ որ ապրուստ գտնաս, ի՞նչքա-
նով կըսարբերիս դու մէկ հայվանէ
մը, որ մէկ եէմ մը դտնալու համար
բոլոր օրը բեռ կամ արապա կըքաշէ :

Բ . "Ճահաւոր բան ալ է „ : Վասն
զի ատով աշխատանքդ կըթեթևնայ .
Աստուծոյ օրհնութիւնն ալվրադ կու-
դայ . մեղացդ քաւութիւն կըլլայ .
առաքինութեան մէջ կըկըթուկս .
կաձի կըշատինայ հոս բարի մոքերդ ,
մահուան ատենը մխիթարութիւնդ ,
ու երկինքը վարձքդ : Աս մէկ արհեստ

մընէ շուտով հարըստնալու , որ ամ-
մէն բանըդ ոսկի կըդարձնէ :

Պ . “Դիւրին բան մընալ է , : Հե-
րիք է՝ որ Աստուծոյ շնորհքին մէջը-
լաս , ան ատեն ամմէն սովորական
գործքերդ ալ , էն պղտիկ աշխատանքդ
ալ՝ հաճոյական նուելքի պէս կըրնաս
Աստուծոյ ընծայ ընել : Հիմա աս բա-
նիս մէջ դժարութիւն կայմի : Հապա
աշխրքի մէջ ի՞նչ դժար բաներ կըբա-
շես մէկ ողորմելի աւուրչէքի համար-
շատ անգամ ալ փուռ տեղը :

ԳՈՐԾՎԵ

Պ . “Ջանա՛ որ բանի մը ձեռք չկ
զարկած՝ միտքըդ աղէկ բաներով
պատրաստ ըլլայ , : Աս բանս հոգի ու
կեանք է ամմէն բանի գործքի : Օրինա-
կի համար , միտքդ դիր՝ կամ բերնով
ալըսէ , թէ՝ Աս բանս կընեմ անուամբ
հօր և Որդւոյ և հոգւոյն սրբոյ „
կամ , “Տէր Աստուած , աս աշխա-
տանքս ըլլայ ’ի փառս քո , : Կամ ,
“Յիսուս իս , կեանք իս , աս գործքիս

առենը տո՛ւր ինծի նոյն դիուաւորու-
թիւնը ու սիրար՝ ինչոր դուն ունէիր
աշխաքիս վրայ քու ըրած բաներուդ
մէջ „:

Ե՞ . “Աշխատանքիդ մէջերնալ սիս
սիս միտքդ Աստուծոյ տա՛ր „: Ասքա-
նիս համար սերտ եղիր կարճ կարճ
հառաջական խօսքեր , որ կըվառեն
աստուածապաշտութեան բարի նա-
խանձը , աստուած սիրութիւնդ ասլա-
հով կընեն , ու Աստուծոյ հետ քեզ
կը կապեն նոյն աշխատանքիդ մէջ :
Չատ կօդնէ քեղի՝ բան բանելուդ ա-
տենը մտքիդ մէջ որոճալ աղէկ ա-
ղէկ բաներն որ լսեր ես կամկարդա-
ցեր ես հոգեոր գըքերէն :

Ի՞ . “Դժար աշխատանքներու մէջ
նայէ որ մասնաւոր համբերութիւն
ընելու ջանք ունենաս „: Զգոյշ կե-
ցիր , չըլայ թէ սրանեղութենէդ նոյն
դործքը վար զարնես կամ անիծես .
որով հետև առջևի բանդ ’ի հարկէ
ովհատոր ընես՝ որչափ որ կըրնաս աղէկ
ընելնէ : Ի՞նչ բանի կուգան անհամ-
բերութիւնը ու բարկութիւնը , բայց

Եթէ դժարութիւնը ու ձանձրու-
թիւնը էւելցրնելու: Չե՞ս մի ուղեր մէկ
քանի աշխատանկով մը երկինքը վաս-
տրկիլ, դժոխքէն խալքսիլ, անցած
մեղքերդ քաւել, քան թէ նոր մեղ-
քեր էւելցրնել:

Պ. “Թէ որ կը ընաս նէ՝ յոգնած
ատենըդ մէկ երդ մը ըրէ կամբան մը
կարդա կամ խօսէ օգտակար,,։ Շատ
անդամ եղած է՝ որ չար մարդիկ ալ
փղձիեր են, ու զլջումի եկեր են բա-
րի բարի մտածմունքներով, որ իրենց
ատելի բան մընէր : Բայց ըսենք թէ
մէկը քեզ կատէ եղեր աս բանիս հա-
մար . ատանկ ատելութիւնը պատիւ-
է քեզի : Դնենք թէ ծաղը կընեն ա-
նոնք քու հոգեւոր երդդ ու խօսակ-
ցութիւնդ . դուն ալ ցցուր թէ շատ
կուշաս ասանկ կուրութեանը վրայ :
Կըլլայ որ քու լուռ կենալդ ու պար-
կեշտ կերպով ժանիք ընելդ խախք
ընէ ու ամօթովլեցնէ զանոնք որ քեզ
կըծաղեն :

Ե. “Քեզի յանձնած բանին մէջ
ամմէն կերպով ուշադիր եղիր՝ խղճմը-

տանք ալ ընելով : Որովհետեւ աստ
աշխատանքիդ համար վարձք կառնես
կամ շահ մը ունիս քաղքէն , կամ
թաղաւորէն , կամ քու տիրոջմէդ :
Անհոգ ըլլաս նէ՝ պարտքէդ կըստակ-
սիս , ոչ ուրիշներուն և ոչքու խղճմը-
տանքիդ՝ և ոչ Աստուծոյ պարտքկա-
նութիւնդ կըկատարես : Աս ծուլու-
թիւնդ ու անխելքութիւնդ , ետքը՝
շուտով կամ ուշըլլայ՝ շատ սուզ պի-
տի նստի քեզի :

Ղ. “Գործքդ լմնցընելէնետե՝ նորէն
Աստուծոյ դարձիր բարի մաքովմը , :
Ինքն Աստուած է սկիզբ ու գախճան
ամմէն բանի . ուստի ասկից աւելի
արդար բան չի կըրնար ըլլաւ , ինչու էս
անով սկսիլ ու անով լմնցընել մեր ամ-
մէն գործքը : Ասոր համար աշխա-
տանքդ ալլմըննալուն պէս՝ ըսէ . “Փառք
հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ , այժմ
և միշտ , և յաւիտեանս յաւիտենից,
ամէն , : Ասով հէմ շնորհակա-
լութիւն կընես Աստուծոյ , որ իր
օդնականութեամբը գործքդ լմնցաւ ,
հէմ թողութիւն կըխնդրես՝ թէ որ

պակսութիւն մը եղեր է քու կող
մանէ :

ԽՐԱՏ ԵՐԵՌԴԴԻ

ՍԱ-ՐԻ ՊԼԱԿԱԾ ԳԻՆ ՀԱՅԱՐ :

“Ամմէն ջերմեռանդութեամբ պա-
տարագ տես „ :

Պ ԱՏ Ճ Ե Ռ Ը

Թ . “Վասն զի պատարագը ամմէն
զոհէն շատ մենծէ , , Յիսուս Քրիստոս
տէրն մեր աս սուրբ պատարագովս
կընորոգէ քեզի՝ առանց նորէն ա-
րունթափելու՝ իր մեծ զոհն որ ըրաւ
խաչի վրայ . ու մասնակից կընէ զմեզ
իր չարչարանաց անհուն արդեանցը :
Հիմա պէտքը չէ մի քեզի՝ որ բոլոր
սրտանց ու խորին պատկառանքով մը
ներկայ ըլլաս աս մշտնջենաւոր հրաշ-
քին , որ Աստուած կընէ կոր մարդ-
կանց սիրուն համար : Պատարագի
առջև անհոգ կենալը ցնդած մտքով
և առանց պատկառանքի՝ է նորոգել
Քրիստոսի չարչարանքը որ քաշեց

Գողգոթա լեռան վրայ, ու ծաղր ը-
նելաս սուրբ Խորհուրդիս հաւատքը:
Է. “Պատարագ տեսնալը շատ մենծ
հաճոյական քան է Աստուծոյ առջե,,,:
Ասովմենծ պատիւ կընենք Աստուծոյ
մենծութեանը . մենծ հատուցում
կընենք Աստուծոյ արդարութեանը.
մենծ չնորհակալութիւն կընենք իւր
բարերարութեանցը : Մէկ խօսքով
ըսեմ . սոսկ մէկ պատարագ մը աւելի
հաճոյ է Աստուծոյ՝ քան թէ ամմէն
Երկրագութիւն ամմէն որբոց Աս-
տուծոյ առջե : Երնեկ քեզի՝ քանի
որ պատարագ կըսեմնասնէ :

Է. “Ըատ մենծ շահ ալ է մար-
դուս,,,: Աստուած չէր կըրնար այնչափ
համբերել այնչափ մարդկանց մեղքե-
րուն , թէ որ անգին արիւնը գառինն
Աստուծոյ ամմէն օր անհամար տեղ
սուրբ Խորաններուն վրայ չիշարժէր
Աստուծոյ ողորմութիւնը : Չէր ալ
ընէր Աստուած հէմ քեզի հէմ ու-
րիշներուն այնչափ առատ բարիքներ՝
թէ որ Յիսուսին արունը չիշար-
ժէր Աստուծոյ սիրող՝ որ է հայր

գթած : Ուրեմն անտարակոյս Եղիք
որ՝ մէկ պատարագ մը տեսնալովց
ջերմեռանդ սրտով, ինչպէս որ պէտք
է, կը ընաս աւելի բան վաստրկիլ,
քան թէ ուրիշ ամմէն բարի գործքե-
րով : Ի՞նչ բանի չէ կը ընայ ըսել հայրն
Երկնաւոր իր միածին Որդւոյն, որ
սուրբ սեղանին վրայ միջնորդ կեցած
է իր հօրը քեզի համար :

ԳՈՐԾՔԸ

ա . “ Ջանա՛ որ՝ ո՛րչափ ափէդ կու-
դայ նէ, ամմէն օր պատարագ տես-
նաս „ : Ուրիշ մւր տեղ կը ընաս ա-
նանկ պատրաստուդիւրին դտնալամ-
մէն կերպ օրհնութիւն՝ քեզի ու քու-
բաներուդ հարկաւոր եղածը, ինչ-
պէս սուրբ սեղանին վրայ, ուր կինջ-
նայ քու վրկիցդ Երկնքէն, որ քեզ
հարըստացնէ իր շնորհքին պարգևնե-
րովը : Հասկա թէ ամբով շաբաթ մը,
ինչուան կիրակի մը կամ տօն դայ,
անհոգ ըլլաս նէ, շատ ապերախտ ես,
հաւատքդ ալ տկար է, սիրադ ալ Առ-
տուծմէ հեռու է :

Ք. “Թէ որ ցանցառ կըլլայ՝ որ կարենաս շաբթու մէջ պատարագ տեսնալ, յարմար օր գտածիդ պէս՝ ջերմեռանդութիւնդ տաքցուր, որ պակասը լեցնես,,,: Առտուները անանկ կարգ դիր բանիդ գործքիդ՝ որ ատեն մնայ քեզի պատարագի, թէ որ էն առաջ չես կրնար տեսնալ նէ : Առջանքն որ ունենաս նէ, Աստուած վարձահատոյց կըլլայ չափէ ’ի դուրս:

Դ. “Նայէ որ փուճ մահանա չըլլայ ատեն չդտնալուդ պատարագ տեսնալու,,,: Ի՞նչալէս չես կրնար կորխելք բանեցնել, ու մէկ քառորդէն քիչ էւել ատեն գողնալ քու ուրիշ պէտք եղած բաներէդ : Քիչ մը կանուխ ելիր քընէդ, փուճ մուճ խօսքերը մէկ դի դիր, քու հանգըստութւնէդ մէկ քանի ըոպէ կտրէ . մի տնանար տնէն ելլալ . ելար նէ՝ ճամբան ատեն մի կորսնցներ . ասով կըտեսնաս որ պատարագ տեսնալու պօլ պօլ կըհամնիս : Քաղսքն ես նէ՝ քուընաանեացդ ու ծառաներուդ ճան տուր, օրինակովդ ալյորդորէ . գեղն

Ես նէ՝ մօտ տեղուանիք խաւրէ դիրենիք
պատարագի : Աս բանս կըլլայ քեզի
ալ՝ անոնց ալ մէկ սքանչելի աղ-
բիւր մը ամմէն բարիքի ու միսիթա-
րութեան : Սիրտ և կամք ունեցողին
ատեն չխպակսիր իր ուղածը ընելու :

Դ. “Երբոր չես կրնար ուրիշ կերպով
պատարագ տեսնել նէ, փափաքով
ու դիտաւորութենով տեղը լեցուր,,:
Քնէն ելածիդ պէս, կամ ետքը լսա-
ծիդ պէս՝ ուր ըլլաս, թէ պատարագ
կայ, որ չի կրնաս պիտոր տեսնել,
սիրտդ վառելով ըսէ . “ Տէր իմ և
Աստուած իմ, կրփափաքէի ես ալ
պատարագ տեսնալ, բայց որովհետեւ
ափը չէ երթալը, մտքովս ներկայ
կրլլամ, ու կրնուիրեմ քեզի նոյն
պատարագը և ամմէն պատարագնե-
րը՝ ան դիտաւորութեամք, որովզին-
քը պատարագեց խաչի վրայ քու
միածին Որդիդ,, : Աս կերպով մաս-
նակից կրլլաս անբաւ շնորհքներու:

Ե. “Պատարագի պիտոր երթասնէ,
ջանսի որ կանուխկեկհամնիս,, : Մենծ
անկարդութիւն մը նէ սպասեցնել

զքահանան. ինչպէս շատ անդամ կը-
հանդիպի դեղերը, որ քահանան խո-
րանը ելած՝ կիմանայ որ էտեւէ էտե
նոր կուգայ կոր ժողովուրդը։ Ժամ
մտածիդ պէս միտքդ դիր, թէ Գող-
գոթա լեռը ելեր ես՝ որ ներկայ ըլ-
լաս Քրիստոսի ահաւոր զոհին, որ կը-
նորոգուի ան տեղը։ Ժամ համե-
լէդ էտեւ՝ դրան քով մի տնկուիր կե-
նար, ասոր անոր հետ խօրաթայի լո-
ֆի մի բոնուիր, ինչպէս կընեն անշը-
նորք մարդիկ. հապա մտի՛ր, յարմար
տեղ մը քաշուե՞ս, ու աղօթքիդ հետ
եղի՛ր :

Դ. “Բոլոր պատարագի ատեն՝ ը-
ռութիւն, պատկառանք, ունեցիր, ու
քեզ ժողվրտած պահէ ։ Ոչ ուրիշի
հետ խօսիս, և ոչ ուրիշ խօսովին ան-
կաճ դնես։ Ծունկը չոքած, ձեռք ձեռ-
քի կապած, աչքերդ վար, քու փրկու-
թեանդ խելք տուր, որ խիպ չունե-
ցող մարդիկ ալ խպնին, ու քեզնէ շի-
նուին՝ ու բարի օրինակ առնեն բա-
րեպաշտութեան։ Պատարագին ատե-
նը էն աղէկն է Քրիստոսի չարչարան-

քը մտմտալ . աս չես դիտեր ընելնէ ,
 Հայր մեր Ողջոյն ըսէ՝ պէսպէս նիէ .
 Թով , վարդարան կամ պսակ դար-
 ձուր . միանդամայն խնդրէ Յիսուսէն՝
 որ Հաւատքդ զօրացնէ , Յոյսդ հաս-
 տատէ , ու Աստուծոյ Սիրով քեզ
 վառէ : Մեղքերուդ վրայ լաց . շնորհք
 խնդրէ՝ ու Աստուծոյ աղէկ ծառայ-
 ես , Քրիստոսի տնօրէնութեանց ու
 չարչարանաց խըմէթըգիտնաս : Ընոր-
 հակած եղիր Աստուծոյ ամմէն բարիք-
 ներուն , ու նիէթ դիր՝ որ իր սիրուն
 ամմէն բան սիրով քաշես : Ասանկ
 ջերմեռանդութիւններ ընելով պա-
 տարագ տեսնելու համը կառնես ,
 պտուղը կրտեանաս :

ԽՐԱՏ 2011017

Ո-դէլու խմէլու վըայ :

“Չափ պահէ կերակուր ուտելու .”

Պ ԱՏ Ճ Ա Ռ Ե

Թ . “Յատ ուտել խմելը՝ մարմնոյ
 ալ վեասակար է . . . : Չափը անցնելով

ստամոքսը կաւրըւի, արունը կըթանձ-
րանայ կըտաքնայ, բոլոր անդամներու-
ցաւ կըհասնի, փորը անհանդիստ ու
թուլ կըլլայ, մահնալ ատենէն առաջ
կուդայ : Ասոր բժիշկները կըվկայեն,
փորձը կըցըցնէ, և սուրբ գիրքը յայտ-
նի կըսէ՝ Սիրաքայ մէջ, թէ “Աւելորդ
կերակուրը հիւանդութիւն կըբերէ,
և շատ մարդ կորարւեցաւ աւելորդ
խումէն,,,: Ասանկ է նէ, դուն որ ա-
ռողջութիւնդ ու երկայն կեանքը
կուզես, նայէ որ կերակուրդ կանո-
նաւոր ատենով ու չափով ըլլայ, ա-
սով առողջ կապրիս՝ քան թէ աշխրքիս
դեղերը առնէիր :

Է . “Քու պատիւդ՝ աղէկ անունդ
ալ կաւրէ շատակերութիւնը,,,: Ո՞ր-
չափ անարդանք է քեզի՝ թէ որ ըսեն
թէ ատ մարդը որկրամոլ ու հալբե-
ցող է : Իրաւ որ անանկ մարդը՝ տղոց
խաղկըլեք է, մարդկային ընկերու-
թեան մէջ զզուելի է, անհաւատնե-
րու առջև ալ դարշելի կըսեպուի :
Զարմանք չէ, վասն զի անանկ մար-
դէն հաստատուն ու խելացի քան մը

չիյուսացուիր . ԽԵԼՔԸ միտքը կամ
ուաելու կամ խմելու էտևէ է միշտ :

Պ. "Եւելօք հոդիին վասս կուտայ , :
Պօղաղաւերութիւնը կորսնցընել կու-
տայ հէմ անմեղութիւնը , առաքի-
նութիւնը , հէմ շնորքը ու վարձքը :
Ան մարդն որ իր փորուն կըծառայէ
Աստուծոյ տեղ՝ չիհոգար սուրբ օ-
րէնքները պահելու , ու ամմէն չարիք
ընելէն չի վախնար : Անբարեխառ-
նութիւն և որկրամոլութիւնը մնունդ
կուտան բարկութեան և ցանկու-
թեան , ինչպէս ձէթը կրակին ու
ճրադին :

ԳՈՐԾՎԸ

ա . "ԿԵՐԱԿՐԻ ՃԵռք չերկնցուցած՝
խաչ հանէ երեսդ , և Աստուծոյ օրէ-
նութիւնը խնդրէ „ : Չըլայ թէ ան-
քրիստոնէ անուն ունեցողներէն ըլ-
լաս , որ ամօթ կրսեպեն աղօթք մը
ընել կերակրէն առաջ ու էտև : Երկ-
նաւոր մեր հայրը ամմէն օրւան հայր
կուտայ իր որդւոցը , բայց կուղէ որ

շնորհակալութիւն մը ընենք : Անհոգ
ըլլասս ատ պարագիդ նէ , մի զարմա-
նար՝ թէ որ պակսի հացը բոլորո-
վին քեզի ալ քու ընտանեացդ ալ :

Ք . “Առջեղ եկած կերակուրները
չափով ու պարկեցութեամբ վայլէ,,:
Ուտելը խմելը մարդուս մարմնոյն ուժ
պիտի տան , չէ թէ խանգարեն զան:
Վայէ որ սեղանի վրայ անդահ լափե-
լով շափուր շուփուր չուտես . չէ նէ
կարծիք կուտաս՝ թէ քու հոգիդ տա-
մախիդ մէջ կամ ստամոքսիդ մէջ կըբը-
նակի , ու բոլորովին զգայութիւն կըտ-
րուեր ես անասնոյ պէս :

Դ . “Մանաւանդ ջանա որ երբեմն
քիչ մը պակաս ուտես ,,: Պղտիկ բան
մը կերևնայ մէկ կերակրէ մը ետ կե-
նալ , կամ մէկ ուզած պատառդ չու-
տել համբերելով՝ ի պատիւ Աստու-
ծոյ , և քու փրկչիդ սիրուն , քեզ մա-
հացնելու ու կամքդ կոտրելու հա-
մար . բայց մենծ է շնորհքներուն պը-
տուզը որ ատոր համար կառնես :

Դ . “Մի թողուր որ սեղանին վրայ
բարի վարքին դէմ կամ եղբայրակի-

ըութեան ներհակ խօսք մը ըլլայ։
ՍԵՆԾ ասկերախտ կըդանըւիս՝ ԱԽ
առւծոյ գէմ բան ընելով ան ատենն
որ Աստուծոյ բարիքը կըվայլես կոր։
Ասոր ներհակ շատ շինութիւն ու
բարի օրինակ կըլլայ՝ սեղանի վրայ
խօսք բանալ հարկաւոր ու օգտակար
բաներու վրայ, որ լսուած են քա-
րողէն ու հոգևոր գլոբէրէն՝ քրիստո-
նէ մարդուն կրթութեանը համար։

Ե. “ՍԵղանէն էւելցած բանը մէկ
մուրացկանի մը, կամ կարօտ եղած
հիւանդի մը խաւրէ։։ Աստուած շատ
էւելօք կուտայ քեղիանորտեղ։ Բայց
նայէ որ երբոր դուն տան տէրը չես,
հրաման չունիս բան մը դուրս տալու։
չէնէ՝ առանց հրամանի առաստաձեռ-
նութիւն ընելդ դողութենէ շատ հե-
ռու չէ։

Ղ “Կերակրէն էտե գոհացիր Աս-
տուծմէ։։ Ասիկակ պիտոր ընես՝ թէ-
պէտե կերակուրը քու ուղածդ չէ
նէ, կամ աղէկ մը չես կշտացեր նէ։
Չես տեսեր որ՝ աղէկ կրթուած զաւ-
կըներ՝ սեղանէն էտե ծնողաց ձեռքը

կըսկագնեն։ Ողորմելի աղքատը շնորհակալ կըլլայ քեզի մէկ պայած հացի կտոր մը առնելուն համար . հիմա դուն քեզի ամօթ մը կըսեպես շնորհակալ ըլլալ Աստուծոյ , որ քեզ այն-չափ ատեն գթած հօր պէս նայեր մնուցեր է ամմէն կերպով Աս խրառներս պահելու է ամմէն իժիր օրւան մէջ կերակուր ուտելու ատենը , մանաւանդ տղոց նախաճաշիկ կամնախընթրիք ընելու , որ իրենք իրենց մնալով՝ քրիստոնէութենէ դուրս բաներ աւ կընեն զբօսանքի տեղ։

Խ Ր Ա Տ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ւ Դ

Ի Շ Ի Շ Ա Խ Ա Պ Ա Խ Ա Վ Ա Յ :

“Օրոր Աստուծով լինցուր” :

Պ Ա Տ Ճ Ս Ո Ւ Ը

ա . “Վ ա ս ն զ ի ա ս ո վ հ ա ն դ ի ս տ ք ու ն կ ը լ լ ա ս , : Փ ա փ ո ւ կ թ ի ւ յ ո վ բ ա ր ձ ը կ ա կ ո ւ լ ե օ ր զ ա ն տ է օ շ է կ ը ա ն ո ւ շ ք ու ն ը լ լ ա լ ո ւ պ ա տ ճ ա ռ չ ե ն : Շ ա տ ա ն դ ա մ կ ը լ լ ա յ ո ւ գ ե ն ի վ ա յ ա լ ք ու ր է ա մ մ է ն կ ե ր պ ո վ է Ա ս խ ր ա ռ ն ե ր ս պ ա հ ե լ ո ւ է ա մ մ է ն ի ժ ի ր օ ր ւ ա ն մ է ջ կ ե ր ա կ ո ւ ր ու տ ե լ ո ւ ա տ ե ն ը , մ ա ն ա ւ ա ն դ տ ղ ո ց ն ա խ ա ճ ա շ ի կ կ ա մ ն ա խ ը ն թ ր ի ք ը ն ե լ ո ւ , ո ր ի ր ե ն ք ի ր ե ն ց մ ն ա լ ո վ՝ ք ր ի ս տ ո ն է ո ւ թ ե ն է դ ո ւ ր ս բ ա ն ե ր ա ւ կ ը ն ե ն զ բ օ ս ա ն ք ի տ ե զ :

Նը կըտանի մարդուն՝ քան թէ անանկ
փափուկ եաթախը։ Ան մարդը միայն
անուշ անուշ կըքընանայ, ով որ իր
օրը Աստուծով կըլմնցընէ . կուզեմ
ըսել, անիկակ որ՝ քուն մտնալէն ա-
ռաջ Աստուծոյ հետ կը հաշտըւի, և
իր հոգւոյն աղէկ պատրաստութիւն
կըտեսնայ :

Ի՞ . “Անհոգ կերպով քունի մեր
թար „: Գիշեր ըսածդ՝ օրւան աւելի
վտանգաւոր մասն է՝ հէմ մարմնոյ
հէմ հոգւոյ կողմանէ : Քանի՛ մար-
դիկ եղան որ ան ատեն զարնուեցան
ժամանակաւոր ու յաւիտենական մա-
հէն : Բայց դուն վախնալու բան չու-
նիս, երբոր օրդ Աստուծով կըլմնցը-
նես նէ . վասն զի ան ատեն սանքի Աս-
տուծոյ ձեռքին մէջ պառկած կըսե-
պուիս : Ինքը քեզ կը հոգայ, ինքը
քու վրադ արթուն կըկենայ . անանկ
որ պատահմամբ յանկարծ բանմալ
ըլլասնէ, հոգիդ ապահովձեռքի մէջ
կը գտնըւի :

Ի՞ . “Չատ ախորժանօք՝ ու շատ
ասլըելու յուսով մի քնանար „:

Քունը մահին եղբարն է՝ կըսեն : Ա-
տեն կտրուած է քու մեռնելուդ . և
աղէկ ատենը չես գիտեր , թէ որն է:
Ուրեմն ինչ պիտոր ընես : Ընելիքդ
ան է՝ որ Աստուծով գլուխ հանես
օրդ . ասանկ ընես նէ՝ քնանալու ա-
տենդ ալ վաստակ կընես . այսինքն
աւելի շնորհք կառնես , ու փրկու-
թեան կը համնիս առօք վառօք :

ԳՈՐԾՎԸ

ա . “Օրւան աշխատանքէդ էտե՞
նայէ որ քու հանգիտոդ չիդնես գի-
նովնալու , խաղալու , ու շփանալու , :
Առ կըլլար քրիստոնէական կեանքին
էն առջի կանոններուն դէմ . ատով
պատճառ . կըլլաս անկարգութեան
տան մէջ , ծանր նեղութիւն կուտաս
ծնողացդ ու մենծերուդ ; և ամեն
մեղքի ճամբայ կըբանաս քեզի : Ուր
տեղ որ թող տուած է գիշերները
պարտիլ , ան տեղը աղէկ կըթութիւն
չկայ , երջանկութիւն չկայ , շատ
օրհնութիւն ալ չիկայ՝ այն թեմին
մէջ կամ տանը մէջ :

Ե. “Ըստով ալ տէօշէկ երթալու
մի արտորար „: Յոգնութիւն առնե
լէդ էտե՛ միտքդ առաջ Աստուծոյ
տար : Աս օրս որ գէշ կերպովլմնցնես
նէ, ատիկա գէշ սկիզբ մը կըլլայ վա-
ղուան օրւանդ : Ուստի իրիկուան ա-
ղօթքդ ըրէ , ու պատրաստէ քեզ
քունի՛ սանքի մահի , փոյթ տանե-
լով գլխաւոր առաքինութեանց , մա-
նաւանդ զդջման :

Դ. “Աղօթքէդ էտե՛ մէշմը տունը
աչքէ անցուը ապահովութեան հա-
մար „: Նայէ որ չէ թէ միայն կրակի
կամ գողի վտանգ մը չըլլայ , հապա
մանաւանդ որ՝ մեղք մը չըլլայ : Թէ
որ տանը հարն ես՝ կամ մարն ես,
կամ տանը գլխաւորը , աղէկնայէ որ
ամմէնքը իրենց տեղը քաշուած ըւ-
լան , և զատ զատ տեղը ըլլայ մանչերու-
ու տղթիկներու . գոներն ալ պատու-
հաններն ալ աղէկ գոցած ըլլան .
տան գուռը ետքի գոցօղը կղպակով
գուն եղիլր , որ առանց քու դիտնա-
լուդ մարդ գուրս չըլլայ : Գիշերնալ
երթեմն ելիլր , չորս դին աչքէ անցուը

նոյէ թէ ամմէն բան տեղն է մի կար-
դով կանոնով . որ հիշ անկարգու-
թիւն մը տեղ չունենայ տանըդ մէջ :
— դ . “Պարկեցառ թեամբ հանուէ ,
ինչպէս որ հագուելու ատենը ըախք ,,:
Ազօթք մը և բարի մտածութիւն մը
ունեցիր՝ լաթերդ հանելու ատենը :
Զո՞ր օրինակ , մահդ մտքէդ անցուր ,
որ երբոր ըլլայ՝ քեղամմէն բանէ մեր-
կացնէ պիտոր :

Ե . “Անկողինդ մտիր՝ սանքի մահին
մահիճը ըլլար ,,: Օրհնած ջուր առ ,
խաչ հանէ երեսդ , ձեռւլներդ կուրծ-
քիդ վրայ գիր , և բարի իորհուրդնե-
րով սկսէ մրափել : Ասն զի առտը-
ւան մտքերը հտսարակօրէն կըլլան ի-
րիկուան վերջի մտքերու նման : Զա-
ղացքը այն բանը կաղայ՝ ինչ որ մէջը
կը ձգես նէ :

Դ . “Ծուտով քունդ չի գար նէ ,
կամ դիշերը արթննաս նէ , ազօթք
ու մտածական ըրէ ,,: Ազօթքդ ըլլայ
քեզի համար , մեղաւորներու համար ,
հոգեվարներու ու ննջեցելոց հա-
մար : Մտածականդ ալ ըլլայ միտքդ

բերել միքատոսի չարչարանքները :
 Կրնաս աս չորս բաներս ալ մոքիդ
 մէջ որո՞ջալ . “թէ որ աս վայրկեանս
 մունելու ըլլայի նէ , արդեօք ի՞նչպէս
 կըլլար իմ բանս : Աս գիշերս Աս-
 տուած իր տիվանը կանչելու ըլլար
 նէ , ի՞նչ յոյս կունենայի արդեօք :
 Ես որ աս անկողինս պառկած՝ չեմ
 կըմնար կոր քուն ըլլալ նէ , հասկա
 ի՞նչ պիտի ընէի՝ թէ որ դժոխի կրա-
 կին մէջ պառկած ըլլայի : Ո՛վ ո՛րչափ
 աղէկ ու գեղեցիկ է արքայութիւնն
 երկնից . բայց կրնամ արդեօք հոն
 երթալու յոյս ունենալ աս իմ հի-
 մակուան վարքովս „ : Ասանկ բաներ
 մոմտալով կամաց կամաց քունը կը-
 կոխէ , ու անուշ կըքընանաս :

ԽՐԱՏ ՎԵՑԵՐՈՐԴ

ԽՍԱԳՈՎԱՆԱՆՔԻ ՀՐԱՅ :

“ԱԾԽ ՄԾԽ ԽՊՃՄՌՈՎԱՆՔՐԴ ՄԱՔՐԵ
ԽՈՍՏՈՎԼԱՆՎԱՆՔՌՈՎԼ, :

Պ ԱՏ Շ Ա Ռ Ե

Թ. „ԽՈՍՏՈՎԼԱՆՎԱՆՔՐԸ ՀՈՒՉԱՆՎԱՅ ՆԵ՝
շատ մեղքէն ու խույերէն ազատ կը-
մնաս,, : Պարզ սրտով ու սրխ խոս-
տովլանվանքը ամմէն բանէն էւել դեղ
կըլլայ մեղաւոր մարդուն՝ իր վարքը
շտկելու: Անովհին վէրքերը շուտով
կըբժշկուին, նոր վէրքի տեղիք չխարր-
վիր. մարդուն խելքը հոգեաոր կեան-
քի կարթըննայ, ու հոգին կը պա-
հուի յաւիտենական մահէն : Ասոնք
էն դործք արդեանց Քրիստոսի, որ
խոստովլանվանքով առատապէս կը արր-
ւին զզջացօղ մեղաւորի :

Ե. “ԽՈՍՏՈՎԼԱՆՎԱՆՔՐԸ կը սլակսեցնէ
կամաց կամաց ներելի մեղքերն ալ,,:

Ո՞րչափ որ մէկ տեղ մը սըխ սըխ աւ-
լես . քթանը շատ լուանաս , ոսկի ա-
մանը մաքրես նէ , այնչափ աւելի պայ-
ծառ ու փայլուն կըլլան : Ասանկ չը-
նէր մի քու հոգւոյդ ալ փրկական
ջուր և աւազան մաքրութեան , որ
քեզի քու փրկիչդ պատրաստեր է 'ի
խորհուրդ ապաշխարութեան : Բնաւ
տարակոյս չիկայ՝ որ այնչափ քիչ ու
ցանցառ կը մեղանիչես , որչափ որ սըխ
սըխ խոստովաննիք կըլլաս ճշմարիտ
սրտով զղղման :

Ք . “Խոստովաննիքը զմարդ կըլլօ-
րացնէ 'ի բարին „ : Շատ կըսխալիս՝
թէ որ կարծես թէ սըխ խոստովա-
նանքը միայն մենծ մեղաւորներու օ-
գուտ կընէ . մանաւանդ բարեպաշտ
անձինք աւելի փոյթ կը տանին խոս-
տովաննելու՝ որ բարեպաշտ մնան .
փորձով դիտեն ասանեները՝ որ խոս-
տովաննիքը զիրենք առաքինութեան
ճամբուն մէջ հաստատուն կը սլահէ
ու նոր նոր շնորհքներկեւլցնէ . դուն
ալ փորձէ . կը տեսնաս՝ որ առ ասանկ
է :

Գ. Ա Բ Տ Ա Ք Բ.

ա . “Գո՞նե ամիսն անգամ” մը խոս-
տովանանք եղիր , : Դուն որ մաքուր
կուզես տունդ , հագուստդ ալ կոկ
ու սիրուն ըլլալու հոդ կըտանիս , ին-
չու խղճմտանքդ ալ չեսնայիր որ մա-
քուր ըլլայ : Քանի որ ուշացնես խոս-
տովանանքդ , այնչափ աւելի կըդժար-
նայ քեզի : Ան միջոցին մէջ փորձու-
թիւնները կը շատնան , բարի խրատ-
ները անկածդ չեն մտնար , օրէ օր ա-
ւելի համարձակ կըլլաս մեղք գործե-
լու . մեղքը քեզի սովորութիւն կըլ-
լայ , դունալ քանի կերթաս՝ կը գէշ-
նաս : Ասանկ է նէ՝ սրիս սրիս խոստո-
վանէ , որ Աստուծմէ ալ էւելօք օդ-
նութիւն ու շնորհք գտնաս :

Է . “ Անանկ խոստովանահօր մը
գլուխ զարկ , որ կարենաս իր վրայ
վստահ ըլլալ : Դժար կըլլայ այն մե-
ղաւորին դարձը , որ անդադար կըփո-
խէ իր խոստովանահարը : Զօրաւոր
միջոց ճշմարիտ դարձի գալու է ընտ-

ըԵԼ զմէկն որ կարենայ և ուզենայ քեզ
օդնելու . անոր բաց սիրտդ , ու բոլո
րովին խոնարհ և հնաղանդ՝ մտիկ ըրէ
իր խրատները : Ամմէն բանէն վեր՝ ու
նեցիր որդիական և ծայրադոյն վստա
հութիւն անո՞ր որ քովդ կըկենայ
մահիդ առուենը : Ի՞նչ մենծ նեղու-
թիւն է անանկ փորձանքաւոր ատե-
նը չունենալ զմէկը՝ որ կարենաս բա-
նալ քու խղճմտանքիդ վախերը :

Ք . “Խղճմտանքդ աղէկ մը չըպրապը-
տած՝ անաչառ քննութիւն ընելով,
խոստովանելու մ'երթար „ : Ասոր
համար առաջուց լոյս խնդրէ յԱս-
տուծոյ , միանգամայն և զղջում , և
ուժ մը սրտի՝ խոստովանելու ամմէն
յանցանքդ , ի՞նչ որ կրցար վնտուելու
դտնալ : Բայց զդոյշ կեցիր՝ որ ասանկ
քննութիւն ընելու ատեն՝ չունենաս
աւելորդ անհանգստութիւն մը : Աս-
տուծոյ ու եկեղեցնայ պատուիրանք-
ները քաղէ , հետն ալքու վղճակիդ
ու քու սղաշտօնիդ սղարտքերը , օխտը
մահացու մեղքերը , ներելի մեղքերդ ,
և այլն : Ընդհանրապէս քննէ , թէ

քանի անդամ և ինչ աստիճան մեղք
գործեցիր խորհրդով, բանիւ , գոր-
ծով ու զանցառութիւն ընելով։ Աս
ալ առաջուց միտքդ ըեր , թէ երբ և
ինչպէս խոստովանք եղար ասկից
առաջ՝ վերջին անդամդ . ուստի թէ
որ դիտես՝ թէան առենք կամք պա-
հեցիր ու ըստիր մէկ ծանր մեղք մը ,
կամ ճշմարիտ ցաւ ու զղջում չու-
նեցար, և հաստատ առաջադրութիւն՝
մէյմալ ճընելու, հարկ կըլլայ որ հիմա
նոր քննութիւն ընես ետքի վաւեր
խոստովանքէդ էտե։ Յայտնի դիտ-
ցիր որ հարկաւոր է ամմէն կերպով,
որ ըսես աս խոստովանքիս մէջ չէ
թէ միայն այն մեղքերն որ պահեր
էիր, հապա՝ թէ խոստովանահայրդ
փոխեր ես նէ , պէտք է նորանց ըսես
ամմէն բանն որ թողուցիր անվաւեր
խոստովանքին մէջ , և անկից էտե
ըրած անվաւեր և սրբապիղծ խոստո-
վանքներդ ալ անոր պէս , նմանա-
պէս անարժանութեամք առած սըր-
բութիւնը՝ քանի որ եղեր է նէ :

Պ. “Աղօթք ընելով սիրադ վառէ,
* 2

որ անկեղծ և հաստատուն առաջա-
գրութիւն դնես,: Եւ աս պիտի ըլլայ
Ճիշդ քննութիւն ընելէդ էտեւ : Աս
թէութիւնները չընես նէ , խոստո-
վանանքդ խոստովանանք չէ , հաղա-
սրբապղծութիւն . կամ գոնէ փուժը
կերթայ , և դուն սանքի Աստուծմէ
բան մը գողցած կըսեպուիս(այսինքն
փուժ արձակում առած) : Աս ալ
դիտցիր որ աս անկեղծ զղջումը , առ
հաստատ առաջադրութիւնը պիտոր
ըլլան գերմական պատճառաներէն :
Առ ընտո՞ր կըլլայ ըսես նէ՝ մտիկ ըրէ,
ինչ որ կըսեմ :

Դուն քեզի հարցուր , ու ըսէ ա-
ղէկ հասկընալով .

1. “Ես որո՞ւն խաթրին դըպայ մեղ-
քովս,: Իմ Աստուծուս , իմ տիրոջս,
իմ ստեղծողիս , իմ փրկչիս . իմ մէկ
հատիկ հօրս՝ որու նմանը չկայ , որու
բարութիւնը անչափ է , և ուղղու-
թիւնը և արդարութիւնը խելքէ վեր
է :

2. “Ո՞ւր տեղ,: Իր աչքին առջեր,
իր ծառայութեան մէջ , իր տանը մէջ :

3. “Ի՞նչու կամօք, դիանա լով, խելքս վրաս . անալշատ անդամ, ու ծանր կերպով, ու քանի՛ անդամ զիս շտկելու խօսք տալէն էտ և :

4. “Ի՞նչ բանի համար ,: Մէկ անցաւոր փուժքէ ֆէֆիս համար, ոչինչ բանի համար :

5. “Ե՞րբ ”: Երբոր ինքը զիս կըսիրէր, կըսահաղանէր, կըսլաշտաղանէր անբաւ չարիքներէն ու ինամներէն :

6. “Ի՞նչ բանով, : Իր ինձի արւած պարգևներով, իր երախտիքով:

Աս բաներով սիրտդ շարժէ՛ ի ճըշմարիտ զզջում, և ըսէ սրտանց, թէ ասկից էտե պատրաստ եմ մեռնելու քան թէ պզտի մեղքմալ ընելու :

7. “Խոստովանանք եղի՛ր ամմէն կերպ կատարեալ խտակութենով ”: Ուրիշները եկած են նէ, դուն հանդարտ սպասէ՛, որ շվիթութիւն մը չիտաս . Ետքը դնած չոքէ՛ խոնարհութեամբ՝ ինչու յանցաւոր մը դատաւորի առջև, աշկերտ մը վարդապետի առջև : Տեսնաս որ քու կողմդ դար-

ձեր է խոստովանահայրը, խաչ հանէ
 երեսդ, ու ըսէ . “Խոստովանիմ ա-
 ռաջի և այլն , : Կտևէն սկսէ առջի
 խոստովանքէդ պերի ըրած յանցանք-
 ներդ, բան մը շիծածկելու Աստուծոյ
 փոխանորդէն՝ որ քեզ պիտի դատէ
 անոր կողմանէ : Սիրադ բոլոր բաց .
 բան մալ հարցընէ քեզի նէ, շտկէ շի-
 տակ պատասխան տուր . սանքի Աս-
 տուծոյ հետ է բանըդ: Անմեղադիր
 մ'ըներ քեզ՝ չէմ գիտեր ըսելով, եր-
 բոր քու խիղճդ կըվկայէ, կամ կը-
 տարակուսիս , գիտցածդ պարզ
 զուրցէ: Կարգով մը մեղքերդ ըսէ ,
 որ չիշվոթիս . ան ալ որչափ կարելի
 է նէ՝ քանի անդամ եղեր է նոյն մեղ-
 քը յայտնելով հեանալ ծանտր պա-
 րագաները: Զգոյշ կեցիր որ ուրիշի
 անուն չիտաս, թէ որ հարկ ըլլայ՝ ա-
 ռանցանուան՝ սանկ աստիճանի մարդ
 պիտոր ըսես: Կ՞ն առաջ ծանտր մեղ-
 քերդ զուրցէ՝ որ քու խիղճդ ու սիր-
 բորդ խիստ կը դպչին. ասոր ալ աւելի
 մենծն է՝ թէ անցած խոստովանք-
 ներուդ մեջ բան մը ծածկեր ես նէ .

չէ նէ՝ խոստովանութիւնդ փուռք կը լ-
լայ, ու գժոիսքը առջևդ բաց է, սրբ-
բապղծութեան ու անէծքի տակ կը-
մնաս: Խղճմոանքիդ բաները լմնցնե-
լէն էտե՝ զզջումն առաջադրութիւն
ըրէ նորանց, ու ցցուր պատրաստ ըլ-
լալու ամմէն կերպ ապաշխարանքի:

Դ. “Ասանեկ խոստովանելէդ էտե՝
գնա՛ շնորհակալութիւն ըրէ Աստու-
ծոյ, ու քեզի դրուած ապաշխարան-
քը կատարէ” : Ուրախացիր որ մեղ-
քերէդ խալքսեցար, ու Աստուծոյ
հետը հաշտուեցար, իր շնորհքին ար-
ժանի եղար. և աղօթքով փառք տա-
լով յայտնի ըրէ Աստուծոյ քու ու-
րախ սրտով գոհանալդ: Ճերմեռանդ
կերպով լմնցուր ապաշխարանքդ, և
որպէս զի ցցնես՝ [թէ ճշմարիտ դարձի
եկեր ես, նոյն օրէն սկսէ ՚ի գործ
դնել բարի բարի առաջադրութիւն-
ներդ: Թէ որ Երկաթը չիծեծես՝
քանի որ տաք տաք կրակ դարձած է,
այսինքն եթէ որ չփութաս դործքով
ընել՝ ինչ որ Աստուծոյ ու խոստովու-
նահօրդ խոստացար, [թէե հաղար ան-

դամ խոսառվանանք ըլլաս աղէկի
դառնալու համար, օրէ օր գէշ կըլ-
լաս, աղէկ չես ըլլար :

ԽՐԱՏ ԵԶԹԵԲՈՒՐԴ

Առաջին համարությունը կազմակերպված է առաջին աշխատանքի ժամանակ:

“Որչափ որ կընաս՝ սըլս սըլս հոգիդ
զօրացուք հավորդուելով,,:

Թ. “Քու փրկչիդ բաղձանքը պէտք
է որ քեզ շարժէ հաղորդուելու,: Յե-
սուս քեզ կը հրաւիրէ, կը մեծարէ,
կը սպասէ, որ զինքը ճաշակես, խոս-
տանալով քեզի անբաւ բարիք, միան-
դամայն յաւիտենական պատիժ ալ
սպառնալով թէ անհօդ կը լաս իր
սուրբ սեղանը մօտենալու : Ո՞ր բա-
նով կը նար աւելի ցցնել քեզի իր վա-
ռած սրտին կրակը՝ որ քեզի հետ ըւ-
լայ, ու քու սիրտդ բնակի : Ի՞նչ կար-
ծիք կունենաս դու ան մարդուն վը

ըայ, որ հրամցունես զինքը քու սեղանդ, ու ինքը թօթվէ զինքը առանց բանաւոր պատճառի : Հասկա քեզի Յիսուս ի՞նչ ըսէ, երբ որ դուն պազկերպով պատասխանես իրեն սիրոյ նշանին :

Է . “Եւելք քեզ պիտի շարժէ ասքարերարութեանս մենծութիւնը ” : Անտարակոյս շատ մենծ բան կըսեպէիր, թէ որ Յիսուս փրկիչդ յայտնի քեզի երևնար մէկ անոյշ պզտի տղու պէս, ու թող տար քեզի՝ որ սուրբ հայր Յովսեփին պէս քու գիրկդառնէիր զինքը, սիրէիր, փայփայէիր, ու երկրսպագէիր : Աս հրաշքը ի՞նչ պիտոր ըլլայ ատ շնորհքին առջեր՝ որ կըլլայ քեզ սուրբ հաղորդութենով, որով ճշմարտասլէս քու սիրտդ կինջնայ քու ստեղծողդ ու տէրդ : Կըրնայ մի քեզի իրմէ աւելի բան մը տալ : Կըրնայ մի աւելի մենծ պատիւ ընել քեզի՝ քան կերակրելով քեզի իր մարմնով և արեամբ, և ընելով զքեզ կենդանի բնակարան իր աստուածութեանից : Արդ ի՞նչպէս կըլլայ որ դուն

չփափաքիս աս հրեշտակաց հացին :

Դ. “Պէտք է որ քեզ շարժէ քու
շատ կերպ պիտանաւորութիւնդակ
ի հարկէ կըհասկընաս դուն՝ որ չա-
փէ ’ի դուրս տկար է քու ուժդ՝ չորս
դիդ պատած վտանգներէն խալըսէ-
լու, առաքինութեան ճամբուն մէջ
հաստատ մնալու, ու սուրբ կեանք
ունենալու : Ե՞յ ուր պիտօր դոնաս
պէտք եղած օդնութիւնը : Հապա-
հէմէն գնած ապաւինէ ’ի խորհուրդ
սուրբ հաղորդութեան . ան կըմարէ
գէշ յօժարութիւններդ, փորձու-
թիւններուն ուժը կըկտրէ, հաւատքդ
կաձեցնէ, յոյսդ կը զօրացնէ, սէրդ
կը վառէ կըբորբոքէ . աս իրեք առա-
քինութիւններն ալ բուն սուրբ կը-
նեն քեզ, կամ հոն կըտանին : Հի-
ւանդները Յիսուսին սոսկ փէշըդպչէ-
լով կըուընտնային . ուրեմն ի՞նչ չըներ
քեզի իր աստուածային մարմինը :

ԳՈՐԾՎԵ

ա . “Առջի իրիկուընէ քեզ պատրաստէ առառուն սրբութիւն առնելու : Ուստի զգուշացիր էն պղախ մեղքէմընալ , մանաւանդ պարկեշտութեան դէմ եղածէն : Մէկ քանի ջերմեռանդութիւն ըրէ , հոգևոր բան մը կարդա՛ , դուն քեզի մանարմունոր ապաշխարանքներ դիր . մասնաւոր կերպով տաք սրտէ ըրէ իրիկուան աղօթքդ . պառկելու գնա՛ մէկ սաստիկ փսփաքով մը Յիսուս առնելու , որչափ կարելի է նէ՝ կարօտ քաշելով ամմէն կերպ ջերմեռանդութեամբ՝ որ Աստուած դայ քու սիրադ մտնայ սուրբ հաղորդութեամբ :

Ե . “Ճերմեռանդ կերպով սկսէ սրբութիւն առնելու օրդ : Կանոնվուելիր աս մտմտուքով ու մենծ մխիթարանքովլթէ այսօր իմ տէրս ու ստեղծօղս իմ սիրտս պիտի դայ : Ետքը առաւտեան աղօթքդ ըրէ . շուտ լմընցուր տան մէջ հարկաւոր եղած բա-

ներդ , մաքուր հագութ Յիսուսի
ոլատիւ ընելու համար , ու բարի բա-
ներ մտքէդ անցնելով ելքը դնած ժա-
մը : Հոն աեղը խոստովանանք եղի
ինչ որ ակտք էնէ , ալարզ սրտիւ ու
զղջումով : Վայ կուդայ գլխուդ , թէ
որ խառնակ խղճմուանքով Յիսուս
առնես նէ . Յուդային նման կըլլայ
քու հաղորդուիլդ , մահ , դատաս-
տան , և դատապարառութիւն միան-
գամայն ճաշակելով :

7. “Խոստովանելէդ էտե՝ մտքով
ու սրտով այն առաքինութիւնները
քեզմէ ալատրաստէ , ինչ որ ակտք է
սուրբ հաղորդութեան „ : Աս ալատ-
րաստութենէ կըկախուի ինչ պտուղ
որ պիտի քաղեսնէ : Ալբուրէն այն-
չափ ջուր կըրնաս առնել որչափ է
քու ամանիդ չափընէ : Աս ներդոր-
ծութիւնները ընելու կօգնեն քեզի
մէկ քանի մտածմունքս .

8. “Ո՞վ է որ քեզի պիտի դայ՝ հա-
ղորդուելովդ „ : Ամենակարօղն Աս-
տուած , քու ստեղծօղդ , վրկիչդ ,
հայրդ , բժիշկդ , ու վարդապետդ :

2. "Որո՞ւն սլիտի գայ" : Քեզի՝ որ
մէկ ողորմելի մեղաւոր մընես, ան-
հաւատարիմ ծառայ, խեռ զաւակ,
ապերախտ ստեղծուած, գետնի որդ
մը, և ըստ ինքեան ոչինչ:

3. "Ինչո՞ւ սլիտի գայ" : Քեզ բժըշ-
կելու, լուսաւորելու, զօրացնելու,
հարուստցնելու, ուրախացնելու, ու
բոլորովին իրեն հետքեզ միացնելու:

4. Ի՞նչ կերպով սլիտի գայ" :
Ծածկուած հացի տեսքին տակը՝ բո-
լորովին շնորհք ու սէր :

5. "Ե՞րբ կուգայ" : Երբ որ գուն
կուզես նէ . ամմէն օր ալ թէ որ խոս-
տովանահայրդ քեզ հրաման տայ նէ:

6. "Ո՞ր բաներովը կուգայ" : Կը
մարմնովը, արիւնովը, հոգիովը,
մարդկութենովը ու աստուածու-
թենովը, իր ամմէն կատարելութիւնն
ալ հետը, քեզի ալ արդիւնք՝ սկար-
դեք ու շնորհք բերելով : Երբոր աս
բարի մտքերը սիրոդ կըշարժեն նէ,
էտեն զանազան առաքինութեանց
նէրդործութիւն ըրէ :

7. "Հաղորդուելու ատենդ՝ քեզի

ժողվէ ամմէն կարողութիւնդ , որ ա-
 ղէկ ջերմեռանդութիւնը ընես,,,: Քա-
 հանան որ քեզի կըդառնայ՝ սրբու-
 թիւն ձեռքը նէ , ըսէ սրտանց . “ Տէր
 չեմբաւական՝ որ իմ սիրտս մտնաս .
 միայն ուղէ , հոգիս կըբժշկուի . հապա
 որ կուզես իմ հոգւոյս տունը մտնալ
 նէ , աս ի՞նչ մենծ շնորհք է ... Եսիքը
 մօտեցիր սրբութեան ամմէն կերպ
 պատկառանքով . հրեշտակներուն ալ
 աղաչէ որ քեզի ընկերանան . ու ըսէ
 սրտանց . “ Եկո՛ւր եկո՛ւր ինծի սի-
 րելի տէր իմ և ստեղծօղ . հաւատամ
 տէր ’ի քեզ , յուսամ ’ի քեզ սիրեմ
 զքեզ յամենայն սրտէ . կաղաչեմ ,
 Եկո՛ւր , իմ ծայրագոյն բարիս , իմ
 կեանքս , և իմ ամմէն բանս,,,: Երբոր
 քահանան սուրբ նշխարը քեզի կեր-
 կընցընէ նէ , բերանդ պարկեշտաբար
 բաց . լեզուդ շրթունքիդ մօտ բռնէ ,
 ու սրբութիւնը առածիդ պէս՝ հան-
 դարտութեամբ ետ քաշուէ : Ու եր-
 կըրպագութիւն ընելով ելլիր եկո՛ւր
 տեղդ՝ բոլոր բոլորովին քեզ ժողվը-
 տած :

Ե . “Հաղորդուելէդ էտև նայէ որ
 առած շնորհքիդ պատւղը վայլես,, :
 Տեղդ եկածիդ պէս՝ փշաքաղելով մը
 դուն քեզի ըսէ հաւատքով . “Ո՛վ է
 սա՝ որ սիրտդ եկաւ , ու հոգւոյդ
 տունը նստելուզեց . ինչո՞ւ համար ,,:
 Ու դարձիր ընտանեքար խօսէ Յիսու-
 սին հետ , ինչպէս հպատակ մը իր
 թագաւորին հետ , աշկերտ մը իր
 վարդապետին հետ , կարօտութիւն
 ունեցողը բարերարին հետ , զաւակ մը
 իր հօրը հետ , հիւանդ մը բժշկին
 հետ : Քու սիրտդ բաց իր առջեր ,
 քու տկարութիւններդ իրեն խոստո-
 վանէ , ամմէն պիտոյքդ իրեն յանձ-
 նէ , թողութիւն ուղէ ամմէն մեղքե-
 րուդ , օդնութիւն ուղէ ամմէն նեղու-
 թիւններուդ . աղաչէ որ օրէ օր
 առաքինութեան մէջ քեզ առաջ տա-
 նի , իր չարչարանաց ու մահուան սի-
 րուն համար , իր անբաւ արդիւնքովը ,
 իր անհուն բարերարութեամբը : Ու-
 րիշ ասոր նման աղօթքներ բերնուց
 կամ գրքի վերայ կուշտ մը ընելէն
 էտև՝ Աստուծով միսիթարեալ սրտով

տունդ դարձիր:

Ղ. “Արբութիւն առած օրդ բոլոր
ջանա՞ որ քեզ ժողվրած պահես , :
Ան օրը սեպէ՛ քեզի մէկ հատիկ
փառք , մէկ հատիկ տօն ուրախու-
թեան . նայէ որ պղտիկ բանով մալ
Խստուծոյ խաթրին չի դպչիս : Սոս-
կալի ասկերախտութիւն չէ մի որ ա-
ռաւօտը Աստուծոյ բնակարան ըլլա-
լէն էտև՝ իրիկունը զԱստուած քեզնէ
հալածես : Սոսկացիր , թէ որ ան-
վայելխօսք մը բերնէդ ելլայնէ . միտ-
քըդ բեր , թէ լեզուդ սրբուեցաւ Յի-
սուսին սուրբ մարմնովը . փախիր ամ-
մէն վտանգաւոր խօսակցութենէ ,
ընկերութենէ , խաղալէն խնտալէն ,
ուար բոնելէն , թէ որ չես ուզեր մէկ
վայրկենի մէջ կորսնցնելսուրբ հա-
ղորդութեան ամմէն սպառւլը : Հապա-
ջանա՞ սուրբ պահել այն օրը տօնի մը
պէս՝ աղօթքով , կարդալով , ժամերը
երթալով , և ուրիշ բարեպաշտական
գործքերով :

ԽՐԱՏ ՈՒԹԵՐՈՐԴԻ

Կիրակոսն ու պօն օքերու համար :

“Մասնաւոր ջանք ունեցիր ասանկ
օրը սուրբ ընելու,, :

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ա Բ

ա. “Պարագիան ես Աստուծոյ պա-
տուիրանովը ,, : Ամբողջ շաբաթը
տուեր է քեզի Աստուած՝ որ քու բա-
նիդ գործիդ սկարապիտ . մէկ կիրակի
օր մը կամ տօն օր մը պահեց իր պա-
տուոյն համար : Հիմա ասանկ սուրբ
օրը Աստուծմէ գողնալչէ մի, թէ որ
դիսի գործքի հետ ըլլաս, կամ խա-
ղալովանցընես, կամ անվայել և մե-
ղանչական բանի ծախես :

բ. “Եկեղեցնայ պատուիրանով ալ
պարողիան ես,, : Եկեղեցւոյ զաւակ
ես նէ, պէտք է որ իրեն հնազանդ
ըլլաս: Չէ մի ըսեր ինքը քեզի, թէ շա-
բաթ օրւան տեղը կիրակէն պահէ :

ուրիշ տօն օրերնալ ինքը դրած չէ մ
որ պահես : Հրեաները նայէ , ինչ
պէս կըբռնեն իրենց շաբաթը , ու
ուրիշ տօն օրերնին : Հիմա ի՞նչ կըսեն
անոնք , ի՞նչ կըսեն անհաւատները ու
աղանգաւորները , երբոր քեզ տեսնան
որ կիրակիդ ու տօներդ ոտքի տակ
կառնես : Այս , մի վշտացներ քու
մայրդ՝ զսուրբ կաթուղիկէ եկեղեցի
սկատճառ ըլլալով իր թշնամեացը՝ որ
քու չար օրինակովդ ծիծաղին սուրբ
օրերուն վրայ :

Պ . “Քու հոգիիդ համար ալ պար
տըկան ես , : Ո՞րչափ հոգ կըտանիս ,
ո՞րչափ բան կընես քու մարմնուդ հա-
մար՝ որ փտտած հող մը նէ . բոլոր
օրդ , շաբաթներ , ամիսներ , տարի-
ներ , բովանդակ կեանքդ ալ անոր հա-
մար կը ծախես՝ իր պէտքը ընելու ու
զինքը փայփայելու : Ե՞յ հոգիիդ հա-
մար , որ անմահ է , Աստուծոյ պատ-
կերն է , ու պիտի երթայ զԱստուած
վայլելու , մէկ քանի օր մը չիհանե՞ս
որ սուրբ պահես տօները հաւատքիդ
կանոնով : Ափսոս այնչափ քրտնքին՝

որ մարմնու համար կը թափուի , որ
վաղը մէկան օր փոշի պիտի դառնայ:
թէ որ հոգիդ կորսնցընես նէ , ամմէն
բանը կորուսիր . վայ վայի վրայ կու-
գայ :

ԳՈՐԾՎԱԾ

ա . " Աղեկ նայէ , որ դուն ալ քու
ձեռքիդ տակը եղօղներն ալ կիրակի
օրը բնաւ արդիլած բան մը չիբանիք ,
բայց եթէ ան անկ հարկ մը հանդիսէի
որ ճար ճարակ չիկայ՝ այն բանը պի-
տի ըլլայ , : Վայ այն վաստըկին՝ որ հոգ-
ւոյն մնասովը կը վաստըկուի . ինչ
վաստակ է ատ : Աստուծոյ օրհնու-
թիւնը կայ մի այն բանին վրայ՝ որ
մեղով կը լլայ : Գիտցիր որ շատ աղեկ
յաջողութիւն կը դանան անոնք որ
տօն օրերը ուրիշ բան չեն ըներ , միայն
սուրբ պահելու կընային : Ան որ եր
պարագը Աստուծոյ կընէ նէ , Աս-
տուծ անոր չի տար մի ինչ որ պէտք
է նէ :

Բ . " Առտըւանց սկսէ սուրբ ընել
3

օրդ,,,: ՄԵՄՔԴ բեր ի՞նչ որ սուրբ հա-
ղորդութեան համար ըստնք նէ : Ժա-
մերը պատարագները կըսկսին նէ , ա-
տեն մ'անցըներ տան մէջ ու Ճամբռ
վրայ : Այնչափ հոգ ունիս մարդկան
խաթերը համար . հապա առջի հոգդ
Աստուծոյ պատիւ ընել պիտոր չը-
լայ մի : Ուրեմն շուտ ըրէ , ժամ եր-
թալնայէ . մինակ ես նէ՝ բարի բարի
մտքերով , ուրիշի հետ ես նէ՝ Ճամ-
բան շահաւոր բան խօսելով : Պատա-
րագի առջև զգաստ կերպով պարկեցա-
կեցիր : Մենծ տօն մը հանդիպի նէ ,
կամ սիրտդ հոգեւորի վառած է նէ ,
Խղճմտանքդ մաքրէ խոստովանան-
քով ու հաղորդուէ :

Պ. “Ժամուն խօսքերուն ուշդիր,,,:
Մէմը որ համը առնես նէ , հոգիդ
անփորձ կըմնայ ամմէն վահանգէ , ամե-
նայն վորձութեանց դէմ կըդնես , և
լած Ճշմարտութիւններդ վահան մը
կըլսան քեզի չար սատանային դէմ:
Մեղաւոր ալ ես նէ , մեղքի մէջ չես
մնար . նոյն Ճշմարտութիւնները կըքա-
շեն դուրս կըհանեն քեզ : Թէ որ Աս-

տուծոյ բանին դէմ կըկայնիս նէ ,
 կամ փուժ պատճառով մը անկից ետ
 կըկենաս նէ , վայ քեզի պէս քրիստո-
 նէին . հաւատոքդ կըտկարանայ , ու
 կամաց կամաց կըցնդի կերթայ .
 խղձմտանքդ քուն կըլլայ . սիրտդ ու-
 րիշ բան չախորժիր աշխարհային ու
 մարմնաւոր բաներէն 'ի զատ . Աս-
 տուծոյ լոյսը կըդադրի սիրտդ լու-
 սաւորելէն . հոգիդ զուրկ կը մնայ երկ-
 նաւոր մխիթարութենէն . խույերդ
 մեղքերդ գլուխ կըվերցընեն . ետքը ետ-
 քը սիրտդ կըքարանայ չարկներուն
 մէջ : Ուրիշ աւելի յայտնի նշան չիկայ
 դատապարտութեան , ինչպէս քա-
 մահրել Աստուծոյ բանը : Ուրեմն
 դուն նայէ որ բնաւ չիպակովս քա-
 րովէն . հապա միշտ մտիկ գիր աս-
 տուածապաշտ սրտով , անկից միշտ
 մէկ բարի պտուղ մը առնես տանիս
 հետդ : Կմանապէս քրիստոնէական
 վարդապետութենէն ալ , ուր հէմ
 հաւատքի՝ հէմ բարի վարդի ամմէն
 բանը պարզ կըլսես . անանկ որ մենծ
 մասը քարովէն էւել օգտակար են

ամմէն քրիստոնէի:

Պ. “Զանց մըներ երեկոյեան ժամին ալ երթալ,, : Տղաք կերթան նէ, ամօթ չէ մի քեզի չերթալ. ովլրսեր է քեզի թէ տղոց համար ու ծերերուն համար է ատ բանը: Հապա թէ եղբայրութիւն մընալ գրուած ես նէ, դործ քով ցցուր քեզ արժանաւոր եղբայր՝ պարտքէդ չխպակսելով: Եւ ուրիշ կերպ հասարակաց աղօթք որ կըլլայ ժամուն մէջ, նայէ որ միշտ ներկայ ըլլաս: Միատեղ բազմութեան աղօթքը շատ հաճոյական է Աստուծոյ:

Ե. “Ժամու ատեն տունը հարկաւոր դործք հանդիպի նէ, նայէ որ տան մէջն ալ՝ որչափ կըլնաս նէ՝ սիրտըդ Աստուծոյ հետ ըլլայ,, : Տօն օրը պարապ ատեն սեպելով շատ մի նըստիր պատուհանին առջել. ծառայական դործքէն ալ զգուշ եղիր. վտանգաւոր անձ մը տունդ մի ընդունիր: Ո՛րչափ անսպատշաճ բան է որ՝ ուրիշները ժամը Աստուծոյ հետ ըլլան, դուն տունը Աստուծոյ դէմ բան ընես: Խուցդ քեզի ժամըլրէ, ու քու

աղօթքդ Եկեղեցին Եղածներուն հետ
միացուր . Աստուած ալ սիրով կըն-
դունի , Երբոր մաքուր ու խոնարհ և
ջերմեռանդ սրտէ առաջ կուգայ նէ
աղօթքդ :

զ. “Օրւան մնացած ատեննալ
փուծ բաներու հետ մըլլար,, : Թող
անհաւատները իրենց ցնծում օրը ան-
կարդ բաներ ընեն . Քրիստոնէին կը-
վայլէ որ սուրբ ընէ իր տօն օրը : Նստէ
հոգեոր բան մը կարդա՛ , Յիսուսին
վարքը աւետարանէն , սրբոց վարքը ,
հարանց վարքը : Այցելութիւն ըրէ
սրբութեան ժամերուն մէջ . հիւանդ
տես ու միսիթարէ . մէկին խեղճու-
թեան հասիր . տգէտ մարդու մը բան
սորվեցուր : Քիչ մալ գնա՛ ժուռ Ե-
կուր ծառերու կանանչներու մէջ . մի-
այն թէ անյարմար ընկեր չունենաս ,
անկարդ սովորութեան մը չհետեխ ,
սիրոյ դէմ բան չընես : Սուրբ օրերն
որ ասանկ աղէկ անցընես նէ , շատ
մենծ բան կը վաստըկիս :

ԽՐԱՏ ԻՆԵՐՈՐԴ

ԶԲՈՍԱԿԱՒՔ ՎՐԱՅ :

“Աչքդ վրադ աղէկ բաց զբօսանքներու ատենը,, :

Պ ԱՏ Ճ Ա Ռ Ը

ա . “Զբօսանքը ըսածդ շատ անդամ
մեղքի պատճառ ալ կրլայ,, : Այս,
մեր օրերը քիչ մարդ կայ որ առանց
մեղաց զբօսանքի ելլալ գիտնայ : Ճա-
տը կայ որ համ մը չեն առնուր՝ թէ
որ անկարգու խենդուխելառ բաներ
չըլան նէ զբօսանքին տեղը : Ափսոս ,
հազար ափսոս , որ աշխրքիս զէֆքը
սէֆան հասարակօրէն մեղքով կըսկը-
սին , մեղքով կըլմննան . որչափ ուրա-
խութեան անունով Աստուծոյ դէմ
բաներ կրլան , որչափ դայթակղու-
թիւն , որչափ հոգիի կորուստ :

Բ . “Զբօսանքներուն մենծ մասը
վտանգաւոր է,, : Ատենին՝ տեղին՝ ան-

ձանց անյարմարութիւնը , ո՞ք նու-
թեան ապականութիւնը մէյմէկ
վտանգ կըբերեն : Սատանային որո-
դայթը շատ, փորձութիւն անպակաս,
չար օրինակը զօրաւոր : Ո՞վ կրնայ ա-
ռանց հրաշքի զինքը խալըսել ասանկ
վտանգներէն : Իմ կարծիքս ան է , որ
մէկ հատիկ դեղն է փախչել ասանկ
զբօսանքներէն :

գ . "Հասարակօրէն զբօսանքին մէջ
չափ չլապահուիր .. : Խրաւ որ զէֆք
սէֆա ալ կայ անմեղ ու անիշնաս +
բայց ո՞րչափ դժարութիւն ալ կայ
կարգով կանոնով ընելու : Ո՞րչափ
զգուշութիւն պէտք է չորս դին դը-
նել պարկեշտութեան՝ երկիւղածու-
թեան ու հարկաւոր բաներուն աղէկ
նայելու : Ասոնց որ ուշ չիդնէ մէկը
նէ , դիւրաւ մարդուն սիրտը կըխո-
տորի , ու գէշի կերթայ :

ԳՈՐԾՎԵ

ա . "Սայէ որ ատես զզուիս քէֆի
բաները՝ ինչ կուզէ նէ ըլլայ, երբորա-

ուանց մեղաց շըլլար նէ,, : Ի՞նչպէս
ուրախ կըդնայ ըլլալ մէկն որ՝ հէմ
Աստուծոյ գէմ հէմիր խղճմտանքին
գէմ կընէ : Մէկ բարի զաւակ մը
կուզէ մի ան զբօսանքն որ իր հօրը
կամացը գէմ է . կամ մէկ հաւատա-
րիմ մարդ մը կուզէ որ իր թագաւո-
րին անհաճոյ բան ընէ : Մէկ ձշմա-
րիտ քրիստոնէ մը անանկ ուրախու-
թեան էտևէ կերթայ մի , որ Աստու-
ծոյ խաթրին կըդպչի : Աղէկ նայէ որ
մեղրին մէջ թոյն խառնած շըլլայ :

Է . “Զգոյշ կեցիր ըստկով խաղ
խաղալէն , թէ թղթի թէ թավլուի
մէջ ,, : Քանի մարդ իր տունը աւրեց
երկար ատեն շատ ըստկով խաղի զին-
քը տալէն : Անանկ մարդը իր բանի
դործին ծոյլ կըլլայ , իր պարտքը ք-
ներ , ստակը կըկորսնցնէ , սուտ կը-
խօսի , երդում կընէ . կայ որ կախար-
դի ալ կերթայ իր բախտը գտնալու-
ամմէն չարեաց խորունկը կինկնայ ,
հոգին ալ փրկութիւնն ալ կըծախէ :
Արգելք չիկայ՝ որ յոգնելէդ էտև
քիչ մը հանդչելու համար թեթև

խաղ մը խաղաս , միայն թէ ա-
նանկ անձինքներու հետ՝ որ քու պա-
տիւդ վար չիկնայ : Խաղալդ բարի
վախճան մը ունենայ , ինչպէս՝ գէշ
խօսքերը խափանելու համար , մէկ
չարիք մը դադրեցնելու համար , խռո-
վածները հաշտեցնելու համար , ու-
րիշի մէկ միսիթարանք մը կամ հան-
դիստ մը տալու համար : Խաղը պատ-
ճառ ըլլայ քեզի՝ ժամէն պակսելու ,
պարտքերը մոռնալու , քու տանդ-
իսաս մը բերելու , ու շատ ըստկէ ել-
լալու : Չեռքդ ստակ դայնէ՝ աւելի
աղէկ տեղ չիկայ մի խարճելու , ինչ-
պէս աղքատները ու խեղճերը : Բար-
բարոս կըսեմ քեզի , թէ որ ասոնց
բաժին չի հանես ան ըստակն որ խա-
զի կուտաս :

Դ . “Որկրամուլ մըլլար , հարբեցու-
թենէ քեզ պահէ , ” : Ասոնք անանկ
բաներ են՝ որ միտքը կըբըթացնեն ,
կեանքը կըկարճեցընեն , տանը խա-
ղաղութիւնը կըխռովիլն , և ամմէն
չարեաց դուռ կըբանան : Գիտես թէ
քանի՞ քանի կերուխումի չափ անցը-

նօղները շեն սեղան նստելնինի հոգին
նին փչեցին՝ դժոխքը ինջան : Դուն
որ ասանկներէն դուրս ըլլալ կուզես
նէ, քու սեղանդ շտկէ քու կարողու-
թիւնդ նայելով, Աստուծոյ կամացը
հետեւելով, մսխողութենէ հեռու ըլ-
լալով: Նայէ թէ քանի մուրացկան՝
անօթութենէ մեռնօղ՝ կը բնար ապ-
րիւ քու մէկ սեղանովդ, մանաւանդ
թէ մէկ թապախ բանովդ:

Ք . “Պար բռնելէն փախիր” : Պար
ըսածդ մեր օրերը եղեր է ողբալի
սլատձառ մը մեղք ինկնալու, մէկ
հանդէս մը՝ ուր անմեղութիւնը ծան-
տըր վտանգի մէջ կը լլայ, ու չարաչար
կիսնայ : ՄԵՆԾ փորձանքի տեղ է ե-
ղեր : Ի՞նչպէս կը նայ ան տեղը անա-
րատ մնալ քու տկար առաքինու-
թիւնդ : Նայէ թէ ինչպէս մաքուր
դացիր, աղտոտ տունդ դարձար : Ավ-
ոտա, ո՞րչափ անձինք անտեղը խել-
քէ կելլան : Ուստի փախիր փախիր
կը սեմ պարը երթալէն : Քանի որ
սոտ բանդ քեզի համով կերպնայնէ,
ես չեմ կը բնար հաւտալ թէ դուն

Ճամբայ եկեր ես, աղէկի դարձեր
ես:

Ե. "Ծածուկ ժողովքի պէս մէկ-
տեղուելէն ալ փախիր, և ընդհան-
րապէս կասկածելի ու վտանգաւոր
երեցած ընկերութենէ .,: Չեմըսեր
քեզի թէ աշխրքէ դուրս ելիր. հապա-
քու միսիթարանքդ ու զբօսանքդ ըլ-
լայ պարկեցտ դրացիներու ճանչ-
որներու հետ, աստուածավախ մար-
դու հետ, ու բարի վախճանով. ան-
ալ որչափ կարելի է նէ՝ ցորեկով:
Տնէդ երկար ատեն մի հեռանար. և
ուր դանըւիս նէ, ճշմարիտ քրիստո-
նէի պէս կեցիր: Հեռու կեցիր այն
տներէն, որոնց տանտէրը ամմէն բա-
նի աչք կըդոցէ, ի՞նչ մարդ ըլլայ նէ՝
ներս կառնէ, տղաքը համարձակ են
չափէ 'ի դուրս, աղջիկներուն՝ ծտ-
ռաներուն՝ աղախիններուն բերանն
ալ աշխրքի խօսքերը կը պտրտին, ան-
ալ անպարկեցտ սաշմաներով, ան-
վայել մանիներ ալ կարդալով, և այլ
ուրիշ անշնորհք շարժմունքներովու
բարեկամութիւններ ընելով. անանկ

որ անմեղութիւն չիմնար անանկ տներու մէջ։ Վայ անոր որ ասանկ տգեղ ժողովսերու դլուխ կըլլայ . ալ աղէկ էր ժանտամահ եղած տեղը երթար։

Հ. “Միայն անմեղ ուրախութիւնները քեզի անուշնայ,, : Ասոնք սիրտ կըբանան, ուժդ կընորոգեն, ուրիշի ալբարի օրինակ կըլլան, առաքինութիւնները կըզօրացնեն, միայն թէ գիտնաս կարդ կանոն սլահելուրախութեան : Աղէկ զբօսանքին չափազնցն ալ քրիստոնէ մարդու չիվայլեր, աշխարհավար մարդու ու մարմնապաշտի բան է : Արքայութեան ճամբան երկու չըլլար, մէկ է . ճամբու վրայ փուշատ, վարդ չկայ :

ԽՐԱՏ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Թագավորներուն և աւագագնացութիւնն
ներսու կը այ :

“Բարի օրինակ Եղիք աս բաներուս
մէջ,,:

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ը

ա. “Թագիորն ալ՝ ուխտ Երթալն
ալ՝ ի փառս Աստուծոյ և ի պատիւ
սրբոց դրուած են,,: Ասանկ հանդի-
սական բարեպաշտութեան գործքե-
րուն մէջ սկզբ է որ ամմէն մարդ
ջերմեռանդութիւն ունենայ, ու
կարդ կանոն սկահէ : Չէ նէ՝ Աստու-
ծոյ և սրբոց փառք պատիւ ըլլար,
հապա նախատինք կըդառնայ, տես-
նողներուն ալ դայթակղութիւն կը-
լայ, անհաւասներուն ու չնչահա-
ւասներուն ալ ծիծաղ ու դժոխային
զեքք կըբերէ :

Բ. “Աս ջերմեռանդութիւնները

անոր համար ալ կըլլան՝ որ Աստուած
մեզ պէսպէս փորձանքներէն պահէ,
աշխրքիս ողորմի,, : Կաթուղիկէ եկե-
ղեցւոյ հնուց պէրի սովորութիւնն է
հրապարակական աղօթքները ընել, որ
եղած չարիքները փարատին, կամ նոր
չարիք մալ չըլլայ տէյի : Ժողովուր-
դին միատեղ թափորով աղօթքը՝ Աս-
տուծոյ ձեռքը եղած վրէժինդրու-
թեան թուրը վար դնել կուտայ .
միայն թէ ինչպէս պէտք է՝ անանկը-
լայ, խոնարհ՝ ջերմեռանդ՝ զղջացած
ու պարզ սրտիւ : Չէ նէ նորէն Աս-
տուած կըբարկանայ . անատեն ինչ
կըզարմանաս՝ թէ պատիժը երկննայ,
կամ սաստկանայ ալ նէ :

Դ. “ Անոր համար ալ կըլլան աս
ջերմեռանդութիւնները , որ Աս-
տուած նոր նոր բարիք ընէ աշխրքիս,, :
Աստուած ամմէն ուղղափառ կողմե-
րը ընտրեր է մէկ քանի մասնաւոր
տեղուանիք՝ իր բարիքը մասնաւոր կեր-
պով յայտնի ընելու . միայն թէ ասանկ
տեղ գացովը պիտոր երթայ աղէկ
սրտով, որ արժանի ընէ վինքը այն

բարիքին մասնակից ըլլալու . աս գիտ-
ցիր որ ձեռքդ պարապ կըդառնաս՝
թէ որ պէթէր չըլասնէ , Երբոր սոսկ
հետաքրքրութեան համար Երթաս ,
ու պարապ ասդին անդին պտըտիս :

ԳՈՐԾՎԸ

ա . “ Ջանա՛ որ վազես Երթաս այն
թափորները և ուխտի տեղուանքը որ
քուն քու կեցած տեղդ Եղած ժամը
կըլլան,, : Աս հասարակութեան մասն
ես դուն . և ինչպէս մեղքերուն մաս-
նակից Եղած ես , մասնակից Եղիր
ջերմեռանդութիւններուն ալ՝ որով
Աստուած կըհաշտըւի . պարկեշտ ու
կոկ հագուստով գնա՛ , խելքդ քեզի
ժողված , դրած կարգին մուխայէթ ,
անսանկ որ՝ պատիւ ընես քու հա-
ւասքիդ . չէ թէ աւելի բարկացնես
զլաստուած , ու պաղութիւն սորվեցը-
նես արդէն պաղ ու անշնորք մարդ-
կանց : Զայնակից Եղիր հասարակաց
աղօթքներու՝ Երգերու . յիշէ թէ
թափոր Ելլեր ես , չէ թէ զբոսանքի :

Ք. "Ճամբ որ կը մտնաս թափորով՝
նայէ որ անոր դիտաւորութիւնը կա-
տարես, : Երսի կողմերը քաշուէ,
քարոզին՝ ժամերգութեան սրտանց
ուշ դիր . խնդրէ Աստուծմէ որ պար-
գևէ քեզի այն շնորհքը, որուն հա-
մար եկեր ես աղօթելու: Ի՞նչ շնորհք
պիտոր յուսայ ան՝ որ ուրիշներուն
աղօթք ըրած ատենը, ինքը ժամէն
դուրս ստորափի, լաֆի զբօսանքի հետ
ըլլայ, կամ երթայ խահվէխանա մը,
կամ մէխանա մը :

Դ. "Թափորէն ու ուխտ գացով
ներէն մի զատուիր՝ ետ դառնալու
ատենն ալ, : Ի՞նչ գայթակղական ու
ամօթալի բան է պազի ճահիլներուն
ըրածը, որ հանդէսը ժամ չկարձած՝
իրենք էտե կըմնան, ամմէն բանը կը-
թողուն, իրենց եարան եօլաաշները
կըմինտուեն, ու պէտք չեղած տե-
ղուանիք կելլան կըմնանան . ալ աղէկ
էր՝ իրենց տունը դառնային: Ասանել
ներուն անկարգութիւնը աւելի մնաս
կուտայ աշխաքի՝ որչափ օդուտ չեն
կրնար ընել ուրիշներուն աղօթքը :

դ. “Ասայէ որ Երբոր քահանայ մը
չիկայ , պայտաղի մարդկանց հետ թա-
փորի և ուխտի չերթաս „: Չէ նէ՝
ջերմեռանդութեան Երթալ ըլլար ,
հապա զեֆիքի սէֆայի Ելլալ . անանկ
խառնակ բաներով՝ մէկին հոգիին օ-
գուտ ըլլար , մնաս անապակաս կըլլայ:

Ե. “Միտքդ դիր , թէ ամմէն թա-
փոր և ուխտ Երթալը պիտի ըլլայ
քեզի սուրբ ըլլալու պատճառ „ :
Ի՞նչպէս կըլլայ՝ ըսես նէ , դիւրին
ճամբան աս է : 1. Երթալէն առաջ՝
խոստովանահօրդ հարցուր . քու ծը-
նողացդ , տիրոջդ ու մեծաւորաց կամ-
քովը ըլլայ : 2. Անկից էտե խոստո-
վանուէ , հաղորդուէ , որ աւելի աղէկ
ու վարձքով ըլլայ ջերմեռանդու-
թիւնդ : 3. Հետդ ընտրանօք՝ աղէկ
ընտրանքով ընկերներ առ , որ հէմ
մեղքէ հեռու ըլլաս , հէմ աւելի ա-
ռաքինութեան փոյթ ունենաս : 4.
Աստուծոյ անունովը ճամբան Ելիր ,
տունդ տեղդ՝ բանդ գործդ՝ հաւա-
տարիմ մարդու յանձնելով : 5 .
Ակիզբէն Աստուծոյ ընծայ ըրէ քու

Ճամբորդութիւնդ . ու միտքդ դիր
 թէ Յիսուսի հետ Ճամբայ կընես կոր
 որ քեզի համար քալեց՝ ուր որ
 քալեց նէ . օգնական կանչէ քեզի
 սուրբ Աստուածածինը , սկահապան
 հրեշտակդ , ու պաշտպան սուրբերդ:
 6. Ճամբան աղօթքը ու բարի մտա-
 ծութիւնները սկակաս չընես , ու
 ըիշներուն հետ ալհոգեոր խօսակցու-
 թիւնը : 7. Ճամբու ամմէն դժուա-
 րութիւնները նեղութիւնները Աս-
 տուծոյ նուիրէ : 8. Ամմէն տեղ՝ ամ-
 մէն գեղ մի ուշանար : 9. Հանգչելու
 ատենները զգաստ և պարկեցտ եղիր,
 ցորեկն ալ գիշերն ալ : 10. Ճամբան
 կէս Եղածին սկէս՝ Աստուծոյ առջե
 դիտաւորութիւնդ ու ջերմեռանդու-
 թիւնդ նորոգէ , իրմէն օգնութիւն
 խնդրէ , մանաւանդ հաստատուն
 աստուածպաշտութեան չնորհք : 11.
 Դառնալդ ալ կանոնաւորեալ ըլլայ՝
 ինչպէս որ երթալդ : 12. Տուն որ
 կը դառնաս նէ՝ բարի օրինակ ըլլաս
 ամմէնուն՝ ջերմեռանդութեանդ պը-
 տուղը ցցնելով :

Ղ. "Արբութիւն որ կը դրուի ձեր
ժամը նէ, անհոգ չըլլաս երթալու
երկրապագութիւն ընելու, ամմէն օր
պիլէ սրբութեան այցելութիւն ընե-
լու: Ի՞նչ ըսեմ անանկ ջերմեռանդ
երեցածներուն՝ որ կերթան ամմէն
մատուռներուն, ու պատկերքնե-
րուն. բայց շաբաթ կանցնի՝ ամիս ալ
կանցնի որ Յիսուսի այցելութիւնն
ընելքն երթար. ան իսէ՝ սա է աւե-
լի անգին դանձ, և սրբութիւն սըր-
բոց: Ասկից կըդտնաս ամենայն օդ-
նութիւն պատրաստական, ամենա-
քաղցր մխիթարութիւն, ամմէն կերպ
շնորհք. վասն զի ինքն է անբաւ բա-
րութիւն և կարողութիւն:

ԳԱԼԻԽ Բ

ԱՄՄԵՆ ՄԱՐԴՈՒՆ ՊԱՐՏՔԸ
ԻՐ ՎԻՃԱԿԻՆ ՆԱՅԵԼՈՎ

ԵՐԿԱՆ կը լլար՝ թէ որ ամմեն մէկ
վիճակի ու աստիճանի մարդկանց մէ-
կիկ մէկիկ խրատ դրէինք նէ. ուստի
ընդհանրական կերպով միայն կու-
զեմ խօսիլ, ուսկից որ ամմեն մար-
դու խրատ կելլայ. և ամմենքը լրենց
պարտքը ընեն նէ՝ փրկութեան կը-
համնին, մենծը՝ պղտիկը, տէրը՝ ծա-
ռան, արհեստաւորը բանւորը, և
այլն, որոնցմով մարդկային ընկերու-
թիւնը կըբաղկանայ :

ԽՐԱՏ ԱԹԵԶԻՆ

Ուշաբնու գրիստոնէի համար :

“Քեզ Երջանիկ Ճանչցիր սուրբ կա
թուղիկէ Եկեղեցնայ զաւակդանուե-
լուդ համար,,:

Պ ԱՏ Ճ ԱՌԵ

ա. “Կաթուղիկէ Եկեղեցին միայն
է ճշմարիտ՝ իր յայտնի և անսխալ
նշաններովը „: Մի միայն է իր Երևե-
լի գլխովը, որ է Պատն՝ յաջորդ-
սրբոյն Պետրոսի՝ Քրիստոսի փոխա-
նորդին. մի միայն է իր վարդապե-
տութեամբն ալ, որ բոլոր աշխարքս՝
այնչափ զանազան ազգաց ժողովը-
դեան մէջ՝ բոլորովին մի և նոյն կա-
թուղիկէ հաւատքը կըդաւանին :
Սուրբ է իր հիմնարկութէն ’ի Քրիս-
տոսէ. սուրբ է իր օրէնքներովը, և
չնորհքներովը՝ որ իր մէջը էմանէթի

սլէս կըպահուին , և սուրբ կընեն
 զանոնք՝ որ իրեն հաւատարիմ կը-
 մնան . սուրբ է իր մէջը Եղած յայտ-
 նի սուրբերով , որ հրաշքներով ալ
 հաստատուած է իրենց սրբութիւնը:
 Ընդհանրական է՝ կամ կաթուղիկէ՝
 ամմէն ափենև ամմէն տեղքարողուե-
 լով ու տարածուելով իր վարդապե-
 տութիւնը՝ ի սկզբանե ինչուան հիմա:
 Առաքելական է՝ ՚ի Քրիստոսէ հիմ
 նած ըլլալով եկեղեցին անշարժ վիմի
 վրայ , ու բոլոր աշխարք տարածւած
 է առաքեալներով ու մարդարէնե-
 րով աս եկեղեցին՝ Աստուծոյ ժողո-
 վուրդը : Աս չորս նշաններս հաստա-
 տուն են միշտ Ճշմարիտ եկեղեցնայ
 վրայ՝ ինչպէս Նիկիոյ սուրբ ժողովքն
 ալ դաւանեցաւ այնչափ սուրբ հայ-
 րապետներով եկեղեցւոյ թշնամինե-
 րուն դէմ . ուստի ով որ աս եկեղե-
 ցիէն դուրս է նէ՝ մոլորած է , ու
 գժոխքը առջևնէ . անոր համար պէտք
 է որ վինտուէ զՃշմարիտ եկեղեցին ,
 ու հեռանայ սուտ եկեղեցիներէն :
 Բ . ՚Նոյն Ճշմարտութիւնը հաստա-

տուած է անանկ վկայութիւններով
որ տարակոյս չիմնար ։ ‘Սախ’ անհա-
մար սուրբ մարտիրոսներով, որ իրենց
արիւնը թափեցին քրիստոնէական
հաւատքին ճշմարտութեանը համար:
Երկրորդ՝ այնչափ սուրբ հարց և վար-
դապետաց բաներով, որ մէկ բերան
խօսեցան ու հաստատեցին զՃշմար-
տութիւնը: Երրորդ՝ այնչափ ընդհա-
նուր ու մամնաւոր ժողովքներով, որ
զՃռեցին նոյն ճշմարտութիւնը: Չոր-
րորդ՝ հաւատքի թշնամիներուն ալ
վկայելովը, թէ նոյն կաթուղիկէ Եկե-
ղեցին ճշմարիտ էր առջի չորս դա-
րերուն ատենը, որ անկից էտե չեն
կրնար դտնալ՝ թէ փոխուեր է մէկ
կերպով մը: Ուստի որչափ մէկը խօս-
տասիրտ ըլլայ նէ, չիկրինար այսչափ
վկանները մէկ դի դնել, ու իր խելքին
հետեւիլ թէ որ բոլորովին չէ կուր-
ցեր նէ:

Դ. “Նոյն ճշմարտութիւնը կըհաս-
տատեն անբաւ հրաշքներ ալ, : ‘Սախ’
հնուց պէրի Եղած հրաշքներն որ Ե-
կեղեցական պատմութեանց ու սուրբ

Հարց գրքերուն մէջն ալ անցած էն :
 Երկրորդ՝ նոր ատենաներ եղածները .
 ինչպէս էն սուրբ Գրանչիկոսի Քսա-
 ւերեանին ըրածները բազմութեան
 առջե . նոյնպէս ուրիշ սուրբերուն ,
 որոնց հրաշքները ամմէն կերպով
 ճիշդ քննըւած են իրենց սրբացուց
 ման ատենը : Ասոնք ալ չըլլար նէ ,
 Էն մենծ սքանչելիքը ան է՝ որ սուրբ
 հաւատքը այնչափ հալածմունք քա-
 շելով ալ հաստատուն պահուեցաւ
 ու տարածուեցաւ անհաւատներուն
 ու հերետիկոսներուն դժոխային բըռ .
 նութեանը դէմ : Չէ թէ միանգամ ,
 հապա հազար անգամ կըփնանար ե-
 կեղեցին , եթէ ճշմարիտ չըլլար , ու
 Քրիստոսի խոստմունքը չըլլար նէ՝
 ինչուան ՚ի կատարած աշխարհի դի-
 մանալու : Կըրնա՞ր մի ըլլալ որ Աս-
 տուած ասանկ հրաշքներ ընէ սուտ
 եկեղեցի մը հաստատելու : Ուրեմն
 եկեղեցին Քրիստոսի ճշմարիտ է ,
 որուն համար որ Աստուած այսչափ
 մենծ մենծ և արտաքոյ կարգի սքան-
 չելի բաներ ըրաւ : Ո՛վ որ աս բաներ

ինքեար ընէ նէ՝ աջօք բացօք միջօրէ
արևուն լուսը ուրացօղն է:

ԳՈՐԾՎԵ

Թ. “Ընորհակալ Եղիր Աստուծոյ՝
որ քեզ սուրբ Եկեղեցնայ ղաւակ է
ըրեր „ : Առանց սուրբ հաւատքի՝ որ
աս Եկեղեցնայ մէջ միայն կըդտնըւի,
ինչշահ քեզի ուրիշ գովելի և երևե-
լի դործքեր՝ սոսկ բարոյական առա-
քինութիւններով : Առաքելոյն վը-
ճիոն է. “Առանց հաւատոյ անհնար
է հաճոյ լինել Աստուծոյ „ . (ԵԲԲ.
Ժ. 16 :) Ուստի աղօթք ըրէ ու-
խնդրէ , որ միշտ սրտանց փակած ըլ-
լաս կաթուղիկէ Եկեղեցնայ : Քանի
որ ատոր մէջն ես , կրնաս արքայու-
թեան յոյս ունենալ , միայն թէ դուն
ալաշխատիս՝ որ հաւատքին հետ բա-
րի դործքեր ալ ունենաս :

Է. “Մտքովալ խօսքովալնայէ որ
պատիւ ցցընես կաթուղիկէ Եկեղե-
ցոյ , ի՞ո՞ օրէնքին՝ կանոնին „ : Ո՞վ որ
կկեղեցին կարհամարհէ նէ , առջի

ոտքը առեր է անկից բաժնըւելու :
 Վայ քեզի , թէ որ վար զարնես ու
 ծիծաղիս եկեղեցւոյ սրբազան ու հին
 սովորութիւնները , պաղիս ու ետ
 քաշուիս իր քահանաներէն ու փա-
 փէն : Ատիկա նշան է՝ թէ ճշմարիտ
 եկեղեցին հետ աղէկ չես , հաւատքդ
 կորսնցուցեր ես : Ուրեմն նայէ որ
 անոնց ետևէ չերթաս՝ որոնք որ
 սոսկ քրիստոնէի անունունին , գործ-
 քով անանկ չեն ցցըներ զիրենք . ու
 թէ որ հաւատք մը ունին նէ , իրենց
 խելքին ու քէֆին շէնքն է : Դուն
 ամմէն կերպով միշտ գլուխ խոնարհէ
 եկեղեցւոյ , զոր Աստուած յայտնի
 ըրեր է այնչափ երևելի նշաններով
 ու հաստատեր է այնչափ վկաններով
 ու զօրաւոր հրաշքներով :

Պ. "Մաքուր վարքով ալ ցցուր եկե-
 ղեցնայ քու պատիւդ ..: Բարի վարքդ
 աղէկ նշան է՝ թէ գուն մեծ վար-
 կում ունիս սուրբ եկեղեցւոյ վրայ:
 Իր հաւատքէն գուրս շարժիլը է գործ-
 քովստելիր խօսքը : Հաւատքի կորիճ
 ջատադովալալըսս անհաւատ մարդ-

կանց առջելը՝ քիչ շահ կընէ, Երբոր
քու վարդդ վարդապետութեան դէմ
կըկուուի նէ : Ո՛վ որ բարի վարդին
թուլէ նէ, անոր հաւատքն ալ քանի
կերթայ կըթուլնայ :

Պ. "Եկեղեցին քեզ ամօթ մի սե-
պեր, պարծանք սեպէ „: Սուրբ մար-
տիրոսնելը անոր վըրայ դրին իրենց
կեանքն ալ ամմէն ունեցածնին ալ
բոլոր աշխրքի առջեւ : Թէ որ աս ա-
տենս անանկ առիթ չիկայ նէ, գոնէ
անանկ սէր ցցուր ճշմարիտ եկեղեց-
նայ՝ որ թշնամիներն ալ վարկումու-
նենան : Տաք տաք հաւատքի վրայ վե-
ճաբանութիւն մըներ, ատիկայ գի-
տուն ու խոհեմ վարդապետներու ու
քարողիներու կինկնայ . չէնէ՝ վտան-
գաւոր բան է հակաճառութիւնը :
Թուր բանեցնել չդիտցողին ձեռքը՝
թուրը վսասակար է :

Ե. "Հաւատքդ խախտելու վտանգ-
ներէն ալ հեռու կեցիր,, : Հեռու
ըլլան քեզնէ արդիլած գրքերը, որ
կաթուղիկէ եկեղեցւոյ դէմ, անոր
վարդապետութեանը դէմ, գլխուն

դէմ, ու իր եկեղեցականներուն դէմ
գրուած են: Տունդ չի գտնուի անանկ
գիրք՝ իր վարպետ շէնքին կամ ոճին
համար . ոսկի թասին մէջը թոյն կայ՝
գիտցիր: Տղաքդ չի թողուս հերետի-
կոսի գոլոց երթալու, ուղղափառ
չեղող մարդկանց հետ տեսնըւելու:
Ամմէն չարիք կելլան աս բաներէն:

Է. “Զառքէդ եկածին չափ փոյթ
տար սուրբ եկեղեցնայ տէրութիւնը
տարածելու,,: Կայէ նորազանդները
ինչալէս կը ջանան չորս դին իրենց մո-
լորութիւնը ցանելու . ինչէր չեն
ըներ՝ որ իրենց ծուռ վարդապե-
տութիւնը ամմէն տեղ խոթեն :
Անուշ ու բարերար եղիր անոնց որ
նոր դարձեր ուղղափառ եղեր են.
ըլլայ թէ պղտի պատճառ մը տաս՝
որ իրենց դարձին վրայ փիւշման ըլ-
լան: Բերնէդ չելլայ այն խօսքն որ՝
անշնորհք մարդիկ կը ան: “Թէ որ
աս դարձօղները ըոզէհլի մարդիկ ըլ-
լային նէ, իրենց հաւատքը չէին թո-
ղուր,,: Առ բանը իրաւըլլար նէ, հէլ
հէլլէթ հրեան ալ՝ անհաւատն ալ՝

իրենց մոլորութեան մէջ մնալու էին,
հիշ մէկը ճշմարիս հաւատքը սկսուի
շընդունէին :

ԽՐԱՏ ԵՐԿՐՈՒԴԻ

“Մէի գլխաւոր իւմ մէծաւոր մարդու-
հայման :

“Քու տակդ եղողները աղեկի յոր-
դորէ, դէշէն զդուշացնւը” :

ՊԱՏՃԱՌԸ

ա. “Ասանկ պարաք դրեր է քեզի
Աստուած՝ քու տէրդ”, : Քու ձեռքդ
իշխանութիւն է տուեր՝ չէ թէ ասոր
համար որ քու հանգիստդ վնասուես,
քու մենծնալդ, քու քէֆդ, անհոգ
ըլլալով կառավարելու քու տակին-
ներդ, ու թողլով կամ պատճառ ըլ-
լալով որ ինսաս քաշեն իրենց բանե-
րուն. մարմնոյն ալ հոգւոյն ալ: Չէ
չէ. քեզ Աստուած որ մէկ աստի-
ճանի մը հասուցեր է նէ, անոր հա-

մար է՝ որ մէկ կերպով Երկրի վրայ Աս-
տուծոյ տեղը բռնես, և քու կարո-
ղութիւնդ բանեցնես՝ որ Ճշմարիտ
Երանութեան հասցնես Յիսուսին ա-
րունով գնածները, որ կըլլայ հեռա-
նալով 'ի չարէն, ու բարին դործե-
լով: Վայ կուգայ գլխուդ՝ թէ որ ա-
սանկ հարկաւոր բանի փոյթ չըտա-
նիս նէ: Խիստ կերպով կըպատժէ
քեզ Աստուած՝ անհաւատարիմ տըն-
տեսին պէս:

Է. “Նոյն պարտքը կըպահանջեն
քեզնէ քու ձեռքիդ տակը եղօղներն-
ալ: Դուն անոնցմէ հաւատարմու-
թիւն կըպահանջես ու հնազանդու-
թիւն, ծանր ծանր ծառայութիւններ
ալ: Ասանկ բեռներուն տակն են նէ,
պէտքը չէ մի որ զանոնք մեղքերէն
պահես: Ի՞նչպէս կըթովուս որ քու
անհոդ կենալովդ անոնք դժոխքի
Ճամբան Երթան, հոգինին կորսըն-
ցընեն: Կամ ըսեմ, ի՞նչպէս կու-
զես որ անոնք քեզի հաւատարիմ
ըլլան, Երբոր չես նայիր որ հաւատա-
րիմ ըլլան Աստուծոյ:

գ. մ. Քու հոգւոյդ վրկութիւնն ալ
 քեզ աս բանիս կըստիսլէ ։ Մէկ ա-
 ռանձին մարդու մը հերիք է աս-
 տուածապաշտ ու երկիւղած ըլլալ
 արքայութիւնը վաստըկելու, հոգ մը
 չունենալով ուրիշներուն վարքին
 կացքին վրայ . ասանկ չէ այն մար-
 դուն բանն որուրիշներուն վրակեցու-
 թիւն ունի . իր Ճիշդ պարսքն է ար-
 թուն կենալ անոնց վրայ ալ ։ Քու մէկ
 գառնուկդ կորսըւի մանտուայէն ,
 կամ մէկ շունդ սպաննեն՝ որ որսի
 կըսանեցնես , մէկէնի մէկ համար կու-
 զես մանտուաճիէն , ու որսորդէն :
 Աւլի մէնծ համար կուզէ քեզնէ Աս-
 տուած ալ , թէ որ քու հպատակնե-
 րէդ մէկը դատապարտուելու ըլլայ
 նէ յաւիտեան , որովհետեւ անոնք
 արքայութեան համար ստեղծած են ,
 ու Յիսուսին արունովը գնուած են :
 Անոնց հոգին որ կորսըւի նէ . քու հո-
 գիդ ալ անոնց հետ կերթայ :

ԳՈՐԾՎԱԾ

ա . “Կայէ որ աղէկ կառավարութիւնը ընես անոնց վրայ . մանաւանդ աղէկ նայէ որ աստուածապաշտ ըլլան , : Գործքով ալ բարի օրինակ եղիր : Ինչպէս որ գուն անհոգ չես ըլլար քեզի պէտք եղած բաներուն, որ չըլլայ թէ բան մը պակսի քու վիճակիդ, կամ մարմնոյդ՝ որ քու տակդէ . թէ որ գուն արդարութիւն միայն ուղես, ու Աստուծմէ միայն վախնաս, գիտցիր ո՞ր ան ատեն քուկիններդ ալ քեզի հետ անանկ կըլլարուին :

Ե . “Ամմէն մէկին աշխատանքին ու առաքինութեան վճարք ըրէ , : Գիտե՞ս, ո՞ր ատեն տակինները կըզօրանան աղէկ վարուելու : Երբոր կըտեսնան՝ որ իրենց տէրը կամ գլուխը իրենց ըրած ծառայութիւնը կըճանչնայ, իրենց հաւատարմութեան խըմէթը կըգիտնայ, իրենց աշխատանքը աղէկ կըլլարձատը : Անո՞նք միայն սիրէ որ բարեպաշտ են, անո՞նց

հաւտա տանդամմէն բանը . միայն թէ
իրաւցընէ արդիւնք ունենան :

դ. “ Մերքերնին ու անկարգու-
թիւննին առանց պատժի մի թողուր,:
Մեղաւորն որ չխատժըւի նէ, աւե-
լի համարձակ կըլլայ չարիք ընելու :
Մէկ տէր մը որ թոյլէ կամ անհոգ,
մէկ բանի մը չի նայիր նէ , պատճառ
կուտայ՝ որ աղէկներն ալ չարիք սոր-
վին: Կուզէս որ տրտունջ չըլլայ տանդ
մէջ. ամմէն անկարգութիւնը պատժէ
արդար կերպովառանց մէկի մը խաթ-
րը նայելու. մէկ ճէրիմէյի տակ ձգել
զմէկը , մէկին կամքը կոտրել մը՝ կամ
առաշխարհանք վրայ դնել մը՝ պաղի-
ներուն այնչափ խրատ կըլլայ ու շահ
կընէ՝ որ դատաստանի ու դժոխքի
վրայ քարող տալ մը չիկրնար ընել :

դ. “Որ և իցէ մեղքի սէպէպներէն
կտրէ քու մարդիկդ,: Առիթը չէ թէ
միայն դող կընէ զմարդը, հապախու-
մարպաղ ալ, դլսէ ելած, ու դէշի
էտե ընկած : Ուստի ամմէն իշխանու-
թիւնդ բանեցուր, որ հեռացնես ա-
ռանկ առիթները . օրինակի համար՝

աչքդ բաց , որ խաղ ըլլայ՝ միստիկիր .
 ներ ըլլայ՝ խորունկ գիշերուն չիմնան :
 Կորսնցուր անանկ գրքերն որ սուրբ
 հաւատքի ու բարի վարքի դէմ կել
 լան : Գայթակական զբօսանք չիտես
 նըփ : Կասկածելի անձի հետ չի-
 տեսնուին : Աս կերպով դուն շատ
 օգուտ կընես բոլոր տան , գեղի , քաղ
 քի , քան թէ մէկ մենծ քարոզիչ մը:
 Ե . “ Խոհեմ կերպով բարեգոր-
 ծութեան ճամբայ բաց :: Առաջ ա-
 ռաջ անո՞ր դեղըրէ՝ որ քու օգնու-
 թեանդ կարօտ է , շուտով մարելու՝
 ուր որ կըսակը առեր է : Ամմէն բա-
 նէն էւել նայէ որ ծնօղք իրենց զաւ-
 կըներու հոգ տանին , քրիստոնէ դըպ-
 րոց , ու քրիստոնէական վարդապե-
 տութեան սիրով երթալ . և անանկ
 սկարկեցու ու աղէկ վարպետ ունենան
 որ հոգւոց փրկութեան փոյթ ունի :
 Չիթողուս որ քու մարդիկներուդ
 մէկը քարոզի չիգլտնուի , ու անոր
 տեղը աս դին ան դին քալէ , կամ
 սանձարձակ երթայ իր քէֆին ուզած
 տեղը : Դուն որ կուզես՝ որ անոնք

քու տանդ պատիւ ընեն, նայէ որ
աւելիպատիւ ընեն Աստուծոյ տանը,
ու աղէկ պատիժ տուր անվայելբան
մը ընողներուն :

Պ. “Բարի օրինակ տուր ձեռքիդ
տակը Եղողներուն,, : Մեծաւորին,
խօսքը զօրաւոր է, բայց աւելի իր
դործքը : Խօսքը կըշարժէ, դործքը
կըհըրէ՝ առաջ կըտանի : Ստոյգ է
այն առակը, թէ գլխուն կէօրէ են
անդամները տիրոջը, պէս է ծառան
ալ : Կուզե՞ս որ տակիններդ գէշէն
աղէկի դառնան իրաւցնէ . նայէ որ
ամմէնքը քու վրադ տեմնան աղէ-
կութիւնը, ու անուշ հոտ առնուն
պարկեշտութեան, առաքինութեան,
սրբութեան . կուզե՞ս որ աղէկ ըլլան,
դուն Եղիր անոնց գլուխ ու առաջ-
նորդ : Զօր օրինակ, խոստովանէ հա-
ղորդուէ չէ թէ տարին անդամ մը
զատկին միայն . հապատարւան մէջ ալ
շատ անդամ : Անսկակաս Եղիր ժամեր
դութիւն լսելու, քարոզլսելու : Ան-
տեն դուն ալ կըզարմանաս, թէ որ-
շափ օդտեր է անոնց քու օրինակդ ,

ու ինչպէս աղեկ ճամբռվ կուդան կոր
քու ետևէդ :

ԽՐԱՏ ԵՐԻՈՐԴ

ՀՊԱԳԱԿ ԵՂՋԻՆ ՎՐԱՅ :

“ՀՆԱՊԱՆԴ ԵՎԼԻՌ ՔՈՒ ՄԵԾԱւորնե-
լուդ „ :

ՊԱՏՃԱՌԵ

Թ.” Աս հնազանդութեան պարա.
քը ինքն Աստուած դրեր է,, : Աս-
տուածային նախախնամութիւնը ու-
զեց որ խելք ունեցօղ ստեղծուած-
ներուն մէջ ոմանք հրամայօղ ըլլան ,
ոմանք հնազանդօղ : Հրամայողներուն
կարողութիւն տուաւ ու հարկաւոր
մտաբացութիւն , որ զինքը ներկայա-
ցընեն երկրիս վրայ . բայց անանի որ՝
իրեն համար պիտոր տան աղեկ մը ,
թէ որ իրենց սկարտքէն պակսին նէ :
Հնազանդողներուն ապահովութիւն
տուաւ , որ իր դրած մենծերուն կարգը

կանոնը սպահեն նէ , իրեն աստուածային կամքը ըրած սեպուին . ուստի կըսէ Պօղոս առաքեալը , թէ ովոր իր թագաւորին կամ իշխանին դէմ կայնի նէ , Աստուծոյ դէմ կըդընէ : Աւ քան զայս յայտնի բան կուզե՞ս որ իմանաս հնազանդելու պարտքդ :

Է . “Նոյն սպարտքը խելքն ալ քեզ կըցընէ , : Բանականութեան խելքը չուզեր մի այն կարդը կանոնը , որ անդամները իրենց դլսուն մըուեն : Դժանար ալէ՝ որ մարդս իր վրայ շխտակ դատաստան ընէ . վասն զի անձնասիրութիւն կամ շահասիրութիւն մէջ կըմտնայ . մէկն որ ուզենայ ինքը զինքը կառավարել , հիշ մէկին տակը ըռլաւ , յայտնի վտանգ կըդնէ զինքը չարաչար յանցանքներու մէջ ինկնալու , սոսկալի դժարութիւններ քաշելու , ետքի ապականութեան զինքը մատնելու : Ինքնագլուխ մարդը ո՛չ սանձ կըճանչնայ , ո՛չ օրէնքէ մը կըվախէ , անսանձ ու կառաղի ձիէն սլէթէր :

Դ . “Հասարակաց օդուտն ալ նոյն հնազանդութեան սպարտքը կուզե՞ս :

Ոչ ոք կրնար վստահ ըլլալ, բնաւ ապահով չէր ըլլար՝ ոչ աէրութիւն մը, ոչ քաղաք, ոչ Ճամբան, և ոչ ամմէն մարդուն տունը, թէ որ ամմէն մարդ դէմ դնէր հրամանի, ու հիշ մէկը հնազանդիլ չուղենար: Անատեն տեսնայիր դու ամմէն կերպ խառնակութիւն, շփոթութիւն, տարածայնութիւն, և ի՞նչ անկարգութիւն ըստնէ : Աքանչելի կարգ՝ որ կայ տարերաց մէջ, աշխարքս հաստատ կրպահէ . ասանկ ալ քաղաքական աշխարքը՝ կառավարներուն ու կառավարութեան տակը եղողներուն համաձայնութենովը կըսկահուի՝ ինչպէս անդամները գլխուն իշարէթովը շարժելով. կամ չէնք մը հիման վրայ կըսթընելով:

ԳՈՐԾՎԸ

Թ . “Հնազանդ եղիր ամմէն քու գլխաւորիդ, հոգևորին ալ աշխարհականին ալ,, : Թէև պակաս ըլլայ անոնց խոհեմութիւնը, և այլ ուրիշ ա-

ուաքինութիւնները , դուն ան նայէ՛
թէ քու վրակեցուդ են , և քեզի
Աստուծոյ տեղ փոխանորդ դրուած
են : Քրիստոսի պատկերք մը լաթէ
կամ փայտէ ըլլալուն համար՝ իրեն
պատիւ չե՞ս մի ըներ : Չե՞ս մի զարմա-
նար արեգական՝ որ աշխըրքիս մենծ
ճրագն է , թէև բժեր ունի , ու եր-
բեմն կըխաւարի ալ :

Ե . “Հնազանդէ՛ կըսեմ գլուխւորիդ՝
երբոր օրինաւոր է հրամանը” : Հա-
պա թէ Աստուծոյ օրէնքին կամ պա-
տուին դէմ ըլլայ ըսածը նէ , ’ի հար-
կէ մտիկ ընելու չէ . զէրէ ինքը իր իշ-
խանութեանը դէմ կըշարժի , ու
քեզի պարոք չկայ ան ատեն հնա-
զանդէլու . ինչպէս քեզի ըսէր՝ թէ
հօրդ կամ մօրդ արունը մտիր :

Ի . “Հնազանդութիւնդ ըլլայ՝ ա-
ռանց դէմ խօսելու , առանց տրտըն-
ջալու , և առանց յանդուգն դատո-
ղութիւն մը ընելու” : Առանկ ալ ը-
նես նէ , ի՞նչ շահ կըլլայ քեզ . բայց
եթէ չարչոկել քեզ ալ մեծաւորդ
ալ : Ըսէնք թէ դիպուած ըլլայ՝ որ

տարակուսիս հրամանի մը վրայ, ընէ.
լու է՝ թէ չէ, ան առեն պարզ սրտով
հասկըցնւը իրեն քու խղճմոանքդ .
ան ալ խելացի մարդ է նէ, քու բանա-
ւոր պատճառիդ դէմ չիդներ:

Ե . “Հնազանդութիւնդ ըլլայ խո-
նարհ սրտով ու պատկառանքով”:
Աւելի նայէ որ աղէկ համարում ու-
նենաս մեծաւորիդ վրայ՝ քան թէ ա-
նոր սիսալանքը բռնես, տկարութիւնը
ու պակսութիւնը նայիս: Կըրնար Աս-
տուած ուրիշ հրամայօղ մը դնել քու
վրադ . բայց քու հաւատարիմ հնա-
զանդութիւնդ այնչափ յայտնի չէր
ըլլար, ինչպէս հիմակուան գլխաւո-
րիդ տակը : Միշտ միտքդ դի՞ր, թէ
քեզի հրամայօղը հասարակ մարդ մը
չէ, հապա ինքն Աստուած քեզի ազք
կընէ կոր անոր ձեռքովը:

Ե . “Անանկ հնազանդէ որ հաւա-
տարմութեամբ կատարես քեզի ա-
սլըսսլըուած բանը” : Բարի հաւատ-
քով ու ճիշդ կատարէ քեզի ընկած
տուրքը կամ պարոքը, անանկ որ
կարենաս Աստուածոյ սլարզերես հա-

մարտալ : Քիչ մարդ կըլլայ որ հա-
րստնայ՝ վրայէն թօթվելով իր օրի-
նաւոր բեռը կամ պարտքը , կամ թէ
պարտքին մէկ մասը միայն լեցնելով .
թող որ չիդիտեր՝ թէ ատոր համար
ծանր պատիժներ գլխուն դալիք կայ,
պէսպէս մշասներ , ու ետքի փլչիլը :

Պ. “Հնազանդութիւնդ ըլլայ Նս-
տուծոյ սիրուն համար „ : Աստուծոյ
առջեւ արդիւնաւոր է այն հնազան-
դութիւնը միայն՝ որ գերբնական սպատ-
ճառով կըլլայ , չէ թէ մարդկային
նկատման համար՝ ծառայական մըտ-
քով : Վասն զի ատանկ ըլլայ նէ՝ ամ
մէն պզտիկ ու թէթև բան մալ քեզի
դէմ կերենայ , ու կուզես վրայէդ
թօթվել , կըսկըսիս տրտնջալ՝ անի-
ծել , ուրիշներն ալ կըդայթակղե-
ցնես , հոգիդալ կորսնցընելու կըլլաս :

ԽՐԱՏ ՉՈՐՐՈՐԴ

Հօր աւ հօր վլայ մէի պանը :

“Ճանան ամմէն, կերպով որ տնեցիք
քրիստոնէի պէս կենան,,:

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ը

Ա. “Ասանկ հոգ ունենալը՝ երկրն-
քէն առատ օրհնութիւններկառնէն:
Ո՞րչափ կուղես նէ՝ աշխատէ խէլք
բանեցուր, ամմէն բան ըրէ, բայց դիտ-
ցիր որ առանց Աստուծոյ օրհնու-
թեանը բան մը չի աջողիք: Աս օրհնու-
թեանս ալ յոյս մունենալ, թէ որ
չես ջանար՝ որ տանդ մէջ եղողները
սուրբ կեանք ունենան: Միայն աս-
տուծավախ ըլլալը սկիզբն է ամմէն
բարեբախտութեան:

Ե. “Ասանկ գովելի հոգը՝ մահին
տաենը շատ միսիթարանք կուտայ „:
Մահուան դուռն որ հասնիսնէ՝ ինչ
բանքու ողորմելի հոգիիդ ուժ պիտի

տայ . Հարստութիւնդ կարծես , ու
կին՝ արծաթը , որ այնչափ քրանքով
դիզեր ես : Առ մի կարծեր . հապա
քու մաքուր խղճմտանքդ . անանկ որ
կարենաս ըսել . Արթուն կեցայ՝ որ
իմ ընտանիքս ճշմարիտ քրիստոնէի
վարք ունենան . չեմ յիշեր՝ թէ կա-
մաւոր գայթակղութիւն մը տուած
ըլլամ տանս մէջ . Առառւծոյ ինձի
յանձնած անձինքներէն հիշ մէկը իմ
յանցանքովս կորսըւած չէ : Գիտե՞ս
թէ ո՞րչափ թեթև կըլլայ քեզի մահդ
երբոր խղճմտանքդ ծանրութիւն մը
չունենայ ուրիշներու վըրայ անհոգ
ըլլալուդ :

Դ . “ Սոյն բարի փոյթը մեզի անբաւ-
ուրախութիւն կըպատրաստէ երկին-
քը ” : Թէ որ մէկ մարդ մը կըակէ խա-
լսէիրնէ , ո՞րչափ ուրախութիւն կըլ-
լար քեզ բոլոր կենացդ մէջ : Հապա
ինչ մենծ բան կըլլայ քեզի՝ թէ որ
բոլոր ընտանիքդ դժոխքին կըակէն
պահես նէ : Անսնկ անձը ո՞րչափ
չնորհակալ սկիտի ըլլայ քեզի արքայ-
ութեան մէջ , և ո՞րչափ ճիսայ սկիտի

սիրտդ՝ Երբոր անբաւ սուրբերու
առջելը անիկայ վկայէ , թէ ասիկա
եղաւ զիս խալքսօղը , ասոր ազատա
ման եմ : Այնչափ աւելի պիտի մենձ
նայ քու փառքդ , որչափ հոգի խա-
լքաելու պատճառ ես Եղեր :

ԳՈՐԾՎԱԾ

ա . “ Ի՞նչ մարդոր տանդ ծառայու-
թեանը առնել կուզեսնէ , մի նայիր
իրեն սոսկ արտաքին ուժին ու իշկիւ-
զարութեանը ” : Ի՞նչ բանիդ կուզայ
ան ծառան՝ որ կտրի՛ է՝ ուժով է ,
բայց վարքը բարքը ճամբէ դուրս է :
Այն մարդը ընտրէ՝ որ աղէկութեան
նշաններ ունի , ու քեամիլ վարք :
Մէկ աստուածավախ ծառայ մը քու
տունդ Աստուծոյ օրհնութիւնը կը-
բերէ . դէշրլայնէ , Աստուծոյ բար-
կութել կըբերէ : Բայց որովհետեւ սըր-
տադէտ չենիք , կըրնայ ըլլալ որ խա-
բուինք անկից ալ՝ որ դրսէն աղէկ
կերենայ , ամիմա ներսէն փատած է .
փորձով կիմանաս գործքէն՝ բանիդ

ձեռք կուտայ , թէ չէ :

Ե՞ս "Առաջուց համելցոնւր քու ծառայութիւնդ եկողին , թէ բնաւ չեմ կըրնար քաշել՝ որ իմ տանս մեջ Աստուծոյ օրէնքին գէմ բան մը ըլլայ " : Խոստացիր իրեն աղէկ կերցընել խմցնել , աղէկ վարձք տալան ալէւել ցընելով թէ որ ինքը պարկեշտ վարք ունենայ , ու գիշերանց տնէն դուրս չերթայ : Գիտե՞ս թէ որչափ մեղքեր կըկտրես աս մէկ զդուշութիւնը ընելով :

Ի՞՞ս "Ատեն տուր քու ընտանեացդ իրենց ջերմեռանդութիւնը ընելու Խստուծոյ ծառայութեան ու իրենց փրկութեանը համար . ու ասանկ բաներու ալ դուն առիթ և օրինակ եղիր " : Ատեննին յարմարցոնւր որ կիրակի ու տօն օրերը ժամ երթան քարոզի ու քրիստոնէական խրատներու : Պատարագ տեսնելու պարտքը ան օրերը յայտնի է . դուն ջանանք ամմէն Խստուծոյ օրը սորովին պատարագ տեսնել : Թաղ մի տար այնչափ բանի զբաղելու որ արգելք ըւ-

լայ իրենց հոգեորնին ընելու , սըխ
սըխ սուրբ խորհուրդներու մասնա
կից ըլլալու : Միայն աչքդ բաց , որ
երբեմն ջերմեռանդութեան մահա
նայով պէտք չեղած տեղուանք չէ.
Քալեն :

Դ . “Տնեղ վորնտէ զով որ կըտես
նաս Աստուծոյ և առաքինութեան
դէմ” : Մի թող տար տանդ մէջ ար-
գիլած գիրք մը , և ոչ անսպարկեցա
պատկերք կամ քաշուածք մը , որչափ
վարպետ ու հետաքրքիր բան ըլլայ :
Հապա նայէ որ տունդ զարդարես ա-
զէկ գրքերով , ու որբազան կամ բարի
օրինակառնելուսկատմութեանց քա-
շուածքներով որ որչափ կարելի է
նէ՝ վարպետաբան ըլլան : Տանդ մէջ
չիլսուի չըտեսնուի նախատինք ,
հայհոյանք , անշնորհք խօսակցու-
թիւն կամ երգ , և կամ գայթակղաւ-
կան շախա շէլլաֆ : Արգիլէ որ մէկը
գիշերով տնէն դուրս չելլայ . ընտա-
նութիւն ու ընկերութիւն չըլլայ ման-
չու և աղջկան մէջ : Քրիստոնէ մար-
դուն տունը պիտի ըլլայ բնակարան

Երկիւղին Աստուծոյ, չէ թէ անկար-
գութեան :

Ե. “Մէկ պզտի չար մը կամ ան-
կարգութիւն մը տան մէջ տեսածիդ
պէս՝ դեղը ընել մուշացներ,,,: Փուճ է
ճար մտմտալ՝ կրակը վարէն ինչուան
տանսաշախները առնելէն ետքը: Ծա-
ռայիդ կամ աղախինիդ ճամբուն չես
հաւնիր նէ՝ անուշութեամբ մէկ խրա-
տէ, Երկու խրատէ, Երրորդ անգա-
մին՝ ամսչէքնին տուր, Ճամբա՛ դիր
զիրենք: Մի՛ սպասեր՝ որ գայթակ-
զութիւնը կամ վտանգը գործքով
ըլլայ տանդ մէջ: Յարգը ու կրակը
մէկ տեղ պահել ըլլար :

Ղ. “Աքաբաց Եղիր տան քիրածի-
ներուն վրայ ալ,,,: Ամմէն մարդու
քիրայի մի տար տունդ : Ալ աղէկ է
որ տանըդ մէջ պարապ տեղ մնայ՝ քան
թէ անշնորհք մարդկան քիրայի սաս:

ԽՐԱՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿՐԵՔ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԱՐ :

“ՁԵՐ ԽՈՍՏԱՄՈՎԿԸ ՄԻՇԹ ԺԼՇԵցէքու:

Պ Ա-Տ Ճ Ա-Բ Ա-Լ

ա . “ՊՍԱԿԸ ՍՈՎՐԲ ՎԼԱՃԱԿ ՄԸ ՆԷ՝ Ե-
ԿԵՂԵցւոյ ԽՈՐՀՐԴՈց ՄԷԿԸ ԸՎՍԱԼՈՎՆ :
Իր Վախճանն ալ մենծ է . Վասն զի
անոր համար դրուած է , որ շատոք-
նէ արքայութեան սուրբելը : Անոր
համար Քրիստոս ալ զնոյն հաստա-
տեց , ու սուրբ Խորհուրդներուն կար-
դը բարձրացուց : Ուրեմն պէտք է որ
դուք ալ ատոր պատիւը աղէկ պահէք :
Երդմնազանցութիւն կընէք , թէ որ
պսակուելու ատեն տուած խօսքեր-
նիդ չուահէք նէ :

Ե . “ՊՍԱԿԸ ԴԺԱՐ ՎԼԱՃԱԿ ալ է :
Ճամբայ մը նէ բոլոր փշերովլեցուն:
Ի՞նչնեղութիւն չեն տար զաւելներն
ալ ծառաներն ալ : Ո՛րչափ անկուն

միալու ու տառապելու պատճառ
կըլլան՝ ամմէն օրւան պարտքերը ու
պիտոյքը, որ պիտի հոգացուին։ Ըստ
անդամ ալ հարս ու վիշտան՝ այսինքն
էրիկ կնիկ՝ իրարու ծանր բեռ կըլլան.
և որչափ երկար քշէ աս վիճակը,
այնչափ ալ ձանձրալի կըլլայ ատանկ
կեսնքը : Համար իրարու չնեղանաք։ Չէ նէ,
ձեր պսակը քաւարանէն էւել տան-
ջանք քաշել կուտայ ձեզի։

Պ. “Անփոփոխ վիճակ մը նալ է,,,:
Կապ մը նէ՝ որ չիկըրնար քակուիլ,
բայց եթէ մէկը կամ մէկալը մեռնի։
Աս ասանկ ըլլալով, ի՞նչ թշուառ
բան կըլլայ՝ երբոր մէջերնին սէր չը-
լայ, ուրախութիւն մը՝ ընտանի հա-
մարձակութիւն կամ վստահութիւն
չիմնայ, հապա ասոնց տեղը մըտնայ
ատելութիւն, անմիաբանութիւն,
հակառակութիւն ամմէն կերպ։ Ա-
սանկ էրիկ կնկան մէջ ոչ Երջանկու-
թիւն կայ, ոչ օրհնութիւն։ Երեսի

վլայ կըմնան 'ի պատիժ իրենց ան-
կարդութեանց ու մեղաց , դժոխքին
համը աս աշխրքիս մէջ առնելովկու-
զքորատանկ թշուառութենէ աղատ
մնաք . ձեր տուած խօսքը պինդ պա-
հեցէք :

ԳՈՐԾՔԸ

ա . “Դուն որ փեսայ ես եզեր
կամ հարս , էրիկ կամ կնիկ , սրիս սրիս
միտքդ բեր այն դաշնադրութիւնն որ
ըրիր Աստուծոյ առջել կամ սուրբ
խորանին առջեւ : Ասիկա պարապ
արարողութիւն մը չեր , փուռ մէկ
հանդէս մը չեր : Քահանան քու ան-
կըճիդ կարդաց պսակին պարագերը .
Ետքը հարցուց ալ՝ հէմ փեսին , հէմ
հարսին , անձդ կառնես աս անձը սի-
րով . դուն ալ՝ անձս կառնեմ ըսիր՝
հաստատ վկաներու առջեւ :

բ . “ՄԵՆԾ համարում ունեցիր
ատ վլճակիդ վլայ , : Ան աչքով մի
նայիր , սանքի սոսկ աշխրքի բան սե-
պելով հեթանոսաց պէս . հասկա-

սուրբիսուրհուրդ մընէ տէյի աղէկ հաս-
կըցիր : Աչքէդ մի հեռացներ հին և
նոր օրինաց սուրբերը , որ էրիկ կնիկ
ըլլալով հաւատարիմ մնացին իրենց
ամմէն պարտքին վրայ :

Դ . “ Ուրախ եղիր , ու խըմէթը գիտ-
ցիր զաւկըներուդ՝ որ Աստուած քե-
զի պարգևեր է „ : ‘ Նոյն մարդասէր և
բարերար հայր է Աստուած , որ խնամք
ունի թռչուններուն ալ , որդերուն՝
Ճճիներուն ալ կրնայ մի խնամք չու-
նենալ իր պատկերքը ստեղծուած
մարդկան վրայ : Ան ալ մտածէ , թէ
աշխրքիս վրայ ամմէն վիճակ իր վեր-
ցընելլիք բեռը ունի . դուն ալ քուկդ
պիտի վերցընես՝ Աստուծմէ ուժ
խնդրելով : Ի՞նչ ուրախութիւն էր
սուրբ նահապետներուն , երբոր Աս-
տուած իրենց նոր զաւակ կուտար նէ :
Չէին կշտանար զԱստուած օրհնե-
լով . ու կըզօրանային սիրով կատա-
րել իրենց նոր պարտքը :

Ե . “ Տարակոյս մը ունենաս ա-
սանկ պարտքերուդ մէջ նէ , խորհուրդ
հարցուր քու խոստովանահօրդ „ :

Ասով չել թէ միայն ազատ կը մնաս շատ
յանցանքներէն, հապա խղճմտանքդ
աւ կազատես հազար կերպ պռճուկ
մտմտուքներէն:

Ե. "Ընկերոջդ հետ սիրով ու խա-
զազութեամբ ասլրէ, աղէկ ու յար-
մար օրինած կերպով, : Ո՛ւր որ աս-
բաներս կան նէ, անտեղը Աստուած
կը բնակի, իրէն հետն է իր օրհնու-
թիւնն ալ: Զեր մէջը ըլլալու սէրը
կաւըլսկի անգադար մէկ մէկու հետ
կռիւ ընելով: Ուստի ամմէն կերպով
զդուշ կեցիք ձեր կամքը ձեր քէֆը
ուղելէն: Հեռու կեցիք երես կախէ-
լէն մէկ չնչին բանի համար որ ձեր
ուզածը չէ եղեր: Կոշտ կերպով մէկ
բանին դէմ մի դնէք: Ուր որ Աս-
տուծոյ դէմ բան մը չիկայ նէ, լուռ
կենալով համբերեցէք, կամ ընկերո-
ջը ուզածին թողէք: Վարսետ կեր-
պով խտահա ընելէն փախիք: Ո՛ւր
որ մենծ ինաս մը չկայ, չտեսնելու
չաելու զարկէք: Թէ որ հարկ ըլլայ
խօսիլու իմաց տալ ընկերոջդ, անուշ
կերպովը բրէ, աղաղակով ու կռուե-

լով աւելի բան չես վաստըկիր : Մի
հաւտար ամմէն խօսքի ու խապարի .
և առաւել անկաճ մի դներ բան
խառնողին : Անշահ մարդիկ կը ջանան
ուրիշի տան տըռլիկը աւրել :

Պ. “Անշնորհք բան մը հանդիպի
նէ, ան ատեն առաքինութիւն սկիտի
բանեցուի՝ Աստուծոյ ապաւինելով, :
Ազօթք պէտք է ընել, ու ընել տալ.
կարելի է նէ՝ ողորմութիւն ալտալու
է : Սուրբ Աստուածածնայ և սուրբ
Յովեկիայ յանձնելու է. ամմէն աշ
խատանք քաշելու է՝ որ ընկերոջը
իելքը գլուխը դայ: Օգուտ մը չտես-
նըի նէ, Աստուծոյ կամքին համա-
կերպելու է, մտածելով թէ Աս-
տուած կուզէ զիս առաքինութեան
մէջ կրթել, կամ իմ յանցանքս պատ-
ժել : Համբերութիւնը ամմէն բա-
նին դեղն է . Աստուած ալ հէմ աս
դին հէմ անդին կը վարձատրէ :

ԽՐԱՏ ՎԵՅԵՐՈՒԴԻ

Այսի իամ օրբեարի մասօղ հարդառ իամ
ինիան համար :

“Արթուն ու զգանստ կեցիր,, :

ՊԱՏՇԱՌԸ

Թ . “Այրիութեան վիճակը շատ
մտածուք կը բերէ,, : Ան որ առաջ երկու
ընկերանց մէջ բաժնած էր, հիմա
բոլորը մէկին վրայ կը մնայ. բոլոր տան
հոգը, զաւկըներու հոգը, ծառանե-
րուն հոգը, ուրիշ պոչուկ բաներ ալ
հետը: Թէ որ արթուն չիկենայ մէ-
կը, ու սրտոտ կտրիչ չմնայ, կը մնայ
վտանգ քաշել զԱստուած ալ մոռ-
նալու, հոգին ալ, առաքինութիւնն
ալ:

Բ. “Շատ ներհակ բաներ ալ քա-
շել կուտայ,, : Ամմէն վիճակ իր վիշ-
տը իր նեղութիւնը ունի. բայց ամ-
մէնէն էւել որբեարութիւնը : Մէկ-

դի դնե՞նք պարտքերը , ամմէն օրւան
պիտոյքը մէկ տան , հիւանդութիւն-
ները . ո՞րչափ տառապանք կըհասցնեն
անհաւատարիմ ծառաները , խեռ
զաւակները , սուտ բարեկամները ,
իրենց շահը վինտուօղ ազգականները :
Ո՞րչափ վէճ ու կուիւ կըլլայ՝ դեռ
ժառանդութիւն չիբաժնըւած կար-
գով կանոնով : Ասոնք անանկ ծանտր
բաներ են՝ որ խեղճ որբեարին իր
երկանէն կամ կնկանէն մինաւոր մնա-
ցած , թէ որ արթուն ըլլայ և Աս-
տուծոյ չդնէ բոլոր յոյաը նէ , յու-
սահատութեան մէջ կինկնայ , ու մեծ
քէտէրի կուգայ՝ գլուխը դառնա-
լէն :

Դ. “Շատ վտանգներ ալ ունի,, :
Ուստի ծիծաղելի բան մը կըլլայ նո-
րէն կարգուիլուղելը : Խեղճը անմեղ
կեցած է՝ խորհրդով , բանիւ , և գոր-
ծով . այսու ամենայնիւ վտանդ կը-
տեմնայ առջել՝ թէ որ միշտ այրի
մնայ նէ . մէկալ դիէն ալ վտանդ կը-
տեմնայ՝ տարիքն ալ առած ըլլայ նէ ,
որ սառին հետ անսպիտան կըակ պիտի

ըլլայ : Ասոր համար ամեն կերպով
զգաստ պիտի կենայ աս վիճակիս մէջ
եղօղը՝ որ աստուածավախ ըլլալէն
դուրս չելլայ :

ԳՈՐԾՎԵ

ա . “ Որբեարի մնացածիդ պէս՝
մէկէնիմէկ Աստուծոյ օգնութիւնը
խնդրէ „ : Միտքդ դեռ չիդրած՝ այրի
մնալու կամ չմնալու, ամմէն հոգդ
իբրև ապահով տեղ մը՝ Աստուծոյ
ձեռքը դիր . չէ նէ՝ շատ փշեր կըսկը-
սին քեզ խայթել : Առաջ խոստովա-
նանքով խղճմուանքդ աղէկ մը մաքրէն
և առաջադրէն որ տանը կառավարու-
թեան մէջ՝ Աստուծոյ օրէնքէն կանո-
նէն դուրս չելլաս :

բ . “ Բարի օրինակ տուր ամմէնուն
տան մէջ „ : Շատ բան կընէ օրինակը՝
քան թէ խօսքը ու խստութիւնը :
Ամմէն բանէն էւել պարկեցտ եղիր
խօսքովդ՝ շարժմունքովդ, և ամմէն
բանին մէջ քեամիլութիւն ցցուր :
Պողոս առաքելուն ըսածին պէս, մէկ

այրի մը՝ որ փափկութեան ու իր քէ-
ֆին էտեէ է նէ, անիկա ողջ ողջ մե-
ռած կըսեալուի :

Դ. "Զօրացիրու կրկնապատկէ քու
փոյթդ տունը աղէկ կառավարելու,,:
Խելքդ միտքդ տուր տղաքդ աղէկ
մենծցնելու՝ որչափ որ մանտր աւրլ-
լան նէ . մենծցածներուն հետն աւ
աղէկ վարւէ՝ բանի տեղ սեսկելով
զիրենք . տնեցոց սլզտիկ անկարգու-
թիւնն աւ զսպէ կտրիճ ու խոհեմ
կերպով . հարկաւոր բաներուն մէջ
քու ձեռքդ աւրլլայ, աշխատանքէ մի
փախչիր. ամմէն բանին՝ համար ուղէ՝
բանին կէօրէ :

Ե. "Գեղի օգնական առ այն անձն
որ վսան ապահով ես,, : Թէ որ ունիս
հասուն խելքով մանչ մը՝ աղջիկ մը՝
բարքը աղէկ, ասոնք առ աւելի դոր-
ծակից տանդ կարդաւորութեան :
Չէ նէ՝ մէկ աստուածավախ քեամիլ
մը դտիր, որ ձեռքէն բան գայ, ծոյլ
քըլլայ, վրան կասկած չըլլայ :

Ե. "Սիրտդ մի կոտրեր գէմ ելած
անյաջող բաներով,, : Աղօթքով Ա-
5 *

առւծոյ ապաւինէ . խորհուրդ հարցուր հաւատարիմ բարեկամի մը , կամ խոստովանահօրդ . անկաձ մի դներ փուշ մուշ խօսողներուն՝ որ քեզի սրտակոտրութիւն չըլլայ . աջդ Աստուծոյ օրէնքին ըլլայ , ան ատեն ամմէն բան աղէկ կըլլայ :

Ղ. “Ամմէն բանէն առաջ՝ քու հոգիդ հոդա ” : Հասարակօրէն որբեւարի մնացողին կենաց կէսը արդէն անցած կըլլայ . մահը՝ յաւիտենականութիւնը կըմօտենան կոր . ատենդ կորսնցընել պէտքը չէ : Մնաս բարով ըսէ աշխրքիս ունայնութեանը . վասն զի միայն բարեդործութիւնդ հետդ պիտի երթայ Աստուծոյ առջև : Թէ որ մինաւորիկ ես , կամ զաւակ չունիս , կամ տեղաւորցուցեր ես , ու բաներդ կարդաւորեր ես , աւելի դիւրին կըլլայ քեզի զԱստուած հոգաւ հոգիդ հոգաւ : Ատենդ աղէկ բաներով անցուր , բանէ աշխատէ , աղօթք ըրէ , ժամերը պտղտէ , հոգեոր գիրք կարդալու ու մտածականի հետ եղիր : Ունեցածէդ բաժին հանէ տուր

խեղճ աղքատաց միսիթարանկին, եկեղեցիներուն պայծառութեանը, քու պիտոյքդ ալ հոգա, ազգականներուդ ալ: Շատ բարիք ըրած ունին աշխարհքի որբեարիները՝ էրիկ մարդ՝ կնիկ մարդ, իրենց բարի վարքովը, իրենց աղօթքովը, և իրենց բարի յիշատակներովը:

ԽՐԱՏ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Հայը մայը եղաներուն համար:

“Զաւկըներդ մեծցուր ճշմարիտ գրիստոնէի ճամբով, :

ՊԱՏՇԱՌԸ

ա. “Շատ ծանր կընստի քեզի, թէ որ աղէկ չմենծցընես զաւկըներդ” : Յոյս մունենար՝ որ զաւկըներդ քեզնէ սկասկառին, երախտիքդ ճանչնան, հնազանդ ըլլան, երբոր դուն իսուլ կըլլաս քու խղճմտանկիդ ձայնին, անհոգ կըլլաս քու պարտքիդ՝ որ ու

նիս անոնց համար, աչք կըդոցես անոնց պակառութիւններուն: Ան ատեն անոնք ալ երես կառնեն, քու վրադ կըծիծաղին, թուքումուր կուտան, ու ետքի թշուառութեան քեզ կը հասցընեն: Աստուծոյ բարկութեան քու վրադ գործիք կըլլան քու զաւ կըներդ. անողորմ պատիժ ու դահիճ կըլլան քեզի. շուտով ու դառն սրտով դերեզման քեզ կինջեցնեն:

Է. “Հատ ծանր պատասխան ալ ու նիս տալու անոնց համար” : Ի՞նչ պատասխան պիտոր տաս ան դին Աստուծոյ՝ հօր յաւիտենականի, որուն պատկերքն որ աւրեր ջնջեր ես քու զաւկիներուդ վրայէն: Ի՞նչ պատասխան պիտի տաս Որդւոյն Աստուծոյ, որուն արիւնն որ անպիտան ըրեր ես որդւոցդ վրայ: Ի՞նչ պատասխան ունիս տալուհոգւոյն սրբոյ, որուն տաճարն որ մոլութեանց մազարա ես գարձուցեր: Հապա քու տղոցդ ալ ի՞նչ պատասխան պիտոր տաս, որ կրենց դեշ սնունդ տուեր ես, չար օրինակ ալ տուեր ես, անոնց ոյնչափ անկար-

գութեանը աչք խփեր ես , առաջ
տանօղ եղեր ես , և առջի պատճառը
դուն ես եղեր : Զեղի կըսեմ հարեր
մարեր , ի՞նչ ովատասխան պիտոր տաք
անդին նէ՝ հիմակուընէ աղէկ մտա-
ցէք :

Ի . “Յաւխտենական դատապար-
տութիւն ալ կըլլայ ձեզի „ : Թէ որ
քու զաւկըներդ կորսըւին քու գէշ
մեծցնելովդ զանոնք , դուն ալ ի՞նչ
յոյս կունենաս , բայց եթէ անոնց
հետ կորսըւիլ : Սարսափելի բան է
աս , թէ որ աղէկ մտածես : Առ ի՞նչ
սոսկալի բան է , որ դուն զաւկըներդ
դժոխոց որդի ընես . անոնք ալ հե-
տերնին քեզ դժոխքը քաշեն : Հիմա
ի՞նչ շահ եղաւ այնչափ աշխատան-
քէդ՝ որ տղոցդ համար քաշեցիր :
Ըստ աղէկ էր քեզի՝ թէ որ անոնք
ծնած չըլլային , կամ մկրտուածին
ոկս մեռած ըլլային :

ա. “Ափեղ եկածին չափ աղբէկ
պահէ զաւկըներդ” : Մէկ տղայ մը՝
որ հարկաւոր բաները չունենայ նէ,
պատճառն ալ հարը կամ մարը ըլլայ
նէ, քիչ կըլլայ որ անկարդ կեանք
չվարէ: Չար խորհրդական է անօթու-
թիւնը, մանաւանդ անոր որ դեռ չէ
սորված համբերելու խելք բանեցը-
նել: Ո՞րչափ տղաք անմեղ կըմնային՝
թէ որ ծնողը քիչ մը աւելի պէտ ը-
նէին իրենց, կարգի կանոնի բերելին:

Բ. “Տղոց ատենով պէտք ըլլալիք
բաներուն ալ հոգ տար” : Աս կերպով
պարկեցտաբար կըալատրաստովի մէկ
պղտիկ ըստըկի գլուխ կամ արհեստ
մը՝ անոնց ապրուստը ապահովցնելու:
Կայէ որ կարդալ գրել սորվին . մէկ
արհեստ մը, մէկ վաստըկի բան մը:
Աս բանիս համար ծախսի մի խնայեր,
բերնէդ ալ կտրելով: Չեղի կըսեմ
հարեր մարեր . դուք շուտով կըալակ-
սիք աշխարքէ . բախտը կամ յաջողու-

թիւնը հազար դիսպուտածքի տակ էն.
բայց ինչքան որ կըսորվին ձեր տղաքը
աղէկ վարք, աղէկ արհեստ, ան կը-
մնայ անոնց քով:

Պ. “Տղոց հագուստը հոգա անոնց
վիճակին յարմար,,,: Քու տունդ
չաւրըւիր անոնց քիչ մը աղէկ հագ-
նելովը: Պատուտած կամ կիսամերկ
զգեստ չերևնայ վրանին՝ մանտր տղաք
ալըլան նէ. նմանապէս քու ընտա-
նիքդ ալ: Ամմէն բանի դուն առաջ օ-
րինակոտուր ամմէնուն :

Պ. “Ամմէն բանէն էւել նայէ որ
անմեղ պահես զիրենք,,,: Ուստի աչքդ
բայց որ գայթակղական բան մը ոչ
տեմնան՝ ոչ լսեն: Մախսըմները կըր-
նաս պարտիկել. քիչ մը մեծցածները
կըրնան գէշ բանի աչընին բանալ:
Չիթողուս որ քուր աղբար մէկ տեղ
պառկին՝ պղտիկ են տէյի. իրենց քէ-
փովը տնէն դուրս չելլան, ուրիշի
տունը շատ չերթան: Ամմէն բանի
համար ուղէ իրենցմէ: Առանց իրենց
իմաց տալու՝ դիտէ ինչ կընեն իրենց
խուցը, տան բակը, ճամբան, ախոռի-

պէս տեղուանիք , գեղը : Ասով շատ
անշնորհք բաներէն զիրենիք կըպահէւս:
Պզարկուց պէրի նայէ որ հեռու կէ-
նան մէխանայէ , խահլէէ , և ուրիշ
անվայէլ տեղերէն : Ի՞նչ աղէկ բան
կըրնան սորվիլ անանկ տեղուանիքէն :
Հայվաններուն վրայ պիլէ շատ նայե-
լէն զգուշացուր : Տղայական երևա-
կայութիւնը դիւրաւ կըվառուի ու
կապականի :

Ե . “Անհնազանդութիւն կամ ան-
կարգութիւն մը ընողը պատժէ ” :
Բայց առանց բարկանալու՝ հայհոյե-
լու՝ ու երդուշննալու : Ատոնիք դժոխ-
քի լեզու են , որ տղաք զուտ կըսոր-
վին , ու անկարգ կըլլան , և կամակոր:
Պատժելդ ուրիշ բանի համար ըրլայ ,
բայց միայն որ իրենիք աղէկ ըլլան .
մէկէնիմէկ պատիժ մի տար , թէ որ
անուշ կերպով կըրնաս շահիլ , կամ
սղտիկ ապաշխարանիքով մը . ինչպէս
մատղաշ տղու մը հերիք է անշարժ
նստիլ տալ իցին մէջը , մէկ կերակրէ
մը իրեն բաժին չլտալ , թողութիւն
ինդրելու ստիպէլ , մէկ խիստ սիրած

բանը չտալ: Թէ որ ասո՞նք չե՞ն օդտեր
նէ, թող քիչ մը հանդարտ, ու ետքը
պատժէ, բայց միշտ չափով: Առաջ
աղէկ մը չեխէ յանդիմանէ, ետքը
սպառնացիր, էն ետքը պատիժը ըւ-
լայ իր հասակին յարմար, ան ալ խո-
հեմութեամբ: Թէ որ ամմէն բանը
փուճելայնէ, ուրիշն ալխորհուրդ-
հարցուր, ու օգնութիւն ուզէ դրսէն
զանի զսպելու. ինչպէս որ Աստուծոյ
կողմանէ իրաւունք ունիս, ու տեղ-
ոյն կէօրէ պէտք է որ բանեցնես:

Պ. “Դուն եղիր առջի սորվեցնօղ
տղուդ ամմէն աղէկ բանը „: Նեղունին
նոր արձրկած՝ հետերնին աղօթք ըրէ,
խաչ հանել սորվեցուր, էտևէն՝ հայր
մեր, Ողջոյն, Հաւատամբ: Համար-
ձակ հրամայէ որ սեղանէն առաջ ու-
էտև՝ ոտքի վրայ աղօթք ընեն: Սըր-
տերնին խոթէ Աստուծոյ վախը, մեղ-
քէն փախչիլը, առաքինութեան ու
աշխատելու սէրը: Ժամ խաւրէ խրա-
տի, քրիստոնէականի. դպրոց խաւ-
րէ. կըդառնան նէ, փնտուէ ի՞նչ
սորվեցան. թէ որ իրենցն է յանցան-

քը չսորվելուն, աեղան մի նստեցներ:
 Երիկուտան աղօթքը քեզի հետ մէկ
 տեղընել տո՛ւր: Գիշերն որ կըմօտե-
 նայ նէ, գեղացին ալ հովիւն ալի-
 բենց ոչխարները մանարան կըժողվեն.
 Հապա տանտէր մը կամ տանտիկինմը
 պիտի չոգայ մի իր ընտանիքը ապա-
 հովցընել ամմէն փորձանկէ՝ պառկե-
 լու ատեն: Բայց այս ամենայն չօգ-
 տէր առանց բարի օրինակի, որ շատ
 կօդնէ զաւկըներուդ՝ ամմէն խրատէն
 ու չեխէն էւել: Պղտի տղաք կապկի
 պէս են, ամմէն տեսածնին կընմանցը.
 նեն, աւելի դիւրաւ դէշբանը: Աս
 ալ աղէկ նայելու է, որ վարպետու-
 թենով մը կամ զօռով զաւակդ չխո-
 թէս կամ եկեղեցական կամ աշ-
 խարհական վիճակ. ոչ զօռ ընես՝ որ
 վանքի մը մէջ փակուի, և ոչ որ աշ-
 խարքը կենայ: Կամքին դէմ եղած
 վիճակը թշուառ կընէ զկեանքը, ու
 յուսահատութեամբ լինցընել կու-
 տայ:

ԽՐԱՏ ՈՒԹԵՐՈՐԴԻ

Զաւիշներու կամ որդուս հայր :

“Պատուեա զհայր քո և զմայր ..”

Պ ԱՏ Շ ԱՌԵ

ա. “Աս ասանկ կըսպատուիրէ Աս-
տուած” : Աս ընդհանուր օրէնք մը
նէ, որ ասկից դուքս չեն կընար մնալ՝
ոչ հասակը, ոչ վիճակը, ոչ բանի մը
կապուիլը, ոչ աղքատութիւն, ոչ
հարստութիւն : Ո՛վ որ ասկից պակսի
նէ, չէ թէ միայն Աստուծոյ օրէնքին
դէմ կընէ, հապա ընական լուսոյ ու
մարդկութեան դէմ. անանկ որ լե-
ռան ու անտառի մարդիկ ալ իրենց
ծնողքը կըսպատուեն :

Ե. “Երախտադիտութիւնն ալ աս
կըսպահանջէ” : Աստուծմէ էսև՝
ծնողքիդ պարտըկան ես : Քեզի հա-
մար քանի՛ գիշեր քուն չեն եղեր.
քանի՛ տառապանք քաշեր են՝ ինչ

ւան որ դուն ոտք ելեր ես, ու ինքիր.
մէդ ուտել սորվեր ես : Ո՞րչափ հոգ
ո՞րչափ դութ ունեցեր են քեզ կեր.
ցընելու՝ հագուեցնելու, զիրենք ալ
զրկելով : Թէ որ մէկը տարի մը քեզի
աս բաներս ձրի ընէր նէ, ի՞նչ շնոր.
հակալութիւններ չէիր ընէր : Դուն
խէ ասչափ տարիններով ծնողքիդ ի՞նչ
հատուցում ըրիր : Բայց եթէ զիրենք
ամբչցընել, զիրենք չխեալել, նեղու-
թիւն ու ցաւ տալ : Աս ի՞նչ ապե-
րախտութիւն է, աս ի՞նչ բարբա-
րոսութիւն է :

Պ . “Քու առանձնական աղէկու-
թիւնդ ալ աս կը պահանջէ,, : Թէ որ
ծնողքդ չխալատուես նէ, կըսուսամ
որ երջանիկ ըլլաս : Չե՞ս գիտեր որ
իր ծնողաց դէմ կեցօղ զաւակը՝ աս
աշխարիս մէջնալ Աստուծոյ անէծքին
տակը կիցնայ : Հիմակուընէ կըսէմ
քեզի խեզէ ողորմելի . թէ որ ատանկ
խեռ զաւակներուն մէկն ես նէ՝ դըւ
խուդ դաշիք փորձանիքներ կան ջրհե-
ղելի պէս, յանկարծ կըմեռնիս . թող
որ Աստուծոյ արդար դատաստանո-

վը՝ քու զաւկըներդ ալ քեզի անանել
կընեն, ինչ որ դուն ծնողացդ ըրիք
նէ :

ԳՈՐԾՎՔԸ

Թ. “Միշտ ծնողացդ պէտք եղած
պատկառանքը ցցուր, : Նայէ որ մէկ
կերպուլ մը իրենց խաթրին չիդրալչիս՝
ոչ գործքով, ոչ խօսքով. անոնցմէ
տրառունջ ըննես, անոնց վնաս մը չու-
զես, զիրենք վար չղարնես, զիրենք
ընաւ չամրչցրնես : Յիսուսի փրկչին
օրինակը նայէ . ինչպէս կըսպառուեր
իր կոյս մայրը, ու հօր տեղ դրած
սուրբ Յովսէփիր . ան ալ մէնծնալէն
ետքն ալ. Երսուն տարի իրենց ձեռքին
տակը հնազանդ կեցաւ :

Ե. “Հնազանդ եղիր ծնողացդ յօ-
ժար կամօք, առանց տնտնալու, ամ-
մէն բանին մէջ՝ որ Աստուծոյ օրէնքին
դէմ չեն” : Դուն ան չես դիտեր՝ որ
իրենք ինչ ծանր պատասխան ունին
տալու Աստուծոյ, թէ որ քեզ չի հե-
ռացնեն ’ի չարէ, ու չիհըրեն ’ի բա-

ըին : Հասկա երբոր անոնք քեզ աղէ
կը կըհրամեն , ու գէշը կարդիլեն նէ
ինչու վեր վեր կինկնաս , ու թթու
սպատասխան կուտաս : Ե՞յ , քու խա-
թերդ համար իրենք իրենց պարոքը
ոտքի տակ մի առնեն , քեզի համար
դժոնիք մի երթան : Աստուծոյ սիրու
ըլլայ՝ հնազանդ ու մուող եղիր , անոնց
կամքը ըրէ . վասն զի ասկից կա-
խուած է քու ամմէն բարիքդ ու բա-
րեբախտութիւնդ :

Պ . “Սիրով ընդունէ ծնողացդ
խրասը ու պատիժը՝ որ քու աղէկու-
թեանդ համար կուտան , և անոնց
աստիճանը ճանչցիր „ : Թէ որ չափէ
՚ի դուրս ալ սրդողին , ու կարգէ դուրս
ելած կերենան նէ , որչափ կըրնաս՝
քիչ մը իրենց աչքին մերենար , ինչուան
սրտերնին իջնի . զգոյշ կեցիր՝ դէմ չխօ-
սիս , դէմ չլոգնես : Թէ որ խեռ զա-
ւակ մը դտնըփի՝ որ իր հօրը կամ մըը
ձեռք վերցրնէ , կամ ոտքով զարնէ նէ ,
այն ձեռքը՝ այն ոտքը կտրել ալէտք է :

Պ . “Ինքիր գլխուդ վիճակ քեզ մի
ընտրեր՝ առանց ծնողացդ հաւանու-

թեան. մանաւանդ աշխարհք մտնալու
կողմանէ „: Չէ նէ՝ մենծ վիշտ ու ցաւ
կուտաս իրենց. կը ընայ ըլլալոր դուն
ալետքը չարաչար փիւշման ըլլաս՝ որ
ինքիրմէդ մենծ սխալմունք ըրիր. ողոր-
մելի տեղ կլյունաս հոգւովալմարմնով
ալ. ան տեղը օրհնութիւն չիկայ,
հապա անէծք, ատելութիւն, ան-
դադար կռիւ. շատ փորձը տեսնուած
է աս բանիս. ու անանկ գէշ բան մը
նէ՝ որ խալըսելիք չիկայ :

Ե. “Ծնողացդ օդնութիւն հասիր
ափէդ որչափ որ կուգայ նէ „: Կրենց՝
տանը կառավարութեան թեթևու-
թիւն մը ըրէ. ծերութեան ատեննին
զիրենք անմիսիթար մի թողուր : Տնէն
բան չիվերցնես առանց իրենց գիտնա-
լուն. հաւատարիմեղիր իրենց քեզի
յանձնած բանը հոգալու. աւելի
անոնց շահը նայէ քան թէ քուկինը.
անոնք առաջ քեզի հազար բան ըրին,
դուն հիմա հազիւ մէյ մը սեպէ ըրածդ.
անզգամ կը ըլլաս, թէ որ անոնց գէմ
ադահ ըլլաս, անոնք մէկ բանի մը կա-
րուտ թողուր նէ :

Ղ . “ Ծնողացդ հիւանդութեան
 ատենը՝ քովերնէն մի զատուիր ” :
 Սեղով ծառայէ , աղէկ կերակրէ կա-
 րողութեանդ կէօրէ : Որդիական ե-
 րախստագիտութիւնդ ցցուը , անանկ
 որ՝ իմացնես թէ իրենց մահը քեզի
 մենծ ցաւ ու անմիսիթարութիւն կը-
 լայ : Անհոգ մըլլար իրենց քահանայ
 կանչել , ու հոգինին ազէկ հոգալ :
 Մեռելնին սկասուով թաղէ . իրենց
 հոգիին եարտըմըրէ սկասարադներով
 և բարի դործքելով , ամմէն օր աղօթ .
 Քիդ մէջ զիրենքյիշէ : Ճանա՛ որ ա-
 նոնց մեռնելէն էտև ալ սկասիւ ընես
 իրենց՝ քու բարի վարքովդ . որ քու
 աղէկութիւնդ տես նողները՝ ծնո-
 ղացդալ ողորմիս կարդան :

ԽՐԱՏ ԻՆՆԵՐՈՐԴ

Անվարժ լիդունելու համար :

“Մաքրութիւն սիրէ, ինչպէս որ քեզ
կը վայլէ,, :

Պ Ա Տ Շ Ա Ռ Ե

ա. “Անպարկեցա վարք ունենալէն
մենծ ամօթ չիկրնար ըլլալ,,,: Մարդ-
կանց ազբին աշ ամմէն մոլութենէ
էւլ վատահամբաւ կերպնայ, Աս-
տուծոյ ազբին առջևն ալդարշելի կը-
սեպուի՝ անասնական անկարգու-
թեան պէս : Քեզի կըսեմ քրիստո-
նէ կտրիչ, գիտցիր որ Աստուծոյ
պատկերքը եղած էս, Հօրն երկնաւորի
զաւակ էս, Յիսուսի Քրիստոսի եղ-
բայրն էս, Հոգւոյն սրբոյ տաճար էս,
և արքայութեան երկնից ժառանգ էս.
ասանկ ըլլալով ի՞նչպէս կըրնաս ան-
մաքրութեան ցեխին պըշտըկիլ. մը-
ներ մըներ կաղաչեմ ատչափ ան-

պատուալթիւն ամենասուրբ Երրորդութեան :

Ք. “Անկից մենծ ալ վտանգիկայ,,
Աս ախտս մարդուն սիրտը կըմտնայ՝
անուշ զէհիրի պէս , բոլոր մարմինն
ալ հոգին ալ պէրպատ կընէ. դիւրաւ
չար սովորութիւն կըլլայ . անկից էտև
ով կըրնայ ձեռքէն խալըսիլ : Տառը
մեղաւոր դառնայ նէ , հազիւ մէկ
անպարկեշտ մը դարձօղ կըլլայ, ատոր
ալ մեծ շնորհք պէտք է . շատ ուշ
կըլլայ անանկին դարձը , շուտով ալ
կըրնայ իր փրսխածին դառնալ : Փոր
ձով յայտնի է թէ որչափ փորձան-
քաւոր կամ վտանգաւոր բան է :

Ք. “Անկից աւելի վնասակար բան
ալ չիկայ ,, : Աս ախտս վնաս կուտայ
առողջութեան , սոսկալի հիւանդու-
թիւններ կըբերէ , կեանքը կըկար-
ձեցնէ , պատիւը ու համբաւը կըվեր-
ցընէ , ամմէն աղէկ բանը կաւրէ , Աս-
տուծոյ օրհնութիւնը կը հեռացնէ ,
աղքատութեան մէջ կըձգէ . անյար-
մար կընէ բարեգործութեան , դուռ
կըբանայ ամմէն չարադրութեան .

Եղբի կործանում կըքերէ, անհաւա-
տութիւն կըտանի, յուսահասու-
թեան և յաւիտենակսն դատապար-
տութեան պատճառ կըլլայ : Ասոնց
օրինակը յայտնի է . Աստուած տայ
որ չար օրինակին հետեւող չդանըւի :

ԳՈՐԾՔԸ

Թ . “Մի խօսիր և մի երգեր բնաւ-
անպարկեցտ բան մը . : Համարձակ
խօսքեր, անհամեստ խաղ կանչելներ,
անվայել շարժմունքներ՝ քեզի ալ-
ուրիշի ալ մեղքի գրգիռ կըլլան : Վայ
քեզի՝ թէ որ չես խպնիր անմեղնե-
րէն, և սուրբ հրեշտակներէն : Պար-
կեցտութեամբ անուշ ծիծաղ չի կըր-
նար մի ըլլալ . հեթանոաներու թող
աներես բանները . որ հայվանութիւն
է, խղճմտանքի և Աստուծոյ դէմ .
քրիստոնէն պիտի չի մոռնայ՝ թէ իր
լեզուն սուրբ պիտի ըլլայ :

Ի . “Մանչերը աղջիկները իրարու-
հետ ծիծաղիլ զբօսնուլ չըլլայ” : Ան-
մեղ երեցած բաններուն ծարը առանց

մեղքի չի լիննար : Առեն անցընել պ
կերևնայ , բայց երևակայութեան
մէջ անշնորհք պատկերք կը միայ : Կը տ
րիձներ, Ճահիլներ, հեռու կեցէք այս
բաներէն , որ անմեղութեան կը վեա
սէ . չի վախնաք նէ , դուք ձեր տոմը
կըքանդէք :

Պ . “Պար բռնելէն ինչ վնասներ
կը լսայ նէ , նայեցէք որ ձեր վրայ չի
փորձէք ..: Առաքինութիւն չի պահ
ւիր առ խաղին մէջ . փիւշմանու
թիւն ալ դժար կը լսայ : Աղաւնիին
ախալապան պահապան ըրլար , դառ
նուկին ալ դայլը : Դուն անմեղ ես
նէ , դիմացինըդ սատանայ կը ընայ ըւ
լաւ : Ամմէն կասկածէլի ընկերու
թենէ փախիր :

Պ . “Կրակէն ինչպէս կը փախչիս
ասանկ փախիր վտանգաւոր առ
թէն ..: Ուստի տնէ դուրս ուրիշի հետ
ընկերութիւն մը ներ : Ուր որ ըլլաս
նէ՝ կամ տանդ մէջ , մինաւորիկ մէկ
խցի մէջ մի տեսնըւիր՝ մանըը աղջկան
հետ , կամ աղջիկը մանըու հետ : Ա
ղէկ դոցէ դուռը կամ պատուհանը ,

ուսկից որ օտար մը կրնայ մտնալ։ Փա-
խիր այն տներէն՝ որ համարձակ ու-
բաց էն։ Մէկ վայրի եան մը անզդոյշ
գտնըւիս, կը լինաս ինկնալ։

Ե. “Ամմէն կերպով սուրբ պահէ-
ղքէղ,,։ Աշխարք իմանայ՝ որքու հա-
գուստդքուշարժ մունքդ պարկէցտ է։
Ո՛վ որ քեզի ուզէ դաշիւնէ, բարձր
ձանով հեռացուր. թէ որ մեռցնէ ալ
նէ քեզ, երջանիկ կը լայ մահդ, մար-
տիրոս կը լայ։ Մինաւոր մի մնար տան
մէջ. ազդականներուդ գնա։ Դուն
ափէդ եկածը ըրէ, Աստուած քեղ
ամմէն փորձանքէն կը պահէ։

Ղ. “Կարգըւելու խօսք ըլլայ նէ,
ծանրէն քաշէ,,։ Մէկ միամիտ խօսք
մը տալը՝ լալու պատճառ կը լայ ետ-
քը քեզի։ Անշնորք սէրը շուտով ա-
տելութիւն կը դառնայ։ Աստուծոյ
որտանց աղէթք ըրէ, որ ինքը քեղ
հոգայ. քու հոգիիդ ո՞րն որ աղէկ է
նէ, ինքը շտկէ շըտկըտէ։ Քու գլխէդ
բան չընես՝ ծնողացդ կամքէն դուրս,
և առանց խորհրդոյ ճշմարիտ բարե-
կամի։ Թէ որ Աստուած կամեցեր է

ՔԵզ առ Ճամբան դնել նէ , հոդեորդ
նախ ըրէ ամենայն պատրաստու-
թեամբ , և դի՞ր թէ սրբազան օր մընէ
բոլոր կենացդ մէջ սկսակին օրը : Նայէ
որ ան օրը քեզի համար Երկինքը տօն
կատարուի , չէ թէ դժոխքը ուրա-
խութիւն ըլլայ :

ԽՐԱՏ ՏԱՄՆԵՐՈՒԴԻ

ՀԻւանդի հայու :

“Նայէ որ հիւանդութենէդ ըան մը
վաստղիս , , :

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ը

ա . “Կըրնաս ծանր մեղքերդ պիլէ
քաւել” : Դուն մեղք չունիս մի .
մեղքն ալ պատիժ չուզեր մի՝ կամ քա-
ւարանի կամ գուցէ դժոխքի մէջ :
Հիմա Աստուած իր ողորմութեամբը
կուղէ քու մեղքերդ թողուլ խոս-
տովանանքով , և քաշելու պատիժդ
կամ ապաշխարանքով վճարելիքդ

կուղէ փոխել մէկ հիւանդութեան
հետ : Համբերութեամբ քաշէ ,
պարտքդ կը լեցնես : Ասանկ է նէշատ
շնորհակալ եղիք Աստուծոյ , չէ թէ
գանկլտիս : Ի՞նչ պիտոր ըլլայ էն եր-
կան ու էն դժար հիւանդութիւնը՝
քաւարանին ու դժոխքին քովը :

Է . “Կը մաս՝ միայն թէ ուզես՝ շատ
առաքինութիւն ալշահիլ,, : Հիւան-
դութեան անկողինը դպրոց մը նէ ,
փորձ մը նէ , փորձաքար՝ մէհէնկ թա-
շի է առաքինութեանց : Հոն կը լլայ
սորվիլուքանեցնել առաքինութիւնը ,
հոն մենծ բան է առաքինութիւնը ցցնել
Ո՞չափ անձինք կան որ , թէ որ չհի-
ւանդանային նէ՝ չէին աղէկ ճանչ
նար զԱստուած , չէին արհամարհեր
զաշնարհ , յաւխենականութեան
ինչ ըլլալը չէին հասկընար , ինչւան
որ դժոխքի մէջ չինկնային : Քանի
մարդ կայ՝ որ գէշիուցը չէր թողուր,
առաքինութեան ձեռք չէր զարնէր ,
թէ որ Աստուած զիրենք սանկի թէ
նեղը չխօթէր , իրենց ուժը չոկարացը-
նէր , և իրենց անսանձ առողջութեը

կառ չդներ : Ուրեմն մեծ շնորհք է քեզի աս հիւանդութիւնը , որ ուզես չուզես՝ քեզ աստուածակաշտութեան ուսուցք ըլլալու ճամբան դարձնես :

Դ . “ Աստ վարձք ալ կըրնաս դիղել Աստուծոյ առ ջե , : Թէ որ հիւանդութիւնը չի թողուք քեզ մարմինով աշխատիլ , աւելի կըրնաս հոգւովաղէկ աշխատիլ . միայն թէ հասկըրնաս՝ որ ասէ Աստուծոյ դիտաւորութիւնը : Ամեն մէկ համբերելուդ մէյ մէկ ճէ վահիր կէւելնայ քու թագիդ վըրայ արքայութեան մէջ , և աւելի բարձր տեղ քեզի կըպատրաստուի հոն տեղը : Հիմա ի՞նչուկէս կըլայ ցաւիլ աս նեղութիւններուն վըրայ՝ որ քեզյափտենական երջանկութեան պատճառ են :

ԳՈՐԾՎԸ

Ա . “ Աստուծոյ դէմ մի արտնիջար՝ երբոր քեզի հիւանդութիւն մը կըխաւրէ նէ , : Գլուխ խոնարհէ Աստուծոյ սուցք կամբին . շնորհակալ եղիր՝ որ քեզի միջոցներ կուտայ կոր

մեղքերդ ջնջելու, առաքինութիւն
գործելու, ու վարձքդ շատցընելու :
Մինեղասրտիր բանէ գործէ մնալուդ
համար, Աստուած տեղը կը լեցնէ : Ի՞նչ
որ ըլլայնէ՝ մի դանկը բարտիր . Աստուած
անանի տէր մընէ՝ որ քեզնէ աղէկ կը-
մումտայ, և քու բարիդ միայն կուղէ :

Ե. “Յաւդ որ կը շատնայ, դուն
ալ համբերութիւնդ շատցուր” : Ի՞նչ
շահէ նեղանալ բժշկին դէմ, դեղե-
րուն դէմ, ծառայովներուն դէմ :
Ոէ որ նեղանալով աւելի տակնու-
վրայ ընես արունդ նէ, վարձքդ կը-
կորսնցնես Աստուածոյ առջև, անդին
ալ կը ակ կը վառես հոգւոյդ : Երբոր
ցաւը չափէ դուրս քեզ կը տանջէ՝ որ
տրանջալդ կուգայ նէ, դուն անոր
տեղը աղէկ խօսքերով Երկինքը կան-
չէ . Աստուած իմ, սկզբով կը քաշեմ
քու սիրուդ համար . տէր Աստուած,
դուն ինձի համբերութիւն տուր .
Յիսուս վրկիչ իմ, քեզմով կուղեմ
սպարիւ քեզմով կուղեմ մեռնիլ : Ա-
սոնք են հնարք վարձք վաստըկելու
համբերելով :

դ. “Քրիստոնէի ալէս” անցուը հիւանդութեանդ ատենը,,,: Բարեպաշտական գիրք մը կարդա, կամ կարդալ տուր . Յիսուսի չարչարանքը մտամոա. ձանով աղօթք ըրէ . միտքդ սըխ սըխ Աստուծոյ տար հառաջական խօսքերով խաչելութիւնը պատիստուած Յիսուսին խաչի վրայ մեռնիլը միտքդ բերելով :

դ. “Կտակ ընելիքդ ու տանդ կարդաւութիւնը որոշէ,,,: Մասնաւորի կումը ըլլալով կամ կրիւք բան մըներարդարը իրաւունքը նայէ : Մի սպասեր՝ որ քեզի երախտագէտ ըլլան, քու տունդ հոգան՝ որոնց որ երախտիք ըրեր ես. գիտես որ քու վախճանելէդ էտե՛ փոյթելնին ըլլար . վասն զի հասարակօրէն՝ աչքէ հեռու եղօզը՝ սրտէն ալ հեռու կրլայ : Քանի որ ողջ ես նէ՝ ըրէ ընելիքդ ’ի փառաԱստուծոյ, քու հոգւոյդ օդտին, և ուրիշներուն աղէկութեանը . ասով ուրախութիւն կունենաս՝ ողջ իքէն ըրած բարիքներուդ համար : Չէ նէ, էն աղէկ կտակն ալ շատ անդամ ա-

ղեկ չի աստարուիր, կամ բոլորովն
պաթալի կըքաշէ :

Ե . “ՄԵՌՆԻՂԴ մօտ ըլլայ նէ , սպատ-
րաստուե՞ աղեկ Երթալու ,,: Անհոդ
մըլլար՝ դեռ ատեն ունիմ ըսելով որ
շատ անգամ ատեն չիգտնըւիր: Քա-
նի որ խելքդ վրադ է , խոստովանա-
հայր կանչէ . ալզորկուց պէրի մեղ-
քերդ թափէ . սրբութիւն առ , վեր-
ջին օծում առ զգաստութեամբ . և
բոլորովն յանձնէ քեզ վատահ սրբ-
տով Աստուծոյ կամացը, և Աստուծոյ
ձեռքը :

Ղ . “Ո՛րչափ մօտիկնայ մահը , այն-
չափ սիրու առ ու զօրացիր ,,: Գիտցիր
որ ատ է Ետքի զոհը՝ որ քեզնէ կու-
զէ Աստուծած : Մէկ հատիկ ճամբայ
է՝ որ քեզ Աստուծոյ տեսուն կըհաս-
ցընէ : Պիտի թողուս մէկ բանտ մը՝ որ
ազատութիւն գտնաս . մէկ աքսորանքէ
մը պիտի խալըսիս՝ որ բուն հայրե-
նիքդ Երթաս: Քանի՞ որ միտքդ վրատ
է , նուիրէ Աստուծոյ Ետքի շունդ
որով յաւիտենականութեան դուռը
պիտի մոնաս :

ԳԱՅԻՆ ԵՐԲՈՐԴ

ՀՈԳԵԿՈՐ ԽՐԱՏՆԵՐ
ԽՍՏՈՒԹՈՅ ՊԱՇՏՈՆ, ՈՒ ՍՈՒՐԲԵՐՈՒ
ՊԱՏԻՒ ԸՆԵԼՈՒ

Ես գլխուս մեջ իմ դիտաւորութիւնս ան է, որ քեզ տաք պահեմ բարեպաշտական կրթութեանց մեջ, որ լսած ունիս քարողներէն ու հոգեւոր խօսակցութիւններէն՝ առանձնութիւն քաշուած ատեններդ • ուստի մըսպասեր որ երկան աղօթքներ գրեմ քեզի սիրելի • հապա դիւրին կերպ մը զԱստուած պաշտելու, ու իր սուրբերը պատուելու, չիպակսելով վեճակէդ ալքանէդ գործէդ ալ: Թէ որ ալ աւելին կուզես ընելնէ, աւելի աղէկ է. միայն նայէ որ քու բարեպաշտութիւնդ չըլլայ սոսկ դրսի և աւելորդ ջերմեռանդութիւն մը:

ԽՐԱՏ ԱՌԱՋԻՆ

ԱՅԵՒԱՍԻՐԻ ԵՐԵՐԴԻ - ԱՀԱՆԸ ՔԱԿԱՆ-
ՐԵԼ - ՀԱՅԱՐ :

“ԵՐԱՊԵՏՈՎՈՒԹԻՒՆ ԸՐԵ ու պաշտե
զինքը՝ Ճանչնալով թէ քու առջի
սկիզբդէ, ու վերջին վախճանդ” :

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ե

ա. “Առ է քու առջի պարտքդ” :
Ուրիշ բանի համար Աստուած քեզ
ստեղծելու ատենը չտպաւորեց քու
հոգիիդ՝ բուն պատկերքը սուրբ Եր-
րորդութեան (տալով բանականու-
թիւն՝ միտք և անձնիշխան կամք), և
միլատութեան ատենն ալ քեզ սրբե-
լով, ու նորանց ծնանելով սուրբ ա-
ւազանեն՝ յանուն Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ : Պղտըկուց պէրի Էն
հարկաւոր սորվածդ ալ աս չէ մի, որ
Ճանչնաս ու պաշտես մի Աստուած
յերիս անձինս :

թ. “Աս է քեզի տուած Էն հար-
կաւոր և Էն մենծ հրամանը,, : Կե-
նացդ հետ սկսած բան է , բայց զի-
վերջանար կենացդ հետ : Քանի որ
դուն բանական արարած ես (հոս ալ
անդին ալ), պիտի մնայ աս ճանաչ
մունքն ալ, թէ մէկ Աստուած երեք-
անձնեայ՝ է քու առջի սկիզբդ , ու
վերջին վախճանդ : Ըստ ապերախտ
կըդանըւիս , թէ որ անհոգ ըլլաս աս
եական պարտքիդ , որուն համար
ստեղծուած ես , գնուած ես Յիսու-
սի արունովը , ու անով փրկըւիս պի-
տոր :

Դ . “Ե՞ն դվյաւոր բանն ալ է,, :
Ո՛քափ մեծամեծ բաներ կան եկե-
ղեցնայ մէջ 'ի սուրբ պատարագն և
յայլ խորհուրդն՝ ամմէնը դրուած է
'ի փառս ամենասուրբ Երրորդու-
թեան : Ասանկ է , ու ասանկ պիտի
ըլլայ իր պաշտօնը ու փառաբանու-
թիւնը յաւետեանս յաւիտենից . աս
է միշտ բանը գործը ամմէն հրեշտակ-
ներուն ու սուրբերուն : Մենծ պա-
տիւ չէ մի որ դուն ալ ասանկ փա-

ռաւոր բանի մէջ մասնակից ըլլաս եւ
կեղեցւոյ հոս ալ անդին ալ :

ԳՈՐԾՎԵ.

ա. “Ամմէն տեղըրէ քու պատիւդ
և երկրակաղութիւնդ ամենասուրբ
Երրորդութեան ,,: Եւ աս կը ընաս
ընել մինաւորիկ ալ՝ ուրիշներու հետ
ալ, շատ անգամ օրը, ծածուկ կեր-
պով սրախիդ մէջ : Տպաւորէ մտքիդ
մէջ աս կարճ խօսքը . “Մեղքէն
զգոյշ կեցիր . Աստուած քեզ կը-
տեսնայ, մի Աստուած Երեքանձ-
նեայ,,,: Աս ըլլայ քեզի զօրաւոր սանձ
մը՝ մեղքէն ետ քաշուելու, և յոր-
դորանք մը դէպ ՚ի բարին :

բ. “Սիրադ միշտ եփի՝ որ ամմէն
կերպով մէծ պատկառանք ունենաս
ամենասուրբ Երրորդութեան առջև,,:
Ռւատի խոնարհութեամբ աղաչէ Աս-
տուծոյ՝ բոլորունին պարզ սրտով իր
անհուն կատարելութիւնները միտքդ
բերելով . ինչու իր ամենակարուղու-
թիւնը, որ անբաւ բաներ է ստեղծել

ՔԵզի համար . իր իմաստութիւնը՝
 որով կը կառավարէ ամմէն բանը , ու
 իրենց վախճանին կը շրտկէ սքանչելի
 ճամբաներով . իր նախախնամու-
 թիւնը՝ որ էն չնչին արարածներն ալ
 կը հոդայ՝ ինչպէս մենծերը , մանաւանդ
 իր ընտրեալները : իր անչափութիւնը՝
 որ երկինքը երկիրս ճառքին մէջն են .
 իր երջանկութիւնը՝ որ միշտ ինքիր .
 մով երանելի է , ոչ հրեշտակներու
 կարօտ է , ոչ սուրբերու , ոչ մարդկան և
 ոչ ուրիշ ստեղծուածներու . իր գե-
 ղեցկութիւնը , որ ինչ գեղեցիկ բան
 կը նաս մտածելնէ՝ ամմէնը ունի գե-
 րազանց կերպով . իր բարութիւնը՝
 որ տարածեր է ամմէն եղած բանե-
 րուն վրայ , և իր օրհնութեամբը զամ-
 մէնքը չէն կը պահէ : իր ողբարմու-
 թիւնը՝ որով կը ներէ այնչափ մեղտ-
 ւորներուն , և կը դրդէ որ զղջան :
 իր արդարութիւնը , որ պղտիկ բարի
 դործքն ալ անվարձ չիթողուր . իր
 սրբութիւնը , որ կը փայլի իր օրէնք-
 ներուն՝ իր վճիռներուն ու իր դի-
 տաւորութեանը մէջ : Մէկ իսոպով

իր անթիւ կատարելութիւնները՝ որ լուսի ալէս պայծառ կերենան, իր ամմէն սքանչելի գործքերուն մէջ՝ ի կարգի բնութեան, շնորհաց, և փառացն յաւխտենից: Ասոնք ատեն ատեն աղէկի մը միտքդքեր քու ջերմեռանդ սրտիդ կէօրէ: Ռւրախ եղիր՝ որ ասանկ Աստուած և տէր ունիս ամենակարող և ամենակատարեալ: Բոլոր բաներդ ալկեանքդ ալիրեն համար դիր, որ քու կողմանէդ որչափ կըրնասնէ իր փսոքը ու պաշտօնը մենծցընես, և զամմէն մարդ յորդորես՝ որ զինքը ճանչնան, սիրեն ու պաշտեն:

Ք. “Անպակաս խօսէ պատուով ու պատկառանքով սուլք Երրորդութեան և մի Աստուածութեան վրայ, իր պատուիրանքներուն ու իր կամքին վրայ, : Համարձակ ցցուր, թէ դուն հաւատարիմ ծառան ես իր մեծութեանը: Մի թողուր որ քու տակդէղօղները իրեն դէմ բան մը ընեն խօսքով կամ գործքով. և չդանուի քու տանդ մէջ մարդ աւելորդասկաւ-

տութեանց հետեւօղ (երազի կամ կա-
խարդի, և այլն :)

Դ . “Բանի մը ձեռք չիզարնես՝ ա-
ռանցը ըսելու, Յանուան Հօր և Որդոյ
և Հոգւոյն սրբոյ „,: Գործքդ կըմըն-
ցընես նէ, ըսէ .“Փառք Հօր և Որդոյ
և Հոգւոյն սրբոյ „,: Գիտե՞ս թէ որչափ
շնորհք ու վարձք կը ըվաստըկիս աս
ջերմեռանդ սովորութիւնը բանեցնե-
լով :

Ե . “Եռիրէքու անձդ բոլոր ամե-
նասուրբ Երրորդութեան „,: Աս բա-
նիս յարմար աղօթքներ հառաջանք-
ներ կըդանաս ինքիրմէդ կամ դըր-
քերէն . (զոր օրինակ, Քո՛ եմ ես տէր
ոգեսէր : Զքոյս ՚ի քոյոց քեզ մա-
տուցանեմ : Երրեակ միութիւն, եղե-
լոց խնամօղ , և ինձ ողորմեա . Ան :)

Ղ . “Քու հոգիիդ ալ ուրիշներուն
ալ պատիւը պահէ , ու նայէ որ չա-
պականես , որովհետեւ սուրբ Երրոր-
դութեան պատկերն է „,: Թագաւո-
րի մը պատկերքին անարդանք ընելը
մահապարտ կընէ զմարդ . Հապա որ-
չափ ևս առաւել Աստուծոյ պատ-

կերպին : Մասնաւոր կերպով աս նիկ-
թին աղօթք ըրէ , որ անմեղ տղաքը
չկորսնցընեն մկրտութեան շնորհքը :
Մէկ տղի մը նալ խալքսելու պատ-
ճառ ըլլաս նէ , ի՞նչ ուրախութիւն
կըլլայ Երկինքը՝ քեզի ալ՝ ամմէնուն
ալ :

ԽՐԱՏ ԵՐԿՐՈՐԴ

ՈՐԴԱՌՅԻ ԱՍԹՈՒՃՈյ ԽԱՐԴԵԼ-ՌԵԱՆ
ՀՐայ :

“Մասնաւոր ջերմեռանդ Եղիր Խոր-
հրդոյ մարդեղութեան ,,: :

Պ ԱՏ Ճ Ա Ռ Ը

ա . “Բանն Աստուած մարմնա-
ցեալ բոլորովին սէր է ,,: Պարզ սէրը
պատճառ Եղաւ որ Որդին Աստուճոյ
իր փառաց աթոռէն Երկնքէն Երկիրը
վար ինջնայ , ու մարդկային բնու-
թիւն առնու , որսկէս զի մեղ մեղ-
քէն ու դժոխքէն խալքսէ : Ինքը խո-

Նարհեցաւ՝ որ մեղքարձրացընէ. որդի
մարդոյ եղաւ՝ որ մեղք Աստուծոյ որ.
գիք ընէ:

Ք. “Բուն իմաստութիւն է,,,: Ամ
մէն դանիձ իմաստութեան և գիտու.
թեանն Աստուծոյ անոր քովին է պա.
հած՝ կըսէ առաքեալը, և բոլոր լը.
րումն Աստուածութեան անոր մարմ
նուն մէջը նստած է՝ կըսէ : Իր խօս.
քերը կեանիք տուօղ են . իր մեղի սոր.
վեցուցածը՝ Աստուծոյ վարդապու.
թիւնն է :

Դ. “Ինքն է ամենայն զօրութիւն,,,:
Ուստի կըսէ Եսայի մարդարէ . “ Մա
նուկ ծնաւ մեղ, որդի տուաւ մեղ,
որոյ իշխանութիւնը ՚ի վերայ ուսոց
իւրոց. և անուն նորա՝ սքանչելի, խոր.
հրդակից, Աստուած, հղըր, իշխան խա.
ղաղութեան, և հայր հանդերձելոյ
աշխարհին,,,: Իրեն հետ մէկ ըլլանիք
նէ, մեր ամմէն բարի գործքը մէնծ
բան կաժէ . ինքն է մեր գլուխը, մենիք
իր մարմինը կըսեպուինիք . առանց ա.
նոր բան մը չենիք կընար ընել:

ԳՈՐԾՎԵ

ա . “Ամմէն Աստուծոյ օրը շնորհակալութեամբ յիշէ Արդւոյն Աստուծոյ մարդեղութիւնը , : Աս խորհուրդս է աղքիւր ամմէն շնորհքին , որ մարդկան եղեր է՝ պէսալէս յայտնութիւններով , բուն վրկադործութեամբ . և իրմով պիտի ըլլայ մեր վերջին երանութիւնն ալ : Ասանկ մենձու շնորհաց գանձ եղած խորհուրդը մենձ բան է որ միշտ սրտիդ մէջ ունենաս : Գո՞նէ ան ատենները յիշէ օրւան մէջ՝ քանի որ չըեշտակ տեառն կըսես :

Բ . “Սէր մը ունեցիր , որ խելքդ մարդդ ըլլայ մարմնացեալ Աստուծոյ բանին վրայ , : Մաքիդ մէջ որոճէ իր աղքատութիւնը , խոնարհութիւնը , համբերութիւնը , սէրը , հնազանդութիւնը , և միջամեջ հանգչելով մխիթարութեան հոգւով հառաջանքներ ընելով , ու խորունկը մտնալով ասբաներութեամբ մէջ :

Ք. “Քանի՞ որ Յիսուսին անունը
բերան կառնեսնէ՝ հետք մենծ պատ-
կառանք ցցուր ,,: Աղեկ հասկըցիր
թէ այս է անուն Որդւոյն Աստուծոյ՝
որ քեզի համար մարդ եղեր է : Չատ-
անվայել բան է , սրբապղծութիւն
ալ է , սրիս սրիս բանեցնել ատ անունը
առանց մտադրութեան և առանց
զդաման . անանկ անուն մը՝ որ
ծունկ կը չոքին իր առջեր՝ երկինք,
երկիր , ու երկրիս տակը եղօղներն
ալ : Փուժ տեղը Յիսուսին անունը
առնուլ՝ գուն ալ զգուշացիր , քու-
ձեռքիդ ներքել եղօղներն ալ զգու-
շացուր :

Ք. “Իր վարդապետութել հետեօղ
եղիր ,,: Մէկը ընաւ աշխարիս երեսը
չէ եղեր՝ որ անանկ բարակ բան խօ-
սի , անանկ խմաստուն , ու անանկ սիր-
ար թափանցող , ինչպէս Յիսուս փըր-
կիչն մեր . վասն զի աստուածային
իշխանութեամբ կը խօսեր : Ուրեմն
կարդա՛ , սորմէ , համը առ իր վարդա-
պետութեան՝ որ գրած է աւետա-
րանին մէջ , ու անըլլայ քեզի առաջ

նորդ կեանքիդ : Ո՛վոր իր խօսքովը
զարէ իւր կեանքը նէ, աղէկ կը հաս-
կընայ՝ թէ Աստուծոյ բերան է :

Ե. “Հաստատ կեցիր իրեն հետ մի-
ացած սիրով,,,: Յաջողութիւն ըլլայ՝
ձախորդութիւն ըլլայ, անձնասիրու-
թիւնդ, քեզի եղած զրկանքը՝ ա-
նարգանքը՝ սպառնալիքը, ինչ որ ըլ-
լայ, քեզ չկարենայ բնաւ զատել իր-
մէն, կամ իր վարդապետութենէն:
Իրեն որ հաւատարիմ ըլլաս նէ, ամ-
մէն բանի յոյս ունեցիր, հէմ աս-
դին՝ հէմ անդիի աշխարքը :

Ղ. “Ճանք ըրէ, որ ուրիշներուն
սիրան ալշարժես հաւտալու և սիրե-
լու դՔրիատոս վրկիչդ” : Ո՞չափ
քրիստոնէ անուն ունեցողներ կան,
որ կենդանի հաւատք չունին պարզ
սրտով. կան ալ որ վար կըզարնեն
իր տղքատութիւնը, խոնարհու-
թիւնը, չարչարանքը ու մահը՝ իրենց
դործքովը, ու կընեղանան իր վար-
դապետութեանը՝ որ իրենց մոլու-
թիւնները և չար դործքերը կըդատա-
պարանէ : Չե՞ն նայիր որ աս ան Յի-

սուսն է, որ է ճանապարհ առ Աստուած, Ճշմարտութիւն, և կեանք. Երմով միայն կըլլայ հասնիլ առ Աստուած Հայր: Հասկա դուն ջանա որ դիւրացնես ուրիշներուն առաքինութեան ու երջանկութեան ճամբան՝ յորդորելով զիրենք 'ի հաւատս և 'ի սէր Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

ԽՐԱՏ ԵՐՐՈՐԴ

ՔԸ ԵՒԹԿԱՅԻ օՐԻնակին նայելու համար

“Բոլոր սրտանց իր ետևէն գնա „:

ՊԱՏՇԱՌԵ

Թ. “Պէտք է որ Քրիստոսի հետեւս,, : Վասն զի ինքն է քու տէրդ և Աստուածդ, ստեղծօղդ և փրկիչդ. ի՞նչպէս կըլլայ որ դուն ետքաշուխ իր քալած ճամբէն: Ինքը չէ մեզի առաջնորդ փրկութեան ճամբուն. ուրեմն պէտք է որ իր ըսած,

ները բռնենք, իր ըրածները մեզի օ-
րինակ առնենք: Ինքն է մեզի գաղա-
փար սրբութեան, Աստուածութիւնը
իրմով մեզի երևելի եղաւ. ովոր ըզ-
Քրիստոս Ճանչնայ, զԱստուած Հայր
ալ կըճանչնայ. Քրիստոսի հետեւողը՝
Աստուծոյ հետեւող կըլլայ: Մենք որ
Աստուծոյ որդիք սկրելիք կոչուեցանք
նէ, Աստուծոյ նման պիտի ըլլանք, և
կըլլանք՝ թէ որ Քրիստոսի նմանինք
նէ:

Ի. “ Քրիստոսի հետեւիլը՝ մեզի
փառք և պարծանք է „: Ինքն որ Եր-
կընքէն աս Երկիրս ինջաւ նէ, դիտու-
մը ան էր՝ որ ոտքի տակ առնէ ան-
կարդ սէրը հարստութեան, փառա-
սիրութելը, հեշտասիրութելը, որ մեր
հոգին կը կորսնցընեն: Միանդամայն
զմելքը վրձացնէ, առաքինութիւնը
ծաղկեցնէ, ու տարածէ իր հօրը իշ-
խանութիւնը: Ի՞նչ գեղեցիկ դիտա-
ւորութիւն է աս. որուն քեզ ալ կը-
յորդորէ, քեզի դաս կուտայ, կը-
խոստանայ ալ իր օգնութիւնը, յաջո-
ղութիւն, և վարձք յաւիտենական:

Ասանկ սուրբ ու շահաւոր բանին է տեսէն ինկնալով՝ աս Երկնաւոր թագաւորին ճամբուն կեօրէ, կըհասնիս արքայութեան փառքին:

Պ. "Քրիստոսի հետեւլը՝ շատ դիւրին բան է, ու շատ քաղցր բան է": Միայն ցած մարդիկ՝ անշնորդներ ու աներեաններ կը նան ըսել, թէ Քրիստոսի էտեէն Երթալը ծանր բան է, կամ անկարելի բան է: Ինչու որ իւրենք գերի են եղեր զգայութեանց և իրենց ախտից, ու աշխարքիս ծովում մէջ կը խղղուին կոր: Միթէ իրենք աշխարքի խաթեր համար բան չե՞ն մի քաշեր. ինչքանի որ ձեռք կը զարնեն նէ, առաջ կերթայ մի: Քրիստոսի մաստութիւն յաւիտենական՝ չէր մի գիտէր, թէ ո՞ր ճամբով կը լայ երջանկութեան հասնիլ: Ճշմարիտ քրիստոնեայ մը չկայ որ ատ գանգատները ընէ, ինչ որ կը նեն աշխարքիս գերի եղօղները: Բարեպաշտ քրիստոնէի հարցընեսնէ, կը լսես որ կը սէ. Քրիստոսի լուծը քաղցր է, իր բեռն աւթեթէ:

ԳՈՐԾՎԱԸ

ա . “Քրիստոսի հետեւ գնա , իրեն
նման եղիր՝ քու վիճակիդ մէջ „ :
Միաբդ չկդնես , թէ միայն անապա-
տի ճգնաւորները , զանազան կրօ-
նաւորները ու եկեղեցականները՝ սոսկ
սպարտըկան են Քրիստոսի հետեւլու :
“Ո՛վ որ մկրտուած է նէ՝ զՔրիստոս
հագեր է , Քրիստոսի սլէս պիտի ըլ-
լայ „ կըսէ Պօղոս առաքեալ : Քրիս-
տոսի մաքին ու վարքին պիտի նայի
կըսէ : Քրիստոս տէրն մեր՝ է միանգա-
մայն ամմէնուս փրկիչը , վարդա-
պետը , և օրինակը : Ինքը անանկ սքան-
չելի կերակով իր վարքը օրինակ տը-
ւաւ որ ամմէն ցեղ և ամմէն վիճակի
մարդը կարենայ իրեն հետեւիլ , աղ-
քատն ալ հարուստն ալ , մենծն ալ
պզտիկն ալ , տղէտն ալ խմաստունն
ալ : Թէ որ չես կըրնար Քրիստոսի
պէս աղքատ ըլլալ , անանկ կըսեալ-
վիս՝ թէ որ սիրտդ չկապես ունեցած
ըստիդիդ և աշխարքի ըաներուն : Թէ որ

քու տանդ ազնուականութիւնը չ.
տանիր որ ամմէն դրսի կերպդ վար
դնես, կընաս ատ մեծութեան մէջ
խոնարհ ըլլալ սրտով, ու պարկեցն
ապրիլ առանց բանի տեղ սեպելու
ատ դրսի փառաւորութիւնը :

Ե. “Հետևող Եղիր Քրիստոսի՝ չէ
թէ սոսկ փախաքով սրտի, հապա
գործքովալաւու: Առաջ Ճանչցիր, թէ
որչափ հախ բան է, և փառաւոր, և
գիւղին և զուարճալի՝ Քրիստոսի նման
ըլլալը. բայց բառական չէ փրկըւելու
համար ատ բաղձանքը, հապա գործ.
քով ալ ցցուր թէ սիրոդ վառուած
է՝ որ Քրիստոս ՚ի քեզ կենդանի ըլ
լայ, և իր նմանութիւնը վրադ աղեկ
երևնայ: Ասանկ ըլլալու համար՝ ամ
մէն օր Քրիստոսի վարքին մէկ մասը
մտածէ. միտքդ բեր, թէ ինքը ինչ
պէս կենցաղավարեցաւ աշխրքիս վրայ՝
առանձին տեղը, ու բազմութեան
մէջ, հալածանաց՝ նեղութեանց և ամ
մէն մարդկային դիակուածներուն մէջ:
Նայէ թէ դուն ինչուան հիմա ինչ
պէս կեցար անանկ բաներուն մէջ՝

ասկից էտեւ ալ ընտո՞ր պիտի կենաս՝
որ Ք.րիստոսի հետևող ըլլաս : Պատ-
կերահանի մը պէս եղիք , որ բան մը
քաշելու ըլլայ աղէկ օրինակի նման ,
կամ կենդանի օրինակէն , աչքը վայր-
կեան մը անկից չխպակսեցներ , որ
չըլլայ թէ աննման ելլայ քաշուածքը :

Պ . “ Ք.րիստոսի էտեւէն երթալդ՝
ինչուան Ճամբուն կէսը չըլլայ , կամ
ասդին անդին ցաթկելով , : Չըլլաս
ան մարդուն պէս , որ անդադար իր
տէրը կըփոփոխէ , առ գոնէն ան
դուոը կերթայ . կամ ան մարդուն
պէս՝ որ պահ մը բարեկամին կումն է ,
պահ մը թշնամիին , աղէկ սիրտը գէշ
սրտի հետխառնելով : Կ՞նչըսէ Ք.րիս-
տոս անոնց որ՝ երկու տիրոջ ալ ծա-
ռայել կուզեն , իրեն ալ աշխըքի
ալ . առաքինութիւն ալ կուզեն ընել
իրենց ախտին ալ կամքը կատարել :
Եթէ Ք.րիստոսի աշկերտ ըլլալ կու-
զեսնէ՝ պէտքէ որ միշտ իրեն հետեւիս ,
իր են հաճոյ չէ փոփոխական խելքը :
Ամբողջ զոհը՝ այսինքն ողջակէզը կու-
զէ՝ քու անձնասիրութեանդ , հոկար-

տութեանդ, քու քէֆիդ. որ բոլոր վիճակնես կամ ողջ ողջ էրես զասոնք :

Դ. “Քրիստոսի հետեւող ցցուր զքեզ բոլոր աշխարքի առջեւ ։ Մէկ Ճշմարիտ հաւատացեալ մը՝ որ պարտըկան է զՔրիստոս Աստուած դաւանիլ ին դահիճ բռնաւորին առջևն ալ, կը նայ մի վախւլքիսել դաւանելու զինքը ուղղափառ ժողովուրդին մէջ ։ Անարգանք մի կըսեպէ իրեն քրիստոնէ ըլլալը, որ է ըսել հետեւող Քրիստոսի ։ Մէկն որ Քրիստոսի չիհետեւվր նէ, ի՞նչ բանի կուգայ անոր աղ նուականութիւնը, բարձր աստիճանը՝ փառքը պատիւր. ոչինչէն աւելի բան չաժէր : Քրիստոսի նման ըլլալդ քէզ մենծ կընէ Աստուծոյ աչքին առջեւը Թէ որ կըխսնիս քրիստոնէ երևնալ, ամօթ սեպելով քէզ զՔրիստոս, վախցիր որ խաղք խայտառակ կըլլասն կըխղդուիս մեղքի մէջ, և կուգայ օր՝ որ Քրիստոս ալ ամօթ կըսեպէ քէզ Ճանչնալ, և խայտառակ կընէ քէզ երկնի ու երկրի առջեւ :

Ե . “Քրիստոսի հետեւղ եղիր ին-
չուան ՚ի մահ, կեանքդ ալ տալու
պատրաստ ըլլալով” : Աս մոքի վրայ
ըլլալը՝ մենծ նշան է սուրբ ըլլալու :
Աշխրքի մարդիկը՝ մէկ դժար բանի
մը ձեռք զարնել յորդորելու համար
կըսէն . “Կտրի՛ սրտով բան մը սկսի-
լը՝ գործքին կէսէն էւելը ընել կը-
լմանի,, : Ինչու ասանկ չըսէ քրիստո-
նէն ալ Քրիստոսի էտևէն երթալու
համար : Աղէկ ծառան իր տիրոջմէն
ջիր աժնըւիր վտանգի ատենն ալ .
դուն իսէ հեռըւանց հազիւ էտևէ
կերթաս կոր անոր՝ որ է թագաւոր
թագաւորաց, և տէր տէրանց : Մօտիկ
գնա՛ էտևէն որչափ որ կընաս, մա-
նաւանդ ոտից տակ առնելով հարըս
տութիւնը, պատիւը, քէֆիդ ուզա-
ծը, և սիրով համբերելով աղքատու-
թեան , նեղութեան , հիւանդու-
թեան : Ուր որ այնչափ սուրբերը՝
քու տարիքդ իքէն, քու վիճակդ իքէն,
Յիսուսի նման եղան աս բաներուն
մէջ, դուն ինչու անանկ չըլլաս :

Ղ . “Քրիստոսի ճամբան բոնէ , ա-

ուանց նայելու ուրիշներուն ըրածին
ըրածին,, : Քեզ ամուգը բռնէ՝ ուրիշ
որքեղիսամտելու նայինէ : Կեղծաւոր
քրիստոնէ չի սպակսիր աշխրքէս, անհա-
ւատ անդդամ մարդիկ չեն սպակսիր, որ
կըջանան աղեկներն ալդէցընելսուրը
ըլլալիքն ալ անսուրը ընել։ դուն նայէ
որ հաստատ կենաս . իրենք ինչ կու-
զեն՝ թողընեն : Աս ստորյգ է՝ որ ար-
քոյութեան Ճամբան նեղէ . աշխրքի
խօսքերը աւետարանին դէմ կելլան,
ուր որ գրած է՝ թէ ցոփ կեանքը
քրիստոնէութենէ դուրս է . ով որ
զնքը չուրանար, չար յօժարութիւնը
չմեռցներ, իր խաչը ամմէն օր իր վրայ
չառներ, ու Քրիստոսի օրինակին
էտենէն չերթարնէ, քրիստոնէ՝ Քրիս-
տոսի աշկերտ չի կըրնար ըլլար . աս
հիմն ալ չունենայ նէ, յաւկտենական
երանութենէն մասն ու բաժին չու-
նենար :

ԽՐԱՏ ԶՈՐՌՈՐԴ

ՔՐԻԿԱԿԱՆԻ ՀԱՐՀԱՐԱՆԱԴ ՎԼՈՅ :

" Յաւակից Եղիր Յիսուսի
չարչարանքին , :

ՊԱՏՇԱՌԱԾ

ա . " Յիսուս Քրիստոս անմեղը
լալով կըքաշէ կոր,: Ան՝ որ միածին
ՈՐԴԻ Աստուծոյ է , հրեշտակաց ու
մարդկանց տէր, Թագաւորներու Թա-
գաւոր , բոլորովին անմեղութիւն ;
կատարելութիւն, սրբութիւն սրբոց.
ոչ մեղք ունէր, ոչ կըրնար մեղան-
չէլ . հապա ինքն էր՝ որ մարդկան
սորվեցուցէր էր փրկութեան Ճամ-
բան՝ իր վարքը օրինակ տալով . ամմէն
կերպ իրենց բարիք ըրեր էր , անոնց
աղէկութեանը համար սքանչելի հը-
րաշքներ ըրեր էր . և ահա այսու ա-
մենայնիւ մարդկան ձառքէն սոսկալի
չարիք ու անարդանիք քաշեց : Հիմա
7

արժանի չէ մի՝ որ իրեն ցաւակից ըլ-
լանք։ Դուն չես կը նար առանց գութ
շարժելու տեսնալ չարագործ մը՝ եր-
բոր իր չարեացը համար սպանուելու
ըլլայ նէ . հապա ի՞նչպէս կը ընաս ա-
ռանց կաթիլ մը արցունքի՝ առանց
մէկ հառաջանքի տեսնալ քու վիր-
կիչդ խաչի վրայ գամած , որ քեզի
համար կը քաշէ կը մեռնի կոր :

Ե . “ Կը քաշէ կոր՝ ամմէն չափէ
դուրս , : Կը քաշէ՝ որչափ որ կը ընայ
քաշել մարդկութիւնը՝ աստուա-
ծային զօրութեամբը : Ամմէն խեղճու-
թիւնը վըրան դիզուած է . աշխրքէս
մէկ քար մը չունի՝ որ դլուխը հանգ-
չեցնէ . մէկ քուրջ մը չունի՝ որ մեր-
կութիւնը ծածկէ : Մէկ կաթիլ ջուր
մը չեն տար իրեն՝ որ սոսկալի ծա-
րաւութեանը վայրկեան մը մարօղ
ըլլայ : Բոլոր մարմինը չարաջար փա-
շատած , մէկ անդամ մը չունէր՝ որ
չիցաւի . իր թշնամինելը ինչուան ա-
րեան ետքի կաթիլը քամեցին . վէր-
քով ծածկուած է դլսէն ինչուան
ոտքը : Մարդու կերպարանք վրան չէ

մնացեր։ Եր պատիւը դետինը անցաւ,
 ինչպէս մէկ չարագործ մը՝ հայհոյիք
 մը՝ խաբեթայ մը դատապարտեցին զին-
 քը։ Երկու աւաղակներու մէջ խա-
 ցուեցաւ՝ որ անոնց գլուխը սեպուի։
 Դուն որ ուրիշներուն քաշածին վրայ
 դութ կըշարժիս, ցաւակից չե՞ս ըւ-
 լար քու փրկչիդ՝ որ ծայրագոյն չար-
 չարանքներ կըքաշէ կոր անոր համար՝
 որ քու յանցանքդ իր վրան առեր է։
 Կ. “կըքաշէ կոր՝ առանց մէկ մխի-
 թարանքի,,։ Բոլոր աշխարք զինքը ե-
 րեսէ ձգեր է։ ան ատենի քահանա-
 ները զինքը կըհալածեն։ մենծերը
 վար զարնելով մասխարա կընեն։
 հալիսը խաչեսցի կաղաղակեն։ իշխան-
 ները դատաւորները կըդատապար-
 տեն։ աշկերտին մէկը կըմատնէ, մէ-
 կալը կուրանայ։ սիրելի մայրը չէր
 կրնար իրեն օդնել։ Երկնաւոր հայրն
 աւ չէր օդնէր՝ որ իր արդարութիւնը
 տեղը երթայ՝ մէր մեղքը քաւելու
 համար։ Ասանկ անմխիթար վիճակ
 չէ եղեր բնաւ։ Թէ որ քու սիրոդ
 աւ չի շարժի նէ, ապառաժ քարե-

ըէն պինտ ես, որ պատռակեցան ի.
ըենց ստեղծողին մահուանը վրայ:

ԳՈՐԾՎԵ

Թ. “Քրիստոսի չարչարանքը մի
նորոգեր՝ քու մեղքերովդ, ուրիշ
ներն ալ մեղք խոթելովդ,,,: Հերթ
կընորոգեն կոր անհաւատները, չըն
չահաւատները, կեղծաւոր քրիստո
նէները, քարասիրտ մեղաւորները:
Դուն որ իրեն սիրուն բարեկամն ես,
դուն ալ ապերախտ կըլլաս կոր: Քե
զի համար ալ մի ըսէ, “Զի՞նչ օգուտ
է քեզ յարենէ իմմէ,,,: Էյ անովորմ,
իմ արունս խմելէդ քեզի ի՞նչ շահ:
Մեռնելէն պակաս չէ հիմակուան
չարիքն որ մեղքով կըլլան Յիառասի
դէմ:

Ե. “Արիս սրիս յիշէ որոշէ Քրիս
տոսի չարչարանքը,,,: Չես կընար դուն
մոռնալ թէ որ մէկ բարեկամմը քու
սիրուդ համար վնաս մը կամ նեղու
թիւն մը քաշած ունի նէ: Գտիր ին-
տի քու փրկչիդ պէս սնանկ հաւա-

տարիսը բարեկամ մը, որ անոր պէս
բան քաշէ քեզի համար՝ ու կեանքէ
ալ ելայ: Հանգա սիրելի, առաջադրէ
որ հինգշաբթի իրիկունները մտմաս
իրեն քաշածը հոգեվարքի պէս գելժ.
սեմանիին պարտէզը. ուրբաթ օրերն
ալ իր խաչի վրայ մեռնիլը Գողգոթա
լեռը: Կարդա կամ կարդալ տուր
չարչարանաց մէկ մասը մեծպասին ամ
մէն օրը, ու քու ծանր նեղութեանդ
և հիւանդութեանդ ատենը: Գու
ցաւերդ իր ցաւերուն հետ խառնէ,
ու ջանա քու սէրդ ցցընել համբե-
րելով քաշած բաներուդ:

Պ. “Օր չանցնի՝ որ միտքդ չիբերես
Քրիստոսի չարչարանքին մէկ բանը,,:
Գիտես թէ որչափ սուրբ ըլւալու ա-
ռաջ կերթաս, երբոր ամմէն Աստու-
ծոյ օրը մէկ քառորդ մը աս մտածու-
թիւնը ընես նէ՝ կենդանի հաւատ-
քով, հաստատուն յուսով, ընտանի
սիրով, ու սրտանց ցաւակցելով, և
պարզ սրտով քու սիրտդ մտնալով:
(Տես այն խրատն՝ որ ետքը պիտի
գնենք ներքին աղօթքի համար:)

Ղ . “ Ի՞նչ բան որ գլխէդ անցնի
կեանքիդ մէջ , միշտ սիրադ ըլլայ խա-
չելեալ փրկչիդ հետ , : Բան մը չի
կըքնար հանդիպիլ , որ չիդընաս դէղ
մը խրատ մը խաչելեալ փրկչէդ : Ա
սոր համար՝ աղէկ կըլլայ որ իր մէկ
պատկերքը ունենաս քու խցիդ մէջ :
Քանի որ իրեն սկրյովիս ջերմե-
ռանդ սիրով , սիրադ կըշարժի բարի
բանելու , սիրտ կառնես սրտանց ի-
րեն ծառայելու :

Ե . “ Քրիստոսի չարչարանքը յի-
շելով քեզ շարժէ ամմէն բանի համ-
բերելու , : Գայթակղելու բան է ան-
համբերութիւնը մէկ քրիստոնէի վրայ՝
որ կերկրակագէ Աստուծոյ ՚ի վերայ
խաչի մեռելոյ : Մէկ անհաւատ մը
կատղի իր աղքատութեան վրայ , ցա-
ւերուն ու նեղութիւններուն վրայ ,
անոր կոյր սկիտի ըսենք , որ չի տես-
նար աւելի սոսկալի բանելը : Բայց
դուն որ կըհաւտաս՝ թէ ինչ անտանե-
լի բաներ քաշեցքու փրկիչդ , և անով
մեր ամմէն քաշածը որբազան բան կը-
սեպուի , ինչպէս անհամբերութիւն

կընես բան մը քաշելու : Եկեղեցնայ
մէջ ասչափ անթիւ սուրբեր չեն ըլ-
լար , թէ որ ամմէն մէկը սոսկալի
տանջանքներ կամնեղութիւններ չե-
քաշէին նէ , որով Քրիստոսի չար-
չարակից և խաչակից եղան . իսկ քու
քաշածդ անոնց առջև շատ թեթև
է , հիչ բան մը չէ . նայէ որ գոնէ
համբերութեամբ քաշես՝ որ անոնց
մասնակից ըլլաս :

զ. “ Բան որ չես քաշեր նէ , գոնէ
փափկութիւն և հեշտութիւն մի
փնտուեր , : Խոնարհէ քեզ փրկչիդ
առջելք . մտածէ , թէ ինչպէս քեզ
կըվարձատրէ կոր պղտիկ բարեգոր-
ծութեանցդ համար աս աշխըքիս մէջ .
ըլլայ թէ Երկինքը վարձք առնելիք
չունենաս . կամ թէ քու առաքի-
նութիւնդ չիդիմանար փորձ մտնա-
լու՝ ինչպէս սուտ ուկին կըփշանայ
փօթայի մէջ : Ուրեմն կուղես նէ
խմանալ քու ճշմարիտ քրիստոնէ ըլ-
լաւդ , քու քէֆէդ անցիր , քու բար-
ձանքներդ մեռցուր : Աղէկ հասկը-
ցիր աս խօսքս . փուշ պսակ ունեցող

գլխուն տակը վասիուկ անդամ չ
վայլէր :

ԽՐԱՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Առաջ Հաղորդութեան Խորհուրդն
Վրայ :

"Սրժանաւոր պատիւ ըրէ որբու-
թեան, որ Աստուծոյ սիրոյն վէյ մը
կամ չէշնին է,,:

ՊԵՏՃԱՌԸ

ա . "Յիառւս իր ծայրագոյն սէրը
ասով քեզ կըցըցնէ,, : Հերիք չիսե-
պեց ամենակալ տէրը քեզի համար
մարդ ըլլալ, ու խաչի վրայ մեռնիլ
քու փրկութեանդ համար . հազա
ռողեց մէկ փորձ մը նալ տալ իր ան-
շափ սիրուն, իր մարմինը և արիմը
քեզի կերակուր պատրաստէլում քա-
նի որ կասլրիս . մէկ հատիկ վախճանն
ան է՝ որ միշտ քեզի հետ ըլլայ ու
միանայ ներսէն : Ո՛վ սուրբ հրեշ-

տակք , դուք ի՞նչ կըսէք ասանկ հրա-
շալի սեղանիս , որ Աստուծոյ ամմէն
հրաշքներէն վեր է , և իր անբաւ բա-
րերարութեանց և շնորհաց ծայրն է :

Ե . “Կըցըցնէ Յիսուս ասով՝ իրեն
առատասիրտ սէրն ալ , : Վասն
զի ասով զինքը բոլոր քեզի կու-
տայ փրկիչդ , պարգև ընելով քեզի
մարմինն ալ՝ արիւնն ալ՝ հոգին ալ Աս-
տուածութիւնն ալ՝ մարդկութիւնն
ալ , արդիւնքն ալ՝ շնորհքն ալ բոլոր ,
առանց բան մը պահելու : Աս ի՞նչ ա-
ռատաձեռնութիւն է , որ Աստուած
տայ բոլորովին իր ստեղծուածին շա-
հին համար՝ իր բոլոր բարութեան ,
իմաստութեան , և ամենակարողու-
թեան դանձը : Ո՞ր հայր , կամ ո՞ր
մայր ասանկ լիակատար սիրոյ պարգև
կըրնայ տալ իր զավելին :

Դ . “Աս սէրս ալ հաստատուն է
ամմէն կերպով , : Գիտցիր որ մէկ
վայրկեան մը քեզնէ չկըրնար հե-
ռանալ քու փրկիչդ : Միշտ քեզի
հետ է , թէսկէտե միշտ վիշտ կուտան
իրեն անհաւատ և չարախրա քրիստո-

ՆԵՆԵՐԸ: Դիր թէ կամուռը բանտի մը
մէջ կըկենայ, ու պիտի կենայ մեզի
հետ ինչուան ՚ի կատարած աշխար-
հի, ինչպէս որ խօսք տուաւ: Ասկից
աւելի հաստատուն ու հաւատարիմ
սէր կըրնայ մի ըլլալ:

ԳՈՐԾՎԱԾ

ա. “Յայտնի թշնամի քեզ ցցուր՝
սրբութեան հայհոյի ըներուն դէմ”:
Մի թողուր որ քու առջևդ մէկը
պղտիկ անարգանք մը նալ ընե: մի
խանիր անանկներուներես դարձնել
ու փախչիլ: Քու ձեռքիդ տակը ե-
ղօդները կը թէ որ միշտ պատիւ ընեն
սրբութե: Աս բարի նախանձն որ ու-
նենաս նէ, առանց արժանաւորա-
պէս վերջին թոշակ առնելու չես
մեռնիր:

բ. “Սրբութեան առջև՝ թէ խո-
րանին մէջը ըլլայ՝ թէ դուրսը ըլլայ՝
խորունկ պատկառանք ունեցիր,,,:
Նայէ որ չիխօսիս, չիծիծաղիս, աչքդ
ասդին անդին չխաղցընես: Ծնրա-

գրութիւն, ըրէ պատուով առջևեն
անցնելուդ, մտնալուդ, ելալուդ:
Մի նայիր անսպատիւ կեցողներուն.
աղեկ քրիստոնէն զինքը ժողվըտած
կըկենայ, անանկ որ տեսնօղն ալ կե-
մանայ որ ատիկայ կենդանի հաւատք
ունի: Եւ իրաւ որ, եթէ ծառայք
իրենց տիրոջը առջև՝ իշխանք իրենց
թագաւորին առջև՝ հեթանոսք ալ
իրենց կուռքին առջև այնչափ սպատ-
կառանքով կըկենան նէ, ինչ ջեր-
մեռանդութիւն պիտի չընես դու-
քու ճշմարիտ Աստուծոյ առջև:

Կ. “Թէ որ կըրնաս նէ, օր չանցը-
նես առանց մէջ մը սրբութեան այցե-
լութիւն ընելու,,,: Ի՞նչ տառապանք՝
ինչ նեղութիւն ունենաս հոգւոյ և
մարմնոյ, որդիական համարձակու-
թեամբ դիմէ Աստուծոյ ուքը. ա-
ռանց օդնութիւն և միսիթարանք դըտ-
նալու առջևէն չես ելար: Անանկ ա-
պահով ապաստանի տեղ չիկայ՝ ինչ
պէս եկեղեցին, ուր որ Յիառա Քրիս-
տոս անձամբը ներկայ է: Թէ որ ա-
նանկ օր հանդիպի՝ որ ժամ չես կըր-

նար Երթալ նէ , ուր որ դտուիս՝ մի
ջամկը միտքդ հո՞ն շակէ , ու սիրոյ հա
ռաջանքներ ըրէ Յիսուսի : Գիտէն
թէ ի՞նչ անդին օրհնութիւններ կառ
նես իրմէն :

Պ . “ Հիւանդի սրբութիւն կըտա
նին նէ , դուն ալ հետք դնա,,,: Բա
րի օրինակ առ մեծամեծ լշխաննե
րէն՝ որ ոտքով կըքալեն կերթան ին
չուան իւղձ խօլիվա մը նաև իրենց
ծածկեալ թագաւորին հետ : Գուն
չիկարենաս Երթալ նէ , քու մարդիկ
ն երէդ խաւրէ , որ որչափ կարելի է
նէ՝ Յիսուսի պատիւ ու ջերմեռան
դութիւն ըլլայ :

Ե . “ Ափէդ Եկածը ըրէ որ աղէկ
պաշտօն ըլլայ ասսուրբ խորհուրդին,,:
Երջանիկ քեզ սեսլէ , թէ սուրբ խո
րանին մէկ պղախիկ զարդ մը էւելցնես
նէ : Ամօթ չէ որ անզարդ մնայ Աս-
տուծոյ բնակարանը , ու մարդկանց
տունն ալ ձիանքն ալ զարդարուին :

Ղ . “ Սրբութիւն որ կըդրուի , կամ
թափօր կըլլայ , միշտ դուն ալ դը-
տուիս,,,: Աշխրքի հանդէս մը կըլլայ

նէ, ամմէնքը հոն կրվաղեն . հասկա
որչափ պիտի ջանաս որ դու հոգեւոր
հանդէսներէն չլազակսիս : Բազմու-
թեան հետ որ սրբութեան սկատիւ-
կընես նէ, գիտցիր որ հրեշտակներն-
ալ բոլոր հոն ժողված են . անոնց
բարեխօսութեամբը Աստուծոյ օգ-
նութիւնը խնդրէ, սրտանց ապաւի-
նէ քու փրկչիդ, իր ողորմութիւնը
ուզէ, մեղքերուդ թողութիւն առ,
բարեգործութեան ուժ առ : Աս-
տուած կրվարձատրէ քեզ խելքէ վեր
բարիքներով շնորհքներով :

ԽՐԱՏ ՎԵՑԵՐՈՐԴ

Ս-րբ Աստուծունայ ջէրմեանդու-
թեան կը ու :

“Մարիամ կոյսը պատուի ինչպէս
Մայր Աստուծոյ” :

։ “Քրիստոնէական հաւատքի
վրայ հիմնած է սուրբ կուսին սկա-
տիւը : Անարատ կոյսն Մարիամ յլա-

ցաւ և ծնաւ զԱրդին Աստուծոյ:
 Աս հրաշտալի սքանչելիքը պէտք է որ
 հաւոսայ՝ ով որ աւետարանի կլհաւ-
 տայ նէ . ուր թողունք սուրբ ժողովք
 ներուն վՃիռները : Մարիամ է ճը-
 մարիտ մայր Աստուծոյ մարդացելոյ .
 անոր համար կլառփ ճշմարտապէս
 Աստուածածին : ԱՌ դուն մտմտա ,
 թէ ինչ պատիւ պէտք է ընել իրեն :

Ե . “Ամմէն կերպով ամմէն կողմա-
 նէ պէտք է որ սլատիւ ընենք սուրբ
 Աստուածածնայ , : Իր աստիճանը ,
 իր առաքինութիւնը , իր գլութիւնը
 մեր վրայ՝ պէտք է որ մեզ շարժեն :
 Դաբրիել հրեշտակապետը զինքը բերկ-
 րեալ կամ լի շնորհօք կոչեց . սրբու-
 հին Եղիսաբեթ իրեն ըսաց , Օրհնեալ
 ես դու ’ի կանայս , և մայր տեառն
 կոչեց զինքը : Մայր է Աստուծոյ ,
 մայր փրկչին մերոյ , և մայր մեր ամե-
 նեցուն . թագուհի երկնի և երկրի :
 Ամենասրբուհի , և ամենայն սրբոց
 գերագոյն մայր և տիրուհի : Մէկ
 սուրբ մարդը ամմէն մարդ կլոգովէ ,
 մէկ թագաւորի մօրը ամմէն պատիւ

կրլայ նէ , ի՞նչ պատիւ պէոքը չէ ը-
 նել սուրբ կուսին՝ տիրամօր մերում:
 դ . “Ամմէն սուրբերն ալ օրինակ
 են մեզ պատիւ ընելու սուրբ Աս-
 տուածածնայուն: Ամմէն դովեստ ու
 պատիւ կուտան իրեն սուրբ մարդա-
 րէք , և սուրբ հարք՝ որ իր վրայ խօ-
 սեր են: Մեծ բանը ան է որ ինքն
 տէրն մեր Արդին Աստուծոյ իրեն կը-
 հնազանդէր ու կըպատուէր իր սուրբ
 կոյս մայրը : Անբաւ կերակով ալ Աս-
 տուած ցցուցեր է Աստուծածնայ
 մեծութիւնը ու պատիւը՝ ամմէն ըս-
 տեղծուածներէն վեր: Հիմա դուն
 միայն ետ պիտի մնաս իրեն արժա-
 նաւոր պատիւ տալէն , չէ թէ միայն
 խօսքով , հասկա սրտով ալ՝ գործքով
 ալ: Յովշաննէս աւետարանիչը կըսէ ,
 թէ սուտ է այն մարդն որ զԱստուած
 կընիրեմ կըսէ , ու իր եղբայրը չիսի-
 րեր . հասկա դուն ի՞նչ երեսով կըր-
 նաս ըսել՝ թէ Յիսուս Քրիստոս կըսի-
 րեմ , թէ որ սիրական մօրը արժանա-
 ւոր պատիւ ու ծառայութիւն չէ ս
 ընել նէ :

ԳՈՐԾՎԵԼ

ա . “Առտու իրկուն սուրբ Աստուածածնայ շքին տակը մայրու : Որդիական համարձակութեամբ իր օրն նութել խնդրէ . հրեշտակին բերնովը զինքը բարեւէ . Ողջոյն քեզ Մարիամ ողջոյն ընդ քեզ Մարիամ, ուրախ լեռերկրեալ : Ո՞ր ատեն ալ ըլլայ՝ իրէն դիմէ . գարտակ չելլար քու աղօթքդ քու խնդիրքդ :

Բ . “Հաբթուն մէկ օրը իրեն նուիրէ . իր տօններուն համար ծոմ բռնէն : Ան օրերը ջանա՛ որ պատարադ տեսնաս . սուրբ պահէն դուն ալ ուրիշներուն ալ անանկ ընել տուր որ բարիգործքին տեղը մեղք մը չըլլայ :

Կ . “Սուրբ պահէնու համար իր տօները մասնաւոր ջանք ունեցիրու : Ճամգնա , սրբութեան առջև աղօթքը ըրէ , իր առաքինութիւնները մտմտա՛ . հիւանդներու ծառայէ , կարօտներուն հասիր : Ալ ի՞նչ ըսեմ, Աստուածածնայ չերմեռանդ ըլլասնէ , ընելիքդ

կըդիսնաս . սէրը ինքիրմէ խելք կը-
բանեցնէ , քեզի ալ տուն կուտայ :

Պ . “ Իր ջերմեռանդներուն մէջ
գրուէ „ : Միշտ չանա՞ որ դտուիս՝ ուր
որ իր պատույն համար բան մը կը-
լայ նէ : Ամմէն բարեաց մասնակից
կըլլաս . միայն ալէտք է որ չնորհքի
մէջ դտնըւիս :

Ե . “ Բոլոր կեանքիդ մէջ ինչ որ
գլխէդ անցնի նէ՝ Աստուծմէ էտև
Աստուածածնայ ապաւինէ „ : Իր ամ-
մէն խօսքը կըկատարուի իր միածնին
առջելք . իր բարեխօսութիւնը միշտ
կանցնի , և իր դթութիւնը անպակաս
է . միայն թէ դու տաք սրտով իրեն
դիմես , իր օգնութիւնը ուզես :

Պ . “ Ճանա՞ որ հետեւս իրեն առա-
քինութեանը ու սրբութեանը „ : Ան-
ատեն ապահով եղիր իր բարեխօսու-
թեանը ու պաշտպանութեանը : Ճը-
մարիս սէր ունենաս սուրբ Աստուա-
ծածնայ նէ , ամմէն մեղքէ կըմիախչիս.
չ նէ , մի խաբուիր քու մէկ քանի ա-
զօթքովդ . անկարդ մարդու վրայ իր
վերաբերուն չի տարածեր ամենասուրբ

կոյսը : Թէ որ դուն թշնամի ըլլաս ի
միածնին նէ, ինիքն աւ քեզի բարեկամ
չըլլար :

ԽՐԱՏ ԵՕԹՆԵՐՈՒԴԻ

Պահապան հրեշտակին վըա :

"Պատիւ ըրէ իրեն՝ քու եղական բա
րեկամիդ պէս,, :

ՊԱՏՇԱՌԸ

ա . "Պահապան հրեշտակդ է մէ
հատիկ քեզ բարերար բարեկամդ" :
Ըստ մարդ քեզի բարեկամ որ կըս.
ւին նէ, անոնք իրենց շահը կընային.
քեզմէ բան մը յուսալիք ունին, ա-
նոր համար քեզի կըբըսւըտին : Իսկ
սուըբ հրեշտակդ պահապան՝ միայն
քու շահդ կուզէ հոգևոր և մարմնա-
ւոր՝ առանց իր մէկ շահասիրութելը
քեզ կըսիրէ՝ աղքատ ես եղեր,
տդէտ ես եղեր, ինչպէս թէ հարուստ

կամ իմաստուն ըլլայիր : Հերեք կը-
սեպէ՝ որ Աստուած քեզ իր պաշտ-
պանութեանը յանձներ է :

Ք . “ Արտանց քու բարեկամդ է „ :
Որչափ բարեկամ ունիս նէ , անոր
պէս սլարդ սրտով հիչ մէկը չկայ .
իր ամմէն քեզի ըրած բարիքը մտա-
ծես նէ , ան ատեն իր խըմէթը կը-
ճանչնաս : Ե՞ն է՝ որ միտքդ կըլուսա-
ւորէ , ու կամքդ աղեկի կըշըտկէ , մեղ-
քէն հեռու կենալու կըդըրդէ , խըլճ-
միաանքդ կըշարժէ . փորձանքներէն
թշնամիներէն կըպահէ , նեղութեան
ու տարակուսանքիդ մէջ քեզ խոր-
հուրդ կուտայ : Կրտեսնաս , ինչպէս
կըլլայ սրտանց բարեկամութիւնը :

Պ . “ Քու միշտ հաստատուն բա-
րեկամդ է „ : Մարդկան բարեկամու-
թիւնը որչափ անհաստատ է , որչափ
քիչ կըդիմանայ . քանի որ ըստըի տէր
էս , բանդ յաջող է նէ , մարդիկ քեզ
բարեկամ կըլլան . չէ նէ՝ այսօրուան
բարեկամդ վաղը քեզի թշնամի կը-
դառնայ : Պահապան հրեշտակդ ա-
սանկ չէ . կեանքիդ սկիզբէն ինչուան

՚ի մահդ քովէդ չեղատուկը, միշտ
քու բարիքդ կուզէ ու կլնէ :

Գ Ա Ր Ծ Վ Բ

Թ . “Քեզի ըրած երախտիքը ան-
դադար յիշէ” : Քանի՛ փորձանկներէն
քու գլուխդ խալըսեր է . որչափ վը-
տանդներէն պահեր է մարմինդ ալ-
հոդիդ ալ . ի՞նչ շնորհակալութիւն
պիտի չընես այնչափ բարի բաներուն՝
որ միտքդ ձգեր է : ‘Նայէ՛ որ երախ-
տագէտ ըլլաս՝ չէ թէ խօսքուլ հապա-
գործքով :

Ե . “‘Նայէ՛ որ միշտ օդուտը քաղես-
ներկայութեան պահապան հրեշտա-
կիդ” : Քու քովդ է ամմէն տեղ . քեզ
ընաւ աչքէն չի հեռացներ . վկայ է
քու ամմէն ծածուկ գործքերուդ
ալ . ուրեմն իր առջև չընես անանկ
բան մը՝ որ կըսըսպնէիր ընել պատուա-
ւոր մարդու մը առջև . իշխանի մը առ-
ջև ի՞նչպէս պատկառանք կըցըցնէիր .
քու պահապանդ ալ երկնքի իշխան-
ներուն մէկը չէ մի :

դ . “Աղաչէ որ քեզի օդնական ըլ-
լայ ամմէն բանիդ մէջ,,,: Հաւատա-
րիմ բարեկամ մը ունենաս նէ՝ նեղ
ատենդ անկից խորհուրդ ու խրատ
կուղես . պահապան հրեշտակիդ ալէս
աղէկ խորհուրդ տուօղ քեզի չըլար .
ինչ նեղութիւն ինչ պիտոյք որ ու-
նենաս նէ՝ իրեն դիմէ , ինքը քեզ
կօդնէ . Աստուած աս պարտքը անոր
վայ դրեր է , որ քեզ բոլոր կեան-
քիդ մէջ պահէ ու պաշտպանէ :

դ . “Ամմէն կերպով իրեն որին ըն-
տանի եղիր ,,,: Ամմէն սիրտդ իրեն
բաց . աչքով զինքը չես տեսնար ,
բայց սրտով իրեն հետ խօսէ՛ մինա-
ւորիկ : Ո՞ր բարեկամ կայ անոր ալէս
որ գիշեր ցորեկ մեր քովէն չկղատուի :
Համարձակ զրուցէ իրեն հետ , բայց
միշտ պատկառանքով մը . ան քեզի
պատասխան կուտայ՝ ներաէն աղէկ
բաներ տուն տալով :

Ե . “Կայէ որ ներքին ընտանու-
թիւնդ հրեշտակին հետ՝ քեզ անոր
սիրովը վառէ , որ դուն ալ հրեշտակի
պէս վարք ունենաս,,,: Աէրը միու-

Թիւն կը ծնանի կամ կը պատճառէ .
բարեկամութիւնը մէկ սիրտ մէկ հո-
գի կընէ՝ տարբեր բնութիւն ունե-
ցողն ալ : Թէ որ կուզես սրտանց մէկ
ըլլալ պահապան հրեշտակիդ հետ
նէ , անոր պէս ատելութիւն ունեցիր
ամմէն մեղքի դէմ . մաքրութիւնը
սիրէ , աստուածավախ Եղիր , ու ջա-
նա ամմէն կերպով Աստուծոյ կամքը
կատարել :

Ղ . “Հրեշտակաց տօնին , կամ պա-
հապան հրեշտակին օրը մասնաւոր
ջերմեռանդութիւն ըրէ ” : Խոստո-
վանէ , հաղորդուէ , իրմէն շնորհա-
կալ Եղիր բոլոր տարին քեզի ըրածե-
րախտեաց համար : Թողութիւն իսկնդ-
րէ , որ աղէկ մտիկ չի դրիր իր աղդա-
րարութեանցը : Աղաչէ որ քեզ-
նէ չղատուի , քեզ պահէ ամմէն փոր-
ձանքներէն , ու աշխրքէս ելլելու ա-
տենդքեզ շխտակ արքայութիւնը տա-
նի : Աս շնորհքներուն արժանի ըլլա-
լու համար՝ մասնաւոր փոյթ ունե-
ցիր առաքինութեանց , ու քեզ մա-
հացընելու իր սիրուն համար . աւելի

աղօթք ըրէ . քանի տարեկան էս նէ ,
այնչափ ստակ տուր աղքաներու :

ԽՐԱՏ ՈՒԹԵՐՈՐԴԻ

Ս-րբ Յ-շեժայ Հ-րայ՝ որ Աստուծա-
հայը իշուն-ի :

“Պատուի զինքը ինչպէս զօրաւոր
բարեխօս „:

Պ ԱՏՁԱԽԸ

ա . “Սուրբ Յովսեփայ միջնորդու-
թիւնը կամ բարեխօսութիւնը շատ մեծ
է Աստուծոյ առջև՝ իր մենծ աստի-
ճանին համար,: Աս աստիճանս՝ չողին
սուրբ կարճ խօսքով կըքացարէ ա-
ւետարանին մէջ, ուր զինքը կըկոչէ
այր կամ փեսայ Մարեմայ, և կըսէ՝
թէ Յիսուսի Քրիստոսի հայր կըսեպ-
էր : Աստուծածածնայ փեսայ ըլ-
լալը, և երկրիս վրայ հօր տեղը բոնել
Որդւոյն Աստուծոյ մարմնացելոյ՝ շատ
վեր է ամմէն մենծութենէ՝ ամենայն

մարդկան աշխրքիս վրայ , և ամենայն սրբոց Երկինքը . Երբոր ասջափ մեծ է Աստուծոյ համարումը իր վրան նէ , շատ գօրաւոր կըլլայ իր բարեխօսութիւնը :

Ք . “Նոյնպէս է իր մենծ կարողութեան կողմանէ ալ , : Զօրաց վրայ հրամել , ժողովուրդին վրայ իշխել , տարերքը հնազանդեցնել , արեգակը կայնեցնել Յեսուայ պէս , իրաւոր մեծ մեծ ու սքանչելի բաներ են : Բայց այս ամենայն լուս պիտի ըլլայ սուրբ Յովսեփայ իշխանութեան քովը՝ որ գլուխ և կառավար Եղաւ Աստուծածնայ ու Յիսուսի տանը : Իր որ խընդիրքը պիտի ըլլնէ Աստուծած Երկինքը , Երբոր Երկրիս վրայ իրեն ձեռքը հաւտացեր Եր զՈրդին Աստուծոյ և ըստմայրն Աստուծոյ :

Ք . “Նոյնպէս է իր մենծ սրբութեան կողմանէ ալ , : Թէ որ Հայրն Երկնաւոր չոեսնար սուրբ Յովսեփայ վրայ կատարեալ առաքինութիւն և աստուծածպաշտութիւն՝ իր ձեռքը կրնա՞ր մի հաւտալ զիր միածին Որդին

և անոր կոյս մայրը , տանտեր գնեց
լով զինքը անոնց տանը : Աւ ի՞նչ ը-
սեմ . շատ անդամ կը լսայ որ մէկ մե-
ղաւոր մարդ մընալ սուրբերուն մէջ
շատ կենայ նէ , սուրբ կըդառնայ .
հապա սուրբ Յովսէփի՝ որ արդէն ար-
դար էր՝ կըսէ աւետարանը , բարձր
աստիճան սրբութեան չէր մի ելլար՝
այնչափ տարի Յիսուսի և Աստուա-
ծածնայ քովը ըլլալով , և անոնց գե-
րադոյն առաքինութիւնը ամմէն օր
աւսնալով : Աստնիկ է նէ , մարդասէրն
Աստուած ի՞նչպէս չըսէ անոր բարե-
խօսութեանը ամմէնուս համար :

ԳՈՐԾՎԵ

ա . “Յուրբ Յովսէփը քեզի առան-
ձին սպաշտապահ բռնէ , : Յայտնի կե-
րենայ՝ որ Աստուած ուղեր է իրեն ա-
սանկ ընտրեալ անձը՝ կամք ամմէն
կերպ բաներուն մէջ խօթել , ամմէն
բան դլիսէն անցընել , որ ամմէն մարդ
կարենայ զինքը իրեն միջնորդ բռնել :
Մէնծ մարդիկը , որովհետեւ ինքնի ալ

թադաւորական տնէ էր։ Վարի մարդիկը՝ բանւորը կամ աղքատը, որովհետեւ ինքն ալ իր քրտնքովը կըպահէր իր տունը։ Կարիքները՝ սպառկեցտ կենալու, որովհետեւ ինքն ալ մաքուր ամենեին և ողջախոհ էր, որով ասանկ մենծ պատույ հասաւ։ Կոյսերը, որովհետեւ անոնց առանձին սպաշտապանն է։ Կարգըւածները, որովհետեւ ինքն ալ գերագոյն կերպով պասակուած էր։ Ծնողը, որովհետեւ ինքն ալ հօր տեղ էր Յիսուսի։ Կրօնաւորներ և եկեղեցականներ, որովհետեւ ինքն ալ կատարեալ սըրբութիւն սորված էր Երկնաւոր վարդապետին դպրոցին մէջ։

Է. “Ճանա՞ որ արժանի ըլլաս իւրեն զօրաւոր միջնորդութեանը”։ Ամմէն օր համարձակ բարեխօս կանչէ քեզի զինքը։ Թէ որ իր վայ վասահը ըլլաս նէ, անտարակոյս քու վրադհոգ կըտանի։ Որովհետեւ Յիսուսին հոգացողը եղաւ, աս խզմէթիս անդին վարձքովը ամմէնուն կըրնայ հասնիւ։

դ . “ Երեն ապաւինէ ամմէն դժար
բանի մէջ՝ որ մարդէ մը յոյս չես ու
նենար ” : Աստուած որ Երկրի վրայ իր
ամմէն խնդիրքը կլնէր , հիմա աւելի
կըլսէ իր աղաչանքին Երկինքը : Իր միջ
նորդութիւնը քեզ հրաշքով մը կար
ծես թէ կրհամնի ամմէն նեղու
թեան ատեն , ու կրիսալսէ . ինչպէս
սուրբ Յերեզա շատ կերպով սուրբ
Յովսէփայ հրաշքը յայտնի տեսաւ :

դ . “ Աղաչէ սուրբ Յովսէփայ՝ որ
քեզի հստար բարի մահուան շնորհքը
առնէ ” : Ինքն Եղաւ մինակ՝ որ ար
ժանի գտնըւեցաւ Երջանկապէս հո
գին աւանդել Յիսուսի և Մարիամու
ձեռքերուն մէջ . ու իրեն Երջանիկ
մահովը Եղաւ ամմէն հոգեվարներու
պաշտապան : Ուստի սընս սընս իրեն ը
մէ , ինչպէս ամմէն սահաթ զարնե
լուն , սուրբ Յովսէփ օգնեա ինձ ’ի
ժամ մահուանս :

Ե . “ Իր տօնին կամ տօներուն մաս
նաւոր ջերմեռանդ Եղիր ” : Ան օրերը
Եղբայրութեան հետ հոգևոր ըրէ , և
բարեպաշտական բանի հետ Եղիր՝ իր

առաքինութիւնելը միտքդ բերելով .
աղքատ մը սեղանոդ կանչէ , կամ ո-
զորմութիւն մը խաւրէ , ստակ ըլլայ ,
լաթ ըլլայ , թասղախ մը կերակուր
ըլլայ :

Դ. “Հետևող եղիր իր առաքինու-
թեանցը . . . Ինչպէս՝ արդարութեանը ,
մաքրութեանը , աղքատութեան սէր
ունենալու , հնազանդելու Աստու-
ծոյ ամմէն դժար բանի մէջ , համբե-
րութեանը , և համակերպութեանը
Աստուծոյ կամացը : Մէկ առաքի-
նութեանը նման ըլլալու ջանիք ընես
նէ , շատ աղօթքէն աւելի հաճոյ
կանցնի իր առջեւ :

ԽՐԱՏ ԻՆՆԵՐՈՐԴ

Պաշտպան սրբութ վրայ, որուն անունը
առնիւ :

“Կայէ որ իր վարքին հետեւիս,,:

Պ Ա Տ Շ Ա Ռ Ը

Թ. “Աստուած ալ ասանկ կուզէ,,:
Դիպուած մը մի սեպեր՝ որ
մկրտութեանդ ատեն ան սրբոյն ա-
նունը քեզ դրւեր է. Հապա գիտ-
ցիր որ Աստուածոյ կարդաւորութեամբ
եղած է, ուսկից դուրս բան չի կըր-
նար ըլլալ: Ինչո՞ւ համար ուրեմն
Աստուած ասանկ ուզեր է: Որպէս
զի քու սուրբիդ՝ որ քեզ պաշտպան
է, կեանկը ու վարքը քեզ յորդորէ
իրեն նման սուրբ ըլլալու:

Ե. “Սուրբ եկեղեցին ալ ասանկ
կուզէ,,:
Մեր մայրը սուրբ կաթու-
ղեկէ եկեղեցի խորհրդով աս գեղե-
ցիկ սուրբութիւնը ըրեր է՝ որ մկր-

տելու ատեն Երախային մէկ սրբու մը
անուն դըրսի . որպէս զի տղակուց
շարժի դէալ 'ի առաքինութիւն և սրբ-
ութիւն : Ի՞նչ սիրուն դիտաւորու-
թիւն է աս . դուն ալ պիտի ջանաս
գործակից ըլլալու աս բանիս , որ
սուրբերուն համրանքը շատնայ :

Ե՞ . "Քու անունդ ալ աս կուզէ" :
Անուն ըսածդ արդինքն ալ գործ-
քով կըսակահանջէ . ի՞նչ շահ աղէկ տ-
նուն ունենալ , ու աղէկ չըլլալ . ատի-
կա գովեստ չի բերեր քեզի , հապա-
նախատինք : Առաքելու մը , մարտի-
րոսի մը , կուսի մը անունն որ ունիս
նէ , անի շըլըխատի վարքը կատէ կըդա-
տապարտէ , բարկութիւն չուզէր ,
իւնդումենդ ծիծաղ չիտանիր :

ԳՈՐԾՔԸ

Թ . "Ետեւէ ընկիր՝ որ քու պաշտ-
պան սրբոյդ վարքը գիտնաս „: Կար-
դա՛ կամ կարդա՛լ տուր իր վարքը ,
պատուով ուսհէ զան գիրքը , ու մի-
ջէն քաղէ մասնաւոր բաները : Չես

կրնար զմէկը պատուել, կամ մենծ սեպել, կամ սիրել, երբոր չես Ճանչնար, չես տլ գիտեր՝ որ ատենն էր, ինչ վարք ուներ:

Ե. "Այն առաքինութիւնը վնասուէ հասկցիր, որով ինքը սուրբ եղեր էու Սուրբերուն ամմէն մէկը աւելի մէկ ախտի դէմ կռուեր է, և մէկ առաքինութիւն մը աղէկ սորվեր է: Աս օրոքնէ սկսէքու վարքդ անոր վարքին համեմատել, և օրէ օր նայէ որ ինչ պէս հետևիս ու նմանիս:

Պ. "Ինքն իրեն դու քեզի շատ անգամ ըսէ. կուզեմ անանկ ապրիլ ինչպէս որ ապրեր է իմ սուրբս,: Ինչո՞ւ չէ: Անիկա ուրիշ ընութեան տէր էր մի, ես ուրիշ: Անիկա սուրբ ըլլալու աւելի պատճառ մը ունէր քանզիս: Անոր Աստուած շնորհք տուառնէ, ինձի չէ մի տուեր, կամ չիտար մի խնդրեմ նէ: Աս հարցմունքներուդ գուն քեզնէ պատասխան վընտռէ:

Պ. "Աւելի փորձութեան ատենն ու վասնզի մէջ քու սուրբդ միշէ,: Ա-

ոսնել սկառուական անունը աղոթ-
տեմ մի, ըսէ, դարշելի մեղքով։ Կա-
խատինք մը ըլլամ իմ պաշտպանիս։
Չինքը խանեցնեմ մի Երկնքին առ-
ջեր՝ խ մորձութեան վտանգը դնե-
լով, կամ կամօք խաբուելով։

Ե. “Ամմեն օր պատիւ մը ցցուր
քու սուրբիդ”։ Իրեն հերիք է որ
զինքը չմոռնաս։ Ամմեն նեղութեանդ
մէջ զինքը միշէ։ Կնքը կուրախանայ՝
քեզի բարիք մը ընէ նե։

Դ. “Կո անուան օրը սուրբ ընելու
ջանա”։ Լուր օր է նե, որ չես կրնար
ուզածդ ընել, մօտիկ եղած կիրակին
ըրէ քու հոգեորդ ու ամմեն ջերմե-
ռանդութիւնդ։ Ուրիշ սուրբերն ալ
չիմոռնաս։

ԽՐԱՏ ՏԱՄՆԵՐՈՒԴ

“Ավելի եկածին չափ իրենց օգնելու նայելու:

ՊԱՏՇԱՐԵԼ

ա . “Աստուծոյ սիրուն համար առ
ջանքը ունեցիր” : Խրենք Աստուծոյ
սիրելի են , իր շնորհքին մէջն են .
բայց չեն կընար քովը հասնիլ , ին-
չուան որ Աստուծոյ արդարութեան
պարագը չեցուի : Թէ որ Աստուծ
կուզէ որ աշխըքիս վրայ օգնութիւն
մը ընես իր սիրուն համար՝ իր մէկ
թշնամիին ալ , որ կորստեան որդի է ,
հապա ո՞րչափ աւելի խօշը կուգայ՝
Երբոր օգնես այն հոգիներուն , որ ի-
րեն սիրելի են , ու արքայութիւն պի-
տի հասնին :

Ե՞ս "Խրենց սիրուն համար ալ պիտի դժվառ ու օգնես,, : Խեղձերը ճար

չունին իրենք իրենց օդնելու, չեն կրնար նոր առաքինութիւն մը ընել չեն կրնար սրատիմնին քիչընել կամ կարծեցնել, որ շուտով խալսին. վասն զի իրենց արդիւնք շահելու ատենը անցեր է. ուստի քեզնէ մէկ օդնութիւն մը կուզեն : Կրնաս մի քարասիրտ ըլլալ իրենց ասանկ խեղջութեան՝ ու չողորմիլ ողորմելիներուն : Հապա որ անոնց մէջն են քու ծընօղքդ ալ՝ ազգականներդ, բարեկամներդ, բարերարներդ, կամ դոնէ քեզի հետ կապուածները սուրբ հաւատքով ու սիրով :

Դ. “Քու անձինդ սիրուն համար ալ առ բանին ջանք սկիտոր ընես” : Մի կարծեր թէ դուն առանց քաւարան մտնալու շիփ շիտակ արքայութիւն պիտոր երթաս . Աստուծոյ դատաստանը քու կարծ խելքիդ կէօրէ չէ : Սուրբ անձինք ալոր թեթև պակսութիւններուն համար քաւարանին համը առեր են նէ, դուն ուր կըմնաս : Հոն տեղը քեզի ալ անանկ պիտի ըլլայ, ինչ որ հիմա դու ուրիշի կընես

կոր : Թէ որ դուն ո՞քչափ որ կը հնաս՝
այն հոգիներուն հասնիս նէ , Առ-
տուած կը հանէ՝ որ քեզի ալ օգնու-
թիմ հասնօղներ ըլլան . չէ նէ՝ դուն
ալ հոն պիտոր կենաս , ինչուան ետ-
քի պարտքդ վՃարուի :

ԳՈՐԾՔԸ

ա. "Աղօթքով հասիր բարեկամնե-
րուն՝ որ քաւարան ըլլալնին խելքդ
կը կտրէ , : Ամմէն օր աղօթք ըրէ ա-
նոնց համար՝ քանի որ նշան կը արուի ,
և քանի որ գերեզմաններուն քուլէն
կանցնիս : Գոնէ մէկ հայր մեր ըսէ :
Հառաջանքով ալ ըսէ . " Ախ տէր՝ ո-
ղորմութեամբ քով հոգիք հաւատա-
ցելոց հանգիցեն 'ի խաղաղութեան .
կամ " Ողորմեա տէր , ողորմեա հոդ-
ոցն մեր ննջեցելոց . : Ուրիշ ջերմե-
ռանդութեան ատենդ ալ զանոնք յի-
շէ , չիմոռնաս : Կարճ աղօթք մը նաւ-
իրենց պղտիկ միսիթարանիք չէ :

բ. " Առգր պատարագով ալ իրենց
օգնութիւն հասիր , : Ուստի ո՞քչափ

կլնաս նէ՝ պատարագ տես . կարո
զութիւնդ նայելով երբեմն երբեմ
ալ իրենց համար պատարագ ընել
տուր : Սուրբ պատարագը մեռելոց
ալ քաւիչ է : Ո՞ր բան կլնայ աւելի
իրենց կրակը մարել ինչպէս Փրիս-
տոսի սուրբ արիւնն որ զոհ կըլլայ պա-
տարագին մէջ :

Դ . “Սրբութիւն առնելով ալ ինչ
ալէս որ սկսոք է,, : Վասն զի սրբու-
թիւնն է անսպառ աղբիւր մը շնորհաց
որ ննջեցելոց ալ կըհասնի :

Դ . “Առանձին կամաւոր ճգնու-
թիւն ալ ըրէ իրենց համար „: Ի՞նչ
ապաշխարանիք ալ ունենաս նէ՝ անոնց
մասն ու բաժին հանելու է : Ուտե-
լէդ խմելէդ երբեմն բան մը պակսե-
ցներ , որ անոնց համար հատուցում
ըլլայ Աստուծոյ արդարութեանը . մէկ
զգայարանիքդ մահացներ , մէկ մաս-
նաւոր յաղթութիւն մը ըրէ փոր-
ձութեանդ ատենը : Ասանկ թեթև
բաներն ալ իրենց երկան քաւարանը
կըկարծեցնէ :

Ե . “Հոգեւոր և մարմնաւոր գործք

ողորմութեան ըրէ , որ այն հոգինեւ-
րուն ալ Աստուծոյ ողորմութիւնը
շուտով հասնի,, : Մեծ շահ կըլլայ ա-
սով զիրենք այն կրակին բանտէն խա-
լսելու . ասանկ դիւրին բաներ շատ
անգամ ընելով մեծ խեր կընես ա-
նոնց , ու անյիշատակ ննջեցելոց աւ
օդուտ կընես :

Պ. “ Բոլոր բարեպաշտ վարքովդ ու-
գթած սրտովդ իրենց մենծ օդնու-
թիւն կըհասնիս,, : Աւելի օդուտ կը-
նէ քու մէկ չայլ մեր մը ըսելդ շնոր-
հաց մէջ , քան թէ անշնորհք ըլլալով
մարտիրոսութիւն քաշէիր : Ի՞նչ շահ
քեզի բոլոր քաւարանին հոգիները
խալսել , թէ որ դուն քու հոգիդ
կորսընցընես նէ :

ԳԱՅԻՆ ԶԱՐՅՈՒԹ

ԱԴՕԹՔ ԸՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այսօթք է որ աղօթքն է գլխա-
ւոր միջոց սուրբ ըլլալու . բայց է-
կուր նայէ որ աղէկ աղօթք ընե-
լը շատ դժար է : Աս բանս դիւ-
րացնելու համար ես քեզ իրեք իրատ
սկիտի գրեմ . մէկը՝ հառաջական ա-
ղօթքի վրայ , մէյ մալ ձայնով աղօթք
ընելու , երրորդն ալ ներքին կամ մը-
տածական աղօթքի , որ հայեցողա-
կանութիւն ալ կըսուի : Կարճ կը-
խօսիմ , այնչափ որ քեզի օդնութիւն
մը ըլլայ հոգեւոր դրբեր կարդալու ,
դործքով ջերմեռանդութիւն ընելու ,
խոսառվանահօրմեդ իրատ լսելու , ամ-
մէնէն էւել հոգւոյն սրբոյ լոյս
խնդիւելու : Վեզի կըմիայ որ աղէկ
սկարարաստութիւն միշտ աղօթքի ու-
նենաս սրտիդ մէջ . ան ատեն քիչ ա-
տենին մէջ շատ բան կըվաստվկիս՝ քանի
թէ իմ խօսքերէս :

ԽՐԱՏ ԱՌԱՋԻՆ

Հառաւաշին աղօթի վրայ :

"Յօժար սրտով աս բանիս էսեկ
Եղիքուն:

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ա Ը

Թ . "Վասն զի դիւրին բան մը նէ ,
ու շատ խելք բանեցընելչուզեր , :
Սիրազ վեր վերցընել դէպ առ Աս-
տուած , ու բարի բարի մաքերով հա-
ռաջանիքներ ընելը՝ ոչ արհեատ կուզէ ,
ոչ դիսութիւն : Բնութիւնը ինքիրմէն
կըսորվեցընէ Էն պարզամիտներուն
ալ թէ ինչ կերակով իր միտքը իր սիր-
ող ուրիշի հասկըցընէ՝ երբոր օգնու-
թիւն մը ուզելու ըլլայ նէ , առանց
բան մը նալխօսելու : Հապա դուն չե՞ս
մի կընար կարճ հառաջանիք մը հանե-
լով տաք սրտանց՝ Աստուծոյ դառ-
նալ , աղաչել , քեզ իրեն յանձնել ,
ու շնորհակալութիւն մը ընել :

բ. “Աշխատանք մը նալ չունի”:
 Զայնաւոր աղօթքը՝ մանաւանդ քիչ
 մը երկան ըլլայ նէ, մտածականն ալ
 որ բոլոր ուշադրութիւն կուզէ, կըր-
 նան երբեմն ծանոր երևնալ: Իրաւ-
 որ պղտիկ աշխատանք չէ երկան ա-
 զօթքին ատենը միտք յոգնեցնել. իսկ
 հառաջականը ասանկ նեղութիւն չու-
 նի, վասն զի մէկ խօսքով կամ մէկ
 մոքի նայուածքով մը բարի փափաք
 կըցըցնէ առաքինութեանց, ու սրտէն
 կրակներ դէպ ՚ի վեր կըբղիսէ:

Դ. “Շատ ատեն ալ չուզեր”:
 Ի՞նչ
 բանի մէջ ի՞նչ զբաղմունքի մէջ ըւ-
 լսու նէ, առանց մարդու մը խմացընե-
 լու՝ կրնաս մէկ վայրկենի մէջ ասանկ
 հառաջական սրտի աղօթքով երկինքը
 ելլալ Աստուծոյ աթոռին քովը: Ա-
 սանկ խրատ կուտան հոգեւոր վար-
 պետներ, ասանկ կընէին ամմէն սուր-
 բերը. վասն զի ասով բարի բաղձանք-
 ները միշտ կըմնան սրտին մէջ, մարդո-
 հաստատ կըմնայ առաքինութեան
 ճամբուն մէջ, հոգին կըվառուի աս-
 տածագաշտութեամբ, ու Աստու-

ծոյ հետ առուտուրը անպակաս կըլ-
լայ :

ԳՈՐԾՎԵ

Թ . “Աշխատանքիդ մէջ բանեցուր
հառաջական աղօթքներ , : Աստուծոյ
նուիրէ քեզ ալ՝ բան ու գործդ ալ .
որով գերբնական և արդիւնաւոր կըլ-
լայ ամմէն ըրածդ . օրինակի համար՝
ասանկ ըսէ սրտանց . “Տէր Աստուծ
իմ և հայր իմ , որ երկինքն ես , սուրբ
եղիցի անուն քո ամմէն բանին մէջ .
քու սիրուդ համար ըլլայ իմ աշխա-
տանքս . ինչ որ կընեմ նէ՝ քու կամքդ
կատարելու համար ըլլայ , ’ի փառս
քո ըլլայ , : Ասով յաւիտենական կե-
նաց համար աշխատած կըլլաս :

Բ . “Նմանասկէս պարկեշտ զբօսան-
քիդ ու հանգստեանդ ատենին ալ , :
Աս բաներս քեզի իխաս մը չեն բերեր .
հերիք է որ արդելք չըլլան երբեմն
երբեմն մխաքդ Աստուծոյ վերցընելու ,
ու ասանկ բան մը ըսելու . “Ո՛վ տէր
Աստուծած , ո՞վ կընայ քեզ չսիրել .

թէ որ աս աշխարքիս վրայ ասանկ հան
գիստ կիմանամ նէ, հապա ինչ ուրա
խութիւն պիտի ունենամ՝ արքայու
թեան համը առնեմ նէ. ախ ակր
իմ, եկեսցէ, կաղազեմ՝ եկեսցէ ար
քայութիւն քո „: Աս կերպով զբօ
սանքդ ալ հանգիստդ ալքեզի սան
դուխ կրյան երկինքը ելլալու :

դ. “Եւս առաւել փորձութեան
ու վտանգին ատենը „: Մի վախնար
անոնց շատութենէն կամ սասակու
թենէն. հէմէն Աստուծոյ քովը վազէ
ասանկ հառաջանքներով. “Ո՛վ հայր
իմ սիրական, մի տանիր զիս ՚ի փոր
ձութիւն : Տէր օգնեա ինձ „: Ասով
սատանային դէմ զօրաւոր վահան մը
կը գնես, որ քեզ չիկրնար վասա մը
հասցընել :

դ. “Պակսուի մը նաև մեղք մը նաև
ունեցար նէ „: Սիրտդ մի կոտրեր, հա
պա շուտով ըսէ. “Հայր մեղայ յեր-
կինսե առաջի քո. [թողութիւն շնոր-
հէ ինծի . անքաւ ողորմութեամբդ
գթա յիս „: Ասանկ զղջումը ու հա-
ռաջանքդ՝ քու վէրքիդ պալսամէն

Էւելդեղ կը լսան :

Ե. “Եւեղութեանդ ատենը, ու ձա-
խորդութեան մէջ,, : Գեղ զօրացուկը
ասանկ կարծ աղօթքով, որ էն զօրա-
ւոր գեղէն էւել սրտիդ ուժ կուտայ:
Սրտանց ըսէ . “Եղիցին, տէր, կամք
քո, որպէս յերկինս՝ և յերկրի : Գի-
տեմ ով հայր իմ, արժանապէս աս-
բաներս իմ գլխուս եկան. հրամանքդ
ինչպէս գիտես նէ՝ անանկ ճար ըրէու:
Ասանկ սանքի ծովուն միջէն մարդը-
րիտներ կըժողվես՝ որ քու պսակդ
զարդարեն արքայութեան մէջ :

Պ. “Տառապանքի ու հիւանդու-
թեանդ մէջ,, : Երկայն աղօթք չես
կրնար ընելնէ, ասանկ կարծ բաներ
ըսէ . “Ո՛վ Աստուած իմ, դուն իս
աշխրքիս վրայ էրէ մրկէ, կտոր կտոր
ըրէ . միայն թէ երկնքը ինծի ողոր-
միս : Տէր Աստուած իմ, իմ քաշած-
ներս կախէ իմ փրկչիս խաչին վրայ
երքաշածներուն հետ խառնէ ,, : Ա-
սովսիրտ կառնես, անհամբեր չես ըլ-
լար, տկարութենէդ չես վախնար,
արիութեամք կըդիմանաս :

ԽՐԱՏ ԵՐԿՐՈՒԴ

Զայնառ աղջիկ վրա :

"Հարունակէ առանց ձանձրա-
նալու , :

ՊԱՏՃԱՌԸ

Թ . "Զայնառը աղօթքը հարկայ-
որ է՝ ինչպէս մէկ պարտք մը առ Աս-
տուած , : Աստուած պատուիրեր է
քեզ աղօթք ընել . հետն ալ զինքը
պարտաւորեր է՝ որ ուզածդ տայ ,
երբոր ինդիրքդ քու վրկութեանդ
օգտակար է նէ : Ալ ի՞նչ կուզես .
աղօթք ընելն ալ քեզի սորվեցու-
ցեր է հայր մերով , որ անկից սքան-
չելի աղօթք չկրնար ըլլալ : Ուրեմն
պարտիկան ես աղօթելու : Դնենք
թէ քեզի պարտք չիդնէր , հապա
միայն քեզ հոգար ինչպէս անբան-
ները , ու ամմէն պիտոյքդ տար , ա-
նոյշ կեանք վայլել տար , զինքը պիտի
մոռնայիր մի . իր առաստասրտութել

քեղ չեր մի շարժեր։ Ուրեմն իր պատիւը իրաւամբք կուղէ քեզնէ իրրե պարտք մը, որ աղօթքով պիտի վճարես. որպէս զի զինքը ճանչնաս պատճառ քու ամմէն ունեցած բարիքներուդ։

Ի՞ . “Հարկաւոր է նաև ինչպէս պարտք մը քեզի համար „։ Մէկն որ ամմէն կարօտութեան մէջ չորս դիէն պաշարուած է, պէտք է որ աղօթք ընէ՝ աղաչէ։ Դուն Աստուծոյ առջե ինչ ես. մէկ մարդ մը որ իրմէն շուղ մը նաև չունի, իր ուժովը բան մը չի կրնար ընել, ամմէն վախի վտանգի մէջ կեցած է, ամմէն դիաց պատած՝ թշնամիներուն մէջը։ Հապա ի՞նչպէս պիտոր խալքսիս՝ աղօթքի զէնք չունենաս նէ։ Գիտցիր որ շատ առաքինի և երկելի մարդիկ աղօթքէ պակսելով վերէն վար գլորտըկեցան։ Քեզի պէս խեղձուկը ի՞նչպէս չիվախնայ։”

Ի՞ . “Հարկաւոր է նաև ինչպէս մէկ պարտք մը քու ընկերուանցդ „։ Գրեթէ ամմէն մարդ քեզմէ աղօթք կու-

զէ . Վասն զի պարտըկանութիւն ու
նիս մէկին մէկալին Երախտագիտու-
թեան կամ սիրոյ համար , ծնողացդ,
ազգականներուդ , բարերարներուդ ,
հոգևոր հարց , քու մենծերուդ ,
վարիններուն ալ . ինչակէս խեղճերու-
որ երեսի վրայ մնացած են . արդար-
ներուն ալ՝ մեղաւորներուն ալ , հա-
ւատացեալներու ալ՝ անհաւատնե-
րուն ալ՝ չնչահաւատներուն ալ :
Վասն զի պարտըկան ես զընկերդ սի-
րելու՝ ամեն մարդը իր աստիճանին
կէօրէ , իրենց փրկութեան հոգ ու-
նենալով . ուստի երբոր գործքովքան
չես կրնար ընել նէ , աղօթքով
օգնութիւն հասնիս պիտոր :

ԳՈՐԾՔԸ

ա . “Աղօթքդ ըլլայ մաքուր սըր-
տով , : Աստուած անտարակոյս կը-
լսէ անոր որ սուրբ սրտով կաղօթէ
իր շնորհքովը ու տուն տալովը : Ուս-
տի աղօթքիդ սկիզբը պարզ սրտանց
զշջումը ըրէ քու մեղքերուդ . աղօթքդ

միացուր Քրիստոսի աշխաքիս վրայ
ըրած աղօթքներուն . աղօթքիդ մէջ
ուրիշ բան մուզեր, բայց միայն Աս-
տուծոյ ուզածը : Թէ որ քեզ մեղքի
մէջ կըտեսնաս նէ, աւելի տաք սրբ-
տանց աղաչէ որ Աստուծած հետդ-
հաշտըւի , ու դարձի շնորհք տայ
քեզի :

Է . “Աղօթքդ ըլլայ կարգաւորեալ, :
Հատ աղօթքի սպարտք վրադ մառներ,
չէ նէ՝ լըփըւտալով կընես , կամ կէսն
ալ կըթողուս , կամ քու բանէդ գոր-
ծէդ կըպակսիս : Այնչափ աղօթք
դիր քեզ, որչափ որ կըտանին զբաղ-
մունքդ : Բայց մուշացըներ աղօթք
ընելդ, բոլոր օրւան աղօթքն ալ մէկ
տեղ մի դիզեր: Անկարգ կերպ՝ աղօթ-
քին շէնքը շնորհքը կըտանի :

Ք . “Խոնարհ սրտով քեզ ժողվը-
տած աղօթէն , : Հպարտ մուրացկա-
նին աշխարհք ալ չփիմանար : Հրեշ-
տակներ հրեշտակապետներ Աստու-
ծոյ առջեւ կըդողան . Հապա ի՞նչ կեր-
պով պիտի կենայ քեզի պէս մեղաւո-
րը : Երկրիս թագաւորի մը առջեւ ի՞նչ-

ալէս կըկենաս . Հապա Աստուծոյ
առջև ի՞նչպէս ցնդած կըկայնիս :

Պ . “Ազօթքդ ըլլայ ամենայն ու
շադրութեամբ „ : Աստուծոյ պարտք
եղած պաշտօն մը նէ ազօթքը . աս
պաշտօնս՝ պարզ բերան շարժելով պի-
տի չըլլայ նիւթապէս , Հապա սրտով
ու հոգւով պիտի շարժի պակունքդ :
Մարդու մը առջև բերնէ թափուք
խօսքեր հանել կըխըպնիս . Հապա ի՞նչ
ալէս Աստուծոյ հետ անանկ կըխօ-
սիս : Ազօթք ընելնինի թէ որ դուն
քու ըսածներդ չես հասկընար նէ ,
ի՞նչպէս մափել ընէ Աստուած : Ուրեմն
ալ աղէկ է որ կարճ ըլլայ ազօթքդ ,
բայց հասկընալով ու ուշ դնելով ըլ-
լայ :

Ե . “Ազօթէ որդիական համարձա-
կութեամբ „ : Վստահութիւն սրտի՝
ազօթքին հոգին ու կեանքն է : Աս-
տուած որ հրամեր է ազօթք ընելու
խօսք ալ տուեր է ինդիքնիս կատա-
րելու , գիտնալով ալ ինչ բանի որ
դուն պիտանաւորութիւն ունիս .
ուրեմն Աստուծոյ առջև կայնէ ինչ

պէս մէկ զաւակ մը իր հօրը առջե
կելլայ: Որչափ աւելի յոյս կամ վրա-
տահութիւն ունենաս նէ , այնչափ
խօսքդ կանցնի , միայն թէ արդար ու
բանաւոր ըլլայ խնդրուածքդ :

Դ. “Ազօթէ անպակսա համբերու-
թեամբ , որ կըսուփի յարատել” :
Ո՞րչափ նեղութեան կամ փորձանքի
կամ փորձութեան մէջ գտնըւիս , որ
կարծես թէ քեզի համար երկինքը
գոցուեր է , ու ուն ազօթքէ մի դադ-
րիր , քու պարտքդ շարունակէ . մնա-
ցածը Աստուծոյ թող տուր՝ որ քու
հաւատարմութիւնդ ու սէրդ փոր-
ձել կուզէ : Աստուծոյ առջե ընկիր
խոնարհութեամբ , ուրիշ բան ըսել
չես կրնար նէ՝ աս ըսէ . “Աստուծ
իմ ողորմեան ինձ . ողորմեան ինձ Աս-
տուած . Աստուած , քաւեան զիս զմե-
զաւորս .” : Աս պզտիկ խօսքս ալ պա-
րապ չելլար: Մենծ չնորհք սեպէ
քեզի՝ որ Աստուած թող կուտայ կոր
քեզ իր առջեը ելլալ: Միտքդ բեր
Քրիստոսի ազօթքը Գեթսեմանի պար-
տէզը . “Հայր իմ , ոչ իմ կամք եղի-

ցին, այլ քո ու Հոդ մըներ ակամայ
մտաց ցնդմունքին . ակամայ բանը
մեղք ըրլար . ուստի նայէ որ նորէն
ըսկըսիս կրկնելըրած աղօթքդ . չէ նէ
ատիկա կրլայ աղէկ բանած բանդ
մէկ դի ձգել ինչու որ մէջը մէկ թել
մը կոտրըւեր է :

ԽՐԱՏ ԵՐՐՈՐԴ

“ԵՇԻ+ԻՆ աղօթի+ի իամ մասծականի վրայ :

“Աէր մը ունեցիր ներսէն մտքով ա-
ղօթք ընելու , :

ՊԱՏՇԱՌԸ

Թ . “Ներքին աղօթքը բուն սուրբ
բաները կըդիտէ , : Ինչպէս՝ նոյն ինքն
Աստուած , և իր ամմէն կատարելու-
թիւնը . զսիրելի փրկիչ մեր՝ որ է Աս-
տուած մարդացեալ . իր մտածմուն-
քը , գործքը , չարչարանքը , վարդա-
պետութիւն հաւատքի ու վարքի կող-
մանէ . այս ամենայն է կըսեմ ներքին

աղօթից նիւթը : Աս բաներուս կտ-
տարեալ սէրը և գերագոյն մտածու-
թիւնը յաւիտեան ունին երկնքի
սուրբերը :

Ք . “ Ըստ ինքեան ալ շատ աղեկ
բան է „ : Աստուծոյ հետ խօսելնիս
սրտէ՚ի սիրտ՝ մեր փրկութեան վրայօ-
քը՝ որչափ ջերմեւանդ մնքեր կըբե-
րէ , ինչ ըմբռնումներ , ինչ առաջա-
դրութիւններ :

Ք . “ ՄԵՆԾ ՄԵՆԾ բարիք ալ կըբե-
րէ „ : Ասով զարդարուեր է արքայու-
թիւնը ամմէն ցեղ սուրբերով : Ասով
կըլայ մեր սուրբ ըլլալուն , ու մենծ
սուրբ ըլլալուն՝ հաստատուն հիմ
դնելը , առաջ երթալը , և շնորհք
առնելը՝ որ չէ թէ միայն մեղքէ դառ-
նանք , հապա առաքինութիւն ալ
դործենք . որով կըընանք սուրբ ըլլալ
Ո՛վ որ գիտէ աղեկ աղօթք ընել նէ ,
աղեկ կենալն ալ գիտէ :

ԳՈՐԾՎԵԼ

ա . “Բնաւ զանց չառնես ներքին
աղօթքը , • որ շատ կօդնէ ձայնաւոր
աղօթքի ալ : Օրը կէս ժամ մը , կամ
գոնէ քառորդ մը որոշէ քեզի մտա-
ծական ընելու՝ մէկ բարի և օգտակար
բանի վրայ , և ան կերպովըրէ :

Ե . “Ե՞ն առաջ մտածականին նիւ-
թը առջեղ դիր , : Պէտք ըլսայ նէ՝
գոքի վրայ բան մը կարդա՛ , ու անոր
վրայ մտմտա՛ : Երկու իրեք մաս ըրէ
մտածելիքդ . վախճան մը դիր մտա-
ծութեանդ՝ քու վարքդ շտկելու հա-
մար , թէ աս կամ ան պակսութենէ
ետ կենամ , կամ աս և ան առաքի-
նութիւնը գործքովկատարեմ : Մտա-
ծականի գըքերէն շատ բան կըսոր-
վիս . խոստովանահօրդ ալ խորհուրդ
հարցուր : Կիւթը որոշելէն էտև՝
զԱստուած քեզի ներկայ գիտնալով
խոնարհէ իր ոտքին առջել , երկրպա-
գութիւն ըրէ հաւատքով յուսով և
սիրով . աղօթքդ և մտածութիւնդ

Յիսուսի ըրածներուն հետ միացուր,
մոքիդ լոյս խնդրէ, կամքիդ ներքին,
շարժում խնդրէ, որ աղէկ Ճանչնաս
և կատարես Աստուծոյ կամքը:

Պ. “Մտածելու բաներուդ պա-
րագաներն ալ առջեղ բեր, ժամա-
նակը, տեղո, անձինքը „. . որ ասոնց
մէ դուրս չելլաս՝ չտարտընիս. բայց
մոքիդ զօռ մի տար, հապահանդարտ
սրտով մտամտա:

Պ. “Մաքիդ հետ բոլոր կարողու-
թիւններդ ալ շարժէ”.: Ինչպէս դրսի
գործքիդ մէջ՝ բան բանելու, առու-
տուր ընելու, դատաւորի մը առջեւ ել-
լալու առենը՝ բոլոր խելքդ ան բա-
նին հետ կը լլայ, ասանկ ալ մտածա-
կանդ ինչ բանի վրայ է՝ անոր հե-
տեւէ բոլորովին, ու քու ըրածիդ ը-
րածիդ հետ բաղդատէ. քեզ հար-
ցուր, քեզնէ պատասխան ուղէ: Աս
բանս Ճշմարիտ ասանկ է տէյի Ճանչ-
ցայ նէ, անոր կէօրէ կամքս ալ մըտ-
քիս պէտք է հետեւի. քրիստոնէի
պարտքը աս է նէ, ես պարագս կընեմ
կոր՝ թէ չէ. չեմ ըներ նէ՝ վերջո

ուլր կերթայ : Քրիստոսի ինձի համար քաշածը խմոցայ նէ, ևս ալ իրեն համար բան քաշելու չե՞մ մի : Ասոր նման ինչ բան որ կըմոածես նէ, նայէ որ յստակ ճանչնաս մոքով, ու կամքդ ալ շարժես, և հաստատուն տռաջադրութեամբ լինցընես :

Է . “Մտածութենէն էտե սիրադ նորանց բաց Աստուծոյ առջե .. : Իր օդնութիւնը խնդրէ, որ առաջադրութիւնդ գործքով կատարես : Իր հայրական գութը յիշեցուր, իր ողորմութիւնը, համբերութիւնը, ու խոստմունքը : Յիսուսի չարչարանքը առջեր դիր, և անոր աէրը մեր վրայ : Քու ապերախտութեանդ վրայ լաց . մեղքերուդ վրայ ցաւէ . քեզի եղած բարիքներուն համար շնորհակալ եղիր : Ինչ պակսութիւնն որ ունիս՝ անոնցմէ ետ կենալու, և ինչ առաքինութենէ որ կըպակսիս՝ անոնց ջանք ընելու շը նորհք խնդրէ, և փափաքէ որ հոս Աստուծոյ կամքը միշտ կատարես, և անդին իր տեսուն արժանի ըլլաս, և յաւիսեան փառառքս զինքը :

ԳԱՅԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍՈՒԲՏԻՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԵԼՈՒ

ՀԱՄԱՐ

ՆԵՐԻՔ չէ , սիրելի կարդացող ,
 Աստուծոյ հաջոյ ըլլալու համար՝
 մեղքէն փախչիլ . ալէտք է որ առա-
 քինութիւն ալ գործես . “Խոտորեա-
 ’ի չարէ , և արա զբարի ” կըսէ սուրբ
 գիրքը : Գրած ալ է աւետարանին
 մէջ , թէ չէ թէ միայն գէշ պառող
 տուօղ ծառը կտրելու ու կրակ ձգե-
 լու է , հապա պառող չտուօղ ծառն
 ալ : Աղէկ հպատակ չիսեպուիր այն
 մարդը՝ որ հերիք կըսեպէ իրեն թա-
 գաւորին արունը չխըմելը , ապստամ-
 բութիւն չհանելը , ու ինքը անհոգ
 կըկենայ իր պարտքը իր ծառայու-
 թիւնը ընելու . ատանկ մարդը վարձք
 առնելու տեղը ծեծ ուտելու ար-
 ժանի չէ մի :

ԽՐԱՏ ԱՌԵՎԻՆ

Առ-բ հա-ապէի վրայ :

“Հաստատ կերպով հաւտան ինչ որ
Աստուած յայտներ է նէ” :

Պ ԱՏ Ճ Ա Ռ Ը

Թ . “Աստուած Ճշմարտութիւն է
յաւիտենական , որ մեղ խարել չի
գիտեր . . . Դուն կը հաւտաս խելացի
ու անխարդախ մարդու խօսքին . որ
կը ընայ ըլլալ որ Ճշմարտութենէն
դուրս բան մը ըսէ . հաւալա ո՞րչափ
աւելի սկէտք է հաւտալ Աստուծոյ
յայտնած բաներուն , որ ինքը սրբու-
թիւն սրբոց է , և ընաւ խարելիք չու-
նի : Մեր միաքը հաւտատքի լուծին
տակը դնելը առջի զոհն է՝ զոր մեզնէ
կուզէ Աստուած , որ է ինքն անբաւ
խմաստութիւն և Ճշմարտութիւն . խէ-
երկրորդ զոհն է հնազանդիլ իր պա-
տուիրանքին , որ ինքն է ամմէնուն
տէրը ու թագաւորը :

բ. "Աստուած է անհուն բարի, որ
չկընար ուզել մեզ խաբել „: Իր
բնութեանը և իր սիրոյն դէպ ՚ի մեզ՝
հակառակ է, որ մեզի հետ խարդախ
կերպով մը վարուի: Ո՞ւր թողունք
որ՝ ինչ որ մեզի յայտներ է նէ, մենծ
մենծ հրաշքներով հաստատեր է. ա-
նանկ որ չիհաւացողը կամ իւենդ
պիտոր ըլլայ, կամ կամաւոր չարու-
թեամբ կուրցած:

դ. "Աստուած է անբաւ իմաս-
տութիւն՝ որ չկընար բնաւ խաբ-
վիլ կամ սիսալիլ,,: Հաւատոյ խոր-
հուրդները որչափ խելքով համնելու-
բան չեն նէ, նոյնչափ ալ սաոյգ են:
Աստուած ծայրագոյն միտք չէր ըլ-
լար, թէ որ մարդիկներուն ու հրեշ-
տակներուն խելքէն վեր բաներ չու-
նենար նէ: Արդ ինքը իր սքանչելի
գիտմունքներուն համար չէր մի կըր-
նար պէսպէս բաներ յայտնել անոնց
որ ասանկ բաները մոտմուալու համար
եղած են: Կամ թէ կըրնա՞ր մի սիսա-
լիլ զինքը ու իր գործքերը մեզի յայտ-
նելով:

ԴՈՒՐԾԱԳԸ

ա. "ԿԵԱՆՔԻԴ կանոնի տեղ բռնէ
զսուրբ հաւատքը,,,: Առաքելուն ըսա-
ծին պէս,"Արդարն 'ի հաւատոց կեց-
ցէ,,,: Կուղէ ըսել, թէ արդար մարդը
սուրբ հաւատքէն կըքաղէ իրեն կա-
նոնները և իր գործքերուն շտկու-
թիւնը ու բոլոր ուժը : Ինչպէս ծա-
ռը հողէն՝ ուր որ տնկըւած է, կը-
ծըծէ իրեն հարկաւոր մնունդը, որով
կաճի . նոյնապէս արդարը հաւատքէն
կըժողվէ առաքինութիւնները, որ ի-
րեն հոգւոյն կերակուրն են: Հաւատ-
քը գործք չունենայ նէ, մեռած
բան մը նէ . մանաւանդ աւելի կըդա-
տապարտէ ինքը զինքը իր վկայութե-
նով: Սոսկ հաւատքը զմարդ չի ալ-
սեր, հապա աւելի յանցաւոր ու
պատժապարտ կընէ . որ իրեն սլար-
քը գիտնալով գործքով չէ ըրած :

Բ. "Հաւատքդ աւելի վառէ աղօթք
ընելու ատենը,,,: Վան զաս աղէկ բան
չի այքէղ ժողվըտելու աղօթքի ատեն

աստուածալաշտութեան, ու վատա-
հութեան առ Աստուած, ինչպէս
կենդանի հաւատքով Աստուծոյառջե-
ինկնալ, իր ներկայութիւնը գիտնալ,
իր անհուն սէրը ճանչնալ, իր ան-
բաւ բարութիւնը, և ուրիշ կատարե-
լութիւնները : Աս կենդանի հաւատ-
քը չունենաս նէ, պաղ ու անհամ-
բան մը կըլլայ՝ ձայնաւոր աղօթքդ ալ,
մտածական աղօթքդ ալ՝ ալ աւելի:

Ք . “Հաւատքդ վառվուուն ըլլայ՝
պատարադ տեսնալու, և սուրբ խոր-
հուրդներ ընդունելու ատենը „: Ե՞ն
աղէկ պատրաստութիւն աս բանե-
րուս՝ հաւատքն է : Ան ալ այնչափ
կենդանի կըլլայ, որչափ խորունկ սըր-
տանց հառաջանքներ վեր կելլան, ու
առաքինութեանց փափաքներ . ան
ատեն կըտեսնաս որչափ միսիթարանք
և ուրախութիւն կըզգաս սրտիդ մէջ :

Ք . “Ի՞նչ նեղութիւն սրտի ունե-
նաս նէ՝ սուրբ հաւատքին ապաւինե՞,,
Միշտ խոստովանահօրդ խրասը ուզէ,
և սիրադ իրեն բաց իբրև փոխանորդի
Աստուծոյ. բայց ատեն չիդըտար նէ՝

ՔԵզ կառավարե՛ հաւատքով, մի՛ վախ.
նար՝ չես ինկնար:

Ե . “Հաւատքը ըլլայ քեզի վահան
մը ամմէն փորձութիւններու դէմ” :
Բոլոր դժոխքը քեզի դէմելլայ նէ,
չիկնար քեզի միաս մը հասցընել,
երբոր դուն դիմացը հանես հաւատքի
մէկ ճշմարտութիւնը . ինչպէս՝ ըսե-
լով մտքովդ . “Փորձութեան հետե-
ւիլը՝ հոգւով մեռնիլ է: Ամմէն վայր-
կեան մահ կըրնայ գալ ինծի . մեղք
դործելու ատենս ալ կըրնամ մեռնիլ
Պէտք է որ առջելը ելլամ իմ դա-
տաւորիս, որ ամմէն բան գիտէ: Մա-
հուչափ մեղքին պատիժը դժոխքն է:
Փորձութեան դէմ կենամ, ու Աս-
տուծոյ հաւատարիմ մնամ նէ, իմ
վարձքս արքայութիւն երկնից է” :
Աս ճշմարտութիւններս էին՝ որ
սուրբերուն սիրտը քաջալերեցին, ու
հաստատուն պահեցին առաքինու-
թեան մէջ : Կոյն բանը կընէ քու-
վրադ ալ հաւատքը :

Ղ . “Հաւատքով սիրտ առ ձախոր-
դութեանց մէջ ալ, Ուրիշ դրսի մսի-

թարանքները չեն կրնար անանկ փա-
րատել մէկին անհամբերութիւնը ,
սրտի կոտրածութիւնը , յուսահա-
տութիւնը՝ թշուառութեանց մէջ ,
ինչպէս հաւատքին վահանը ձեռք
առնելը . ասով որ միաքդ բերես
համբերութեան հարկաւորութիւնը՝
շահը ու վարձքը , չէ թէ միայն չես
տրտնջար , հապա սիրով և ուրա-
խութեամբ կըքաշես , ու փառք կու-
տաս Աստուծոյ :

ԽՐԱՏ ԵՐԿՐՈՒԴԻ

Յասուայ կըայ :

“Հաստատ կերպով վատահ ըլլայ
սիրադ Աստուծոյ ” :

Պ ԱՏ Շ Ա Խ Ե

Ֆ . “Աստուած քեզի կըրնայ օգ-
նութիւն հասնիլ” : Դուն քու վէճդ
մէկ փաստաբանի մը ձեռքը կըհաւ-
տաս , ըստակդ ալ մենծ մարդու մը ,

բժշկի ալ քու առողջութիւնդ ու
կեանքդ . ինչու որ՝ կըսեպէս թէ
կրնան ատոնք քեզի օդնութիւն մը
ընել : Հաղա չե՞ս մի կըրնար քեզ բո-
լորովին Աստուծոյ ամենակարողին
ձեռքը յանձնել բոլոր կեանքով :

Ե . “Աստուած գիտէ՝ ինչպէս պի-
տի օդնէ քեզի , : Անհամար կերպ
ճարը իր ձառքին մէջն է : Գիտէ թէ
ինչ միջոցներով քեզ թշուառու-
թենէ երջանկութեան վիճակը պիտի
դարձնիէ : Քու սլիտանաւորութիւնդ
ալ գիտէ , քու սրտիդ նեղութիւնն
ալ , քու կարողութիւնդ ալ՝ թէ որ
չափ կրնաս համբերել : Կարծես ար-
դեօք , թէ Աստուած՝ որ առանց իր
կամաց տերեւ մը չի շարժիր , կարենայ
քեզ մոռնալ՝ որու համար այնչափ
բան ըրեր է : Ասենն ալ աղէկ գիտէ
քեզ օդնելու , որ աւելի հաճոյ ըւ-
լան քեզ իր երախտիքը : Աւրեմն Աս-
տուծոյ փէշը փակիր , որ ամեն բանը
գիտէ , որպէս զի կարենաս երջանիկ
ըլլալ :

Դ . “Աստուած սրտանց կուզէ իս-

կապէս քեզի օգնելու : Անբաւ է իր
մարդասիրութիւնը . ինքը խոստացեր
է քեզի օգնել միշտ , ինչպէս ինչուան
հիմա օգներ է , ու այնչափ բարիք
ըրեր է . ուրեմն իր տուած խօսքին
վրայ անտարակոյս եղիր : Երկինք եր-
կիր կըրնան անցնիլ , Աստուած իր
խօսքէն չանցնիր . միայն թէ դուն ալ
քու պարտքդ ընելէն չկապակսիս :

ԳՈՐԾՔԸ

Թ . “Հաստատ յոյս և վստահու-
թիւն ունեցիր Աստուածոյ սրտանց՝
ամմէն փորձանքներուն մէջ „ : Ինքն
է քեզ ստեղծօղն ալ՝ պահօղն ալ,
փրկիչդ է , ու հայրդ է : Ասանկ է նէ՝
որդիական համարձակութեամբ դիմէ
իրեն , իր օգնութիւնը ուղէ , պիտոյ-
քըդ իր առջելը դիր . մի վախնար՝
դարտակ ձեռքով չես ելլար : Մէկը
չէ եղած , որ Աստուածոյ ապաւինի ,
ու Աստուած անոր երեսը չնայի :

Բ . “Յոյսդ մի կտրեր , ան ատենն
ալ որ քեզի երևնայ՝ թէ Աստուած

ՔԵՂ ԵՐԵՄԵՆ ՃԳԵՐ Է , : Ո՛Ր ատենն
որ Աստուած չիցրցներ թէ քեզի մօտ
ըլլայ , դիտցիր որ ան ատեն աւելի
մօտիկ է քեզի : Միայն կուզէ անով
փորձել քու յոյսդ , վատահութիւնդ ,
քաջարտութիւնդ ու հաստատու-
թիւնդ : Ուստի մի դադրիր զինքը ա-
ղաջելին : ցցուր իրեն քու խեղճու-
թիւնդ , ողորմելութիւնդ , ոչնչու-
թիւնդ : Ստիպէ զինքը իր գթած սրբ-
առվը , իր միածնին սիրովը , անոր չար-
չարանքովը ու մահուամբը : Ասանկ
ընես նէ , անկարելի է որ քեղ թշուա-
ռութեան մէջ թողու առանց օդ-
նականութեան և մսիթարութեան :

Դ . “Դուն քու կողմանէդ ամենայն
ջանք պիտոր ընես որ քու կոխնձներդ
ըստրկես , քեղ խալքսես , : Դուն
քեզնէ բանի մը կարօղ չես . բայց
Աստուած ալ չուզեր որ քեզի բան
մը ընէ առանց քո . ուրեմն դուն ա-
փէդ եկածը պիտի ընես : Խելք բա-
նեցուր , աշխատասէր եղիր , մնացա-
ծը Աստուծոյ թող : Գիտէ ինքը իր
անհուն իմաստութեամբ՝ բանը աղէկի

դարձընել անանկ ճամբով որ իսել
քէդ մաքէդ չէ անցեր :

Ե . “Սիրտդ մաքրէ այն բաներէն՝
որ քու յոյսդ կրնան թուլցընել,, :
Աստուած քեզի շատ անդամ օգնած
կըլար , թէ որ դուն Աստուծոյ ձեռ
քը չիկապէիր քու անկարդ վարքովդ:
Հապա խղճմաանքդ աղէկ մը մաքրէ.
շոկէ ան պակսութիւններն որ վրադ
կըտեսնաս : Սրաի մաքրութիւնը կա
ձեցընէ քու յոյսդ ու վստահութեղ
առ Աստուած . հետն ալ սրտանց
աղօթքը . ալ աւելի՝ սէր ու խոնար
հութիւն սրտէդ բիսէ նէ :

Ե . “Եղութեանդ ատենը քեզ
միսիթարէ Երկնային յուսով , : Երկըն
քին Երջանկութիւնն որ մեզի պա
հած է , արքայութեան փառքն որ
մեզի կըսպասէ , ամմէն քաշածդ ու
քաշելիքդ կաժէ : Ի՞նչ շահ տեսեր
ես աս աշխարհէս , ի՞նչ հանգիստ կամ
միսիթարանք գտեր ես : Արքայու
թիւնն որ ափ ձգեսնէ , ամմէն բանը
վասարկած չես մի ըլլար : Ասանկ է
նէ՝ ի՞նչ կը տրամիս դլուուդ եկած բա

ներուն վրայ : Թո՛ղ անոնք նեղանան
տրտմին՝ որոնք որ արքայութեան յոյս
չեն կընար ունենալնէ :

Դ. “Ո՞րչափ մենծ մեղաւոր ալ ես
նէ , բնաւ մի յուսահատիր ” : Ան-
հուն ողորմութիւնն Աստուծոյ պատ-
րաստ է թողութիւն տօսլամմէն ծան-
տըր մեղքերուդ : Վասն զի հիշ մէկ
բանին վրայ այնչափ չուրախանար՝
ինչպէս մեղաւորի մը դարձին վրայ .
ինքը կըսպասէ երկայնամիտ համբե-
րութեամբ , ու հայրական սիրովքեզ
կըսորդորէ որ դառնաս իր հետ հաշ-
տըւիս : Ուրեմն ինչի՞ն է քու ատչափ
թերեհաւատութիւնդ կամ յուսոյ
պակսութիւնդ : Չարաչար կը սխալիս
կըմոլորիս , թէ որ կարծես թէ քու
շատ ու ծանտը մեղքերդ կընան յաղ
թել Աստուծոյ դթածութեանը :
Միայն թէ դուն ոտքի տակ չառնես
իր դութը նոր նոր մեղքերով . չըսես
անզգամներու պէս , “ Աստուծ
ողորմած է , մեղաւորին կորուսորչու-
զեր , ուստի ինչ վեաս է եղեր իմ
մեղանցելս : կընսամ ետքը խոստ-

վանանք ըլլաւ. հել հելպէթ Աստուած թողութիւն կուտայ „ : Ասանկ մեղքէ չվախնալը՝ ասանկ աներեսութիւնը՝ Աստուած ողորմած է աէյի, յայտնի սատանայական չարութիւն է :

ԽՐԱՏ ԵՐԻՊՈՐԴ

Աստուծոյ ոիրուն կը ա:

“Սիրէ զԱստուած բոլոր արտանց „ :

ՊԱՏՇԱՌԸ

ա. “Ինքն Աստուած ասանկ կը պատուիրէ „ : Եւ միթէ արժան և իրաւչ մի առ պատուերքը. “Սիրեսցես զտէր Աստուած քո,, : Սիրեն ալքստինքեան անուշ ու փափաքելի բան չէ մի : Կարծես թէ մենծ բան մը կը պահանջէ կորքեզնէ Աստուած՝ իս սիրէ ըսելով: Որո՞ւն կը պահանէս կոր սիրտդ, թէ որ Աստուծոյ ընծայ չընես նէ. և ի՞նչ պիտի սիրես, թէ որ զԱստուած չոիրես նէ :

բ. "Աստուած ամմէն կերպով սի-
րոյ արժանի է „: Դուն կըսիրես կոր
ստեղծած գեղեցկութիւնը՝ որ շատ
պակսութիւն ալ ունի : Կըսիրես կոր
մէկ երկու ըստկի բանը . հապա չսի-
րե՞ս յաւիտենական ու անհուն գե-
ղեցկութիւնը , որ է միայն ճշմարիտ
և ամենակատարեալ աղւորութիւն :
Ուրեմն զԱստուած սիրելու չէ մի՝ որ
ամմէն աղէկութիւնը ունիս : Քեզի
կըսեմ , թէ որ բան մը սիրել կուզես
նէ , աս մէկ հատիկ ամմէն սիրելու-
թեան աղբիւրը սիրէ :

գ. "Պարտըկան ես զԱստուած սի-
րելու իր երախտեացը համար ալ” :
Ի՞նչ ըրբաւ Աստուած քու սիրուդ
համար : Կընաս նէ՝ համրէ իր ըրած
բարերարութիւնները : Ի՞նչ բաներ
չիքաշեց քեզի համար Աստուած
մարդացեալ : Միտքդ բեր իր չարչա-
րանքները , իր վէլքը , իր ցաւը : Ի՞նչ
բաներ ալ քեզի չիխոստացաւ՝ ըրած-
ներէն զատ : Մի մոռնար այնչափ բա-
րիքն որ քեզի տուաւ կենացդ մէջ .
յիշէ յաւիտենական ուրախութիւնն

որ քեզի պահած է : Ասչափ բաները
հերիք չե՞ն մի՝ որ Աստուած սիրող
ու սէրդ վաստըկի . ալ կը ընած մի զին-
քը չսիրել, ան ալբոլոր սրտանց , ու
ամմէն բանէ վեր : Ի՞նչ տուն կու-
տան քեզի հաւասքդ ալ, խելքդ ալ
սիրող ալ :

ԳՈՐԾՎԵ

ա . “Այր ունեցիր զԱստուած ան-
դադար միտքդ բերելու , ու իր վրայ
մտածելու , : Ի՞նչ դիւրին ու բնական
բան կայ՝ ինչպէս յիշել իր սիրած բա-
նը . և որչափ դժար ու ծանոր բան
կայ՝ բնութեան ալդէմ , ասոր պէս՝
որ մէկը չի մտմտայ իր սիրած բանին
վրայ : Ուրեմն բանիդ գործիդ ատենն
ալ միտքդ երբեմն Աստուծոյ տար ,
սիրով վառած հառաջանքներ ըրէ .
զոր օրինակ , Աստուած իմ , սէր իմ .
ամմէն բանէն վեր քեզ կըսիրեմ . Աս-
տուած իմ , և ամենայն ինչ . ախ տէր,
ինչու ամմէն մարդ քեզ չիսիրեր ’ի
բոլոր սրտէ . Երանել թէ ես կարե-

նայի քեզ սիրել ամմէն սուրբերուն
հետ միատեղ։ Ասանկ սիրոյ հառա-
շանքը՝ հէմ շատ հաճոյ է Աստու-
ծոյ, հէմ շատ վարձք ունի։

Է. “Սէր ունեցիր՝ Աստուծոյ վրայ
խօսելու,, : Սէրը ան ատեն խօսելու
Ճէօշմիշ կըլլայ, երբոր իր սիրած բա-
նին վրայ բերանը բանայ նէ : Սիրտն
որ մէկ բանի վառուած է նէ, հէմէն
անոր վրայ խօսիլ կուղէ : Քու լե-
զուդ վկայ ըլլայ՝ թէ որչափ կըսիրես
զԱստուած : Բերնի համը չիգիտեր
կըսեն անոր՝ որ աղէկ կերակրէն ու
էն աղէկ գինիէն երես կըդարձընէ .
Հասղա ան որ չիսիրէր Աստուծոյ վրայ
խօսիլ նէ՝ փուժ մարդ է ինքն ալ
սիրտն ալ :

Ք. “Սէր ունեցիր՝ Աստուծոյ հետ
խօսելու,, : Ատեն կանցընես, օրեր կը-
ծախես քու սիրական բարեկամիդ
հետ վարուելու, ու զինքը չիտես-
նաս նէ՝ սիրտդ կոտրած կըմինայ : Եյ
ծա՞նը մի կըսեպես Աստուծոյ հետ
տեսնըւիլը : Ինչու ատչափ պաղ ես
ժամ երթալէն : Ինչու կըքաշուփ

շատ անգամ հաղորդուելէն : Ինչու
համարձակ սիրտդ Աստուծոյ չես բա-
նար աղօթքի մէջ : Սէրը կըրնայ մի
ընտանութենէ ետ կենալ :

Պ . “Սէր ունեցիր՝ Աստուծոյ ու-
ղածը ընելու” : Սիրօղը սիրելոյն հա-
մար իր ուղածէն ետ կըկենայ, մա-
նաւանդթէ կամքը բոլոր անոր կը-
նուիրէ, ուրիշ կամք չունի անոր կամ-
քէն ’ի զատ : Ճշմարիտ աստուծսի-
րութիւնն է Աստուծոյ կամքը կա-
տարել : Անիկակ է բոլոր սրտանց զԱս-
տուած սիրօղ, կամ պահօղ Աստու-
ծոյ առջի ու մեծ պատուիրանքը,
ով որ պատրաստ է ամմէն բանէն
զրկըւիլ՝ ամմէն բան քաշել, քան թէ
Աստուծոյ անհաճոյ բան մը ընել,
կամ Աստուծոյ հաճոյական բանը
մէկ դի թողուլ : Նայէ թէ դուն ի՞նչ
կընես, ի՞նչ չես ըներ :

Ե . “Սէր ունեցիր՝ Աստուծոյ հա-
մար համբերելու” : Ինչպէս ոսկին
կրակով կըփորձըւի կըզըտուի, ասանկ
ալ սէրը ձախորդութեան կամ նե-
ղութեան մէջ : Սոսկ հանգստեան ու

փափկութեան մէջ սիրելը՝ տղայական սէր մը նէ : Աշխարքի սիրուն համար ի՞նչ բաներու չեն համբերեր մարդիկ . տաքուն , ցրտուն , նախատինք՝ թուքումուր և ամմէն տառապանք քաշելու : Հապա Աստուծոյ սէրը վամբ մնայ , սկզբ ըլլայ , որ իրեն համար բան չիքաշես , ու փառք տալով չիփառաւորես զինքը :

Դ. “Սէր ունեցիր Աստուծոյ թուրը քաշելու” : Ճշմարիտ բարեկամը իր բարեկամին աջողութեանը կուրախանայ , ձախորդ բանին կըտրտմի: Զինքը փորձանքի ալ կըդնէ՝ անոր կողմը ըլլալով անոր պատիւը պահելու , ու վտանգէ խալըսելու : Թէ որ զԱստուած կըսիրես նէ , ջանա՛ որ ուրիշներն ալ սիրեն : Ուրախութիւն ցցուր , երբոր Աստուծոյ փառքը կըմենծնայ նէ . ասոր ներհակ՝ երբոր կըտեսնաս՝ որ Աստուծոյ օրէնքը ոտքի տակ կառնըւի կոր , իր սուրբ անունը կըհայհոյեն կոր , սաստիկ վլտանալ ցցուր : ԶԱստուած սիրելմի կըլլայ , երբոր լուռ կենաս աներես անօրէն-

ներուն ըստածին ըրածին . որ քու լը-
ռութիդ իրենց չարութեանը կոնակ
կենալ մը կերևնայ: Առւտե անողորմ
սէր է ատիկայ . սէր չէ՝ կատարեալ
առելութիւն է :

ԽՐԱՏ ՉՈՐՐՈՐԴ

Աստուծոյ իամին հնապանդ ըլլալո-
վբայ:

“Քու կամքդ Աստուծոյ կամացը հետ
միացուր ,” :

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ը

ա . “Ասոր պէս բան չիկայ՝ որ զմեզ
Քրիստոսի տեառն մերում նման
ընէ „: Աս ա՞ն առաքինութիւնն է՝ որ
Յիսուս Փրկիչն մեր ամմէն առաքի-
նութենէ վեր սեպեց , քարողեց , ու
օրինակը իր վըրան ցցուց : Իր բոլոր
կեանքը ուրիշ բան չէր , բայց եթէ
շարունակ իր Երկնաւոր Հօրը կամքը
կատարել : Թէ որ իրեն աս առաքի-

նութեանը հետևիս նէ, ստոյդ գիտցիր որ վրադ փրկութեան նշանը դրած է, արքայութեան փառքը քուկդ է։ Ասով կըլլաս ամենեին նման անոր՝ որ գլուխ է և օրինակ որդւոցն Աստուծոյ։

Բ. "Ասոր պէս քեզ սուրբ ընօղքան չիկայ,։ Աստուծոյ կամքն է մէկ հատիկ կանոն ամենայն սրբութեան, որ բոլորովին կընայի մեզ սուրբ ընելու։ անանկ որ որչափ մենած ու զարմանափ գործք ըլլայ, բայց Աստուծոյ կամքէն դուրս է նէ, բնաւ շահ մը չունի սուրբ ըլլալու։ Դուն թէ որ կուղես քիչ ատենի մէջ սուրբ ըլլալ նէ, քու կամքդ մէկ ըրէ Աստուծոյ կամքին հետ։

Գ. "Քեզ աւելի երջանիկ ընելու՝ ասկից դուրս բան չիկայ,։ Մարդուս երջանկութիւնը ան է, որ ազատ մնայ ամմէն չարէն, ու իր բաղձանքը կատարուի։ Ասոր կըհասնիս, թէ որ քու կամքդ Աստուծոյ կամացը հետ կատարելապէս միաբան ըլլայ նէ։ Ի բաւ որ ան առեն Ազատ կըլլաս մեզ

քէն „. վասն զի մեղքը ուրիշ բան չէ,
բայց եթէ քու կամքիդ ապստամբու-
թիւնը Աստուծոյ կամքին դէմ: “Ա
զատ կըլլաս ամմէն չարէն ալ,,. վասն
զի չարիք կամ փորձանք չըսուիր, եր-
բոր գլխուդ եկածը սիրով կընդունիս
իբրև Աստուծոյ բարերարութիւն մը:
Ասով “Քու բաղձանքներդ ալ կըկա-
տարուին,,. վասն զի ան ատեն դուն
ուրիշ բան չես ուզեր Աստուծմէ իր
կամքէն ’ի զատ . ուստի ապահով ե-
ղիր՝ որ միշտ ուղածդ կառնես: Ո՛վ
երջանիկ կեանք, որ բնաւ չիկրնար
զինքը տակնուվայ ընել ոչ ձախոր-
դութիւն մը, և ոչ վնաս մը:

ԳՈՐԾՎԵ

ա . “Քու կամքդ Աստուծոյ կա-
մացը հետ մէկ ընելու՝ աս անտարա-
կուսելի բաները միտքդ դիր” : ‘Նախ’
Աստուծած է գերագոյն տէր և թա-
գաւոր, որուն ձեռքին տակն է ամմէն
բան: Երկրորդ՝ ինչպէս որ Աստուծած
իր ամենակարօղ զօրութեամբը ստեղ

ծեց ամմէն բանը , ասանկ ալ իր ան-
հուն իմաստութեամբը կըկառավարէ
ամմէն բան : Երրորդ՝ բովանդակ աշ-
խըքի մէջ ընաւ չըլլար մէկ շուքն ալ
աղէկ կամ գէշ ըսած բաներուն , որ
Աստուած չգիտնայ զանի , ու չուզե-
նայ կամ թող չկտայ : Չորրորդ՝ ինչ
որ Աստուած կուզէ կամ թող կու-
տայ իր անհասանելի խորհրդովը , բո-
վանդակը ինքը կըկարգաւորէ ու կը-
ծառայեցնէ իր ընտրեալներուն աղէ-
կութեանը ու Երկնային փառքին
համար : Թէ որ թափանցես աս ճըշ-
մարտութիւններուն խորունկը , բո-
լորովին հեշտ ու դիւրին կըլլայ քեզի
ամմէն բանին մէջ քու կամքդ համա-
կերպել կամ միացընելը Աստուծոյ
կամքին հետ :

Ե . “Աստուծոյ կամքը վինոռե , թէ
քեզնէ ինչ կուզէ ...: Աստուած իր
կամքը մեզի յայտնեց իր սկասուի
բանքներովը , իր միածնին մեզի դաս-
տըւած վարդապետութիւնովը ու օ-
րինակովը , և իր Եկեղեցին կանգնե-
լովը . մնացած բաներն ալ կիմացընէ

մեծաւորներուն կարդաղըութեամբը
ունելքին աղդարարութիւններ ը-
նելով՝ որ խոստովանահայրը վկայէ
թէ առ բանը Աստուծմէ է։ Այսու
ամենայնիւ դիպուած կը ընայըլլալոր
տարակոյս ունենաս , արդեօք աս
բանս Աստուծոյ կամքն է թէ չէ։ Ան
ատեն աս կանոնս բոնէ . թէ որ չես
կը ընար երթալհարցընելքու հոգեսոր
հօրդ նէ , այն բանը ըրէ , որն որ քե-
զի կերևնայ՝ թէ Քրիստոսի տեառն
մերոյ վարդապետութեան և օրինակին
յարմար կուգայ , այնչափ նսաս չի-
տար ուրիշ , մեղքէն հեռու է , ու
քուանձնասիրութեանդ և հպարտու-
թեանդ հակառակ է :

Կ. “ Ճերմեռանդ աղօթքներ աւ
ըրէ , որ Աստուած իր սուրբ կամքը
քեզի կերպով մը յայտնէ ” : Մեր
կամքը շատ տկար ու փոփոխական է .
ուստի մինակ ինքիրմէն չիկընար մար-
դը իր կամքը Աստուծոյ կամացը հետ
միացեալ պահել։ Ասոր համար կը կտ-
րուի դերբնական շնորհքի . ան աւ
Աստուծմէ ինդրէ նէ՝ կառնէ : Ու-

ըեմն Դաւիթ մարդարէին հետ շատ
անդամ ըսէ սրտանց . “Ուսո՞ ինձ առ
նել զկամն քո , զի դու ես Աստուած
իմ , :

Դ . “Ամմէն իժիր՝ ամմէն տեղ ջանա
միայն Աստուծոյ ուղածը ընել , ինչ-
պէս ինքը կուզէ նէ , ու ինչու կուզէ
նէ , : Աս բանիս դիր բովանդակ ջան-
քըդ՝ բաղձանքդ ու կարողութիւնդ .
աս ըլլայ քու բոլոր կենացդ նպատա-
կը : Խորունկ տպաւորէ սրտիդ մէջ
աս խօսքերը , ու սըխ սըխ բանեցուր .
“Աստուծոյ ուղածը կուզեմ , ինչպէս
ինքը կուզէ նէ՝ ու ինչու համար կուզէ
նէ , : Աս սրտով ընես նէ ամմէն բա-
նըդ , գիտցիր որ արքայութեան հտ-
մը՝ հանդիսոր և ուրախութիւնը կեր-
պով մը ասաշխրքիս վրայ ալ կառնես :

Ե . “Աստուծոյ ձեռքէն եկած սե-
պելով ընդունէ ամմէն բան , յաջող
է եղեր , ձախորդ է եղեր , : Ամմէն
բանին մէջ պատուէ ու փառաւորէ
Աստուծոյ կամքը՝ անոր տակը քեզ
ձգելով , ու ըսէ սրտիդ մէջ . “Տէր ,
ես քու ձեռքդ եմ . ըրէ ինձի ինչ որ

քեզ հաճոյ է „: Կամ “Տէր, իմ
կամքս ըըլլայ, քու կամքդ ըլլայ „:
Կամ “Ի՞նչ որ Աստուած կուղէ նէ,
ես ալ ան կուղեմ,, : Ո՞վ որ աս սիր-
ար ունի նէ, թէ ուրախութեան՝ թէ
արտմութեան մէջ անոր հոգիին՝ մէջ
իրեն տեղ ըրեր է ճշմարիտ հոգին
Քրիստոսի :

Դ. “Բոլոր սրտանց աս բարի ջեր-
մեռանդութիւնս բանեցուր, որուն
մէջ կայ ամմէն կատարելութիւն,, :
Այսինքն, մի զարմանար՝ մի շփոթի՛
ձեռք զարկած բանդ աջողի՝ ալ նէ՝
չաջողի՝ ալ նէ : Եոյն աչքովնայէ ան-
տարբեր կերպով առողջութեան ալ,
հիւանդութեան ալ, կեանքին ալ
մահին ալ, նմանապէս ամմէն դի-
պուածքին վրայ ալ : Ամմէն բան Աս-
տուծոյ յանձնէ, աղաչելով զինքը՝ որ
քու վրադ ինքը կարգաւորութիւն
ընէ ամմէն ատեն, ամմէն տեղ, ամմէն
պարագայի մէջ, ինչպէս որ իրեն հա-
ճոյ ըլլայ նէ : Բայց որովհետեւ ասանկ
գերազանց առաքինութիւն ափ ձգել
ըլլար առանց պատերազմելու, զէն-

ՔԵՐԸ ՀԱՊԻՐ , ու պատրաստ կեցիր ,
արթուն կեցիր . ոտքի տակ առ՝ իրդ
դէ սրտիդ անհանգիստ շարժմունքը
ու յօժարութիւնը՝ որ բանի մը ց-
ցաւի ցիմըումուայ : Ի՞նչ նեղութիւն որ
դիմուդ գալու ըլլայ նէ , մի նայիր
ով կամ որ բան ատոր գործիք կամ
պատճառ եղաւ , հապա Աստուծոյ
ձեռքը նայէ՝ որ անկից եկաւ :

ԽՄԱՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԵՐԵՄԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՎՐԱՅ :

“Սիրեսցես զընկեր քո իբրև
զանձն քո , :

ՊԱՏՃԱՌԵ

ա . “Եղբայրսիրութիւնը յայտնի
նշան մը նէ որդւոցն Աստուծոյ” :
Ծատ անդամ կըսես՝ թէ զլաստուած
կըսիրեմ . քեզ կըխաբես , թէ որ զեղ-
բարդ ալ չես սիրեր նէ : Աստուծած՝
որ բոլորովին ուշ է , բոլորովին աղէ-

կութիւն, ասոնց նմանութիւնը տեսնալ կուզէ իր որդւոցը վրայ : Ուստի կըսէ Յովհաննէս աւետարանիցը . “Սիրելիք սիրեսցուք զմիմեանս . և ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է ծընեալ, և Ճանաչէ զԱստուած,, (ա . Յովհ . դ . 7):

Է . “Եղբայրսիրութիւնը յայտնի նշան է նման ըլլալու Ք.րիստոսի Որդւոյն Աստուծոյ ” : Միածին Որդին Աստուծոյ անոր համար ինջաւ երկնքէն, որ երկրիս վրայ վառէ սուրբ սիրոյն կըսակը, ու սիրոյ պատուիրանը յայտնի աւանդէ . “Հուր եկի արկանել յերկիր : Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս, որուէս ես զձեզ սիրեցի : Պատուիրան նոր տամձեղ, զի սիրեսջիք զմիմեանս : Յայսմ ծանիցէն ամենեքին՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանըս ” : Զինքը կըդնէ կոր իբրև հայլի մը՝ սիրոյ օրինակ . ուստի մէկըզմէկ պիտի սիրենք, ինչու ինքը մեղ սիրեց : Հիմա դուն քրիստոնէն ես մի, թէ որ Ք.րիստոսի հրամանը ու օրի-

Նակը չես սլահեր եղբայրակիրութեամբ :

Ի՞՞ “Ընկերսիրութիւնը ճակտի կը նիք է Երկնքի ժառանգ եղողին” : Երկու բանով կըլայց փրկութիւն . Աստուծոյ սլատուիրանքը կամ օրէնքը սլահելով, ու մեղքէն ետ կենալով : Արդ Պօղոս առաքեալը կըսէ . “Որսիրէ զընկերն, զօրէնսն կատարէ” (Հռ. Ժիկ. 8) : Եւ աս սէրս մեղքն ալ կըքաւէ , ու դարձի շնորհք կըրերէ : “Երանի ողորմածաց, զի նոքառորմութիւն գտցեն” : Բայց ով որ եղբօրը չողորմիր նէ, Աստուծոյ ողորմութեանը չիհանդիպիր : Աւ ի՞նչ ըսեմ . Եղբարը սիրողը՝ Երկնքին ճամբան դուրան դաշտ կընէ : Սիրոյ սեղէ Երկինքը . հոն ատելութիւն թշնամութիւն չիմրանար . ան տեղին ընակիչքը մէկ սիրտ մէկ հոգի են . ի՞նչ պէս հոս սէր չունեցօղը հոն չեն առներ , ասանկ ալ սէր ունեցօղը սիրով ներս կառնեն :

ԳՈՐԾՎԵ

թ . “ Չարհամարհես ընկերդ ” :
 Ազբատ ալըլլայ , աղքատ տընէ , վրայ
 գլուխը իսեղջ , երեսէ ձգած , այսու
 ամենայնիւ մարդ է , Աստուծոյ
 ստեղծած , Քրիստոսի արունովը
 գնած , արքայութեան համար եղած :
 Դնենք թէ մէկին վարքը գէշ՝ ախ-
 տաւոր՝ ամմէն Ճամբէ դուրս է . թէ որ
 Աստուծած քեզ չխպահէ նէ , անկից
 վար կըմնա՞ս մի : Ուստի որչափ կըր-
 նաս նէ՝ վրան խոջան , անմեղադի՞ր
 ըրէ , որ աղէկ կըթութիւն չէ ունե-
 ցեր , ուրիշէն չար օրինակ առեր է ,
 ընութեան տկարութիւն ունի . իր վը-
 րայ իշխանութիւն ալ ունենաս նէ՝
 ինայելով վարուէ հետը . Ճամբու
 չիգար՝ վերքին մէհլէմ չուզեր նէ ,
 խստութիւն ցցուր աղէկի սրտով . ան-
 կարգութեանը սրդողէ , զինքը սիրէ :

Է . “ Ուրիշի վրայ միշտ աղէկ իսօսէ , :
 Սովորական բան մը եղեր է՝ թեթև
 բան սեպելով , ուրիշի պակսութեան

վրայ խօսիլ. բայց ասով սերը միշտ կը
կորսըւի, շատ անգամ արդար իրա
ւունքն ալ: Մէկին վրայ պակսու
թիւն մը գիտես նէ, քու քովդ մնայ
ուրիշի մըսեր՝ երբոր անոր չինկնար
նէ: Եղբարդ ճամբայ բերելու ես նէ,
առանձին խօսելով կըլլայ անուշ խօս
քերով: Մտիկ չըրաւ նէ, երբոր բա
նը Աստուծոյ կըդպչի, կամ մեծ գայ
թակղութիւն կըլնայ ըլլալ նէ, մե
ծաւորներուն անկաճըդիր որ կըլնան
ու պարտըկան են դեղը ընելու:

Ք. “Աղքաններուն սիրով գութ
ցցուր „: Ունեոր ես նէ, աղէկ ողոր
մութիւն տուր. քիչ բան ունիս նէ,
քչին բաժին հանէ: Ողորմածու
թիւնը Աստուծոյ օրհնութիւնը կի-
ջեցնէ տանդ վրայ ու կըպահէ զան:
Ողորմութիւն կըլնես նէ, սեր ալ համ-
բերութիւն ալ ըրէ. չէ նէ՝ վարձք
չունենար Աստուծոյ առջև: Աւել
հասիր խալընկոտ աղքատներու: Ա
սանկները աւելի նեղութիւն կըքա-
շեն, մէյ մը ամընալէն, մէյ մալ որ
զիրենք մտածող ցիկայ: Ասանկներն

որ վիճառութեաս ու սիրոտ տասս նէ՝ ողորմածութեան հետ սիրոյ վարձք աւկունենաս :

Պ. “Հիւանդներուն հոգ ունեցիր” : Չեմ ըսեր՝ թէ միշտ անձամբ քովերնին դառւիս, հասլա իրենց օդնութիւն մը համնիս՝ Յիսուսին սիրուն համար: Հիւանդ կըլլայ որ երեսի վրայ մնացած է. իմանաս նէ՝ քովը գնա, կամ քու մարդիկներէդ մէկը խաւրէ. միսիթարանիք եղիր խեղձին. նայէ որ իրեն աղէկ նայուի ու անուշ կերպով. մանաւանդ ջանա որ քանի որ խելքը վրան է՝ սուրբ խորհուրդները ընդունի :

Ե. “Օգնութիւն ըրէ՝ քու կարողութեանդ կէօրէ՝ ամմէն խեղձերուն տառապեալներուն, մարդ չունեցողներուն,,,: Ողորմածութեան սէրը Ճըշմարիս է նէ, հրաշքներ կըդործէ. Աստուծոյ նախախնամութեան նմանելով ամմէնուն կըհասնի: Խելքէ դուրս Ճարապկութիւններ ու բաներ կընէ. սիրտը չիհանդչիր՝ թէ որ բոլոր կեանքը խեղձերուն աղէկու-

Թեանը չիհատցընէ նէ : Ինչէն է .
վասն զի Աստուծոյ հոգւովը վա-
ռուած է , որ է բոլորովին սէր . Աս-
տուծոյ պատկերը կըտեսնայ եղբարքը
վրայ , ուստի կուզէ որ աւելի պայ-
ծառ ըլլան . որով ինքն ալ բոլորովին
կըպայծառանայ . դիտէ ալ որ Աս-
տուծոյ աւելի հաճոյ բան չիկըրնար
ըլլաւ բայց եթէ սիրոյ գործքերով
որ զմարդ Աստուծոյ կընմանցրնեն :

Ղ. “Եղբայրասէր Եղիր գերբնական
պատճառներով , : Փուշէ է ու վարձք
չունի այն սէրն որ աշխրքի պատճա-
ռով կըլլայ . Խաթեր համար , գեղեց-
կութեան համար , շահասիրութեան
համար , ատիկա աշխարհասիրութիւն
է որ Խիստ շուտ կանցնի . ասանկ
սէր կուապաշտներն ալ ունէին :
Քրիստոնէ մարդը հիմ պիտի դնէ
ամմէն բանի՝ Աստուծոյ սէրը . աս-
չըլլայ նէ , քրիստոնէական եղբայր-
սիրութիւն չըլլար :

ԽՐԵՏ ՎԵՑԵՐՈՐԴ

Հ-Դ-Ռ-Ջ ՔՐԻ-Ա-Ն-Ե-Ա-Ն Ք-Ա-Ր-Լ Հ-Ն-Ե-Ն-Ա-Լ-Ն-
Վ-Ր-Ա-Յ :

“Ա-Մ-Ա-Ն Ո-Ւ-Ժ-Դ Թ-Ո-Ւ-Ը Մ-Է-Կ Հ-Ո-Գ-Ի Մ-Ը
Վ-Ա-Ս-Մ-Ա-Ն-Ե-Լ-Ո-ւ,, :

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ա

Թ . “Մարդուս հոգին գին չունի
բնութեան կողմանէ „ : Հրեշտակէ
էտև մարդն է Էն պատուական բանը,
կենդանի պատկեր է Աստուածու-
թեան . այնչափ գերազանցութիւն
ունի՝ որ միայն Աստուած կըհասկը-
նայ զան : Աշխրքին մէջ մէկ քա-
շուած մեռած պատկեր մը ունենայ
մէկը նէ , վարպետ բան՝ գնով բան ,
ո՞րչափ աղէկ կըջանայ պահել , վրան
կըդողդըլայ . հապադուն ի՞նչ պիտոր
չընես Աստուածոյ պատկերքին համար,
որ է մարդու հոգին :

Բ . “Աւելլ անդին է չնորհաց կար-

Դին մէջ,, : Ծնորհքով մարդուս հոգին
բարձր աստիճան մը ելած է գերբնա-
կան , ու Աստուծոյ ընտանի եղած է:
Հայրն Աստուած զինքը զաւկի տեղ
դրեր է , Որդին Աստուծոյ իր եղբօրը
տեղ , հոգին սուրբ իր հոգեսր հար-
սին տեղ: Աս աստիճանս հասցընելու
համար ալ Քրիստոս իր արունով
գներ է : Դուն անհոգ կը կենայիր մի
քու զաւկիդ , քու եղբօրդ , քու հար-
սիդ՝ քու թագաւորիդ մնաս մը ըլլա-
լու ըլլար նէ:

Պ . “Վւելի անգին է փառաց կար-
գին մէջն ալ,, : Ինչու համար հոգին
անանկ կատարեալ պարգևներով
ստեղծած է , անանկ բարձր աստի-
ճան հանած է շնորհքով , ու անգին
արունով գնուած է , բայց միայն փա-
ռաց հասնելու համար . այսինքն՝ աս
երկրիս վրայ քիչ մը ատեն փորձը
քննըւի , ու արժանի ըլլայ արքայու-
թիւն երթալ , ու վայլել Աստուծոյ
տեսքը՝ որ է իւր գերագոյն բարին :

Նայէ թէ աշխըքիս վրայ թագաւո-
րի մը տվին համար ի՞նչ հոգ՝ ի՞նչ փոյթ

կըլլըւի , հազարաւոր զօրք կըջար-
դրւին՝ որ անիկա անցաւոր թագե մը
չիզրկըւի աւէյի . հապա ի՞նչ պէտքը
չէ ընել մէկ հոգւոյ համար՝ որ ար-
քայութեան թագին պիտի համի :

ԳՈՐԾՎԱԸ

ա. « Չըլլայ որ ըսես թէ հոգի վաս-
տրկիլը ինծի չինկնար , ատիկա քա-
հանայի բան է „ : Եղբօրս հոգին հո-
գալիմ բանս չէ , ըսելու խօսք է մի .
ասա՞նկ մի կըլլայ հաւատոյ ու սիրոյ
լեզուն : Տեղ մը որ ջուր կոխէ , կրա-
կը քալէ , սով ըլլայ նէ , բնական է՝
որ ամմէն մարդ ափէն եկած օդնու-
թիւնը ընէ . Էյ հոգիին վտանգը նայե-
լու չե՞նք մի . աւելի փոյթ տանե-
լու չը մի իր անդին ըլլալուն համար:
Է . “Դուն առաջ քու հոգիդ հո-
գա ” : Տունդ կրակ ընկեր է նէ , ’ի
հարկէ ուրիշին տունը հոգալու չես :
Դու հոգեվար ես նէ՝ ուրիշի համնիլ
չես կրնար : Բանի մը չիդար ուրիշի
հոգիին փոյթ ունենալը՝ երբոր քու

Հոգինդ փոյթ չես ըներ նէ : Լսած ես
առակը, “Բժիշկ բժշկեա զանձն քո,:
Ի՞նչ շահ բոլոր աշխարհքը վաստրկիլ
երբոր քու հոգիդ կորանցընես նէ:

Պ. “Ետքը քու ձեռքիդ տակ եղող
ներուն փրկութեանը հոդ տար ։
Զաւակներ ունիս, բարեկամներ,
ծառայ, աղախին, վարի մարդիկ,
բանւոր, բանիդ եկող, ասոնց վրայ
ցցուր նախանձաւորութիւն հոգւոց.
ատեն կուգայ որ պատասխան սկիաի
տաս անոնց համար : Խենդ է ան հո-
վիւը, որ ուրիշի ոչխըները պահէ՝
երբոր իրենը կըյափշտակէն կոր գայ-
լերը : Դուն նայէ որ քու տակդ ե-
ղած՝ քեզի ընկած մարդիկը՝ աղաչես
յորդուես, սպառնաս, սլատմես,
խոստանաս, բան տաս, մէկ խօսքով
ամմէն ճարը ընես խոհեմ նախան-
ձաւորութեամբ՝ զանոնք վաստրկե-
լու ու աստուածապաշտ ընելու :

Պ. “Աս բարի նախանձդ տարած-
վի քու տնէդ գուրս ալ,։ Կրակի
նման է նախանձայուղութիւնը հոգ-
ւոց, հերիք է ըսել չփիալը : Տես,

ինչ ընդարձակ դաշտ կայ առջեղ .
ինչպէս՝ անտէր որբերու հոգ տանիլ
ծախսք ընել աղքատ տղոց համար՝ որ
աղէկ մեծնան , արհեստ մը սորվին ,
ինչքանի յարմար կըդտնաս նէ՝ բա-
նեցնել . աղէկ կտրիձներուն աղէկ
դրեր բաժնել կարդալու . բարեպաշ-
տական ընկերութիւններուն մէջ դըր-
վլ : Չե՞ս գիտեր որ չարերը ամմէն
ճարտարութիւն կըբանեցնեն սատա-
նային տէրութիւնը մեծցընելու . դուն
ալ փոյթ չխտանիս որ Աստուծոյ թա-
գաւորութիւնը տարածուի : Անոնք
ըստակ կըմըսիսեն՝ որ հոգիները մո-
ւըրցընեն , դուն ալըստըկիդմէկ մասը
չդնե՞ս որ փրկութեան համնին :

Ե . “Բնաւ մէկ ցեղ մարդ մը քու
բարի նախանձէդ դուրս չմնայ „ :
Որչափ աւելի խեղճէ նէ մէկը՝ աւե-
լի անոր հասիր : Ուստի հոգ ունեցիր
մեղաւորներուն , որ Աստուծոյ հետ
հաշարւին . չնչահաւաներուն՝ որ
դառնան Ճշմարտին Աստուծոյ հա-
ւատքը ու սէրը : Ուրիշ կերպով ճար
չես դտնար ասոնք շահելու նէ , աղօթ-

Քով ու բարի օրինակով ճար ըրէ,
ուր տեղ որ ըլլաս նէ :

Ղ. "Պէտք ըլլայ նէ՝ յայտնի դէմ
Դիր չարերուն,, : Թէ որ ծանտրյան-
ցանք է ուրիշն ստակը՝ պատիւը՝ ա-
ղէկ անունը՝ առողջութեր ու կեան-
քը վերցնելնէ, հապա որչափ ծանր
է ուրիշն անմեղութիւնը՝ շնորհքը ու
փրկութիւնը կորսնցընել տալ: Ուրեմն
Երբոր տեսնաս մէկ անզգամ մը՝ որ
զուրիշները կաւրէ կամդայթակողցը-
նէ, խասպար տուր անոր որ կրնայ հա-
խէն դալ, չէ թէ իրեն վխասելու, հա-
պա չարիքը խափանելու համար: Գո-
ղերը աւազակները զապտ ընելու ով
իր ափէն եկածը ըներ. հապա աւելի
ջանք ընել սկառքը չէ մի, երբոր մէկ
քաղքի կամ գեղի մէջ անանկ անըզ-
գամ մը Երևնայ՝ որ անմեղ հոգինե-
րը կըսպաննէ կոր :

ԽՐԱՏ ԵՕԹՆԵՐՈՒՄԴ

Խ Հ Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ :

“Քրիստոնէի յարմար խոհեմութիւն
բանեցուր” :

ՊԱՏՇԱՌԻԸ

Թ . “Ասորնման բանականութեան
կամ խելքի դէմ բան չիլընար ըլ-
լալոր մէկը անխոհեմութեամբ վար-
փի առանց չորս դին նայելու” :
Անբանի գործք է սոսկ բնութեան
հետեւիլ . բանսական մարդը խելքով
պիտի շարժի , չէ նէ՝ մարդ չըսուիր :

Է . “Ասկից վտանգաւոր բան ալ չի-
լընար ըլլալոր մէկը մարմնոյ խոհե-
մութեամբը վարուի” : Մարմնոյ խո-
հեմութիւն ըսածնիս ուրիշ բան չի-
մումտար , բայց միայն զգայութեան
հաճոյըը , անձնասիրութիւնը , ու
հսկարտութիւնը . որ Աստուծոյ ա-
տելի է իբրև խենդութիւն մը և ան-

կարգութիւն բոլորովին։ Ասանկ ախ-
տը զմարդը ամմէն մեղքի մէջ կըձգէ,
ու ամմէն անբանական յօժարու-
թեան դերի կընէ։

Պ. “Ասկից ալ աղեկ բան չիկը-
նար ըլլալ՝ որ մէկը քրիստոնէական
խոհեմութեամբ վարուի,,։ Ասիկա
հիմնած է բանականութեան վրայ,
պատշաճողութեան վրայ, Աստուծոյ
պատուիրանքներուն՝ ու Քրիստոսի
վարդապետութեանը և իրեն օրինա-
կին վրայ։ Աս խոհեմութիւնս բանե-
ցուր քու ամմէն բանիդ մէջ, թէ որ
չես ուզեր չարաչար մոլորիլ ու ամմէն
Ճամբէ գուրս Ելլալնէ։ Աս քեզնէ
կուզէ քու վերջին վախճանդ, մկր-
տութեան խոստմունքդ ալ, ու գա-
ւանած հաւատքդ ալ։

ԳՈՐԾՎԸ

Թ. “Մէկով նետէ աշխրքիս մո-
ւար սկիզբները,,։ Աս խօսքերն որ
լսած կըլլաս անխելքներէն ու անըղ-
դամներէն, թէ “Ամմէն բան մեղք չէ

ետ : Սովորութեան էտեւէ պէտք է
երթալ Քահանաներուն խօսքին ան-
կաջ գնել պէտքը չէ : Այնչափ տը-
գեղ չէ սատանան , այնչափ տաք չէ
դժոխքը , ինչպէս անոնք կըցըցնէն :
Ճահիլ հասակին քիչ մը թող տալու
է որ քէֆը ընէ . ապաշխարելը թող
ծերութեան մնայ , : Փախիր ասանկ
գէշ խօսքերէն + դուն անկաջ տուր
անոնց որ քեզ կուզեն սրբութեան
ճամբան տանիլ . աւելի հաւտա աւե-
տարանին ու կաթուղիկէ եկեղեցւոյ ,
չէ թէ սուտ քրիստոնէ ըսուածնե-
րուն . որ իրենց վատթարութիւնը
հերիք չէն սեպեր , հասկա կուզեն ի-
րենց պիղծ խօսքերը ուրիշներուն
միտքն ալ խօթել՝ որ իրենց ուկա
դժոխք երթան կորաըւին :

Է . “Քու խելքիդ ալշատ մի հաւ-
տար , : Ո՞վ որ խելացի ու աղէկ մարդ-
կանց խորհուրդ կըհարցընէնէ , խել-
քով բան կընէ , ու շատ փորձանքէ
կըխալըսի : Ճամբէ դուրս կելլայ՝ ով
որ իր խելքին միայն կըհետեւի նէ :
Երբոր չես կընար ուրիշն խորհուրդ

հարցընելնէ , ան ատեն մտմոս , թէ
դուն ինչ խրատ կուտայիր՝ երբոր մէ²
կը անանկ բանի մէջ գտնըւէր նէ .
Խղճմըտանքիդ մտիկ ըրէ , ու ըրէ
այն բանն որ կըսեակես թէ դիւրաւ
կըլայ Աստուծոյ պատասխան տալ :

Ի . “Բոլոր կեանքդ ու վարմունքդ
քու վերջին վախճանիդ շտկած ըլ-
լայ , : Գիտես որ դու ստեղծուեր
ես՝ չէ թէ ժամանակաւոր բանի սիր-
արդ տալու , չէ թէ ստակ ժողվելու ,
չէ թէ փառք պատիւ վաստրկելու , չէ
թէ համարձակ ու հայվանի կեանք մը
անցընելու մարմնապաշտութեամբ ,
հապա զԱստուած Ճանչնալու համար-
զինքը սիրելու , իր պատուիրանքը
պահելու , ու արժանի ըլլալու յաւի-
տենական կենաց : Աս հոգիիդ վախ-
ճանը միշտ աչքիդ առջելը ըլլայ , և
ամմէն գործքդ ատօր շտկէ : Երանի՛
քեղի վախճանիդ հասնիս նէ . վայ
գլխուդ՝ անկից զակըւիս նէ :

Ի . “Ատենդ բանեցուը աղէկ բան
ընելու , : Անդին բան է ժամանակը ,
բայց կըթոչի կերթայ . անցնելէն է .

տե՛ մէյմալ դառնալիք չունի : Ա-
տանկ է նէ, նայէ որ վուճ բաներու
ու դատարկութեամբ չի կորսնցընես
ատենդ . բոլորը ժամանակաւոր բանե-
րու մի ծախեր . մաս մը նալ հանէ հո-
գիկ ու Աստուծոյ : Օրւան ամմէն
սահաթը կարգի դիր . ան ատեն հան-
դարս ու աղէկ կերպով կանցընես :

Ե . “Աստուծոյ շնորհքը՝ աշխրքիս
ամմէն բարեկէն վեր դիր,,,: Շնորհքը՝
Յիսուսի անդին արեան կաթիլները
կըսեպուին . վասն զի քեզի շնորհք-
ներ վաստըկեցաւ իր չարչարանօք և
մահուամբ : Ուրեմն դուն ալխըմէթը
գիտնալով ընդունէ , թէ մոքի լու-
սաւորութիւն մը ըլլայ , թէ կամքիդ
մէկ ներքին դրդում մը , և ուրիշ փըր-
կութեան միջոցները : Աղէկ նայէ բո-
լոր ուժովդ՝ որ Աստուծոյ սլատաս-
խան տալու դժար բաներ գլուխդ
չժողվես :

Ղ . “Պզտիկ բաներուն ալ անհոգ
մըլլար,,,: Պզտիկ մըզտիկ պակսութիւն-
ներ կըլլան , մանտր մունտր առաքի-
նութեան բաներ կըհանգիպին , քչիկ
• 11

մը մահացուցում՝ կրնայ ըլլալ. բայց
Երբոր Աստուծոյ կրնային, ու շնորհ
քը զինձիլլամէ անկից կըկախով նէ,
անկից մենծ ի՞նչ բան կայ: Ո՛վ որ
հարըստնալ կուղէ նէ, պղտի մխասէն
ալ պիտի զգուշանայ, էն պղտի վառ
տակն ալ ձառքէ պիտի չհանէ:

ԽՐԱՏ ՈՒԹԵՐՈՐԴ

Բարեխառնութեան վրայ:

“Ամմէն բանի մէջ չափ ու կանոն ու-
նեցիր,, :

ՊԱՏՃԱՌԸ

ա. “Բարեխառնութիւնը հարկա-
ւոր է մարդուս մարդու պէս ապրե-
լու,, : Անբան կըսուի անիկակ որ ըզ-
գայութեանց ուղածին միայն էտևէն
է: Բանական մարդը թէ որ խելք չի-
բանեցինէ, ու բանականութեան կա-
նոնով զինքը չխանձէ նէ, անբան մը
կըդառնայ:

Ք. “ Բարեխառնութիւնը հարկա-
ւոր է քրիստոնէի՝ որ քրիստոնէի պէս
ապրի ” : Աւետարանը մէյ մը աչքէ
անցուլու , կըսումնաս որ ամմէն կանոն
ներըքեզի բարեխառնութիւն կըսոր-
վեցնեն , թէ ինչպէս մարդ ամմէն
բանի մէջ իր յօժարութիւնները պի-
տի կարգաւորէ , ընութեան կարգէն
դուրս չելլայ , իր պարտքը ինչ է Աս-
տուծոյ ու մարդկան՝ դիտնայ , անանկ
զինքը կառավարէ :

Ք. “ Բարեխառնութեամբ կըլլայ
կատարեալ կեանք ” : Առաքինու-
թիւն ըսածդ շատ աղէկ ու աղուոր
բաններ ունինէ , աստիճան մը նաև ու-
նի՝ որ անկից անդին չանցնիր . մէկ
աստիճան մալունի՝ որ անկից վար ալ
պիտի չինչնայ , չէ նէ՝ անշնորհք ան-
կարգ բան մը կըդառնայ : Չափէ
դուրս առատաձեռնութիւնը մսխո-
ղութիւն կըլլայ . չափէն էւելձեռքը
պինդ ըլլալը ադահութիւն կըլլայ .
խիստ սրտոտ ըլլալը ուղելը յանդը-
նութիւն կըսուի . խոնարհութիւնը
ճամբով չէ նէ՝ ցածութիւն է կամ

վախկոտութիւն . շատ խստութիւն
 բանեցնելը անգթութիւն է . իր կար
 ծեաց՝ իր խօսքին վրայ ուժ կոխել կե
 նալը կամասղաշտութիւն ու անձնա
 սիրութիւն է . շուտ շուտ խօսքն ալ
 միտքն ալ փոփոխելը թեթևա
 մտութիւն է : Ուստի հին խելա
 ցիները ըսեր են՝ թէ “ Առաքինու
 թիւնը բուն մէջ տեղը կեցած է . . .
 այսինքն երկու ծայրին միջոցը : Աս
 ալ իրաւ է՝ որ ամմէն մարդ առա
 քինութիւն պիտի ընէ իր վիճակին
 յարմար , իր հասակին , կարողու
 թեանը , ատենին , տեղին , և ուրիշ
 պարագաներուն նայելով : Առաքի
 նութիւնը պատշաճը դիտելով աս
 ամմէն բանին կշառքը կըբոնէ : Բանը
 գործը թողուլ , ու միայն ջերմեռան
 դութեան զինքը տալ չըլլար . անանկ
 ապաշխարանք չըլլար դնել մէկին՝ որ
 չիկրնար ընել : Անխոհեմ կերպով
 սկատել գինով մարդը կամ բարկու
 թեամբ գինովցածը ինչշահ . մանա
 ւանդ երբոր դիտես որ օգուտ մը պի
 տի չընես : Հովարտաշի ողորմութիւն

տալը՝ վոռւմ տեղ ստակը մսխելէ .
մանաւանդ որ մէկին ձեռքը ոտքը ողջ
է, կամ անոր որ ողորմութիւն կատ-
ւած է տէրութենէ : Դատարկա-
պորտներուն երես տալու չէ . չէ նէ
իրենց պարտքը չեն ըներ : Մարտիրո-
սութիւնը պիլէ բանի չիգար, երբոր
հարկ մը չիկայ նէ, կամ Աստուծմէ
շարժած չէ նէ : Ասոնցմով իմանաս,
թէ որչափ կարգ կանոն պիտի պահ-
փի աղէկ ընելու աղէկ բանն ալ չէ
նէ, աղէկ ըսածդ գէշ կըլլայ :

ԳՈՐԾՎԵ

ա . “Ուտելու խմելու չափ ունե-
ցիր,, : Ուրիշ բան չիկայ անանկ աղէ-
կէն հեռացընօղ ու գէշի տանօղ՝ ինչ-
պէս կերուխումի չափիը անցնիլը . ա-
սոր պէս ալ առողջութեան ու կե-
նաց զեն տրւող բան ըրլլար : Կաւ մը
որ չափէն էւել բեռ է բարձեր՝ պըզ-
տիկ բանով մը ծովուն տակը կիշնայ .
ասոր նման շատ տիսած ստամոքսը կաւ-
ըլւի, շատ կերտկով տկուած մար-

մինն ալ շուտով անկարդութիւն կեր
թայ , ու կը փլչի : Քու ուտելդ իր
մելք որոշ ատենով ըլլայ՝ որչափ կա
րելի է նէ , ու պէտք եղած չափէն
դուրս չելլայ . ասանկ որ ընես նէ ,
հէմ մեղքէն հեռու կը լլաս , հէմ ա
ռողջութիւնդ ալ կեանկդ ալ երկան
կը լլայ :

Ե . “Արդողիլդ ալ չափ ունենայ” :
Չարին դէմ բարկանալը հախ է . բայց
պէտք եղած չափը պիտօր չանցնի :
Անէծք հայհոյանք բերնէդ չելլայ .
դուն ալ քեզնէ դուրս չելլաս : Ի՞նչ
չարիք չըներ կատաղի բարկութիւնը .
առողջութիւնը տակն ու վրայ կընէ ,
խղմանքը կը ծանրացընէ , պղտիկնե-
րը դայթակղեցընէ , Աստուծոյ օրհնու-
թիւնն ալ կը հեռացընէ : Թող որ ի՞նչ
բանի կուգայ այնչափ սրդողիլը անըլ-
դայ բաներու վրայ , կենդանեաց ան-
բանից վրայ , բանաւոր մարդկանց վրայ
ալ : Ի՞նչ բան կը յոււսաս անոնցմէ՝ որ
չեն լսեր , կամ լսեն ալ նէ՝ չեն հաս-
կընար : Խակ մարդիկ կամ քեզնէ մենծ
են աստիճանով , կամ պղտիկ , կամ

հաւսար : Մենծ են նէ , ի՞նչ կըվաս-
տղիս բարկանալովդ . օդը կըծեծես ,
չարն ալ չարագոյն կընես . ուրիշի
խորհուրդ կընած հարցընել , օդնու-
թիւն մը ուղել : Պղտիկ են նէ , քու
մենծ ըլլալդ ցցուր՝ բանի տեղ չխե-
պելով անոնց անհոգութիւնը , կամ
թողութիւն տալով իրենց յանցան-
քին : Գիտցիր աղայութիւնդ բանեցը-
նել անոնց վրայ : Թէ որ քու հաւա-
սարդ քեզի դէմ բան մը ըրաւ նէ ,
բանը կատակի դարձուր , դրսէն մի
ցըներ առնըւիլդ : Մէկ կայծ մը դուրս
ցաթկեցընես է , կըրնայ մենծ կրակ մը
ելլալ : Խելացի մարդը ասանկ բանե-
րուն աչք կըխըփիէ :

Պ . “ Խօսքդ ալ չափով ըլլայ „ :
Շատախօսութիւնը՝ Եղբայրական սի-
րոյ ալ կըդալի , իրաւին հետ սուտ
կըխառնէ , մաքուր խօսքը աղտեղի բա-
նի կըփոխէ : Մարդուն հոգին ալ փը-
ճախօսութեամբ ցընդածի պէս կը-
նէ , քրիստոնէական կարդի կանոնի
ալ դէմ կելլայ : Դուն նայէ , այն բա-
նը միայն խօսիս՝ որ լսողները շնուրին ,

օգտակար և հարկաւոր բան ըլլայ: Դա
տարկաբանութիւն ըլլայ, քու սկա-
տուոյդ՝ մենծութեանդ արատ մը ցի-
բերէ, սիրոյ դէմ բնաւ ըլլայ: Թըռ-
չունը խօսելէն, մարդն ալ իր խօսքէն
կըջանցըւի:

Դ. “Հագուիլ կապուիլդ ալ չափ
ունենայ,,,: Քու աստիճանովդ իսե-
լացի ու աղէկ մարդկանց վրայ նայէ:
Նորելուկ իոլաֆէթին էտեէ մեր-
թար՝ աղէկ մը քեզ չափելէն առաջ:
Ուրիշին ըրածը միշտ քեզի կանոն ցի-
կընար ըլլալ չափոյ նայէ, ծախքդ չա-
փէ. ծնօղք ունիս նէ՝ անոնց հար-
ցուր. անոնք քեզնէ աղէկ կը հասկը-
նան ամմէն բան: Հագուստիդ մաք-
րութիւնը քեզ գովելի կընէ, չէ թէ
դրսի զարդարանքը կամ քու հալար-
տութեան նշաններդ : Հապա ինչ
շահ աղէկ հագուստէն, թէ որ հո-
գիդ ամմէն առաքինութենէ մերկ է
նէ: Աստուած փառաւոր հագուստդ
չի նայիր, բարի վարքդ կընայի: Աղ-
ւոր զգեստը քեզ աւելի աղէկ չըներ,
առաքինի չըներ. ինչպէս անսլիտան

ձին աղէկ թախըմով աղէկ ձի չկդառ-
նար :

Ե. "Չափ պահէ անմեղ զէֆքի սէ-
ֆայի ալ,, : Իրաւ է որ միշտ աշխա-
տիլ յոգնիլ չըլլար . հանգիստ առ-
նել ալ պէտք է . հոգին ալ մարմինն
ալ կարօտութիւն ունին՝ որ իրենց ու-
ժը նորոգեն : Թէ որ չես ուզեր՝ որ
աղեղը կոտրի, երբեմն երբեմն թուլ-
ցուր, կամ չափով լարէ : Մէկ իսու-
քով հէմ օրինաւոր է, հէմ հար-
կաւոր է երբեմն պարկեշտ զուար-
ճութիւն ունենալ : Բայց անանկ բա-
նեցուր՝ ինչպէս մէկ դեղ մը . ինչպէս
որ շատ կամ անդադար դեղ առնելը
առողջութեան իվաս է, ասանկ ալ
շատ զէֆք սէֆան հոգին առողջու-
թիւնը ու մաքրութիւնը կաւրէ :

Դ. "Առաքինութեան կը թութիւնն
ալ չափու մէջ դիր,, : Չափը անցընե-
լը՝ բարի դործքին արդիւնքը կը վերցը-
նէ : Աղը աղէկ բան չէ մի՝ որ կերակ-
րին համ կուտայ . բայց շատ ցանես
նէ՝ կապականէ զպատուական կերա-
կուրը : Ասոր պէս ալ աղէկ բան է ա-

զօթքը, սկաքը, մահացուցումը, ուրիշի աղեկութիւնը ընելը • բայց ասոնց ալ կարդ կանոն պէտք է • չէ՞նէ՝ գեղը թոյն կըդառնայ : Ապահով ճամբան ան է՝ որ խոհեմ խոստովանահօր խորհուրդ հարցըլի, ու իր ըսածը Աստուծոյ հրտմանին պէս սկահափ :

ԽՐԱՏ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՐԴԱՐՀԱՆՔԱՆ ԴՐԱՅ :

“Արդար Եղիր բոլոր աշխարքի
մարդկան,, :

Պ Ա Տ Ճ Ա Ս Ո Ւ Ը

ա . “ Անիրաւութիւնը զԱստուծոյ օրհնութիւնը քեզնէ կըհեռացընէ ,, : Միոքդ մի դներ թէ հաստատ հարըստութիւն կունենաս ծուռ ճամբաներով . առ կըլլայ հիմ դնել աւազի վրայ , կամ կրակ դուրս տուօղ լեռան վրայ . մէյմը որ չես կընար հան-

դիտ սրտով վայլել գողունի բանը .
մշմալ որ չիկրնար դիմանալ անի-
րաւ վաստակը՝ մարդկանց ու Աստու-
ծոյ արդար բարեկութեան առջեր։ Խոկ
արդար վաստակը ամմէն փորձանքէն
դուրս է, Աստուած ալ սանքի կը-
պարտաւորի զանիկա սլահելու։

Ի. “Անիրաւութիւնը քու սլա-
տիւդ ու անունդ ուոքի տակ կառնէ,,:
Ետքը ետքը կամ բանտը կը փըտի, կամ
կախաղան կելլայ անիրաւը։ Պղտիկ
մղտիկ գողութիւններէն կը սկըսի,
ետքը շատի կերթայ։ Առջի ըրածնե-
րէն անվտանգ խալըսիլը, ու դէշ խոյ
ըլլալը, յանդուգն ըլլալ կը սորվեցը-
նեն, ինչուան խայտառակութեամբ
կոլմնցընեն։ Կայէ որ առջի բերան
աղէկ զգուշութիւն ունենաս, թէ որ
բարի անուանդ վրայ կըդողդողաս նէ։

Վ. “Անիրաւութիւնը հոգիդ ալ
փրկութիւնդ ալ կորսնցնել կուտայ,,:
Շուտով կուգայ փորձանքը, բայց
շուտով դեղ ընել ըրլար։ Դեղ ալ
ընես նէ ափէդ եկածին չափ, բանդ
բուսած է, հաղար արձակում ալ առ-

նես՝ բանի ջիգար, ինչուան արդա-
րութիւնը տեղը չդնես նէ: Ուստի ան-
իրաւութեամբ ձեռք ձգածդ՝ պէտք
է որ հասուցանես, ինչ կերպով որ
կրնաս նէ, չէ նէ՝ փուշ կըլլայ ուրիշ
ամմէն բարի գործքդ, սրբապղծու-
թիւն կըլլայ խոստովանանքդ ալ՝ սրբ-
րութիւն առնելդ ալ, գժոխք երթա-
լեքդ ստոյդ գիտցիր: Ի՞նչ խենդու-
թիւն է՝ հոգին ալ երկինքն ալ զլաս-
տուած ալ կորսնցընել՝ մէկ խեղճ քէ-
լէփիրի մը համար, որ այսօր կամ վա-
ղը մահը ձեռքէդ կառնէ:

ԳՈՐԾՔԸ

Թ. “Զգոյշ կեցիր մէկ թել դեր-
ձան մը նաև ջիգողնալու ուսկից որ ըւ-
լայ,,,: Ամմէն մարդուն իր բանը թող,
կամ առածդ տուր: Աւելի յանձն
առ որ դուն թալլըւիս, քան թէ դուն
ուրիշի բանին դպչիս: Գո՞հ եղիր քու-
արդար վաստըկովդ, որ քու աշխա-
տանքովդ ու քրտնքովդ շահեր ես:
Երջանիկ է՝ չէ թէ հարուստ ըլլալ,

հապա քիչ բանով գոհ ըլլալը : Անեւ բաւութեան առջի պատճառն է անկարդ բաղձանք շատ բան ափ ձգելու մենծնալու :

Է . “Ի՞նչ որ կլոգընես կըծախես , ինչ առուտուր որ կլնես , սովորական գինը պահէ , չափը մանցըներ , : Կայէ որ մալդ աղէկ ըլլայ , չափն ալ կշառքն ալ արդար ըլլայ : Մէկ թեթև բայց արդար վաստակը կրնայ շատ աճիլ . իսկ անիրաւը շուտով կրնայ մարիլ : Գողցած բանը բնաւ չի գնես , որչափ աժան ալ ըլլայ՝ քեզի ալ պէտք ըլլայ . չէ նէ՝ գողութեան մասնակից կըլլաս :

Ք . “Ամմէն կերպով հաւատարիմ եղիր ծառայութեան մէջ , բանած բանիդ մէջ , և ամմէն գործքի մէջ „ : Տէրութեան խզմէթ ընօղը , արհեստաւրը , բանւորը , ամմէն մարդ իր պալուքը ջանայ ընել սրտանց ու արդարութեամբ : Ո՛չ խամին ընել , ոչ զեն մը բերել ուրիշի բանին : Պղտիկ խարդախութիւնն ալ շատ անգամ կըլլայ նէ՝ մենց իսաս կրնէ , ու մենց

մեղք կըլլայ : Գո՞հ եղիր քու վարձ
քիդ : Խօսք տուած ու կտրած գնոլ:
Ուրիշի վնասովը շահ մունենար : Յոյսդ
Աստուծոյ վրայ դիր , որ քեզ ահօթի
չիթողուր :

Ե . “ՎՃարէ շուտով առանց ու-
շացընելու՝ առանց բան մը պակսեցը-
նելու՝ ծառային , բանւորին , արհես-
տաւորին , վաճառականին , : Աստուծ
ինչուան օխտը պորտը կըպատժէ՝ մէկն
որ կամաւ ուշացնէ կամ կտրէ աշխա-
տօղին հախը : Պարտք մի՛ շատցըներ՝ եր
բոր հաստատ չգիտնաս վՃարէլիքդ .
Խոհեմութեամբ չափէ , ու անոր կէօ-
րէ շարժէ : Անխարդախըլլասնէ , ծա-
ռաներդ ալ աւելի հաւատարիմ կըլ-
լան , բանւորներդ ալ սրտանց կաշ-
խատին . աղէկ միւշտէրի կամ առու-
տուրի մարդ կըդլանաս : Դուն ալ
հանգիստ կեանք կանցընես , թեթևալ
կըմեռնիս :

Ե . “Աչքդ չքունած մարդուն խրզ-
մէթ մի՛ դներ , առաջ մի՛ քաշեր ” :
Ասանկ բանին մէջ՝ ուրիշի խաթըրին մի՛
նայիր , ոչ յանձնարարութեան , ոչ

խոսամունքին, ոչ բարեկամութեանը
կամ ազդականութեանը։ Դում ըն-
տրէ ուղած մարդու միայն հասարա-
կաց բարին ալ դիտէ, որ տէրութեան
աղէկ ծառայութիւն ընես։ Զգու-
շաւոր ըլլալը շատ բարիք կըբերէ,
շատ չարիքներէն կըխալըսէ։

Պ. “Որոնց վրայ իշխանութիւն ու-
նիս նէ, պատժոյ արժանի յանցա-
տրը պատժէ,,,: Խաթըր սեպել ըլ-
լայ աս բանիս մէջ։ ծանր յանցան-
քը ծանր պատիժ կուզէ. հասարակաց
դայթակղութիւն տուողը՝ ամմէնուն
առջև պիտի խայտառակուի, ան ալ
շուտով, որ չարը չի մեծնայ։ Մէկ վրա-
տած անդամը աղէկ է կտրել՝ որ բոլոր
մարմինը չապականի։ Անգթութիւն է
չարերուն վրայ դժալը, որոնց վնասը
աղէկներուն կըհասնի։”

ԽՐԱՏ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Արիստեան Հրայ :

“ Ամմէն բանին մէջ կտղի՛ք ու արի
Եղիր ” :

Պ ԱՏ Ճ Ա Ռ Ո Լ

Թ . “ Առիութիւնը մենծ մենծ բա-
ներով կրզուարձանայ , : Մէկ յաղ-
թութիւն մը ընելը անկարգ յօժա-
րութեան դէմ աւելի ուրախութիւն
կուտայ սրտի՝ աշխրդիս ամմէն փուճ
սէֆաներէն վեր : Ասոր փորձը սուր-
բէրը դիտեն : Դուն որ ջանաս ինչուան
ետքի շունչդ ասանկ յաղթութիւնը
նելու, ու երկինքը վաստղելիս նէ, քա-
շածդ անոր քով բան մը չէ : Ի՞նչ պի-
տի ըլլայ անոր առջև՝ վաճառականի մը
ուրախութիւնը, որ ալէկոծութիւն-
ներէն խալըսած՝ նաւահանգիստ կը-
մանայ նաւը լեցուն ապրանքներով.
Նմանապէս զինուորի մը խնտումը՝ եր-

բոր տուն դառնայ դժար պատերազմին էտե՝ հարրատցած շատ աւարով:

Ք. "Մենծ փառքի ալ աչք ունի,, :
Ինչպէս շուքը մարմնոյ էտեէն, ասանկ
ալ փառքը պատիւը արիութեան ու
առաքինութե էտեէն կերթայ, որուն
վրայթշնամիներն ալ մեծ վարկումու-
նին, ու զարմանք կըքաշեն: Մանաւանդ
թէ արիութիւնը ու հաստատ կենալը
աղէկութեան վրայ՝ տեսարան մը նէ
բոլոր երկինքը զարմացրնօղ, Աստուծոյ
ալ սանքի ուրախութիւն մը տըւօղ:

Ք. "Մենծ վարձքի ալ կըսսկասէ,, :
Ա ալ որչափ մենծ : Կախ աս աշխըր-
քիս մէջ՝ մասնաւոր շնորհքներ, շատ
առաջ երթալ առաքինութեանց ճամ-
բան, մէկ անյաղթելի ուժ մը փորձու-
թեանց գէմ: Երկրորդ՝ անդին. բուն
վարձքը երկինքն է, ուր կըթագաւորէ
միայն բարին, ուր ամմէն բաղձանք կը-
լցուի, ուր անանկ երջանկութիւն մը
նէ՝ որ ո՛չ խօսքի, ո՛չ խելքի տակ կինկ-
նայ: Եւ աս բանիս քեզ ապահովցընօ-
ղը ինքն Աստուծած է, որ քեզ կըսիրէ,
ու իր խստամունքէն պակսիլ չի կընալ:

Հասկա զօրացիր, աշխատէ, զարնըւէ,
յաղթանակ կանգնէ. սպակը կառնես:

ԳՈՐԾՎԸ

ա. "Արիութիւնդ ցցուր՝ մէկ դի
դնելով բոլոր մարդկային նկատմուն-
քը": Մարդկանց ի՞նչ բանէն կըվախ-
նաս: Ի՞նչ վեաս կըրնան տալ քեզի,
երբոր Աստուծոյ թևին տակն ես նէ:
Քեզի կըսեմ ով սիրելի, միայն Աս-
տուծմէ վախցիր, որուն ձառքն է քու-
բոլոր բանդ, ու կարօղ է քեզ հոգ-
ւով մարմնով դժոխքը նետել: Թող
մարդիկ քու վրադ ի՞նչ կուզե՞ն՝ մտմը-
տան ու խօսին: Ի՞նչ. առաքինու-
թիւն ընելը քեզի խանիլ կամ վախ-
նալ մի պիտոր բերէ: Ամաչես մի պի-
տոր Աստուծոյ պատուիրանքը պա-
հելու, ու աղէկ կեանք ունենալու
քու վիճակիդ կեօրէ: Ամօթ սեպելու
բան է մի քրիստոսի տեառն մերոյ
վարդապետութիւնը ու օրինակը:

բ. "Փառաւոր արիութիւն մը ցցուր
քու թշնամիներդ սիրելով, : Բարե-

տուր . բարեւդ չեն առեր՝ հոգդ չըլ-
լայ : Իրենց համար աղօթքը ըրէ սըր-
տանց՝ ցաւելով ալ իրենց վրայ : Ի՞նչ
կերպով կը նասնէ՝ իրենց աղէկութիւն-
ըրէ , օգնութիւն հասիր , քեզ չեն ա-
ղայեր ալ նէ , շնորհակալ ալ չըլան
նէ : Ասոնք Են քրիստոնէին կտրձու-
թիւնը , որ փրկիչդ հէմ պատուիրեր
է քեզի , հէմ օրինակ տըւեր է : Թէ
որ չես ալ կը րնար մոռնալու քեզի
դէմ ըրած բաներնին , կամ սիրտ-
դող մը ինկնայ՝ անոնք տեսնալու , կամ
անոնց վրայ բան մը լսելու , մի վախ-
նար , հապա նոյն ատեն մտքովդ Աս-
տուծոյ ըսէ . “Տէր , իրաւ որ սիրտս
կըցաւի ինծի եղած բանին , բայց այն
ցաւն ալ քեզի կը նըւիրեմ” : Ասկեր-
պով արիութիւնդ շատ անդամ կը ր-
նաս բանեցընել :

Ե . “Կտրիճ եղիր փորձութեան
դէմ կուռելու” : Հիշ մի վախեր . սուր-
բերն ալ անանեկ փորձութիւններ շատ
քաշեր են : Աստուծած թող կուտայ որ
փորձը քու հաւատարմութիւնդ .
առաքինութեան մէջ կը թըւիս , վարձիդ

ալ շատնայ : Փորձութիւնները աս աղէկութիւնը կընեն քեզի , որ խոնարհ կըլլաս , խոնարհութեան մէջ կըպահ էիս : Զինուորին կտրՃութիւնը պատերազմի մէջ կերենայ , քրիստոնէինն ալ փորձութեան մէջ :

Պ . “ Ի՞նչ չարիք՝ ի՞նչ նեղութիւն քաշես նէ , համբերութիւն ունեցիր լայն սրտով , : Իրաւ որ դժար բան է համբերութիւնը , աղքատութիւնը , անարդանքը , զրկանքը : Բայց ի՞նչ պիտի ըլլան ասոնք դժոխքի առջեւ , որուն գուցէ արժանի գտնըւեր ես : Դժարըդ կուգայ բան քաշելը . ատոր համար մի փախչիր բան քաշելէն : Ո՞րը կուզես չուզելով մի քաշել , կամ անհամբերութեամբ , առանց վարձքի , ինչպէս դատապարտեալները , թէ Աստուծոյ կպմացը քեզ յանձնելով Աստուծոյ սիրուն համար , ու համբերութենով որով հոգիդ մաքուր տեսնըւի Աստուծոյ աչքին , ու ապահով համնիս փըրկութեան :

Ե . “ Արիութիւն ցցուց՝ ոտքի տակ առնելով ժամանակաւոր բարիքը , կամ

ստակը,, : ՄԵՆԾՈւԹԵԱՆ բախտը ան-
 հաստատ բան է . հարուստ ալ ըլլաս
 նէ ազատ չես ըլլար հազար նեղու-
 թիւններէն ու փորձանքներէն : Հա-
 րուստ ես եղեր, բան մը չէ . միայն թէ
 սիրադ ըստըկին չիփակչի . խել մը
 բաժնէ Աստուծոյ սիրուն համար, ո-
 ղորմութեան ու բարեպաշտական բա-
 ներու : Փառք պատիւն ալ խաբեբայ
 է աշխրքիս վրայ. էտեւէ մի ինկնար. մա-
 նաւանող ինքիլոմէ ալ եկածէն փախիլու-
 Շատ ապահով կըմնաս խոնարհու-
 թեան մէջ՝ քան թէ բարձրութեան :
 Աստուծոյ փառքը ու պատիւը միայն
 փնտուէ Ճշմարիտ առաքինութեամբ :
 Աշխրքի փափկութիւններն ալ գի-
 մացկուն չեն, շատ պակսութիւն ու-
 նին, շատ անգամ ալ մեղքի պատճառ
 կըլլան : Ատոնք անո՞նց թող՝ որ երկըն-
 քին բարիքներուն յոյս չունին . քու-
 աչքդ ալ սիրադ ալ հառաչելով եր-
 կինքը նային :

Պ. “Կորի՛Ճ եղիր ինքիր զինքդ յաղ-
 թելու,, : Ասէ Ճշմարիտ յաղթութիւն՝
 Աստուծոյ ուղածը . առիթ ալ քեզ

չխպակսիր : Քեզ մահացուր կըսէմ
 ուտելու խմելու՝ քունի կողմանէ, կե-
 նակցութեան՝ խօսակցութեան մէջ,
 աչքի նայուածքն ալ պէտպէս բանե-
 րուն վրայ : Աս բաններէն զրկըսէլու առ-
 ջի աստիճանն է սուրբ ըլլալու Ճամբուն
 մէջ : Հպարտութիւնդ կոխէ , խոնար-
 հէ Աստուծոյումարդկան առջև : Դուն
 քեզնէ ոչինչ ես . մեղաւոր ալ ես .
 այսու ամենայնիւ մենծ բան մը երե-
 նալ կուզես : Չար յօժարութիւններդ
 կոտրէ , մանաւանդ այն խույերն որ ա-
 ւելի տիրեր են քու վրադ , ու գլսա-
 ւոր պատճառն են քու մեղքերուդ :
 Գլսաւոր թշնամիին հախէն գասնէ ,
 մէկալնոնք մէկէն կըփախչին : Անպի-
 տան ծառին արմատը կտրեսնէ , բոլո-
 րը կըչորնայ կերթայ :

ԳԱԼԻՆ ՎԵՐԵԲՈՐԴ

ՄԵԴԻԿԻ ՓԱԽՉԱՒՈՒ ՀԱՄԲԱՆ

Արևաբն լսաւ անքարողութեան մէջ
առելի աս բանս կըքարողուի . “ Մէջ-
մալ մահուցափ մեղք ըլլայ ,” կամ “ Ա-
պաշխարեցէք . մեղքէն փախիք ,” : Ճըշ-
մարիտ քրիստոնէն աղէկ պիտի հասկը-
նայ աս խօսքերը . վասն զի քրիստո-
նէական կենաց սկիզբ՝ մեղքէն փախ-
չին է , և ամմէն բարի առաջադրու-
թեան հիմն ալ աս է : Ուրեմն ով հա-
ստացեալ եղքարք , թէ որ կուզէք
սուրբ ըլլալ ու սուրբ մնալ նէ , նայե-
ցէք որ ամենայն ոգուով մեղքէ փախ-
չիք :

ԽՐԱՏ ԱՌԱՋԻՆ

Մահուլան մեղի վրայ :

“Ասանկ մեղքէ փախիր, քան թէ ուրիշ ամմէն չարիքէն,,:

Պ ԱՏ Ճ Ա Ռ Ե

Թ. “Մահուչափ մեղքը վշտացնող է Աստուծոյ՝ ամենակալ տեառն,,:
Վասն զի՞ Աստուծոյ օրէնքը ոտից տակ
առնել է. որով մէկը շնորհքէ ալկը-
զրկըւի, ու յաւիտեան դատապար-
տելի կըլլայ : Ո՞չափ կըզգուշանաս
որ աշխրքի մէջ թագաւորի մը վիշտ չի-
տաս. թէպէտև մահկանացու մարդ է,
իր կարողութիւնն ալ՝ իրաւունքն ալ
չափ ո՞նի: Հապա ինչպէս կըյանդգնիս
անարդել զԱստուած, որ թագաւոր-
ներու թագաւորն է, ամմէն բանի կա-
րող, և յաւիտենական : Մտածէ, թէ
Աստուած ո՞վ է, դուն վով ես:

Ք. “Մահուչափ մեղքը շատ չարիք

կըբերէ մարդուն գլխուն,, : Կաւրէ կը
փճացնէ սրբարար շնորհքը, Աստուծոյ
բարեկամութենէն կըզրկէ, վաստրկած
վարձքերը ձառքէն կըխրլէ . արքայու-
թեան յոյսը կըվերցընէ . բոլոր առա-
քինութիւնները կաւրէ, բոլորովինը՝
մարդը կըփոխէ՝ անպիտան կընէ, ըզ-
գրիստոս գրեթէ նորէն խաչ կըհանէ :
Դուն իսէ աներեսաբար կըսես, “ Ի՞նչ
կըլլայ Եղեր՝ մէկ մահուչափ մեղք գոր-
ծելովս ” . Հիմայ հասկըցիր թէ ի՞նչ
կըլլայ, ի՞նչ չըլլար :

Պ . “ Մեղաւորին գլխուն ալ սոս-
կալի պատիմներ կիջեցընէ,, : Մահու-
չափ մեղքը չըրա՞ւ մի, որ ապստամբ
հրեշտակները Երկնքէն վար թափին .
Ադամ և Եւայ իրենց բոլոր ըլլալիք
զաւկըներովը թշուառ կեանք մը ան-
ցնելու պարտըկան Եղան : Մահուչափ
մեղքի համար միլիոններով մարդիկ
կըդատապարտուին : Իսկ Որդին Աս-
տուծոյ մեղաւորի կերպարանք մտնա-
լով իսչ Ելաւ : Ուրեմն մահուչափ
մեղքէն աւելի սարսափելի բան չիկըր-
նար ըլլալ, որովհետեւ Աստուծած կը

արդար դատաստանովը ասանկ սլա-
տիմեներ կուտայ կոր :

ԳՈՐԾՎԸ

Թ. “Եռողիք այն առաջադրութիւնն
որ երբեմն Ճշմարիտ զղջմամբ ըրիր, ա-
ւելի մեռնիլդ անձդ առնուլ քան թէ
մէկ մահուչափ մեղք մը գործելու : Աս
առաջադրութիւնը քանի որ նորոգես
նէ, սատանային դէմզօրաւոր վահան
մը ձեռքդ առած կըլլաս : Ուրեմն ա-
սանկ սիլահլանմիշ եղիր՝ մեղաց վտան-
գին ատենը, կամ երբոր սատանայի
փորձութիւն մը վրադ կուգայնէ . ա-
սանկ ընմելով բնաւ չես յաղթըկիր :

Բ. “Մահուչափ մեղքը յիշելով փը-
շաքաղիք, ու մտադրութեամբ կարդա-
սոր համար գրած բաները” : Խո-
րունկ մտածելով միայն թէ որչափ
չարկը կընէ, ու ժամանակաւոր և յա-
փառենական պատիժ կըբերէ, կըրնաս
ծայրագոյն սարսափ ունենալ աս դը-
ժոխային հրէշքէն : Ո՞վ որ ասանկ
չմըտմըտար նէ, անհոգութիւն դիւ-

բաւ կինկնայ աս գաղանիս բերանը ,
Վասն զի չիմանար՝ թէ որչափ վախ-
նալու ու զզուելու բան է . իսկ մտմը-
տացողը չիկրնար չիդանիլ :

Ք . “ Զգոյշ կեցիր որ ուրիշի խաթ-
ըլ նայելով մահուչափ մեղք մը չը-
նես „ : Հիշ մէկին խաթըլը մի սեպեր .
մի նայիր թէ անկից քեզի մարմնաւոր
շահ մը կրնայ ըլլալ , ոչ իշխանութիւնը
նայէ՝ ոչ ստակը : Աստուծոյ բարեկա-
մութիւնը միշտ աւելի սեպէ . մարդու
խաթեր համար դժոխք երթաս նէ ,
ան քեզ անկից չի խալըսեր :

Ք . “ Մահուչափ մեղքով քեզ օ-
դուտ մը մի փնտուեր , ոչ մէկէ մը օդ-
նութիւն , ոչ պաշտօն մը , ոչ բախ-
տաւոր վիճակ մը „ : Ետքի կարօտու-
թեան՝ սովի ատեն ալ՝ թօթվէ այն-
ձեռքն որ քեզի մեղքով կուզէ ծա-
խել իր օդնութիւնը : ‘ Նզովէ այն յա-
ջողութիւնը՝ այն մեծութիւնը , որ
մեղքի վճարք պիտի ըլլայ . Աստուծ
քեզ կըհոգայ :

Է . “ Փախիր այն ընկերներէն՝ որ
քեզ մահուչափ մեղք կրնան խոթել :

Ժանտախտէն բռնըւածներէն չե՞ս մի
փախչիք՝ որ դուն ալ չըպլըշտրկիս :
Մեղքին պէս գէշ ժանտախտ չիկայ :
Ուստի մի՛ թողուր որ դայ թակղութիւն
տրւող մարդ քու տունդ դայ, կամ
սեղանդ, կամ ծառայութիւնդ : Ճըւ
մարիտ բարեկամ չեն անոնիք որ քեզ
Աստուծոյ բարեկամութիւնը կորանցը
նել կուտան :

Ղ. “Մէկ մահուչափ մեղքը խափա-
նելու համար մի՛ խնայեր աշխատան-
քի, ծախքի, ու նեղութեան,,,: Ասանկ
ընելով մենծ պատուի կըհասնիս Աս-
տուծմէ՝ թագաւոր ըլլալէն շատ վեր :
Չատ մարդ մեղքէ արդիլել կընաս,
որ քեզ կըսիրեն կամ կըվախնան, կամ
քեզմէ յոյս մը ունին . մանաւանդ եր
բոր ուզես նէ, շատ դիւրաւ կընաս ը-
նել :

ԽՐԱՏ ԵՐԿՐՈՒԴԻ

ՆԵՐԵԼԻ ՀԵՂԻ ՀՐԱՄ :

“ԲՈՂՈՐ ԱՐԹՈՎԱՆց ՋԱՆԱ՛ ՀԵռու
ՓԻԱԽՍՖԻԼ,” :

Պ ԱՏ Ճ Ա Ռ Ը

ա. “ՍԵՐԵԼԻ մեղքն ալ ըստ ինքեան
մենծ չար մը նէ,,։ ՀԵՐԵՔ է որ գիտնաս
թէ աշխարքիս ամմէն չարկեէն մենծ է։
ուստի չըլսար մէկ ներելի մեղք մը ը-
նել բոլոր աշխարքը փրկելու համար
ալ, բոլոր դժոխքին կրակն ալ մարե-
լու համար։ Հիմա ի՞նչ կըսես ով սի-
րելի. ի՞նչուկս կրցար ինչուկ հիմա այն-
չափ ներելի մեղքեր դործել առանց
վախի՝ առանց փշաքաղելու։ Եւ ի՞նչ
շահ տեսար։”

Բ. “ՆԵՐԵԼԻ մեղքը իր դործքերովն
ալ մենծ չար է,,։ Ճշմարիտ առաքի-
նութիւնը չիկրնար կենալ ան սրտին,
մէջ՝ որ ներելի մեղքի հետ կառլ ունի։”

ԹԵՂԵԱՄՏՈՒԹԵԱՄՔ ԸՐԻՒ, ու փիւշ
ման չեղար նէ, հաւատքդ կըսկարա-
նայ, յոյսդ կըքիչնայ, սէրդ կըսկսի պա-
զիլ, բարեսլաշտութիւնդ մարիլ կըս-
կըսի, շատ շնորհք առնելէն կըպակ-
սիս, աստուածպաշտութեան բանե-
րէն համ չես առներ, չարութիւնդ
գլուխ կըվերցընէ, ու կըբռնադատէ
զԱստուած՝ որ քեզ երեսէ ձդէ։ Այս
սիրելի, աղէկ հասկըցիր աս ողբալի
դործքերը՝ որ կընէ ներելի մեղքին ան-
հոգ ըլլալը։

Ք. “ՄԵՆԾ չար է՝ իրմէն հետևած
բաներով ալ,։ Շատ կաթիլ ջրոյ ի-
րարու էտև անզգալաբար մէկ նաւու
ծակէն մտնայ նէ, կընայ զնաւը ընկը-
մէլ. թեթև ծեծ մընալ անդադար
ուտէ մէկը նէ, կընայ մեռնիլ։ Շատ
անգամ ներելի մեղք դործելն ալ
դիսնալովու կամօք՝ եսքը ետքը ծանր
մեղքի մէջ ալ կըձգէ զմարդ։ Հո-
գւոյն սրբոյ խօսքն է, “Որ արհամարհէ
զփոքըն, փոքը փոքը կործանեսցի,։ Մէ-
կէն ՚ի մէկ չարագործ չըլլար մէկը. աս-
տիճանաբար կիջնայ ինչուան ՚ի խորս

անդնդոց : Ե՞ն մենծ ու այլանդակ
մեղքերը թեթև յանցանկներէն կըս-
կըսին : Աս բանիս տարակոյս չիկայ .
վախեմ որ դուն ալ ասոր փորձը ա-
ռեր ես :

ԳՈՐԾՎԸ

ա . “Մէկ ներելի մեղք մը չընես՝
պզտի բանի տեղ դնելով , : Աստուծոյ
անհաջոյ բան ընելը թեթև բան սե-
պել չըլար : Թոյնէն կըփախչիս՝ քիչ
բան մըն ալ ըլլայ նէ , վասն զի թոյն է
կըսես : Ուզեմն մեղքէն ալ ասանկ դա-
նէ . վասն զի մեղք է , Աստուծոյ դէմ է :

Բ . “Հաստատ առաջադրութիւն ու
նեցիր որ աւելի մեռնիլդ անձդ առ-
նես՝ քան թէ Էն թեթև մեղք մը կա-
մաւ գործել , : Ամմէն օր՝ ամմէն սա-
հաթ աս միտքս նորոգէ , թէ Աստու-
ծոյ շնորհքով հեռու կենամ էն պըզ-
տի մեղքէն ալ : Աս բանիս բնաւ դժա-
րութիւն չես գտնար , թէ որ զԱս-
տուծ կըջանչնաս ու կըսիրես նէ :
Դ . “Միշտ աղօթք ըրէ Աստուծոյ

սրտանց, որ քեզ ամմէն պղտիկ մեղ
քէ ալ պահէ,, : Աս շնորհքս առելի
մենծ է՝ քան թէ հրաշագործ մը ըլ-
լայիր: Ուստի կուզես աս շնորհքին
համնիլ նէ, տաք սրտով ու խոնար-
հութեամբ խնդրէ սուրբ պատարա-
գին մէջ, հաղորդուելով ալ, այցե-
լութիւն ընելով ալ սրբութեան, որ
է խորհուրդ սիրոյ: Թէ որ կամաւոր
ներելի մեղքէ ազատ մնասնէ կենացդ
մէջ, երկինքը երկրի վրայ գտեր ես,
երանելի ես, սուրբ ես:

Դ. “Ուրիշներն ալ ջանա խափա-
նել ներելի մեղքերէն,, : Դուն կը-
ցաւիս՝ երբոր տեսնես որ քու բարե-
կամիդ թեթև անարդանք մըն ալ կը-
լայ կոր. հապա ի՞նչպէս կըհամբերէս՝
լուռ կըկենաս, երբոր կընաս արդի-
լել, այնչափ անարդանք որ կըլլըւին
ներելի մեղքով Աստուծոյ դէմ: Ա-
սանկ մի կըլլայ բարեկամութիւն, և
սէր՝ որ պարտըկան ես ցցընել Աստու-
ծոյ:

Ե. “Դիպուածով ներելի մեղքի
մը մէջ ընկար նէ, առելորդ կերպով

տակնուվըայ մըլլար,,։ Ասիկա զյջում
չէ, հապա ծածուկ հպարտութիւն
մը, որ գուցէ միտքդ դրեր էլր՝ թէ
դութեանը կրնաս ազատ մնալ ներելի
մեղքերէն : Ուստի սխալմունքիդ վրայ
ճշմարիտ ցաւով զյջա սրտանց, բայց
մի զարմանար՝ մի շուարիր, թէ ի՞նչ
պէս սխալեր ես : Քեզմով ի՞նչ բանի
կարօղ ես :

Պ. “ Ըստածիդ համար կըմնայ քեզի
խոնարհիւ Աստուծոյ առջե,,։ Թէ որ
ասանկ պզտի փորձութեան ցիկըր-
ցար դէմ կենալ նէ, հապա ի՞նչ
պիտի ընէլր՝ թէ որ Աստուծ քեզ
թողուր, ու ծանր փորձութեան մէջ
ընկնայիր : Ուստի եղածին թողութիւն
ուղէ Աստուծմէ, ու նոր նոր օգնու-
թիւն խնդրէ իրմէն, և ասանկ քեզ
հանդարտեցուր . թերահաւատ մըլ-
լար, վախկոտ մըլլար, անհանդիստ մըլ-
լար :

ԽՐԱՏ ԵՐԵՌՈՒԴ

ԶՆՅԱՆ ՎՐԱՅ:

“Արտանց ըրէ մէկ կենդանի զղջում
մը սիրոյ,,:

Պ ԱՏ Ճ ԱՌԸ

ա. “Ճշմարիտ զղջումով ասլահով
եղիր՝ որ ամմէն մեղացդ թողութիւն
կառնես Աստուծմէ,,: Մէկ կրակով
մը դիւրին է ջնջել շատ վնասակար
խոտերը մէկէն ՚ի մէկ, քան թէ մէկիկ
մէկիկ կամաց կամաց խլել զամմէնը :
Ասոր նման մէկ կենդանի ճշմարիտ
զղջում մը կրնայ ջնջել ամմէն մեղ-
քերը՝ քան թէ հազար տկար փիւշ-
մանութիւնը : Ուրեմն յամենայն զօ-
րութենէ ջանա, որ ուղես շուտով
թօթվել վրայէդ քու մեղացդ ըեռը .
լաց զանոնք տաք զղջումով որդիական
սիրովն առ Աստուծած . մանաւանդ ա-
սոր համար որ իր խաթրին դպեր ես,

զինքը վշտացուցեր ես, ան որ իր ան-
հուն կատարելութեանցը համար ար-
ժանի է ամմէն բանէն էւել սիրւե-
լու, ու մէկ հատիկ սեպւելու։ Հաս-
տատուն առաջադրութիւն ալ դիր
մէյմալզինքը նոր մեղքով չվրշտացնե-
լու։ Ասանկ սրտի տէր ըլլաս նէ, ամ-
մէն մեղացդ թողութիւն կառնես,
ինչպէս որ խօսք տըւեր է քեզի իր ան-
դին արեանը արդեամբքն ալ։

Է. “Մեղացդ արժանի պատիմնե-
րուն ալ դիւրաւ ներում կառնես”։
Երբոր մեղաւոր մը ճըշմարիտ զղջու-
մով իր մեղացը թողութիւն կառնէ
նէ, հասարակօրէն կըմնայ պատիմ
մըն ալ քաշելու կամ հոս կամ ան-
դին։ Բայց Աստուած՝ անանկ գթած
հայրը՝ կըմնայ մի երկան ու խիստ պա-
տիմ տալ անանկ մեղաւորի մը,
որ գերբնական կերպով խոնարհա-
բար շնորհք մը ու ներում մը խնդրէ
իրմէն, ինքը զինքը առաջ նետելով կա-
մաւորապէս քաշելու՝ ինչ որ պէտք է
քաւութիւն գտնալու, ու խոստա-
նալով հաստատ օրտանց զինքը շըտ-

կելու, և բոլոր սրառվ զղջալու։
Ասանկին Աստուած ի՞նչ ըսէ, պա-
տիժը մէկ դի կըթողու, հայրական
թևերը կըտարածէ՝ կըդրկէ զի՞նքը սի-
րով, նոր նոր շնորհքներ կուտայ,
բոլորովին կըներէ, և հրաման կու-
տայ Երկինքը տօն ու ցնծում կատա-
րելու։ (Օրինակ ըլլայ անառակ որդ-
ւոյն կատարեալ զղջումով դառնալը։)

Դ. “Քու փրկութեանդ ի՞նչ որ ար-
դելք դրեր էիր նէ, անոնք ալ կըբար-
ձըւին,,։ Թէ որ անանկ մեղքերու ալ
արատ կայ վրադ՝ որ դուն չես խա-
ցեր՝ չես տեսեր։ Թէ որ առանց քու
գիտնալուդ պակսութիւն մալ եղեր
է քու միլատութեանդ ատենը, կատա-
րեալ զղջումը ասոնց ալ դեղ կըլլայ,
անանկ որ ընաւ մեղքի մը տակ չես
մնար։ Մէկ անհաւատ մըն ալ չնչա-
հաւատ մըն ալ կընան փրկութեան
ճար գտնալ, Թէ որ իրենց մահուան
ատենը՝ շնորհօքն Աստուծոյ դառնան
առ Աստուած, ու թողութիւն իրնդ-
րեն իրմէն իրենց ամմէն մեղացը ճըւ-
մարիտ ցաւօք սրտի, կատարեալ զըլլ-

մոմբ , ու Շշմարիտ փափաքով՝ որ
սուրբ հաւատքի մէջ մեռնին . (աջա-
կողմեան աւազակը միտքդ բեր :) Կը-
տեսնա՞ս , ի՞նչ անգին դանձ է զղջու-
մը՝ երբոր ինչպէս որ պէտք է՝ ա-
նանկ ըլլայ նէ :

ԳՈՐԾՎԵ.

ա. “Տաք սրտով կենդանի զղջում
խնդրէ Աստուծմէ , : Աստուծ միայն
կրնայ ասիկակ տալ . վասն զի ինքը
միայն գիտէ մարդուն սիրով իրեն
դարձրնել իր քաղցր շնորհքովը : Ա-
ղաչանքդ ընդունելի ըլլալու բարեխօս
բոնէ բոլոր ապաշխարօղ սուրբերը , և
սուրբ Աստուծածնայ փէշը աւելի
փակիր , որ է ապաստան մեղաւորաց :

բ. “Ամմէն զօրութիւնդ բանեցուր
Շշմարիտ ու կատարեալ զղջում ընե-
լու , : Մարմնոյդ դէմ պատերազմ
բաց . անկից վրէժ խնդրէ այն չա-
րեաց կամ մեղաց , որ քեզ Աստուծոյ
խաթրին դպչելու պատճառ եղեր է :
Քու մարմինդ է քու առջի վասնգա-

ւոր թշնամիդ, ան քեզ ծածուկ մատնիչէ, ան է արմատ չար յօժարութիւններուդ, ան է գործիք խել մը մեղքերուդ։ Ուրեմն ըրած չարիքներուն գէմ համեմատ պատիմներ անոր գլխուն բեր։ Աւելի կրնաս մահացրնել մարմինդ արդար ու բանաւոր նախանձաւորութեամբ։ և աւելի ցաւէ Աստուծոյ խաթրին դպչելուդ համար, աւելի արցունք Թափէ աչքէդ։

Ի՞ ՞ Առսկ խօսքով զղջում չըլլար։ Պէտք է որ սիրադ շարժի ու կըսկըծ այ գերբնական ցաւով։ Թէև զգալի կերպով չըլլայ նէ, պարէ այնչափ ըլլայ՝ որ քու խղճմանքդ ալ վկայէ, թէ իրաւցրնէ փիւշման ես, ու կըցաւիս՝ ամմէն բանէն էւել ասոր համար որ Աստուծոյ անհաճոյ բաներ ըրած ունիս, զոր արժան էր բոլոր սրտանց սիրել։ Ի՞նչպէս կրնամ սիրտըս ասանի յարմարցընել ճշմարիս զղջման, ըսես նէ, միացած ըսելիքիս ուշ դիր։

Ի՞ ՞ Աւելի զօրաւոր պատճառները

ազքիդ առջելը դիր „ : Զո՞ր օրինակ .
 մտքովդ դժոխքը ինջիր . աղէկ մը
 նայէ ու տես՝ թէ դուն քու մեղ
 քերովդ արժանի էիր դժոխքին սա
 կողմին : Դատապարտեալները համ-
 րէ, ու տես, անոնց մէջը շատը կան
 որ քեզի չափ շատ ու ծանար յան-
 ցանք չեն ունեցեր . դարձիր Աստու-
 ծոյ ողորմութիւնը տես , որ ինչուկի
 հիմա քու ճշմարիտ դարձիդ ու զըլ-
 մանդ կըսալասէ : Յիշէ Աստուծոյ քե-
 զի ըրած հոգեսոր ու մարմնաւոր ե-
 րախտիքը , որ քեզ շատ չարիքէն ետ
 դարձուցեր է . սպառնացեր է քեզի ,
 գործքովչէ պատժեր . ուսկից հասկը-
 ցիր ալ , թէ դուն ի՞նչպէս այլանդակ
 հրէշք մընես՝ ապերախտութեան ,
 չարութեան , յանդգնութեան : Միտ-
 քըդ բեր զքու տէրդ և փրկիչդ Յի-
 սուս Քրիստոս . ի՞նչ բաներ չըրաւ ,
 և ի՞նչ բաներ չիքաշեց քու սիրուդ
 համար . որսկիսի՞նշան թողուց իր սի-
 րոյն զիսորհուրդ սուրբ հազորդու-
 թեան : Ուշեմն իր խօսքերը , իր օրի-
 նակը , իր չարչարանքը քեզ օդուտ մը

չեն ըրած, որ ասանկ իստացեր ես
մեղանչելուշատ ու անձոռնի՝ անհա-
ւատներէն ու չնչահաւատներէն պէ-
թէր։ Մտածէ Աստուծոյ անհուն կա-
տարելութիները, ամենակարողութիր,
իմաստութիւնը, նախախնամութիւնը,
բարութիւնը, ողորմութիւնը, արդա-
րութիւնը, սրբութիւնը, որոնց հա-
մար արժանի է ամենայն սիրոյ և սպառ-
կառանաց։ Հասկա դուն որ չնչին
ճշճի մը կըսեալուիս, և բունդ ոչինչ
ողորմելի, ի՞նչպէս կըթօթվես կըմեր-
ժես կանարգես զանչափն Աստուած-
անալ ե՞րբ, ո՞ւր, ի՞նչպէս, ի՞նչո՞ւ հա-
մար։ Երկինք կըսարսափին, դուն
չե՞ս դողար։ Աս բաներուս աղէկ մը
թափանցէ մողովդ։ Էտեէն ի՞նչ զըդ-
ջում պէտք է նէ, սիրտդքեղի տուն
կուտայ։

Ե. “Սըխ սըխ քեզ զզջում բեր”։
Ասանկ կըթըւիս նէ, քանի կերթայ՝
աւելի դիւրին կըզզաս միշտ, և անանկ
սրտանց որ չեիր կարծեր։ Կըթըւած
զինուորը յանկարծ չի բռնըւիր թըւ-
նամիէն։ Ուրեմն մէկ աղէկ զզջում

մը ըրէ առւըտանց՝ բանի դործի ձեռք
զարնելէն առաջ . մէյմալ իրիկունը
պառկելու երթալէն առաջ . ամմէն
անգամ ալ՝ որ մեղք մը կընես նէ .
ամմէն անգամ սուրբ խորհուրդ մը
առնելու կրլաս նէ . հիւանդ կինկ-
նաս նէ . և մահուան վտանգի մէջը-
լաս նէ :

Պ. “Ուրիշներուն ալ զզջում սոր-
վեցուր , : Աս է մէկ հատիկ Ճամբայ
մեղաւորին փրկութեան . ուստի աս-
կից մեծ սէր չես կրնար ընելեղօրդ .
նոյն բանը սլիտի ընես հաւատքի թը-
նամիներուն ալ, թէ որ ուզենան քեզ
մտիկ ընել . վասն զի ասով զիրենք
կրնաս պատրաստել՝ որ Աստուծոյ
աւելի շնորհքին արժանի ըլքան :

ԽՐԱՏ ՉՈՐՐՈՐԴ

ՄԵԿԻՆ ՔԱԽԱՅԱ - ԹՀԱՅԻՆԵՐԱ - ՀՐԱՅ :

“ԱՌԵԼԻ զօրաւոր միջոցները ջանա
բանեցընել,, :

Պ ԱՏ Ճ Ա Ռ Ե

ա . “ՀԵԽ մեկ միջոց մը չփրնտուելը
խենդութիւն է,, : Առանց ոտքի քա-
լել չըլլար , առանց թևի թռչիլ չը-
լլար : Ուրեմն շատ անգամ դուն քե-
զի ըսէ . “ԱՌԵԼԻ մեռնիլ կուզեմ՝ քան
թէ ընաւ մեղք մը գործել,, : Առանց
ասանկ հաստատ առաջադրութիւն
ընելու սրիս սրիս , խանգարած բնու-
թիւնդ , հին սովորութիւնդ , առիթը
եկածին պէս քեզ մեղք կըխոթեն :
Կտրուկ զէհիրին դէմ կտրուկ բան-
զէհիր պէտք է :

Ե . “Վատանգաւոր ալ է թեթե մի-
ջոցներ ձեռք առնուլը „ : Վասն զի
աղեկ ընելու տեղը՝ առելի դէշ կը-

նեն: Խսիստ անուշ դեղ մը տալ հիւան՝
դին ի՞նչ շահ ունի, բայց եթէ աւել
լի չարջոկել առանց բժշկելու: Զգայ-
ութեան ուզած բաներ մարմնոյ ալջոդ-
ներ, թող թէ հոգւոյ:

Ի՞ . “Զօրաւոր միջոցներ բանեցնե-
լուն պէս շահաւոր բան չիկայ „: Ա
ռողջնալ ուղօղ հիւանդը էն լեզի դե-
ղէն ալետ չի քաշուիր, անով կըլլայ
ողջութիւնն ալ կեանքն ալ: Ուրեմն
դուն ալ մեղքին դէմ ուժով դեղերը
առ. վասն զի բաներ հոգիի համար է
ու յաւխտենական փրկութեանդ:

ԳՈՐԾՎԵԼ

Թ . “Զգայարանքդ աղեկ պահէ՝
որ իրենց չափէն բնաւ դուրս չեւ-
լան „: Մանաւանդ աչքդ, ձեռքդ,
լեզուդ: Երբոր հոգիին դռները բաց
ըլլան, ու համարձակ ըլլայ ելլաւ
մտնալը նէ, ի՞նչ կըղարմանաս որ թըշ-
նամիները ներսը լցուին: Բերդ մը
աղեկ չափահուի նէ՝ դիւրաւ կառնըւի:

Ի՞ . “Զգոյշ կեցիր դասարկ կենա-

լէնու: Հանդարս նստած ըշակին ջուրը
կըհոտի : Դատարկ ու դատարկա-
պորտ մարդուն միտքն ալ գեշ բանե-
րով լեցուն կըլլայ : Կրաւ որ ծուլու-
թիւնը էն սովորական գործիքն է սա-
տանայի . անկից կելլայ ամմէն ախտ՝
խույ՝ չարիք :

Ք . “Ուտելու խմելու չափ պահէնու:
Աղէկ գինիներ, փափուկ կերակուր-
ներ զմարմինը հոգիին դէմ ապստամբ
կընեն: Կուզես բանական մարդ մնալ
նէ, մարմնոյդ շատ կերուիում մի
տար: Անօթի ծարաւ մնայ նէ էն վայ-
րի ու կատաղի գաղանն ալ՝ կատաղու-
թիւնը կըմոռնայ :

Ք . “Անպակաս աղօթք ըրէ ”: Ա-
ղօթքն որ թողուս նէ, ուրիշ բան չես
ըներ մեղքէ ՚ի զատ : Ուտի աղօթքի
փոյթ ունեցիր, որ կարենաս ազատ
մնալ ասանկ չարիքէն : Աղօթքովեր-
կընիքէն ուժ կուգայ վրադ : Առտու-
իրկուն՝ ու օրւան մէջ աղօթք ըրէ:
Քանի որ աղօթասէր ըլլաս նէ, ա-
ռանց մեղաց կըմնաս :

- Ե . “Քու առաքինութեանդ ու բա-

րի առաջադրութեանդ մի ասկաւի-
նիր „ : Ամմէն բարեգործութիւն ալ-
ընես, հրաշագործ սուրբ ալրլաս նէ,
այնու ամենայնիւ կրնաս կործանիլու
կորսրւիլ, ինչպէս Յուղայ մատնիչը,
երբոր մէկ վայրկեան մընալ Աստուած-
քեղնէ ձեռքը քաշելու ըլլայնէ : Բայց
Աստուած քեզ չիթողուր, թէ որ
յոյսդ իր վրայ ըլլայ, քու վրադ ըլ-
լայ :

Պ. “Մէղքի առիթներէն փախիր „ :
Աս է մէկ հատիկ հարկաւոր բանը,
թէ որ իսկապէս չես ուզեր մէյ մալ
մեղանչել, կամ զԱստուած փորձել :

ԽՐԱՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մէղաց առիթներուն կը այ :

“Ամմէն կերսլով փախիր „ :

Պ ԱՏ Ճ ԱՌԸ

Թ. “Վտանդին մէջ կրնաս մեղան-
չել „ : Մարդ ես՝ սիալական, ու-

բնութիւնդ ալ դէալ 'ի չարը կըսօժա-
րի. շատ փորձութեանց ալ տակն ես:
Հապա ասոնք գիտնալով ի՞նչպէս
վտանգի մէջ կըմտնաս ու կըմնաս :
Քեզի կըսեմ, հոգիդ փորձանքի մի
դներ, յաւիտենական փրկութեանդ
մատնիչ մըլլար :

Է. "Վտանգին մէջ կըմեղանչես,,:
Հազար անգամ ալ անփորձ մնաս,
Էն ետքը առանց իմանալու կինկնաս:
Հոգւոյն սրբոյ վՃիռն է. "Վտանգ
սիրողը՝ անոր մէջ կըկորսըւի,, : Քա-
նի քանի երևելի անձինք, որ սուրբ ըւ-
լալու դպրոցին մէջ ծերացեր էին,
յանդուդ կերսկով վտանգի մէջխոթ-
ւեցան նէ, ոտւընին սրկոդեցաւ,
ընկան չարաչար: Դուն ի՞նչպէս չես
վախնար :

Ի. "Վտանգին մէջ դուն անտա-
րակոյս կըմեղանչես,, : Ամմէն բան
քեզ կը դրդէ. ախտաւոր յօժարու-
թիւններդ կարթըննան, քեզ մոլոր-
ցընելու բաները ուժ կառնեն. բարի
խորհուրդները մէկ դի կերթան. և
որովհետեւ դուն քեզ վտանգին մէջ

խոթեցիր, Աստուած ալ չօդներ քեզի.
զէրէ իր օգնութիւնը քեզ չէ խոստա-
ցեր առանկ կամաւոր վտանգի տռեն.
և անարժան ալ կընես քեզ իր օգնա-
կանութեանը, ուստի հարկաւ մեղքի
մէջ կինենաս :

Գ Ո Ր Ճ Վ Բ

ա. “Աս ան վտանգը միայն չէ, հա-
պա ամմէնեն փախիր,,։ Ինչպէս՝ այն
անձինքներէն որ անոնց հետ բան ու-
նենալով շատ անգամ կըմեղանչես
կոր. այն աներէն կամ տեղերէն կամ
մէկտեղելէն, որ առանց մեղքի ըըլ-
լար կոր։ Ո՛վոր չուզեր փոխադրական
հիւանդութենէ բռնըւկլնէ, աղէկ
սիստի զգուշանայ վնասակար օդ ու-
նեցող տեղէն . չէ թէ միայն մահոտ
անձնէ, հապա անոր լաթերուն ալ
դաշելէն հեռանայ սիստոր :

բ. “Յանդուդ յոյս ալ պիտի ըըլայ
Աստուած ողորմած է տէյի,,։ Թէ որ
տունդ կրակէ փուշնեկէր նէ, կըմնայիր
մի հոն, յուսալով յանդգնաբար՝ թէ

ողորմած Աստուած իս կըպահէ որ
չայրիմ տէյի: Ասկից աւելի յանդրդ
նութիւն է՝ մեղաց յայտնի վտանգին
մէջ յուսով մը կենալը: Քանի՛ ան-
դամքեզ խաբեց ասանկ սուտյոյսը:
Կայէ որ ատով զլաստուած ալ
փորձել ու անարդանիք ընել չըլլայ:

Դ. “Մարդկանց նկատմունք ալ
կամ խաթըլը նայիլ չըլլայ անանկ
տեղ,, : Քու հոգիդ մարդիկ պիտի
չդատեն. քու մեղքերուդ համարը
իրենք չեն Աստուծոյ տուօլ: Խելքդ
գլուխդ ժողվէ. անկարդ բանի հա-
մար աշխարի խօսքին մի նայիր. Երբոր
Աստուծոյ հնազանդիլ պէտք է, ու-
րիշ բան տեղիք չունի. չէ նէ՝ փոր-
ձանք կուգայ դլխուդ մէկ խօսքով
մը: Աւելի վախցիր քու խղճման-
քէդ, ու Աստուծմէ:

Դ. “Քու մարմնաւոր շահդ ալնայ-
իլ չըլլայ անանկ բանի մէջ,, : Գիտեմ
որ մարդ կայ՝ որ կըսէ, թէ չըլլար աս-
դործքը թողուլ, այն վտանգաւոր
տնէն հեռանալ առանց մէր արհեստը
կամ շահը մէկ դի ձգելու: Ատա՞նկ

է մի . ուրեմն ժամանակաւոր շահը
յաւիտենական շահէն վեր մի պիտի
դրուի : Ան ինչո՞ւ չես ըսեր , թէ ո՞վ
է քեզի ամմէն օրուան հացդ տուօղը •
Աստուած չէ մի , որուն նախախնա-
մութիւնն ամմէնքանի վրայ տարած-
ած է : Ինքը բաւական ճամբա-
ներ չունի մի քեզ կերակրելու պա-
հելու : Վախեմ որ դուն քու ճամ-
բովդ մէկէն 'ի մէկ կորսնցընես ովիտոր
ժամանակաւոր ու յաւիտենական
բարիքն ալ : Քեզի հարցընեմ • Աս-
տուծոյ առջև կըրնա՞ն մի զիրենիք ար-
դարացընել չնշահաւատները՝ չարա-
գործները , թէ ապրուսաի խաթեր
համար կեցեր ենք մեր մոլորութեան
ու անզդամութեան մէջ :

Ե . “ Խոստովանահօրդ բարեմոռու-
թիւնն ալ չօդներ քեզի անանկ բանի
մէջ , : Դնենիք թէ ան միամիտ ըլլալով՝
քեզ արձակում կուտայ կոր , դուն
որ մելքէն չես հեռանար կոր : Բայց
ինչո՞ւ արձակում կուտայ կոր : Վասն
զի դուն կըխաբիսըես զինքը : Եյ
ասանկ խաբէութենով գողցած ար-

Ճակումդ Աստուած կրհաստանէ
 կոր մի: Ի՞նչ շահ ատանկ նենդու-
 թենէ. ի՞նչ երես պիտի ունենաս՝
 Աստուծոյ ատեանը ելլաս նէ: Ու-
 րեմն պարզ և յստակ եղիք խոստովա-
 նահօրդ առջեւ. աղէկ հասկըցուր՝ ի՞նչ
 վտանգի մէջ ես. ան ատեն ուրիշ նոր
 լեզու կըլսես անկից, որ Ճամբադ փո-
 խես :

Պ. “Աւելորդ դժուարութիւննե-
 րու պատճառանիքներ մի ձևացներ ..:
 Մէկն որ հաստատ սրտով բան մը ու-
 զենայ ընելնէ, ամմէն դժարութեան
 կըյաղթէ: Աշխատալի է մեղքէն փախ-
 չիլը. • բայց աւելի տաժանմունք կայ
 մեղաց մէջ մնալու ատենը, երբոր ար-
 ժանի չըլլար մեղաց թողութեան՝
 ու դարուվար կերթայ դէալ ’ի դժոխ-
 քը: Ի՞նչպէս ամենայն ոգւով կը-
 փախչիս ան Ճամբէն որ քու կենացդ
 դարանք կայ. հապա ուր որքու հոգ-
 ւոյդ կորուսոր կայ. ինչու չես հե-
 ռանար անկից: Թէ որ խսկապէս դժա-
 րութիւն մը դէմդ կելլայ նէ, խոր-
 հուրդ հարցուր խոստովանահօրմէդ.

անոր խրատը ու խոհական կառավա-
րութիւնը քեզ կըխալըսէն :

ԽՐԱՏ ՎԵՑԵՐՈՐԴ

Նոյն մշղոց մէջ իւին իւին լինինաւ-
գուայ :

“Մեղք մը ընկար նէ, հէմէն շուտով
ելլիր կանգնէ „ :

ՊԱՏՃԱՌԸ

ա. “Քանի որ մահուցափ մեղաց
մէջն ես, չես կրնար հիչ մէկ բանով
մը վարձք շահիլ Աստուծոյ առջե „ :
Աս ի՞նչ խեղճ բան է՝ ձեռքդ պա-
րապ ելլալ այնչափ բարի դործքերէն՝
աշխատանքէն՝ նեղութիւններէն :
Ժամեր ալ դպրոցներ ալ շինես, ու-
նեցածդ բոլոր աղքըտներու բաշխես,
ամբողջ երկիրներ սուրբ հաւատքի
դարձընես, ի՞նչ շահ, երբոր արքայու-
թեան համար քեզի բան մը չես
վասարկիր: Վախ ափսոս, թէ որ առ-

չափ վնասը սիրտդ վախ չեն ձգեր
նէ, ու շուտով մը մեղքէն ոտք չես
ելլար նէ :

Ե. "Բնաւ հանդիստ ալ չես գըտ-
նար, խաղաղութեան երեսը չես տես-
նար,, : Փուճ տեղ զէֆք սէֆա կը-
փնտռես, փուճ տեղ ալայներ հան-
դէմներ կերթաս. փուճ տեղ կըջա-
նաս ըրած մեղքդ մոռնալ. խղճմը-
տանքը՝ քեզ կըշարչոկէ ուրախու-
թեան փափկութեան մէջն ալ: Ին-
չուան երբ պիտոր պահես սրտիդ
մէջ ատ կըծօղ որդը: Դուրս տուր
ատ զէհիրը՝ որ քեզ կըխղդէ կոր,
կոտրտէ ատ անօրէն շղթաները, որ
վերջապէս մաքուր խղճմտանքին եր-
ջանկութեան համը առնես:

Պ. "Ապահովութիւն բնաւ չես
ունենար,, : Խեղճ ողորմելի. ուր
պիտի դանաս փախչելու տեղ մը:
Կրնամ մի խալըսիլ Աստուծոյ ամե-
նակարողին ձառքէն, որ ամմէն տեղ
է. որուն դէմ կեցեր ես, ու սրդող
ցուցեր ես: Բոլոր արարած աշխարք
քեզի դէմ Աստուծոյ թուրը կըքա-

շէ քու հախէդ գալու , ու կուզէ
պատժել քու ապերախտութիւնդ ու
անզգամութիւնդ : Ամմէն քէօշէ
պուճախ՝ ամմէն վայրկեան՝ Աստու-
ծոյ արդար ձեռքը վրադ կըհասնի ,
ու դժոխքին տակը քեզ կընետէ : Արդ
ինչպէս կընաս մէկ ըուպէ մը նալ ա-
սանկ սոսկալի վտանգի մէջ անհոգ
կենալ :

ԳՈՐԾՎԸ

ա . “Քեզ յուսահատութեան մէջ
մի ձգեր՝ նոյն մեղքին մէջ կրկին կրկին
ինկնալուդ համար , : Իրաւ որ վտան-
դաւոր բան է նորէ նոր ինկնալը .
վասն զի կըզօրացընէ զար յօժարու-
թիւնը , և մեղքին դէմ դնելու ուժը
կըտկարացընէ . Աստուած ալ կընայ
քեզնէ ձանձրնալ քու անոդադար ան-
հոգութեանդ համար , ու շնորհքը
միշտ ոտքի տակ առնելուդ համար :
Բայց այսու ամենայնիւ մըսեր , թէ
“Չէմ կընար մեղքէն ետ կենալ . իմ
ուժս չի բաւեր դէմ կայնելու . ուս-

տի կըթում՝ ինչ որ ըլլայնէ , թող
ըլլայ „ : Չէ չէ , սիրելի . ատանկ պի-
տի չիմումտաս , հասկա :

Ի . “Սորէն ընկնալու եղածիդ պէս՝
Աստուծոյ դիմէ . ընկար ալնէ՝ իրեն
ընկիր „ : Թողութիւն խնդրէ , ըսե-
լով . Ողորմեա ինձ բազմամեղիս . ողոր-
մութիւն ըրէ տէր ինծի պէս թշուառ
մեղաւորի : Տղմի մէջ ընկած տղի մը
պէս լաց ու աղաղակէ . ինչպէս տղին
հարը մարը կըհասնին , ևս առաւել
Աստուած քեզ կըհասնի , մեղքին
տղմէն կըհանէ , վրայ գլուխդ կը-
մաքրէ :

Դ . “Մէկ չարագործի մը պէս վա-
ղէ մէկ ապահով տեղ մը „ : Վաղէ կը-
սեմ Աստուծոյ տունը՝ քու փրկչիդ
ոտքը ընկիր , կամ մէկ իր սպատկեր-
քին՝ քու տանդ մէջ : Գետինը փոռւի ,
Ճշմարիտ սրտանց զզջում ըրէ քու
ամմէն մեղքերուդ , հաստատ առա-
ջադրութիւն ալ դիր մէյմալ չընե-
լու :

Ե . “Անկից էտե ալ ամմէն կերպով
ոչքդ բաց , զգոյշ կեցիր „ : Հիւանդ

մը որ էրկու իրեք անդամ՝ նոյն ցաւին հանգիստինէ, անկից էտեւ ամմէն ջանքը կընէ՝ որ մէյմալնոյն ցաւը չիքաշէ։ Հասպա դուն ինչ բան պիտի չընես որ մէյմալնոյն մեղքը չինկնաս, որուն մէջ շատ անդամ ընկեր ես։ Տղի մը հերիք է՝ որ մէկ անդամ ձեռքը կը կրակէն կտոր մը էրի։ անկից էտեւ մէյմալ կրակի չի դուչիր։

Ե . “ Ճանա՞ որ ինկնալէդ մէկ պլոտուլ մը հանես . . . : Անկից առիթ առաւելի առաքինի ըլլալու , նայելովանոց որ՝ առաջ մեծ մեղաւոր էին , ետքը մեծ սուրբ եղան։ Ասանկ կը լայ թշնամիին թրուլը իր դլուխը կը տրել , (ինչպէս Դաւիթ Գողիաթին ըրաւ) , ու զէհիրը բանզէհիր դարձնել։ ”

ԽՐԱՏ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՄԵՂԱՋ ՀԱՆԱՔԻՇԽԱԾԻ ՀԵտին ՎՀՐԱ :

“ԱՅՍԻՆ ուժդր բանեցուր որ բղիկ բղիկ
ընես զինքը” :

Պ ԱՏ Ճ Ա Ռ Ա

Թ . “ՄԵՂՔԻՆ սովորութենէ աւելի դառն ու լեղի բան չիկայ աշխրքիս մէջ,,: Աւաղէկէ շղթայով կապուիլ, գերիներուն հետ թի քաշօղ ըլլալ, բարբարոսներուն ձեռքը գերի ընկած՝ ախուվախ ընել, քան թէ մէկ գէշ սովորութեան մը շղթայով կապուիլ : ՄԵՂԱԼՈՐ մարդկանց հարցուր, դուն քեղի հարցուր, ասանկէ է՝ թէ չէ : Աս գիտես, ու դեռ կըսիրես ասանկ խիստ ու անտանելի դերութիւնը :

Բ . “Ա՞ն ալ պինդ շղթայ” : Չար սովորութեան առջև ի՞նչ պիտի ըլլայ երկրթէ շղթան : Վասն զի սովորութիւնը :

ըութիւնը բնութիւն եղած է : Աէլի
պէս քեզ կըքչէ կըտանի հին մեղքե-
րուդ քովը : Թէ՛թև դեղովչըլլար աս
սէլին վազելը բոնել : Թէ որ կացինը
աս ծառին արմրտին չըզարնես նէ ,
բոլոր ուժդ չի տաս նէ , կամ դժուա-
րաւ կրնաս , կամ բնաւ չես կրնար
քեզիսալըսել ունակական մեղքէ մը :

Ք . “Ա՞ն ալ ամմէն բանեն աւելի
վեասակար , : Ամմէն բարի խորհուր-
դի խրատի դէմ կըկայնի , բոլոր բա-
րի առաջադրութիւնները կըփացնէ ,
փրկութեան միջոցները կըտկարացը-
նէ . միտքը կըկուրացնէ , կամքը կը-
խստացնէ , էն ետքը յուսահատու-
թեան մէջ կըձգէ զմեղաւորը : Քեզի
կըսեմ ուշ մեղաւոր եղբար՝ որ մեղան-
չական սովորութեան մը կապուած
էս , գիտցիր որ դժոխքին վիրապին
շրթունքը կեցեր ես , որ հէմէն մէջը
սկսի դլորիս . այսուամենայնիւ հաս-
տատ առաջադրութիւն մը չընե՞ս ու
ետ չիքաշուիս :

ԴԱՐՄԱՔԸ

ա. "Աստուծոյ օդնականութեանը
ասլաւինէ , յոյս ու վստահութիւն
ունեցիր . : Մի վախնար , որչափ հին
ցեր է ալ գէշ սովորութիւնդ . Աս-
տուծոյ ոտքը ընկիր խոնարհ սրտով ,
օդնութիւն խնդրէ : Ասով քեզնէ
մենծ մեղաւորները՝ որ գէշ սովորու-
թեան գերի եղած էին , յաղթանակ
յաղթութեան կանգնեցին . վասն զի
Աստուծոյ ձեռքը ամմէն ուղողին կը-
համնի :

Բ. "Սըխ սըխ խոստովանէ , բայց
պարզ սրտով ու կատարետլ զըզն
մամբ . : Փորձով կըսորվիս՝ որ խաթ
վէ խաթ խոստովանք ըլլալը հնցած
փտտած մեղքի սովորութենէն քեզ
կըհեռացընէ ու կրխալըսէ : Արբու-
թիւն առնելը՝ որ երկնային կերա-
կուր է , և հաց հրեշտակաց կըսովի ,
քիչ ատենին մէջ քարասիրտ մեղա-
ւորն ալ սուրբ կընէ :

Գ. "Եայէ որ կարելութեան կէօ-

ըէ՝ միշտ նոյն խոստովանահօր քովը
երթաս,, : Մի Ծողուր զինքը , Ծէ-
սլէտե կուշացընէ կամերբեմն չուզեր
քեզ արձըկել նէ: Դուն ջանա իր
խրատները պահել , ինչուան որ ու-
նակական մեղքիդ հախէն գաս՝ յաղ-
թես : Ասանկ յաղթութիւն առանց
մասնաւոր շնորհքի քեզնէ չես կրնար
ընել : Թէ որ մէկ խոստովանահօրէն
մէկալը քալելու ըլլաս նէ , Վէրքդ ե-
րաւ շատի կըբանաս , բայց յայտնի
կընես՝ թէ դուն բժշկուելու կամք
չունիս :

Պ. “ Մէկ քանի ջերմեռանդու-
թիւններդիր դուն ալքեզին : Արտանց
աղաչէ սուրբ Աստուածածնայ , պա-
հապան հրեշտակիդ , սուրբ Յովե-
փայ , պաշտպան սրբոյդ : Ասոնց բա-
րեխօսութիւնը այնչափ դորաւոր կը-
տեսնըւի ժամանակաւոր բաներուն
համար նէ , որչափ աւելի ուժով կը-
լայ հոդիին ալխոռոյիցը համար :

Ե. “ Մէկ քանի մարմնաւոր մահա-
ցուցում կամ ճգնութիւն ալ դիր
քեզի՝ խոստովանահօրդ հասկըցընե-

Էռվա: Կրակոտ ձի մը կուզես հնագան
դեցընելնէ, ուտելիքը պիտի քիչընես,
սանձը միշտ պիտի քաշես: Որչափ ա-
պաշխարօղ եղեր էնէ, ասանկ հախէն
եկեր են իրենց գէշ սովորութեանը.
ուտելը՝ խմելը՝ քունը պակսեցուցեր
են. չոր գետնի վրայ պառկեր են.
իրենք զիրենք խամչիով ծեծեր են.
և ասոնց նման բաներով մարմիննին
Ճնշեր են մաշեր են: Վնասակար ծա-
ռը բուն արմիտէն պէտք է խլել:

Պ. “Ճանքդ բնաւ մի թուլցըներ,
ինչուան բոլորովին չիկորսնցընես քու-
գէշ խույլութ” : Առառն աղջթք ըրէ,
ու առաջադրէ որ ամենայն զօրու-
թեամբ փախչիս ան մեղքէն՝ որ բնու-
թիւնդ կըսօժարի: Մէկ օր մը համբե-
րէլ մենծ բա՞ն է մի: Թէ որ օրւան
մէջ ինկնաս նէ, շուտով զղջա, ու
խօսք տուր դուն քեզի մնացած ատե-
նը տւելի վրադ արթուն ըլլալ: Կր-
կունը միտքդ բեր օրւան ըրածդ. թէ
որ այն մեղքէն ազատ մնացեր ես նէ,
փառք տուր Աստուծոյ. չէնէ, թո-
ղութիւն խնդրէ իրմէն, ու խօսք տուր

որ անկից էտեւ ետ կեն աս ըրած մեղ
քերէդ: Առաջադրութիւն մոդհաստատ
պահելու համար, քեզի պատիժ դիր
այնչափ ճգնութիւն՝ որչափ անդամ
նոյն օրը ընկար նէ . որպէս զի բնու-
թիւնդ վախնայ պատիժ էն՝ ու ուրիշ
անդամ չընէ : Ասանկ ըրէ շարունակ,
ինչուկ որ կատարեալ յաղթութիւն
ընես Աստուծով. մի վախնար, ատե-
նով ու Աստուծոյ շնորհքով դժա-
րութիւնները կըբարձըւին կերթան:

ԽՐԱՏ ՈՒԹԵՐՈՐԴԻ

Փայտականներուն վլաւ :

“Կարիք սրտով պատերազմ ըրէ ” :

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ե

ա . “Աստուծ սէյիր կընէ կոր քու
պատերազմիլդ ” : Ի՞նչ սիրտ չառ-
ներ մէկ զինուորմը՝ զօրապետին կտմ
թագաւորին աչքին առջև կոիւ մշտ-
նայ նէ : Թշնամիները կըպատե՞՝ մի-

չերնին սիւլսաւ կընէ . կրակի մէջ
աւ կըմոնէ . Աստուծոյ ներկայու-
թիւնը քեզ ինչու աւելի պիտի չկ-
վառէ : Քեզ նայիմ . Աստուծոյ մէկ
ուրախութիւն մը բերես՝ իր աչքին
առջև կտրՃութիւն ընելով :

Ի . “Աստուած կօգնէ քեզի առ
պատերազմին ատենը ” : Հաւատքը
կապահովցընէ մեղ, թէ Աստուած իր
շնորհքովը օդնութիւն կըհասնի : Առ
ունց Աստուծոյ աւ ի՞նչ կըրնանք
ընել . “Յամենայնի կարօղեմ”, ըստ
Պօղոս առաքեալ . ինչով . “Այնու
(այսինքն Աստուծով) որ զօրացոյցն
զիս ” : Ուրեմն դու ինչու կըվախնաս՝
փորձութիւն դալու ատենը : Ափեդ
եկածը ըրէ , ամմէն ուժըդ բանե-
ցուր . Աստուածոր վկայ է քու բարի
կամքիդ՝ իր օդնութիւնը քեզնէ պա-
կաս չըներ :

Կ . “Աստուած քեզ կըվարձատրէ
քու կտրՃութեանդ կեօրէ ” : Մարդիկ
աշխըքի սուտ խոստմունքներուն յու-
սովը ի՞նչ բաներ չեն ըներ . կեան-
քերնին առ շատ անդամ վտանգի

չե՞ն գներ մի : Ասանկ է նէ, հասկա
ի՞նչ սիրո՞ւ ի՞նչ սրտի կրակ պիտի չու-
նենաս պիտոր դռն սառյգ և անդին
վարձքին, ու անթառամ պսակին՝ որ
Աստուած քեզի խոստացեր է : Ապա
ուրեմն պատերազմ՝, երբոր պէտք
կըլլայնէ, մէկ կտրի՛ջ ու սրտոտ զի-
նուորի մը պէս՝ ինչուան ետքի ա-
րունդ թափելով:

ԳՈՐԾՔԸ

Թ. “Փորձութեան դէմ դիր բուն
առջի բերանը „ : Դէմ կենալու ա-
ղէկ պատրաստութիւնը՝ դրեթէ յաղ-
թութիւն մը նէ : Թէ որ կայծ մը
վրադ ինկնայ նէ, ի՞նչպէս շուտով
վրայէդ կըթօթվես : Պզտիկ անհո-
գութիւն մը ընօղը բոցին ձառքէն չի-
խռըսիր :

Ե. “Արհամարհէ զիորձութիւնը„:
Հոլարտ սաստանան խլատ կըլլախնայ՝
երբոր մէկը զինքը բանի տեղ չխե-
պէ նէ : Թէ որ վախվսես նէ, ուժ
կառնէ, ու սաստիկ վրադ կուգայ .

ինչպէս շումը աւելի կը հաջէ ու կը խածնէ՝ Երբոր մէկը վրան նայի կենայնէ :

Պ. “ԽԵՂՔԴ միտքդ փորձութենէն ուրիշքանի գարձուր” : Գու բանդ գործդ մտմտա՛, կամ մէկ անվնաս բանի մը զբաղէ : Բարեպաշտ անձանցքով տեսնը Ելու գնա . կամ օգտակար Երդ մը Երդէ : Ասոնցմով կը տեսնաս որ այն գէշ խորհուրդը մտքէդ կը ցրուի, սրտէդ կելլայ թունաւոր բանը՝ կը կորսըւի :

Պ. “Սայէ որ Աստուծոյ շքին տակը փախչիս, Յիսուսի վէրքերուն ապաւինիս, ու սուրբ Աստուծածնայ փէշին փակչիս” : Աղօթք ըրէ կըսեմ . հառաջական խօսքերը աւել աղէկ են . “Աստուծ յօգնել ինձ փութա՛: Տէր փրկեա՛ զիս: Փրկիչիմ” քու չարչարանօքդ ինծի հասիր: Անարատ սուրբ կոյս՝ դու սուրբ պահէ հոգիս ալ մարմինս ալ” :

Ե. “Աս բանս միտքդ բեր . չըլլայ թէ աս մեղքս ալ ընեմ նէ, անտալլակոյս անզեղջ պիտի կորսըւիմ” :

Աստուած մեղաւորին իրաւ որ կը-
համբէրէ , ու ամեն կերպով կը ջա-
նայ ճամբայ բերել բայց երբոր ձանձ-
րանայ նէ , երեսէն կը ճգէ՝ որ եր-
թայ կորսրսի իր չարութեան մէջը :
կամ կեանքը կը վերցընէ : Աստուած
իր սովորական օգնութիւնը չխպակ-
մէցներ . բայց մեղաւորին չարութիւնը
անարժան կընէ զննքը Աստուծոյ
շնորհքին : Սոսկալի է Աստուծոյ ար-
դար դատաստանը , որու առջև պա-
տասխան տալիք քեզի չի մնար :

Պ. “Յաղթեցիր նէ , փառք տուր
Աստուծոյ՝ բոլոր սրտանց շնորհակալ
ըլլալով իր ողորմութեան ու շնոր-
հաց համար . . . խօնարհ սրտով գոհա-
ցիր , և աղացէ որ իր ձեռքը վրայէդ չի-
պակսի . չէ նէ՝ դում քեզմէ կինկնաս-
թէ որ ընկար ալ նէ , անպիտան զի-
նուորի պէս զէնքը ձեռքէդ մի ձգեր :
Միտքդ բեր այն խրատն որ շատ ընկ-
նողին համար քեզի տըւի :

ԽՐԱՏ ԻՆՆԵՐՈՐԴ

ՄԵՂԻՆ ՃԱՆՐՈՒԹԵԱՆԸ ՀՀՐԱՅ:

"ՄԻ Կարծեր՝ թէ ամմէն մեղք մա-
հուչափ է, կամ ամմէն մեղք
ներելի է,, :

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ը

ա. "Մահուչափ մեղք ան է՝ որ
Աստուծոյ օրէնքին դէմ կըլլայ ծանար
բանի մէջ,, : Այն բանն որ՝ ոչ Աս-
տուած արդիլեր է, ոչ մարդ, յան-
ցանք մը չկայ: Մահուչափ մեղքն որ
գժոխքի պատժին արժանի կընէ, մէկ
անցաւոր մոքի շոշորդ մը չէ, մէկ ա-
ռանց մոտադրութեան խօսք մը չէ, մէկ
թեթև պակսութիւն մը չէ. միայն թէ
գուն անմեղ ու անվաս բանը՝ Աս-
տուծոյ դէմ կարծելով քու կամօքդ
չընես. վասն զի ատ որ ըլլայ՝ մահու-
չափ կըլլայ. ան ատեն խոստովանան-
քի մէջ մահուչափի նման պիտի յայտ-
նես:

Է . “Կատարեալ Ճանաչում ու մը-
տադրութիւն պիտոր ըլլայ՝ որ ծանր
մեղք ըլլայ” : Ինչպէս՝ Երբոր յայտնի
դիտնաս, թէ ատ միտքը, ատ խօսքը,
ատ գործքը սաստիկ արգիլած բան է .
բայց թէ որ տարակոյս մը ընկնաս,
ու յանդգնիս ըսելու, ես ատ բանը
պիտոր ընեմ, թէ մահուչափ մեղք է
եղեր, թէ չէ եղեր, իրաւցընէ մա-
հուչափ մեղք կըդործես : Կմանապէս
չգիտնալով մը ըրիր գէշ բան մը, բայց
կամօք քեզ ատ վտանգին մէջ խո-
թեցիր :

Դ . “Կատարեալ հաւանութիւն մը-
նալ ատ բանիդ մէջ պիտոր ըլլայ” :
Ուստի թէն Ճանչցեր ես գէշ ըլլալը
մէկ մոքի մը, խօսքի մը, գործքի մը,
ասով մեղք ըրած չես ըլլար . միայն
թէ կամաւ չկայնիս չիմնաս նոյն գէշ
մոքին մէջ, ու բերնէդ չհանես յան-
կարծ այն գէշ խօսքը, ու չընես ու
չհաւնիս այն գէշ գործքին : Ակամայ
խորհուրդ կամ բան կամ գործ, որ
առաջուց միտք չես ըրած, մահուչափ
մեղք մը չեն կրնար ձևացընէլ :

ԳՈՐԾՎԵԼ

ա. “Մեղք չխեղուիր քեզի՝ որ
չափ գէշ բաներ ալ գլուխդ ժողված
ըլլան նէ”։ Դուն թթութ ներսէն, ու
գժարդ գայ՝ որ ատանիկ անշնորհք բա-
ներ մտքէդ կանցնի, հալարտութիւն է
եղեր, պիղծ կամ հայհոյական բան է
եղեր։ Սուրբերը սլիլէ ասանկ փորձու-
թիւններ քաշեր են։ Երբոր դուն հա-
ւանութիւն չես տար, մանաւանդ կը-
թօթվես վրայէդ, ոչ մեղքի բան կայ,
ոչ խոստովանանք ըլլալու բան կայ։
Հասկա մեծ վարձք կայ գէմ դնելուդ
համար։

Ե. “Քիչ մը ուշացար ալ նէ գէշ
խորհուրդներուն մէջ, Երբոր չես ի-
մացեր անոնց գէշութիւնը նէ, քեզի
մեղք չիկայ”։ Միայն թէ գէշ ըլլալը
խմանալուդ պէս՝ վորնտես։ և ան տ-
տեն քիչ մը ուշացար նէ, ատիկա
խոստովանանքի մէջ ըստ, որ խղճմը-
տանքդ բոլորովին մաքրուի։

Ի. “Մեղք չիկայ քեզի մահուչափ”

Թէ որ անկատար է քու հաւանութիւնդ՝ ծանր հիւսնդութեան մէջ ալ, : Մեղանչական մոքերը կրնանքեղի միանդամայն հաճոյ ու անհաճոյ ըլլալ . Թէ որ դուն դէմ կեցար, բայց քիչ մը անհոգութեամբ նէ, ներելի մեղք եղած է . որ մահուչափ կրլար՝ Թէ որ կատարեալ հաւանութիւն տայիր նէ :

Պ. “ ՄԵղք չկայ քեղի , Թէ որ մշուշ մը կերևնայ քու մոքէդ անցածքանին չարութիւնը „ : Դժոխք տանօղ մեղքը խկապէս ծանտը բան պիտի ըլլայ , ու տեղնիտեղը դիացած , չէ Թէ անմեղադրելի երկբայութեամբ մը :

Ե. “ Ծանր մեղք կրլայ՝ հասկրնալով դէշ մոքերուն չարութիւնը , ու կամք և ախորժելով անոնց վրայ հաստատ կենալով , : Աս հաւանութիւնը ու հաճութիւնը մահուչափ կրնեն բանը , Թէպէտե ընելու կամք ալ չունենաս : Աս կերպ մոքի մեղքը կըսովի կամաւոր ախորժանիք : Աւելի ծանր կրլայ , Թէ որ իրաւ դի-

տաւորութիւն ունիս՝ տեղը գայ նէ
գործքով ալ ընելու . որ կըսուի մե-
ղանչական բաղձանք : Ուստի աս ալ
ան ալ տեղն 'ի տեղ պիտի խոստովա-
նիս :

Դ. "Ծանր կըրնաս մեղանչել՝ մէկ
վայրկենի մը կամաւոր ախորժանօքն
ալ,,: Մեղքին ծանրութիւնը երկան
ատենէն չիկախուիր , հապա քու
խմանալէդ ու հաճութիւն ունենա-
լէդ: Ասանկ դիտցիր դէշ մոքի վրայ
ալ , չար ցանկութեան ալ , մեղանչա-
կան փորձութեան՝ խօսքի ու դործ-
քի վրայ: Խօսքով ու դործքով էնէ ,
պիտի նայուի՝ թէ ուրիշն ալ ինաս
մը կամ գայթակղութիւն եղաւ մի .
ու անոր կէօրէ պիտի խոստովանուի:

Վերջապէս ապահով ճամբան ան-
է , որ էն պղտի մեղքէ ալ վախչիս .
ևս առաւել զգոյշ կենաս ծանտր
մեղքերէն: Քու խելքիդ ալ մի հաւ-
տար՝ որ շատ կուրութիւն ունի . ուս-
տի խոհեմ խոստովանահօրդ բաց ամ-
մէն բանը , անանկով աղէկ կերթաս :

ԽՐԱՏ ՏԱՄՆԵՐՈՒԴԻ

Խղճահ արութեան վրայ :

"Խոստովանահ օրդ թող ատանկ բանելը „ :

Պ ԱՏ Ճ Ա Ռ Ե

Թ. "Խոստովանահ այրդ կրնայ քեզ
աղէկ խորհուրդ տալ „ : Աստուծոյ
կամքը աս է , որ մարդը մարդէն կա-
ռավարուի . աս ճամքով սուրբ եղան
մեծամեծ սուրբերն ալ . հիմա քեզի
ուրիշ նոր ճամքայ մը ցըցնէ , հրեշ-
տակ մը խաւրէ քեզի երկնքէն : Չես
գիտեր՝ ի՞նչ ըստ Քրիստոս հոգիի
կառավարներուն . " Որ ձեզ լսէ ,
ինձ լսէ „ : Ուստի Աստուծոյ ապա-
վինէ , ու հնազանդէ քու խոստովա-
նահօրդ՝ որ Աստուծոյ փոխանորդն
է . անոր խրատներուն մտիկ դիր , ու
հանդիստ կեցիր , անհանգիստ մըլլար

անհանկ բանի համար՝ որ յայտնի Աս-
տուծոյ օրէնքին դէմ չէ :

Է. “Քու բարիդ ալ կուղէ „ : Ա
ղէկ գիտէ խոստովանահայրդ՝ որ
խղճմտանքի բանին մէջ դուն քեզի
հերիք չէս, և կըբաղձայ որ քեզ ա-
ռաջնորդէ առաքինի ու սուրբ ըլլա-
լու : Ուրեմն ինչո՞ւ կըտրնտնաս իրեն
հնազանդելու : Կոյր մը առանց ա-
ռաջնորդի չուխուրը կինկնայ :

Դ. “Իր պարտքն ալ է „ : Խոստո-
վանահայրդ իր պաշտօնը ընելու պար-
տըկան է . քեզի ալ դէշ խորհուրդ
տալու պէս չէ . դուն բարի հաւատ-
քով իր խօսքը պահէ , ամմէն բանէ
կըխալըսիս : Կուղե՞ս որ այնչափ խենդ
ու անշնորհք մը ըլլայ , որ քու տեղդ
կամ քեզի հետ դժոխքը ինկնայ՝ քե-
զի դէշ խրատ տալով :

ԳՈՐԾՎԸ

Թ. “Տարակումներդ ու անհանգը-
տութիւնդ հասկըցուր խոստովանա-

հօրդ „ : Այնչափ աղեկ կընայ քեզ
օգնել, որչափ աղեկ ու յիստակ սիր-
տրդ իրեն բանաս : Տարակոյսդ ու
տակնուվայ ըլլալդ՝ թէ մեղքերուդ
վրայ ըլլայ, թէ ուրիշ ատենի խոս-
տովանանքիդ, կամ ինչ և իցէ բանի,
միշտ իրեն վրայ թուղ, թէ որ չես ու-
զեր ճամբէ դուրս ելլալ, ու հոգիդ
վասնդի մէջ դնել :

Ե . “Բանի տեղ մի սեպեր քու
ֆէսֆէսէներդ „ : Հերիք է որ խոս-
տովանահայրդ հասկըցայ կըսէ . ալ
ինչ աւելորդ հոգ կընես : Ալ ատ
բանիդ վրայ մէյմալ մի մտմտար՝ մի
խօսիր խոստովանանքի մէջ պիլէ :
Քէզընադատէ որ միամտութեամբ
խոստովանահօրդ խօսքը բոնես, շե-
տակ անոր էտեէն երթաս :

Պ . “Քու խղճահարութեանդ հա-
մար խոստովանանքէ սրբութենէ հե-
ռու մի կենար „ : Քու փուճ մտմբ-
տուքներովդ ասանկ անդին գանծէ
զրկըւիլ կըլլայ մի : Աստանային ու-
զածն ալ ատ է, որ քու շինծու մըտ-
քերդ խոստովանահօր խրատներէն

վեր դնես . ան խեէ գիտես՝ որ ինքը
քու փրկութիւնդ միայն կուղէ :

Դ . “Աղօթք ըրէ՝ որ Աստուած
հետդ ըլլայ „ : Ինքն է ամմէն լոյս
տըւօղը . բայց դուն որ խելքիդ էտեէ
երթասնէ , լոյս մը չես առներ : Քեզ
հոգեոր հօրդյանձնէ , որ Աստուծով
կըխօսի քեզի : Որդիական հնազան-
դութիւն մը ցցուր իրեն , ան ատեն
Աստուած սիրտդ կըհանգչեցընէ :

Ե . “Դուն քեզի սիրտ տուր „ :
Տրտում մտքերու տեղիք մի տար .
մինաւորիկ տեղ մը մի քաշուիր . չէ
նէ՝ բոլորովին տրտմութեան մէջ կը-
խղցըւիս , մելամաղձոտ բան մը կըլ-
լսս : Աղէկ մարդկանց հետ տեսնըւէ ,
անոնց կերպը նայէ , անոնց կարգին
կանոնին հետեէ : Պէտք ըլլայ նէ՝
դեղ ալ առ , որ մաղձդ փարատի :

Դ . “Հիչ մէկ բանէ օդուտ չես տես-
նար նէ , ըսէ թէ աս իմ խաչս է .
կոնակս կառնեմ , ու խոնարհ և համ
բերօղ սրախւ Փրիատոսի էտեէն կեր-
թամ , Աստուծոյ կամքը օրհնեալը-
լոյ „ : Աղաչէ Աստուծոյ , որ քեղ դօ-

բացընէ, ու մեղքէ պահէ։ Միշտ խոս-
տովանահօրդ խօսքին աւելի ուշ դիր-
իրմէն մի՛ հեռանար, ուրիշի մերթար
առանց հարկաւոր պատճառի մը։
Ինչպէս բժիշկ փոխելը՝ հասարակօ-
րէն օգուտ չէ, վնաս է, ասանկ է
հոգևոր ճամբուն մէջն ալ։

ՎԱԽՃԱՆ

10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100

ՑԱՆԿ

ԳԱՅՈՒՄ և ԽՐԱԿՈՒՄ :

Գ.Լ. Ա. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ.	1
ԽՐԱԾ Ա. ՔԻՆԵ աբնեալու վրայ.	2
Բ. Բանի գործի	7
Գ. Պատարագ պեսալու	12
Դ. Ուահելու խմելու	18
Ե. Խրիստուան պառիլու	23
Զ. Խսոսականի	29
Է. Հաղորդանիլիւն	38
Ը. Կիրակի և աօն օրեր	47
Թ. Զբոսանի	54
Ժ. Թաթոր , և սակառ գնացնալիւն	61
 Գ.Լ. Բ. ԱՄՄԵՆ ՄԱՐԴՈՒ ՊԱՐՏՔԵՐ	
ԻՐ ՎԻՃԱԿԻՆ	68
ԽՐԱԾ Ա. Ուղարկար պիտունի . .	69
Բ. Գլուխուր իսլեծաւուր	77

Գ.	ՀԱՂՄԱԳԻ ՏԸ	.	84
Դ.	ՏԵՆԸ ՀԱՅՐ ԽԱՄ ՀԱՅՐ	.	90
Ե.	ԼԵՇԻ ԻՆԻ	.	96
Զ.	ՈՐԲԵՍՏՐԻ ՏԱՐԴ ԽԱՄ ԻՆԻ	.	102
Է.	ՀԱՅՐ ԽԱՄ ՀԱՅՐ ԵՂՉ	.	107
Ը.	ԶԱ-ԻԸՆԵՐ	.	115
Թ.	ԱՎԵՆԱՐ ՀՄԴԱԾՆԵՐ	.	121
Ժ.	ՀԻ-ԱՆԴ ՏԸ	.	126
ԳԼ. Գ. ԱՍՏՈՒՃԱԾ ՊԱՇՈՆԸ,			
ԵՒ ՍՐԲՈՑ ՊԱ			
ՏԻՒԸ 132			
ԽՐԱՏ	ԱՎԵՆԱՆՆԵՐ	ԵՐԵՎ-	
	Դ-ՆԵՐԻ-Ն.	.	133
Բ.	Մ-ՐԵՂ-ՆԵՐԻ-Ն ՈՐԴ-		
	Ա-ՋՆ ԱԿՄ-Ճ-Ջ.	.	139
Գ.	ՕՐԻՆԱԿ ՎՐԵՒՄԱԿԻ Խ-		
	ՎԻ ՀԱՄԱՐ	.	144
Դ.	ՎՐԵՒՄԱԿԻ ՀՄՐՀՄՐ-Ա- ԿԸ	.	153
Ե.	ԽՄ-ՀՄ-ՐԵՐ Ա-ՐԵՐ Կ-		
	Դ-ՐԵՐ-ՆԵՐԻ-Ն	.	160
Զ.	ԱԿՄ-Ճ-ՃՆԱՋ ՋԵՐ-		
	Ա-Կ-Ա-ՆԵՐ-ՆԵՐԻ-Ն	.	165
Է.	ՊԱԿ-Ա-ԿԱ-ՆԵՐ-ՆԵՐԻ	.	170

Ը. Ա-րբ Յ-վեժ Ա-	
Գ-ուածահայը . . .	175
Թ. Պաշտպան ս-րբը ԲԵՐ	
անուան	181
Ժ. Վիստարանի հ-գիւելը .	185
ԳԼ. Դ. Ա-ՆՕԹԻ ԸՆԵԼՈՒ . . .	190
ԽՐԱՏ Ա. Համալսկիան աղօթ .	191
Բ. Զայնա-որ աղօթ . . .	196
Գ. Մատածական աղօթ . . .	202
ԳԼ. Ե. ԱՌԵԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԳՈՐ	
ՆԵԼՈՒ	207
ԽՐԱՏ Ա. Համապ	208
Բ. Յոյս	213
Գ. ԱԵՐ ա- Ասպառ-Ճ ,	
իամ ասպառ-Ճական-	
լիւ	219
Դ. Ասպառ-Ճայ իամին հնա-	
կանդ ըլլալ- . . .	225
Ե. ԵՂԲայրակութիւն . . .	232
Զ. Հ-դ-ոյ իրիւթեան	
ԵՂԲայր իրիւթ ա-նեւ-	
նալ	239
Կ. Խոհեմա-թիւն . . .	245
Ը. Բարեխառանութիւն . . .	250
Թ. Արդարութիւն . . .	258

Ժ .	Աւելիս-թիւն	262
ԳԼ .	ՄԵԴՐԵԿԻՆ ՓԱԽՉԵԼՈՒ . .	271
ԽՐԱՏ	Ա . Մահացած մէջ	272
	Բ . Վերելի մէջ	277
	Գ . Զշշում	282
Դ .	Մէջուն ժամանելու մէջ ջայներ	290
Ե .	Մէջաց առիթներ	293
Զ .	Նոյն մէջը իրինել	299
Է .	Մէջաց առաջինակիւն .	304
Ը .	Փայտա-թիւններ	309
Թ .	Մէջին ծանրութը	314
Ժ .	Խղճահարութիւն	319

18	8 ու Աստուծոյ	որ Աստուծոյ
55	4 էս և	էսն
55	1 ուր նութեան	որ ընտվթեան
72	3 Ֆրանչիկոսի	Ֆրանչիկոսի
83	11 տիրոջը, պէս	տիրոջը պէս
95	14 յարդը	յարդը
112	15 զուտ	շուտ
151	12 չիք աժնըւիր	չիքաժնըւիր
220	9 որ ամմէն	որ իրմէ ամմէն
229	2 աղղարարա լուբիներ	աղղարարուի- ներ
295	9 ամմէնեն	ամմէնէն

$$3+5+6=14.$$

$$\cancel{4+6\times 1}=14.$$

to
it

the
measures
measured

~~Q~~ 6 U

96

D LXXX Km L XXXXX D

6 99

